

Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
(ՀՕՏԾ)

ARM 3449: Մ6 Վանաձոր–Ալավերդի–Վրաստանի սահման
միջպետական ճանապարհի վերականգնման և
բարելավման ծրագիր

(կմ 38.450 – կմ 90.190)

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն (ՏԿՏՆ)

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ (ՏԻԿ)

Նոյեմբեր, 2017 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ..... 14

A. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 33

- 1. Ընդհանուր տեղեկություններ.....33
- 2. Հողի օտարում և տարաբնակեցում. Ծրագրի իրականացմանն առնչվող պայմանները .35
- 3. Ծրագրի պատմությունը 35
- 4. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի ընդհանուր նպատակը36
- 5. Փաստաթղթի հրապարակումը.....37
- 6. Կասեցման օրը37

B. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ 38

- 1. Ընդհանուր նկարագիր38
- 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ39
 - 2.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....39
 - 2.2 Ազդեցությունների գնահատման սահմանափակումները և կիրառված մոտեցումները 40
- 3. Ազդեցության գնահատում..... 44
 - 3.1 Ազդեցությունը հողի վրա 44
 - 3.2 Ազդեցության ենթակա հողերի զբաղեցման իրավական կարգավիճակը..... 45
 - 3.3 Հողերի կորուստը՝ ըստ տեսակի 46
 - Աղյուսակ B1. Հողի կրած ազդեցությունը՝ ըստ հողի տեսակի և սեփականության/հողի զբաղեցման կարգավիճակի 47
 - 3.4 Ազդեցությունը շենքերի և շինությունների վրա 48
 - a) Շարժական գույք 53
 - a) Բնակավայրից վերաբնակեցում 54
 - a) Ցանկապատեր և այլ բարելավումներ..... 57
 - a) Ազդեցությունը մշակաբույսերի վրա 61
 - a) Ազդեցությունը ծառերի վրա 61
 - a) Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության և եկամտի վրա 67
 - a) Ազդեցությունը ընդհանուր սեփականություն հանդիսացող ռեսուրսների/հաղորդուղիների վրա 69
 - 3.11 Ազդեցության ենթակա խոցելի տնային տնտեսություններ 72
 - a) Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների և ազդեցության ենթակա անձանց սվյալների ամփոփում..... 73

C. ԹՐԹՈՒՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 77

- 1. Ազդեցության գնահատումը և գույքի գնահատման սկզբունքները..... 77
- 2. Ազդեցության նախնական գնահատում և պայմանական բյուջե 79

D. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 81

- 1. Ներածություն..... 81
- 2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ .82

3. Ազդեցության ենթակա անձանց էթնիկ պատկանելությունը.....	82
4. ԱԵՏՏ ղեկավարների սեռը, տարիքը և ամուսնական կարգավիճակը	83
5. Կրթական մակարդակը	84
6. Զբաղվածության կարգավիճակը	86
7. Ծառայությունների հասանելիությունը	87
8. Կենսապահովման և եկամտի աղբյուրները.....	90
9. ԱԵՏՏ-ների կողմից գույքի տիրապետումը	92
10. Տնային տնտեսությունների ծախսերը, պարտքերը և պետական աջակցությունը.....	93
11. Կանանց մասնակցությունը և ազդեցությունը.....	94
12. Աղքատ և ծայրահեղ աղքատ ԱԵՏՏ-ներ	95
E. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ	97
1. Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը.....	97
2. Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի շրջանակներում ոչ կամավոր տարաբնակեցման վերաբերյալ ԱԶԲ դրույթները.....	99
3. ՀՕՏ-ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համեմատությունը ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի պահանջների հետ	99
4. Ծրագրի համար ընդունված Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի սկզբունքները և իրավունքները	104
F. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՄՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ	105
1. Ընդհանուր	105
2. Իրավունքներ.....	109
3. Փոխհատուցում և վերականգնման օժանդակություն ստանալու իրավունքները	110
3.1. Հողի կորուստ.....	110
3.2. Բնակելի շենք, շինությունների կորուստ	111
3.3. Ոչ բնակելի շենք, շինությունների կորուստ	112
3.4. Հանրային գույքի կորուստ.....	112
3.5. Բերքի/մշակաբույսի կորուստ.....	112
3.6. Ծառերի և ստացվող բերքի կորուստ	112
3.7. Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում.....	113
3.8. Աշխատանքի կորուստ	113
3.9. Օժանդակություն խիստ ազդեցության դեպքում.....	114
3.10. Վերաբնակեցման օժանդակություն.....	114
3.11. Օժանդակություն խոցելի անձանց/ԱԵՏՏ-ներին.....	114
3.12. Ժամանակավոր ազդեցություններ	115
3.13. ՀՕՏ չնախատեսված ազդեցությունները, եթե այդպիսիք լինեն.....	115
3.14. Բարելավումների փոխհատուցում	116
4. Փոխհատուցման միավորի արժեքի գնահատում.....	116
5. Դատական կարգով օտարման պայմանները	116
5.1. Օտարման ծախսերը	117
6. Օրինականացման պայմանները.....	117
G. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ	119
1. Հանրային լումներ	119

2. ՀՕՏ փաստաթղթերի հրապարակումը.....	143
Ի. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	145
1. ՏԿՏՏՆ/ՏՕԻԿ	145
2. Տեղական ինքնակառավարման մարմինները	146
3. Ասիական զարգացման քանկ	146
4. Այլ նախարարություններ, կազմակերպություններ և գերատեսչություններ.....	146
5. ՀՕՏՕ իրականացման կարողությունները.....	146
6. ՀՕՏՕ իրականացման պատասխանատու մարմինների պարտականությունները.....	147
7. Կազմակերպչական կառուցվածքը.....	150
Ի. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	152
1. ԲԼՄ 1-ին ՄԱԿԱՐԴԱԿ –իրականացնող մարմին (ՏՕԻԿ)	153
1. ԲԼՄ 2-րդ ՄԱԿԱՐԴԱԿԸ -Գործադիր մարմին (ՏԿՏՏՆ)	155
1. Բողոքի քննումը դատարանում	156
1. ԲԼՄ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ	156
5) ԲԼՄ իրականացման բյուջեն.....	156
Ե. ՀՕՏՕ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ	157
1. ՀՕՏՕ-ի իրականացման նախապատրաստական փուլ	158
2. ՀՕՏՕ իրականացման ենթահատվածների սահմանումը.....	158
3. ՀՕՏՕ իրականացման փուլերը և գործողությունները.....	159
4. Դատական կարգով օտարման փուլ	161
5. ԱԵԱ-ների օրինականացման և կադաստրային ուղղումների գործընթացը.....	162
6. ՀՕՏՕ-ի իրականացման ժամանակացույցը	169
Կ. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	175
1. Ընդհանուր	175
2. Փոխհատուցում	175
2.1. Հողի փոխհատուցումը	175
2.2. Վարձակալության փոխհատուցումը.....	177
2.3. Շենքերի, շինությունների փոխհատուցումը	177
2.4. Ցանկապատերի և բարելավումների փոխհատուցումը	184
2.5. Մշակաբույսերի փոխհատուցումը	187
2.6. Ծառերի փոխհատուցումը	188
2.6.1 Պտղատու ծառերի փոխհատուցումը.....	188
2.6.2 Փայտանյութ տվող ծառերի փոխհատուցումը	188
2.6.3 Դեկորատիվ ծառերի փոխհատուցումը	189
2.6.4 Մասնավոր սեփականություն հանդիսացող հողակտորների օգտագործողներին տրվող փոխհատուցումը.....	189
2.6.5 Չտեղազննված անհասանելի վայրերի մրգատու ծառերի և մշակաբույսերի պայմանական բյուջեի գնահատումը	190
2.7. Ձեռնարկատիրական գործունեության և եկամտի կորստի փոխհատուցում	190
2.8. Վերականգնման օժանդակություններ.....	191
2.8.1. Օժանդակությունը խիստ ազդեցությունների դեպքում	191
2.7.1 Օժանդակությունը խոցելի խմբերին.....	192

2.8.2. Վերաբնակեցման և կենսապահովման միջոցների վերականգնման օժանդակություն.....	193
2.9. Գույքի գրանցման ծախսերը և կիրառելի հարկերը.....	194
2.10. Վարչական ծախսեր.....	196
3. Անփոփ բյուջեն և ֆինանսավորման աղբյուրները.....	196
L. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	199
1. Ներածություն.....	199
2. Ներքին մոնիտորինգ.....	199

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՊՍՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Աղյուսակ E2. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները/անձինք՝ ըստ ազդեցության տեսակի.....	19
Աղյուսակ E3. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման ժամանակացույցը.....	28
Աղյուսակ B2. Ազդեցության ենթակա ընդհանուր շենքերը և շինությունները.....	48
Աղյուսակ B3. Ազդեցությունը բնակելի շենքերի և շինությունների վրա.....	48
Աղյուսակ B4. Ազդեցությունը ոչ բնակելի շինությունների վրա.....	50
Աղյուսակ B5. Ազդեցությունը շարժական գույքի վրա.....	53
Աղյուսակ B6. Փոխհատուցում և օժանդակություն բնակավայրերից վերաբնակեցվողների համար.....	55
Աղյուսակ B7. Բնակավայրից վերաբնակեցվողների կրած ազդեցության մանրամասները.....	56
Աղյուսակ B8. Ազդեցությունը ցանկապատերի վրա.....	57
Աղյուսակ B9. Ազդեցությունը բարելավումների վրա.....	59
Աղյուսակ B10. Ազդեցությունը մշակաբույսերի վրա.....	61
Աղյուսակ B11. Ազդեցությունը մրգատու ծառերի վրա.....	63
Աղյուսակ B12. Ազդեցությունը փայտանյութ տվող ծառերի վրա.....	65
Աղյուսակ B 13. Ազդեցությունը դեկորատիվ ծառերի և թփերի վրա.....	66
Աղյուսակ B14. Ձեռնարկատիրական գործունեության կորուստ.....	67
Աղյուսակ B15. Ազդեցության մակարդակը.....	72
Աղյուսակ B16. Խոցելի ԱԵՏՏ-ներ.....	72
Աղյուսակ B17. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները/անձինք՝ ըստ ազդեցության տեսակի.....	73
Աղյուսակ C2. Հնարավոր ազդեցության և բյուջի ամփոփում.....	79
Աղյուսակ D1. ՄՏՀ-ում ընդգրկված ԱԵՏՏ-ների և ՏՏ-ների ընդհանուր քանակը՝ ըստ համայնքների.....	81
Աղյուսակ D2. Ազդեցության ենթակա անձանց նկարագիրը՝ ըստ սեռի.....	82
Աղյուսակ D4. ԱԵՏՏ-ների նկարագիրը՝ ըստ էթնիկ կազմի.....	82
Աղյուսակ D5: ԱԵՏՏ ղեկավարների տարիքային բաշխումը՝ ըստ սեռի.....	83
Աղյուսակ D6. ԱԵՏՏ ղեկավարների ամուսնական կարգավիճակը.....	83
Աղյուսակ D7. ԱԵՏՏ անդամների ամուսնական կարգավիճակը.....	83
Աղյուսակ D8. ԱԵՏՏ անդամների տարիքն՝ ըստ սեռի.....	84
Աղյուսակ D9. ԱԵՏՏ ղեկավարների կրթությունն՝ ըստ սեռի.....	85
Աղյուսակ D10. ԱԵՏՏ անդամների կրթությունը՝ ըստ սեռի.....	85
Աղյուսակ D11. ԱԵՏՏ ղեկավարների զբաղվածության կարգավիճակը՝ ըստ սեռի.....	86
Աղյուսակ D12. ԱԵՏՏ անդամների զբաղվածության կարգավիճակը՝ ըստ սեռի.....	86
Աղյուսակ D13: Ծառայությունների հասանելիությունը՝ ըստ հեռավորության.....	88
Աղյուսակ D14. ԱԵՏՏ-ների խմելու ջրի աղբյուրը.....	89
Աղյուսակ D15. ԱԵՏՏ-ների սանիտարական հարմարությունները.....	89
Աղյուսակ D16. ԱԵՏՏ-ների կախվածությունը ջեռուցման համար օգտագործվող վառելիքի տեսակից ըստ տոկոսների.....	90
Աղյուսակ D17. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական տարեկան եկամուտների համամասնությունը՝ ըստ ԱԵՏՏ-ների.....	90
Աղյուսակ D18. ԱԵՏՏ-ների եկամտի աղբյուրները.....	91

Աղյուսակ D19. ԱԵՏՏ-ների պատկանող գույքը.....	92
Աղյուսակ D20. ԱԵՏՏ-ների պատկանող անասունները.....	92
Աղյուսակ D21. Ընտանիքի միջին ծախսը.....	93
Աղյուսակ D22. Պետական նպաստներ ստացող տնային տնտեսությունները.....	94
Աղյուսակ D23. Տնային տնտեսություններին վերաբերող հարցերի շուրջ որոշումների կայացման գործընթացին կանանց մասնակցությունը.....	95
137. Հետազոտված ԱԵՏՏ-ների մոտ 45.79%-ն աղքատ է: Աղքատության գնահատումը կատարվել է՝ ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀԱՎԾ) մեթոդաբանության: Մեթոդաբանությունը կիրառում է ամսական միջին սպառողական ցուցանիշները ՏՏ յուրաքանչյուր անդամի համար՝ հաշվարկված ըստ սննդամթերքի և ապրանքների զամբյուղի արժեքի: ՏՏ-ն համարվում է ծայրահեղ աքատ, եթե ամսական միջին սպառումը մեկ չափահաս անդամի կտրվածքով չի գերազանցում ծայրահեղ աղքատության շեմը (սննդամթերքի զամբյուղի արժեքը) և աքատ, եթե ընդհանուր միջին ծախսերը բարձր են ծայրահեղ աղքատության շեմից, սակայն ցածր են աղքատության ընդհանուր շեմից (ապրանքների զամբյուղի արժեքը): ՀՀ ԱՎԾ-ն ծայրահեղ աղքատության (սննդամթերք) մակարդակը հաշվում է 27,370.40 ՀՀ դրամ, իսկ աղքատության մակարդակը՝ 48,445.60 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր տնային տնտեսության համար (մանրամասները տե՛ս Աղյուսակ D24-ում):	95
Աղյուսակ D24. Խոցելի աղքատ ԱԵՏՏ-ները*	95
Աղյուսակ D25. Խոցելի աղքատ ԱԵՏՏ-ներն՝ ըստ համայնքների.....	96
Աղյուսակ E1. ՀՕՏ-ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համեմատությունը ԵՆԲ-ի Անվտանգության մեխանիզմների հայտարարագրի պահանջների հետ.....	100
Աղյուսակ F1. Իրավունքների սխեմա	105
Աղյուսակ G1. ՀՕՏ՝ վերջնականացման ՀԼ-ների ժամանակացույցը	119
Աղյուսակ G2. Մանսակիցների բաշխումը՝ ըստ սեռի.....	120
Աղյուսակ G3. Հարցերը և պատասխանները՝ ըստ համայնքների.....	122
Աղյուսակ H1. ՀՕՏ՝ իրականացման գործընթացում ներգրավված մարմինների դերը և պարտականությունները	147
Պատկեր H1. ՀՕՏ ինստիտուցիոնալ կառուցվածքը և կապերը.....	151
Աղյուսակ J4. ՀՕՏ-ի իրականացման ժամանակացույցը.....	169
Աղյուսակ K1. Ազդեցության ենթակա հողերի փոխհատուցման արժեքները՝ ըստ հողի սեփականության կարգավիճակի.....	177
272. Աղյուսակ K2. Վարձակալված հողերի փոխհատուցումը.....	177
Աղյուսակ K3. Շինությունների և կառույցների փոխհատուցումը	178
Աղյուսակ K4. Բնակելի շենքերի, շինությունների փոխհատուցումը.....	178
Աղյուսակ K5: Ոչ բնակելի շինությունների փոխհատուցումը.....	180
Աղյուսակ K6. Ցանկապատերի փոխհատուցումը.....	184
Աղյուսակ K8. Մշակաբույսերի փոխհատուցում.....	187
Աղյուսակ K9. Պտղատու ծառերի փոխհատուցումը.....	188
Աղյուսակ K10. Փայտանյութ տվող ծառերի փոխհատուցումը	189
Աղյուսակ K11. Դեկորատիվ ծառերի և թփերի փոխհատուցումը	189
Աղյուսակ K13. Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ների փոխհատուցումը.....	192
Աղյուսակ K14: Սոցիալապես խոցելի անձանց տրվող օժանդակությունը	192
Աղյուսակ K15. Տրանսպորտային ծախսեր	193

Աղյուսակ K16. Տրանսպորտային ծախսերը՝ շարժական գույքի համար.....	193
Աղյուսակ K17. Կենսապահովման միջոցների վերականգնման օժանդակություն.....	194
Աղյուսակ K18. Գույքի օտարման և գրանցման վճարներ.....	194
Աղյուսակ K19. Ազդեցության ենթակա գույքի համար ավելացած արժեքի հարկը.....	196
Աղյուսակ K20. Օրինականացման և կադաստրային ուղղումների ծախսերը.....	196
Աղյուսակ K21. Դատական ծախսերը.....	196
Աղյուսակ K22. Հողի նպատակային նշանակության փոփոխման ծախսերը.....	196
Աղյուսակ K23. ՀՕՏ իրականացման ամփոփ բյուջեն.....	197

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տնային տնտեսություն
ԱԵՏՏՂ	Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարներ
ԱԵԱ	Ազդեցության ենթակա անձ
ԱԶԲ	Ասիական զարգացման քանկ
ԱՄ	Ազդեցության միջանցք
ԱՄԳ/ԱՄԱԽ	Արտաքին մոնիտորինգի գործակալություն/Արտաքին մոնիտորինգի անկախ խորհրդատու
ԱՀ/ԱՄՀՀ	ՀՕՏԾ իրականացման ավարտական հաշվետվություն, ՀՕՏԾ իրականացման արտաքին մոնիտորինգի համապատասխանության հաշվետվություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱԳԿՊԿ	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
ԱՄՔՀ	Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագիր
ԲԼՄ/ԲՔԽ/ԲԱԱ	Բողոքների լուծման մեխանիզմ, Բողոքների քննման խումբ, Բողոքի առանցքային անձ
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ԻՍ	Իրավունքների սխեմա
ԻԳ	Իրականացնող գործակալություն
ԾԱՀ	Ծրագրի առաջընթացի վերաբերյալ կիսամյակային հաշվետվություն (ԵՆԲ-ի համար)
ԿԻՀ	Կենսապայմանների ինտեգրված հետազոտություն
ԿԲՄՄԱՀ	Կիսամյակային բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի առաջընթացի հաշվետվություն
ՀԼ	Հանրային լուսմներ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԴ	ՀՀ դրամ
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ՀՕՏ	Հողի օտարում և տարաբնակեցում
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՀՀՃՄՆԾ	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր»
ՄնԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՄՆ	Մանրամասն նախագիծ
ՄՉՀ	Մանրամասն չափագրման հետազոտություն
ՍՏՀ	Սոցիալ-տնտեսական հետազոտություն
ՍԵԱԽ	Սոցիալական երաշխիքների աջակցության խորհրդատու
ՏԲ	Տեղաբնիկներ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԾԻԿ	Տրանսպորտային ծրագրի իրականացման կազմակերպություն
ՏԾ	Տարաբնակեցման ծրագիր
ՏՀԹ	Տարաբնակեցման համակարգող թիմ
ՏԿՏՏՆ	Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ՏՏՂ	Տնային տնտեսության ղեկավար
ՕԳ	Օտարման գոտի

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ազդեցության ենթակա տնային տնտեսություն (ԱԵՏՏ)	Ազդեցության ենթակա տնային տնտեսությունը որպես ամբողջական մաս: ԱԵՏՏ-ն գործում է որպես մեկ տնտեսական և ընտանեկան միավոր և կարող է բաղկացած լինել մեկ անձից, նույնիսկ ընտանիքից կամ ընդլայնված ընտանիքից: Դա փոխհատուցում ստացող/վերականգնման ենթակա կարևորագույն միավոր է:
Ազդեցության ենթակա անձ/մարդիկ (ԱԵԱ)	Ցանկացած անձ, ով Ծրագրի իրականացման արդյունքում ազդեցության է ենթարկվում հողի, ջրի և այլ բնական ռեսուրսների օգտագործման փոփոխության առումով կամ կրում է եկամտի կորուստ: Սա ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ տնտեսական տեղահանումը:
Փոխհատուցում	Կանխիկով, կամ այլ կերպ կատարվող վճարում՝ ակտիվների օտարման դիմաց:
Կասեցման ամսաթիվ	Սա վերաբերում է այն ամսաթվին, որից առաջ Ծրագրի ազդեցության ենթակա հատվածները զբաղեցնող կամ օգտագործող սեփականատերերին/վարձակալներին/օգտագործողներին իրավասու են ճանաչվել որպես ազդեցության ենթակա անձ/ՏՏ Ծրագրի ներքո: Փոխհատուցման իրավունքները սահմանափակվում են կասեցման ամսաթվով՝ յուրաքանչյուր ենթահատվածի համար որը օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրն է (արձանագրությունների ստորագրումը ԱԵԱ-ների և ձեռք բերողի կողմից), որտեղ արձանագրվում են իրականացված մարդահամարի, մանրամասն չափագրման հետազոտության և ազդեցությունների գնահատման տվյալները: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրվանից հետո կատարված բարելավումների համար փոխհատուցում չի տրվում, բացառությամբ Օրենքով և ՀՕՏԾ-ով սահմանված դեպքերի: Օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում տրվում է միայն ՀՕՏԾ-ով սահմանված դեպքերում և կարգով: Մյուս բոլոր դեպքերում նշված իրավունքները դադարեցվում են՝ առանց փոխհատուցման իրավունքի:
Բացառիկ՝ գերակա հանրային շահ	Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը:
Հողի օտարում	Գործընթաց, որն ուղղված է ՀՀ կառավարության որոշմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված հողի կամ դրա մի մասի (և դրան ամրակցված անշարժ գույքի, գույքային իրավունքների և այլն) օտարումը հասարակության և պետության կարիքների համար՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:
Փոխհատուցման իրավասություն	Փոխհատուցում, եկամտի վերականգնում, տեղափոխման աջակցություն, եկամտի փոխարինում և վերաբնակեցում ներառող այն միջոցառումների ամբողջությունը, որոնք պետք է տրամադրվեն ազդեցության ենթակա անձանց՝ կախված նրանց կորուստների կամ ազդեցությունների բնույթից՝ նրանց տնտեսական, սոցիալական հիմքերը և իրավունքները վերականգնելու համար:

Բարելավումներ

Հողամասերում կառուցված շենքեր, շինություններ կամ կառույցներ (ստորգետնյա և վերգետնյա), այդ թվում՝ բնակելի շինություններ՝ իր տնտեսական շինություններով կամ կառույցներով, այգետնակը/ամառանոցը՝ այգեգործական զանգվածում առանձին հողամասի վրա կառուցված իր տնտեսական շինություններով կամ կառույցներով, հասարակական և արտադրական նշանակության շինությունները, կիսակառույց շինությունները, նոր կառուցված, ձեռքբերված կամ փոփոխություններ կրած և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված անշարժ գույքը, որը դեռևս չի ստացել պետական գրանցում, ենթակառուցվածքները, ինժեներական ցանցերը և այլն, ինչպես նաև հողամասի անբաժանելի բարելավումները:

Հյուրընկալող բնակչություն

Համայնք, որը տեղակայված է այն տարածքի հարևանությամբ, որտեղ Օրագրի շահառուները կամավոր կտարաբնակեցվեն Օրագրի շրջանակներում:

Տեղաբնիկներ (ՏԲ)

ԱԶԲ-ի Տեղաբնիկների վերաբերյալ քաղաքականության շրջանակներում կիրառվող «Տեղաբնիկ մարդիկ» տերմինը ենթադրում է ընդհանրական մի հասկացություն, որը դուրսին չէ մեկ բառով նկարագրելը: Ազգային/էթնիկ փոքրամասնություն տերմինը մեկն է այն տերմիններից, որը վերաբերում է ԱԶԲ քաղաքականության շրջանակներում ներկայացվող «տեղաբնիկ մարդիկ» հասկացությանը: Մյուս նմանօրինակ տերմիններն են՝ «մշակութային փոքրամասնություններ», «տեղաբնիկ մշակութային համայնքներ», «ցեղեր» «սոցիալապես խոցելի ցեղեր», «բնիկներ» և «աբորիգեններ»: Ընդունված կամ նախընտրելի տերմինները կամ սահմանումները տարբեր երկրներում տարբեր են: «Տեղաբնիկներ» տերմինը օգտագործվում է ՄԱԿ-ի փաստաթղթերում և ԱԶԲ-ի կողմից կիրառվում է միայն հարմարության տեսանկյունից: Հայաստանում ավելի կիրառելի է «ազգային փոքրամասնություն» տերմինը: Այդ իմաստով ԱԶԲ քաղաքականության շրջանակներում «տեղաբնիկներ» հասկացության համապատասխանության համար «ազգային փոքրամասնությունը»-ը պետք է համարվի *«ազգաբնակչության այն մասը, որն իր սոցիալական և մշակութային ինքնությամբ տարբերվում է գերակայող, հիմնական հասարակությունից, ինչի պատճառով զարգացման ընթացքում նրանք հավակնում են լինել խոցելի»:*

Չձևակերպված օգտագործող

ԱԵԱ-ն, որն օգտագործում է ազդեցության ենթակա հողակտորը կամ ակտիվը սեփականատիրոջ հետ չձևակերպված/բանավոր համաձայնության հիման վրա, ինչը գրավոր հավաստվում է սեփականատիրոջ կողմից (տեղեկանքի կամ այլ ձևով):

Մարզ-Համայնք

Հայաստանը բաժանված է 10 մարզի: Մարզի գործադիր կառավարման դեկավարը մարզպետն է, որը նշանակվում է Կառավարության կողմից: Մարզերից յուրաքանչյուրը բաժանված է համայնքների, որոնք կառավարվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և կարող են բաղկացած լինել մեկ կամ մի քանի բնակավայրերից: Բնակավայրերը դասակարգվում են քաղաքների և գյուղերի: 2007 թվականի դրությամբ ՀՀ-ն ունի 915 համայնք (որից 49-ը՝ քաղաքային և 866-ը՝ գյուղական): Երևանը նախկին մարզային կարգավիճակի փոխարեն, այժմ ունի համայնքի կարգավիճակ և ընտրված քաղաքապետ:

Վերականգնում	Ոչ կամավոր տարաբնակեցման քաղաքականության շրջանակներում նախաձեռնվող փոխհատուցման միջոցառումներ, որոնք այլ են, քան օտարված ակտիվների փոխարինման արժեքի վճարումը:
Վերաբնակեցում	ԱԵԱ-ների կամ ԱԵՏՏ-ների ֆիզիկական տեղափոխում իրենց մինչ Ծրագիրն իրականացնելը բնակավայրից, որը պահանջում է կացության կամ ակտիվների վերակառուցումը այլ վայրում:
Վերաբնակեցման արժեք	Արժեք, որը պարտադիր պետք է փոխարինի ազդեցությանը ենթակա ակտիվը/առարկան նույն արժեքը և որակը ունեցող համարժեք ակտիվով առանց գործարքային և այլ ծախսերի: Վերաբնակեցման արժեքը կարող է որոշվել տարբեր եղանակներով ելնելով ազդեցությանը ենթակա առարկայի տեսակից և ծրագրում գործող պայմաններից հետևյալ կերպ. ա) հող՝ գործող շուկայական գինը, որը որոշվել է հողի հետ կապված գործարքների հետազոտության հիման վրա, կամ, եթե հողի շուկան բացակայում է, ազդեցությանը ենթակա հողակտորի մթերատու արժեքը/վերականգնման գինը, բ) շենքեր՝ ազդեցությանը ենթակա շենքի ամբողջական վերականգնման գինը, ներառյալ շինարարական նյութերը, բանվորական ուժը և տրանսպորտային ծախսերը առանց ամորտիզացիոն/փրկված նյութերի, գ) մշակաբույսեր՝ գործող շուկայական գինը և դ) ծառեր՝ շուկայական գործակցով եկամտի կորուստներ (բերքատու/փայտանյութ հանդիսացող ծառեր) և վերականգնման գինը (ոչ բերքատու ծառեր/նորատունկեր):
Տարաբնակեցում	Ծրագրի իրականացման արդյունքում ԱԵԱ-ների սեփականության և/կամ կենսամակարդակի վրա բացասական ազդեցությունը մեղմացնելու համար նախատեսված բոլոր միջոցառումները, ներառյալ՝ փոխհատուցում, վերաբնակեցում (անհրաժեշտության դեպքում) և հանրային գույքի վերականգնում:
Տարաբնակեցման պլան/ծրագիր	Գործողությունների ժամանակացույց՝ տարաբնակեցման ռազմավարությունը, նպատակները, իրավունքները, գործողությունները, պարտավորությունները, մոնիտորինգը և գնահատումը հստակեցնող բյուջեի բաշխմամբ:
Խոցելի ԱԵՏՏ-ներ	Խոցելի են համարվում հետևյալ ԱԵՏՏ-ները. ա) աղքատ ԱԵՏՏ-ներ, որոնց կազմում առկա ընտանիքը (ները) հաշվառված է (են) ընտանիքի անապահովության գնահատման համակարգում և ստանում են ընտանեկան նպաստ, բ) ԱԵՏՏ-ներ, որոնք ղեկավարվում են կնոջ կողմից, որտեղ կայուն եկամուտ ունեցող (առնվազն նվազագույն ամսական աշխատավարձի չափով) այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ բացառությամբ զինծառայություն անցնող կամ քսաներեք տարին չլրացած ցերեկային ուսուցմամբ սովորողները, գ) ԱԵՏՏ-ներ, որոնք ղեկավարվում են տարեց կենսաթոշակատուի կողմից՝ առանց ԱԵՏՏ այլ չափահաս աշխատունակ անդամի առկայության, դ) ԱԵՏՏ-ներ, որոնք ղեկավարվում են 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամների կողմից, որտեղ կայուն եկամուտ ունեցող (առնվազն նվազագույն ամսական աշխատավարձի չափով) չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ բացառությամբ զինծառայություն անցնող կամ քսաներեք տարին չլրացած ցերեկային ուսուցմամբ սովորողները, (iv) բնակավայրից վերաբնակեցվողները, եթե նրանց ազդեցությանը ենթարկված բնակարանների համար հաշվարկված փոխհատուցման գումարը բավարար չէ նմանատիպ նվազագույն մակերեսով բնակարան վերականգնելու (ձեռք բերելու) համար տվյալ տարածաշրջանի շուկայի պայմանների հիման վրա:

**Իրավական
կարգավիճակ
ստանալու ենթակա
ԱԵԱ**

Այն ԱԵԱ-ները, ովքեր ազդեցության ենթակա հողամասի և դրան ամրակցված այլ անշարժ գույքի նկատմամբ թեև չունեն պետական գրանցում ստացած սեփականության կամ այլ գույքային իրավունքներ, սակայն ունեն որոշակի օրինական ակնկալիքներ, որոնք ծագում են օրենքի կամ իրավական այլ ակտի ուժով, կամ վերջիններիս գույքային իրավունքների ձեռքբերման հնարավորությունները ուղղակի բխում են կամ սահմանված են ՀՀ իրավական ակտերով:

**Իրավական
կարգավիճակ
ստանալու
ենթակա ԱԵԱ**

ոչ

Այն ԱԵԱ-ները, ովքեր թեև փաստացի տիրապետում և օգտագործում են ազդեցության ենթակա հողը և դրան ամրակցված գույքը, սակայն չունեն օրենքով ճանաչելի հնարավորություն կամ ակնկալիք ազդակիր հողամասի նկատմամբ ձեռք բերելու կամ ստանալու սեփականության կամ այլ գույքային իրավունքներ:

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

I. Ծրագրի պատմությունը

1. Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) համաձայնել է Եվրոպական ներդրումային բանկի հետ համատեղ (ԵՆԲ) ֆինանսավորել Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի հիմնանորոգման և բարելավման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): ԵՆԲ-ն ներգրավել է միջազգային խորհրդատուի՝ տեխնիկատնտեսական ուսումնասիրություն իրականացնելու, սոցիալական և բնապահպանական ազդեցությունները գնահատելու և մանրամասն նախագիծը պատրաստելու համար: Ծրագրային ճանապարհը մոտ 90 կմ է, հատված 1-ը (կմ 0+000-կմ 38+450) ֆինանսավորվում է ԵՆԲ-ի կողմից (ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող ճանապարհահատված), իսկ հատված 2-ը (կմ 38+450-կմ 91+190)՝ ԱԶԲ-ի կողմից (ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ճանապարհահատված): Հողի օտարման և շինությունների ապամոնտաժման առումով Ծրագիրը զգալի ազդեցություն չի ունենա: Սույն Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը (ՀՕՏՕ) մշակվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (ՏԿՏՏՆ), Ծրագրի իրականացնող գործակալության (ԻԳ) կողմից՝ Ծրագրի ՀՕՏ-ը պլանավորելու և իրականացնելու համար:

2. Սույն ՀՕՏՕ-ն հիմնված է ՀՀ համապատասխան օրենքների ու կարգավորումների, ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի (ԱՄՔՀ 2009), ինչպես նաև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» (Հյուսիս-հարավ ծրագիր) համար ՀՀ կառավարության կողմից ընդունված Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏԵ) պահանջների վրա¹: ՀՕՏԵ-ի կիրառումը պայմանավորված է այն փաստով, որ ՀՕՏԵ-ն հիմնված է ԱԶԲ ԱՄՔՀ 2009-ի անվտանգության մեխանիզմների հիմնական սկզբունքների վրա, համատեղում է լավագույն միջազգային անվտանգության մեխանիզմներն ու ազգային օրենսդրության պահանջները, ինչպես նաև ապահովում է ՀՕՏ սկզբունքների, իրավասությունների և ընթացակարգերի կայուն և շարունակական կիրառությունը ՏԿՏՏՆ-ի կողմից Հայաստանում իրականացվող նմանատիպ գյուղական ծրագրերում: Սույն ՀՕՏՕ-ի մշակման և իրականացման պատասխանատվությունը կրում է ՏԿՏՏՆ-ն: «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը (ՏՕԻԿ) գործում է որպես Ծրագրի Իրականացնող գործակալություն:

3. Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի հիմնանորոգման և բարելավման մանրամասն նախագիծը հաստատվել է 2015 թ., և մի շարք նախագծային լուծումներ են առաջարկվել՝ ՀՕՏ ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար, որոնց նախորդել են 2017 թ. կատարված ՄՉՀ վերլուծությունները:

II. Հողի օտարում և տարաբնակեցում. Ծրագրի իրականացմանն առնչվող պայմանները

4. Համաձայն ԱՄՔՀ 2009-ի դրույթների և ԱԶԲ-ի կողմից սահմանված գործելակերպի՝ Ծրագրի

¹ Սկզբնական ՀՕՏԵ-ն ընդունվել է 2010 թ., վերանայվել է 2015 թ. և 2017 թ-ին:

² Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակն (ՀՕՏԵ) ու փոխհատուցման սկզբունքները մշակվել են ՀՀ կառավարության կողմից «Հյուսիս-հարավ» ծրագրի համար՝ ԱԶԲ ԱՄՔՀ 2009-ի հիման վրա և կիրառելի են Ծրագրի բոլոր ենթափուլերի համար, որոնք ֆինանսավորվում են ԱԶԲ-ի Բազմափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) միջոցով: Այն արդեն կիրառվել է Տրանս 2-ի և Տրանս 3-ի ՀՕՏԵ-ների իրականացման համար և կկիրառվի հետագա տրանշների և հատվածների համար, այդ թվում՝ Եվրասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող հատվածների համար:

հաստատումը/իրականացումը կհիմնվի հետևյալ պայմանների վրա.

- (i) **Ծրագրի իրականացման ձևաչափը** պայմանավորված է հետևյալով՝ ա) ՀՕՏԾ-ի վերջնականացումը՝ որպես ԱԶԲ-ի համար ընդունելի իրականացման համար պատրաստ փաստաթուղթ և դրա հրապարակումը:
- (ii) **Շինարարական աշխատանքների մեկնարկը.** իրականացման համար պատրաստ ՀՕՏԾ-ի լիարժեք իրականացում (լիարժեք փոխհատուցման/վերականգնման օժանդակության տրամադրում), ինչը պատշաճորեն կարձանագրվի ԳՄ-ի կողմից ԱԶԲ-ին ներկայացվող հաշվետվություններում³:

III. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նպատակն ու շրջանակը

5. Սույն ՀՕՏԾ-ն գնահատում է Ծրագրի ազդեցությունները և մանրամասնում է պահանջվող փոխհատուցման և վերականգնման միջոցառումները՝ հիմք ընդունելով վերջնական մանրամասն նախագիծը, ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) վերջնական մարդահամարը և յուրաքանչյուր ազդեցության ենթակա հողամասի համար իրականացված Մանրամասն չափագրման հետազոտությունը (ՄՉՀ): Ազդեցության ենթակա հողամասերի և շինությունների գնահատումը հիմնված է փոխարինման արժեքի դրույքաչափերի վրա: Ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) թիվը ստացվել է հողերի և գույքերի պաշտոնական գրանցումների հիման վրա և հաստատվել/թարմացվել է տուն առ տուն իրականացված մարդահամարի միջոցով: ԱԵԱ-ների սոցիալ-տնտեսական պատկերը ստացվել է տնային տնտեսությունների 100% ընտրանքով սոցիալ-տնտեսական հետազոտության (ՍՀ) միջոցով՝ իրականացված 2017 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Սույն ՀՕՏԾ-ի նպատակն է բացահայտել Ծրագրի իրականացման հետևանքով ազդեցության ենթակա բոլոր անձանց և իրավաբանական անձանց, գնահատել ազդեցության չափը (օրինակ՝ ինչպիսի կորուստներ նրանք կկրեն և դրանց արժեքը) և սահմանել ինչպես կփոխհատուցվեն նրանք կամ կվերականգնվի նրանց եկամուտը՝ ապահովելով ոչ պակաս, քան «առանց ծրագրի» իրավիճակում նրանց ունեցած կենսամակարդակը: Բոլոր դեպքերում հիմնական նպատակն է առնվազն վերականգնել ԱԵԱ-ների կենսամակարդակը և կյանքի որակը: ՀՕՏԾ-ի առաջնային նպատակն է ապահովել անհրաժեշտ մանրամասներ փոխհատուցման, վերաբնակեցման և վերականգնման համար, այդ թվում՝ i) կորուստների չափի և ծրագրի ազդեցության բացահայտումը, ii) տեղեկատվության հրապարակումը, հանրային լսումները և մասնակցությունը, iii) վերականգնման և փոխհատուցումների վճարման քաղաքականությունը և շրջանակը, (iv) խիստ ազդեցության ենթակա և խոցելի տնային տնտեսությունների վերականգնման ծրագիրը, v) բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմը, vi) տարաբնակեցման բյուջեն և ֆինանսավորման պլանը, ներառյալ՝ կորցրած գույքի, վերաբնակեցման և վերականգնման փոխհատուցման արժեքի գնահատումը, vii) ինստիտուցիոնալ շրջանակը և ՀՕՏԾ իրականացման ժամանակացույցը և viii) ՀՕՏԾ իրականացման մոնիտորինգը:

6. Միջազգային փորձի համաձայն՝ ՀՕՏԾ-ի մշակման ընթացքում հաշվի է առնվել ՀՕՏ ազդեցությունները նվազագույնի հասցնելու հանգամանքը: Մասնավորապես, հնարավոր եղավ

³ ՀՕՏԾ-ի իրականացման Ավարտական հաշվետվությունը կպատրաստվի ՏԾԻԿ-ի կողմից վարձված Արտաքին մոնիտորինգի անհատ խորհրդատուի (ԱՄԱԽ) կողմից:

հարմարեցնել սկզբնապես սահմանված օտարման գոտին նախագծողների կողմից առաջարկվող նախագծային լուծումներին՝ դաշտում կատարված ՄՉՀ-ի հիման վրա: Արդյունքում օտարման գոտին վերանայվել է, և ազդեցությունները գնահատվել են համապատասխանաբար:

IV. Ազդեցությունների ամփոփում

7. ԱԵՏՏ/ԱԵԱ մարդահամարը և ազդեցության ենթակա ողջ գույքի ՄՉՀ հետազոտությունն իրականացվել են 2017 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ժամանակահատվածում:

8. Մարդահամարի արդյունքում բացահայտվել է Ծրագրի հետևանքով ազդեցության ենթարկվող 172 տնային տնտեսություն (ԱԵՏՏ), այդ թվում՝ հողի/շինությունների սեփականատերերն ու օգտագործողները՝ ընդհանուր տնային տնտեսության 492 անդամներով:

9. Ընդհանուր առմամբ՝ Ծրագրի նպատակով 168 ԱԵՏՏ-ից կօտարվի 444 հողակտոր՝ ընդհանուր 526.018,54 մ² մակերեսով, որոնք տեղակայված են 12 համայնքում: Ազդեցության են ենթարկվում 15.739.3 մ² մասնավոր սեփականություն, 177.197,8 մ² համայնքային սեփականություն և 332.946,34 մ² պետական (ՀՀ սեփականություն) սեփականություն հանդիսացող հողեր: 135,1 մ² ընդհանուր տարածքով 3 հողակտորի սեփականության (իրավական) կարգավիճակը չի որոշվել: Ընդհանուր առմամբ՝ Ծրագրային տարածքում ազդեցության են ենթարկվում հողերի ընդհանուր մակերեսի (բոլոր տեսակի հողեր) 3%-ը կազմող մասնավոր, 33.7% համայնքային և 63.3% ՀՀ պետական սեփականություն հանդիսացող հողեր:

10. Ազդեցության ենթակա հողակտորները՝ ըստ լոտերի, համայնքների, սեփականության կարգավիճակի, ներկայացված են Աղյուսակ B-ում: Ազդեցության ենթակա ընդհանուր 444 հողակտորից 216-ը (48.7%) գտնվում է Լոտ 1-ում, մինչդեռ 114-ը (26.1%) և 112-ը (25.2%)՝ համապատասխանաբար Լոտ 2-ում և Լոտ 3-ում, ինչպես ներկայացված է ստորև բերված Աղյուսակ E2-ում:

Աղյուսակ E2. Ազդեցությունը հողի վրա՝ ըստ լոտերի և համայնքների

Լոտ/ կմ	Լոտ 1				Լոտ 2				Լոտ 3			Ընդհա նուր
	կմ 38+450-կմ 48+140				կմ 48+140-կմ 62+300				կմ 62+300-կմ 90+191			
Համայնքը/Իրա վական կարգավիճակը	Մասն ավոր	Համայն քային	Պետ ական ն	Չույ նակ անա ցված	Մասն ավոր	Համայն քային	Պետ ակա ն	Չույն ական ացված	Մասն ավոր	Համայնքա յին	Պետ ակա ն	
	No				No				No			
Ախթալա	-	-	-	-	-	-	-	-	-	7	2	9
Այգեհատ	2	10	4	-	-	-	-	-	-	-	-	16
Արճիս	-	-	-	-	-	-	-	-	1	2	1	4
Աքորի	-	-	-	-	-	2	-	-	-	-	-	2
Թումանյան	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
Հաղպատ	-	-	-	-	10	33	8	-	-	13	4	68
Նեղոց	-	-	-	-	-	-	-	-	4	26	5	35
Շնող	-	-	-	-	-	-	-	-	8	36	3	47
Ալավերդի քաղաք	20	45	4	1	5	45	11	2	-	-	-	133
Օձուն	28	94	7	-	-	-	-	-	-	-	-	129

Այրում*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հաղթանակ*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Պտղավան*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բազրատաշեն*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդհանուր	51	149	15	1	15	80	19	2	13	84	15	444

*Համայնքը գտնվում է Լոռու 3 հաստվածում, սակայն այդ համայնքում ազդեցություններ չեն արձանագրվել:

11. Ըստ սեփականության՝ մշտական ազդեցության են ենթարկվել հետևյալ ձևակերպված (օրինական) հողերը.

- i. **Մասնավոր սեփականություն.** 79 հողակտոր (23 գյուղատնտեսական, 18 ոչ գյուղատնտեսական)՝ 15.739,3 մ² մակերեսով: Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողերի մեծամասնությունը այգիներ են (22 հողակտոր՝ 5.777,4 մ² մակերեսով), մինչդեռ ոչ գյուղատնտեսական հողերը հիմնականում բնակելի հողեր են (18 հողակտոր՝ 2.432,9 մ² մակերեսով): Մասնավոր բնակելի հողի վրա վարձակալներ կամ օգտագործողներ չեն արձանագրվել:
- ii. **Համայնքային հողեր.** 313 հողակտոր (14 գյուղատնտեսական և 299 ոչ գյուղատնտեսական հող)՝ ընդհանուր 177.197,8 մ² մակերեսով: Ազդեցության ենթակա ոչ գյուղատնտեսական համայնքային հողերից 26-ը բնակելի նպատակներով օգտագործվում է չձևակերպված օգտագործողների կողմից, իսկ 60-ը՝ այլ նպատակներով: Ազդեցության ենթակա բոլոր համայնքային հողերից 212-ը՝ 91.663,4 մ² մակերեսով, գտնվում է անմիջապես Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) վարչարարության ներքո և սովորաբար համայնքի անդամների կողմից օգտագործվում է արտավայրերի, գյուղական ճանապարհների և այլ նպատակներով: 1 հողակտոր վարձակալված է, իսկ 91 հողակտոր՝ 54.097,4 մ² մակերեսով, օգտագործվում է չձևակերպված օգտագործող հանդիսացող 84 ԱԵՏՏ-ի կողմից:
- iii. **Պետական հողեր.** 49 հողակտոր՝ 332.946,34 մ² մակերեսով: Դրանց մեծամասնությունը (34 հողակտոր՝ 185.816,2 մ² մակերեսով) հատուկ նշանակության հողեր են՝ 20-ը՝ տրանսպորտի, 7-ը՝ գետերի, 5-ը՝ անտառային, 1-ը՝ արդյունաբերական: 49 հողակտորից 9-ը՝ 139.204,84 մ² մակերեսով, օգտագործվում է չձևակերպված օգտագործող հանդիսացող 11 ԱԵՏՏ-ի կողմից՝ որպես այգի և այլ նպատակներով:
- iv. **Չնույնականացված հողեր.** 135,1 մ² ընդհանուր մակերեսով 3 ոչ գյուղատնտեսական հողակտորների սեփականության կարգավիճակը, նպատակային և գործառնական նշանակությունը հնարավոր չէրավ պարզել ո՛չ կադաստրի, և ո՛չ էլ համայնքների միջոցով: Հողակտորները չեն օգտագործվում:

12. Ծրագրային ճանապարհի ծրագիծն ուղղակիորեն ազդեցության կենթարկի 55 հողակտորի վրա գտնվող 77 շինություն՝ 1032,07 մ² մակերեսով, որոնցից 45-ը բնակելի, իսկ 32-ը ոչ բնակելի շինություններ են: Ըստ ազդեցության ենթարկվող մակերեսի՝ բնակելի շինությունները (715,67 մ²) ոչ բնակելի շինությունների (316,40 մ²) համեմատ կրում են առավել զգալի ազդեցություն: Ծրագրի հետևանքով Ալավերդի, Այգեհատ և Օձուն համայնքներում ազդեցության են ենթարկվում 12 բնակելի տներ՝ իրենց օժանդակ կառույցներով (22 կառույց՝ 177,3 մ² մակերեսով): 12 բնակելի

տներին ֆիզիկապես կվերաբնակեցվեն միայն 6-ը (բազմաբնակարան շենք), քանի որ մնացածը փաստացի բնակեցված չեն: Մնացած 45 կառույցը՝ 715,67 մ² մակերեսով, կրում է ազդեցություն՝ առանց հիմնական շենքի (տան) կորստի:

13. Ծրագիրն ազդեցության կենթարկի 6 շարժական կառույց՝ 118.3 մ² մակերեսով, որոնցից պետք է տեղափոխվեն մետաղական կրպակը, մետաղական շինությունը և մետաղական տունը: Ծրագրի հետևանքով ընդհանուր առմամբ ազդեցության կենթարկվի 2.398,24 մ² ցանկապատ, որից 84,5 մ²-ին միաձույլ ե/բետոնից է, 2.266,57 մ² -ին՝ քարից, իսկ 47,17 մ² մակերեսով պատ բազալտից ու քարից են:

14. Ծրագրի հետևանքով միայն մեկ ձեռնարկատիրական գործունեություն կկրի մշտական ազդեցություն: Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունը փոքրիկ մթերային խանութ է, որը գտնվում է Ալավերդի քաղաքում՝ Սանահին երկաթուղային կայարանի մոտ: Այն միաժամանակ տեղակայված է երկու հողակտորի վրա, որոնցից մեկը՝ մասնավոր, իսկ մյուսը համայնքային հող է:

15. Ընդհանուր առմամբ՝ 151 մ² մակերեսով մշակաբույս կենթարկվի ազդեցության: ԱԵԱ-ները հիմնականում զբաղվում են մշակաբույսերի մշակմամբ Ալավերդիում, Օձունում, Արճիսում և Շնողում: Առավելապես աճեցվում են լոբի, լոլիկ և վարունգ՝ համապատասխանաբար 40 մ², 28 մ² և 41 մ² մակերեսներով: Ընդհանուր առմամբ՝ Ծրագրի ներքո ազդեցության կենթարկվի 13,758 մրգատու ծառ և թուփ, որոնցից 12,053-ը մրգատու թփեր են, իսկ 1,705 -ը՝ մրգատու ծառեր: Ազդեցության ենթակա թփերի և ծառերի մեծամասնությունը բերքատու է (98%): Ազդեցության են ենթարկվում 24 նորատունկ և 161 ոչ բերքատու ծառ: Ազդեցության ենթարկվող թփերի մեծամասնությունը կազմում են մոշենին և ազնվամորին՝ համապատասխանաբար 4420 և 7515 թուփ: Ազդեցության ենթարկվող ծառերի մեծամասնությունը կազմում են սալորենին, թզենին, թթենին, հոնենին և խաղողը: Մրգատու ծառերը ազդեցության են ենթարկվել հիմնականում Օձունում, Արճիսում և Շնողում: Փայտանյութ տվող 40 ծառ ազդեցության է ենթարկվում Ծրագրի արդյունքում, որից 14-ը՝ Օձունում: Փայտանյութ տվող ծառերից առավելապես ազդեցության են ենթարկվում հացենին, ակացիան և թխկին՝ համապատասխանաբար 18, 8 և 8 ծառ: Ազդեցության ենթարկվող բոլոր փայտանյութ տվող ծառերի ավելի քան կեսը (52.5%) փոքր ծառեր են: Ազդեցության են ենթարկվում նաև 141 դեկորատիվ ծառ և թուփ, որոնցից 134-ը՝ դեկորատիվ թփեր, իսկ 7-ը՝ դեկորատիվ ծառեր են:

16. Ընդհանուր առմամբ՝ 64 ԱԵՏՏ կփոխհատուցվի որպես խիստ ազդեցության ենթարկված ԱԵՏՏ-ներ՝ կորցնելով իրենց արտադրական հողից ստացվող գյուղատնտեսական եկամտի 10%-ը կամ ավելին, մինչդեռ 6 ԱԵՏՏ կվերաբնակեցվեն: Հարկ է նշել, որ վերաբնակեցվող 2 ԱԵՏՏ իրենց ազդեցության ենթակա հողերից կկորցնեն նաև 10% կամ ավելի գյուղատնտեսական նշանակության հողեր: 13 ԱԵՏՏ պայմանականորեն համարվում է խոցելի իրենց ունեցած ընդհանուր արտադրական հողի վերաբերյալ տվյալների բացակայություն պատճառով: Հետևաբար այս 13 ԱԵՏՏ-ի կրած ազդեցությունը ենթակա է ստուգման ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում՝ նախքան փոխհատուցումների վճարումը:

17. Արձանագրվել են խոցելի ԱԵՏՏ-ներ: «Ընտանիքների խոցելիության գնահատման համակարգում» (ԸԽԳՀ) գրանցված խոցելի աղքատ ընտանիքները 8-ն են: Ավելին, 15 տնային տնտեսություն ղեկավարվում է կանանց կողմից, իսկ 14-ը՝ տարեցների: Հաշմանդամների կողմից

դեկավարվող ԱԵՏՏ-ներ չկան: Հաշվի առնելով, որ որոշ տնային տնտեսություններ որակավորվել են խոցելիության բազմաթիվ հատկանիշներ ունենալու պատճառով, խոցելի տնային տնտեսությունների ընդհանուր թիվը 28 է, որից 57.1%-ը՝ Ալավերդիում:

18. Տարբեր տեսակի ազդեցության ենթակա տնային տնտեսությունների (ԱԵՏՏ-ներ) և ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ-ներ) վերաբերյալ տվյալները՝ ըստ ազդեցության տեսակի, ինչպես նաև գուտ թվերը՝ առանց կրկնահաշվարկի, ամփոփ ներկայացված են ստորև.

Աղյուսակ E2. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները/անձինք՝ ըստ ազդեցության տեսակի

Ազդեցության տեսակը	Ազդեցության տեսակ	ԱԵՏՏ-ները ըստ ազդեցության տեսակի	ԱԵԱ-ները ըստ ազդեցության տեսակի	ԱԵՏՏ-ները՝ առանց կրկնահաշվարկի	ԱԵԱ-ների բացարձակ թիվը	Նշումներ
	Ազդեցության ենթակա միավորը No/ մ/ մ ²	No.	No.	No.	No.	
Ա. Հող						
Ա1. Մասնավոր հող	15.739,30	91	266	91	266	-
Ա2. Վարձակալված հող	5,00	1	1	1	1	-
Ա3. Համայնքային հող	177.192,80	86	274	68	199	18 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում
Ա4. Պետական հող	332.946,34	11	29	8	16	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում, 2 ԱԵՏՏ ընդգրկված է Ա3 -ում
Ա5. Չնույնականացված	135,10	-	-	-	-	-
Միջանկյալ ընդհանուր Ա	526.018,54	-	-	168	482	-
Բ. Շինություններ						
Բ1. Բնակելի	715,67	27	74	-	-	15 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում, 12 ԱԵՏՏ ընդգրկված է Ա3-ում
Բ1 Ոչ բնակելի	316,4	22	76	-	-	5 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում, 16 ԱԵՏՏ ընդգրկված է Ա3-ում, 1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա4-ում
Միջանկյալ ընդհանուր Բ	1.032,07	-	-	-	-	-
Գ. Ծարձական կառույցներ						

Ազդեցության տեսակը	Ազդեցության տեսակ	ԱԵՏՏ-ները՝ ըստ ազդեցության տեսակի	ԱԵԱ-ները՝ ըստ ազդեցության տեսակի	ԱԵՏՏ-ները՝ առանց կրկնահաշվարկի	ԱԵԱ-ների բացարձակ թիվը	Նշումներ
	Ազդեցության ենթակա միավորը No/ մ/ մ²	No.	No.	No.	No.	
Գ1. Շարժական կառույցներ	118,30	6	15	-	-	5 ԱԵՏՏ ընդգրկված է Ա3-ում, 1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա4-ում
Միջանկյալ ընդհանուր Գ	118,30	-	-	-	-	-
Դ. Ցանկապատ						
Դ1. Ցանկապատ	2.398,24	52	201	-	-	27 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում, 25 ԱԵՏՏ ընդգրկված է Ա3-ում
Միջանկյալ ընդհանուր Դ	2.398,24	-	-	-	-	-
Ե. Բարելավումներ						
Ե1. Բարելավումներ (մ²)	238,60	76	280	-	-	33 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում, 38 ԱԵՏՏ ընդգրկված է Ա3-ում 5 ԱԵՏՏ ընդգրկված է Ա4-ում
Ե 2. Բարելավումներ (գ.մ.)	3.562,60					
Ե 3. Բարելավումներ (հատ)	38,00					
Միջանկյալ ընդհանուր Ե	-	-	-	-	-	-
Զ. Ծառեր						
Զ1. Մրգատու ծառեր	13.573,00	93	320	-	-	Բոլոր ԱԵՏՏ-ներն ընդգրկված են Ա1-ում, Ա3-ում և Ա4-ում
Զ 2. Փայտանյութ տվող ծառեր	40,00	10	34	-	-	
Զ 3. Դեկորատիվ ծառեր	141,00	23	76	-	-	
Միջանկյալ ընդհանուր Զ	13.754,00	-	-	-	-	-
Է. Մշակաբույսեր						
Է1. Մշակաբույսեր	151,00	7	31	-	-	4 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում, 3 ԱԵՏՏ ընդգրկված է Ա3-ում

Ազդեցության տեսակը	Ազդեցության տեսակ	ԱԵՏՏ-ները՝ ըստ ազդեցության տեսակի	ԱԵԱ-ները՝ ըստ ազդեցության տեսակի	ԱԵՏՏ-ները՝ առանց կրկնահաշվարկի	ԱԵԱ-ների բացարձակ թիվը	Նշումներ
	Ազդեցության ենթակա միավորը No/ մ/ մ²	No.	No.	No.	No.	
Միջանկյալ ընդհանուր Է	151,00	-	-	-	-	-
Ը. Ձեռնարկատիրական գործունեության կորուստ						
Ը1. Հարկային հայտարարագրով	1	2	6	1	5	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում
Միջանկյալ ընդհանուր Ը	1	2	6	1	5	-
Թ. ԱԵՏՏ-ների խոցելիությունը						
Թ1. Խոցելի ԱԵՏՏ-ներ	-	28	62	3	5	10 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում, 14 ԱԵՏՏ ընդգրկված է Ա3-ում 1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա4-ում
Միջանկյալ ընդհանուր Թ	-	-	-	3	5	-
Ժ. Վերաբնակեցման ազդեցություն						
Ժ1. Բնակավայրից վերաբնակեցում	-	6	25	-	-	Բոլոր ԱԵՏՏ-ներն ընդգրկված են Ա1-ում
Ժ2. Գյուղատնտեսական եկամտի 10% -ի կորուստ	-	60	194	-	-	19 ԱԵՏՏ- ընդգրկված է Ա1-ում, 35 ԱԵՏՏ- ընդգրկված է Ա3-ում, 6 ԱԵՏՏ- ընդգրկված է Ա4-ում,
Ժ3. Հողից բացի՝ այլ բարելավումներ	-	4	7	-	-	1 ԱԵՏՏ- ընդգրկված է Ա3-ում, 3 ԱԵՏՏ- ընդգրկված է Թ1-ում
Միջանկյալ ընդհանուր Ժ	-	-	-	-	-	-
Ընդհանուր	-	-	-	172	492	-

V. Փոխհատուցման իրավունքները և իրավասությունները

19. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» թարմացված ՀՕՏ-ն սույն Ծրագրի իրավական հիմքն է, որը հիմնված է ՀՀ օրենսդրության և ԱԶԲ ԱՄՔՀ 2009-ի պահանջների վրա: ՀՕՏ-ի կիրառումը պայմանավորված է այն փաստով, որ ՀՕՏ-ն համատեղում է լավագույն միջազգային անվտանգության մեխանիզմներն ու ազգային օրենսդրության պահանջները, ինչպես նաև, որ վերջինիս միջոցով ապահովվում է նաև ՀՕՏ սկզբունքների, իրավասությունների և ընթացակարգերի կայուն և շարունակական կիրառությունը ՏԿՏՆ-ի կողմից Հայաստանում իրականացվող նմանատիպ գյուղական ծրագրերում:

20. Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏ) համաձայն⁴ փոխհատուցման և/կամ առնվազն վերականգնման իրավունք ունեցող ԱԵԱ-ներն են՝ (i) գույքային իրավունքներ ունեցող կամ իրավական կարգավիճակ չունեցող ԱԵԱ-ները, (ii) գրանցված կամ չգրանցված վարձակալներ և օգտագործողներ, (iii) շենք/շինությունների, մշակաբույսերի, բույսերի կամ հողին ամրացված այլ օբյեկտների սեփականատերերը, (iv) ձեռնարկատիրական գործունեությունը, եկամուտը և աշխատավարձը կորցնող ԱԵԱ-ները: Մինևույն ժամանակ սույն ՀՕՏ-ի շրջանակներում սահմանվել է խոցելության նոր կատեգորիա՝ «բնակավայրից վերաբնակեցվող խոցելի ԱԵՏՏ-ներ»՝ կիրառման սահմանված պայմաններով: Ծրագրի ազդեցություններին համապատասխան մշակված Իրավունքների սխեման բերված է ստորև:

21. Օտարման գոտում ազդեցության ենթակա հողերի օտարման նպատակով ՀՀ կառավարությունը ազդեցության ենթակա հողերը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշում է ընդունել՝ համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (ՀՀ կառավարության No 1412-Ն առ 09.11.2017 թ. որոշումը): Փոխհատուցման իրավունքը սահմանափակված է կասեցման օրով, որը նույնն է բոլոր ԱԵԱ-ների համար՝ անկախ նրանց իրավական կարգավիճակից: Սա ազդեցության ենթակա գույքի նկարագրության արձանագրության կազմման օրն է (ԱԵԱ-ների և ձեռք բերողի կողմից արձանագրությունների ստորագրումը), որտեղ արձանագրվում են իրականացված մարդահամարի, մանրամասն չափագրման հետազոտության և ազդեցությունների գնահատման տվյալները:⁵

⁴ «Հյուսիս-հարավ» ծրագրի Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակն (ՀՕՏ) ընդունվել է 2010 թ. և թարմացվել է 2017 թ.:

⁵ Քանի որ ազդեցության ենթակա գույքի նկարագրության արձանագրության կազմման օրը կարող է տարբեր լինել յուրաքանչյուր գույքի համար, նշված ամսաթիվը հանդիսանում է ԱԵԱ-ի և ձեռք բերողի կողմից առաջին նկարագրության արձանագրության ստորագրման օրը:

Աղյուսակ E2. Ծրագրի համար մշակված իրավունքների սխեման

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
<p>1. Հողի կորուստ</p>	<p>ԱԵԱ-ներ, որոնք կորցնում են իրենց սեփականությունը հանդիսացող հողամասը կամ դրա մի մասը՝ անկախ ազդեցության չափից</p>	<p>Սեփականատեր</p>	<p>Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով՝ գնահատված շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15%՝ կամ փոխանակում ԱԵԱ-ի համարը նդունելի մեկ այլ համարժեք հողով:</p>
		<p>Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ</p>	<p>Օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ ԱԵԱ-ները կարող են ձեռք բերել սեփականության իրավունք կամ իրականացնել առկա իրավունքների պետական գրանցումը և փոխատուցվել որպես սեփականատեր:</p>
		<p>Վարձակալ (համայնքից, պետությունից)</p>	<p>Օրենսդրությամբ սահմանված դեպքերում վարձակալը կարող է ձեռք բերել սեփականության իրավունք և փոխհատուցվել որպես սեփականատեր կամ նրան, հողի սեփականատիրոջ (վարձատուի) համաձայնությամբ, կարող է տրվել նոր վարձակալություն:</p> <p>Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա վարձակալված հողի «շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%»-ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ի չափով, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14% -ի չափով, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ի չափով, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%-ի չափով:</p>
		<p>Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող գույքի վարձակալ</p> <p>Այլ գույքային իրավունք (սերվիտուտի, կառուցապատման, գրավի, հիփոթեքի, օգտագործման) ունեցողներ,</p>	<p>Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի կանխիկ փոխհատուցում</p> <p>Հողամասի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին, բացառությամբ վարձակալների, փոխհատուցումը տրվում է ազդակիր հողամասի դիմաց տրվող փոխհատուցման գումարից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		բացառությամբ վարձակալների	
		Իրավական գրանցման կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ	Այս ԱԵԱ-ները կատանան փոխհատուցում միայն հողի վրա կատարված բարելավումների դիմաց, սույն ՀՕՏԾ-ով սահմանված կարգով:
2. Բնակելի շենքեր, շինությունների կորուստ		Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ կառույցի նկատմամբ իրավունքների առկայությունից (ներառյալ՝ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա և ոչ ենթակա ԱԵԱ)	Բնակելի շենքի, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման արժեքին գումարած 15%-ի չափով, առանց ամորտիզացիոն մասհանումների և գործարքային ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար այն դեպքում, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:
3. Ոչ բնակելի շենքերի, շինությունների կորուստ	ԱԵԱ-երին սեփականության իրավունքով պատկանող և պետական գրանցում ստացած շենք, շինություններ	Սեփականատեր	Շենք, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման տրամադրում փոխարինման արժեք գումարած 15%-ի չափով: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասհանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը, շահագործումը և օտարումը օրենսդրորեն հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:
	Չձևակերպված շինություն քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողի վրա:	Ինքնակամ շինություն կառուցած ԱԵԱ-ները հողի սեփականատերերն են	Ինքնակամ շինության կորստի դեպքում կտրամադրվի փոխհատուցում ինքնակամ շինության փոխարինման արժեքի չափով՝ առանց 15% հավելավճարի:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
	Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա առկա ինքնակամ կառույց	Ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ	Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ-ին կտրամադրվի վերականգնման օժանդակություն՝ ինքնակամ կառույցի փոխարինման արժեքի չափով՝ հանած օրինականացման ծախսերը:
		Վերաբնակեցվող վարձակալ	Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:
4. Հանրային գույքի կորուստ	Համայնքային կամ պետական գույք	Համայնք/պետություն	Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի, անշարժ գույքի փոխհատուցում կամ պետական, համայնքային ազդակիր կառույցների կամ այլ գույքի վերակառուցում և նրանց գործառույթների վերականգնում՝ համայնքի, պետության իրավասու մարմնի համաձայնությամբ:
5. Մշակաբույսի կորուստ	Ազդեցության ենթակա մշակաբույսեր	Բարելավումներ կատարած բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	Մշակաբույսի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:
6. Ծառերի և ստացվող բերքի կորուստ	Ազդեցության ենթակա ծառեր և ստացվող բերք	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	Դրամական փոխհատուցում՝ հաշվարկված ծառի արժեքի շուկայական գներով՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:
7. Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում	Ձեռնարկատիրական գործունեություն ազդակիր հողում	Բոլոր ԱԵԱ-ները՝ անկախ հարկային հայտարարագրի ներկայացումից	<p>1. Ձեռնարկատիրական գործունեության (հարկային հայտարարագրերով)</p> <p>ա) մշտական ազդեցության դեպքում՝ միանվագ փոխհատուցում տարեկան գուտ եկամտի չափով,</p> <p>բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ գուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Պետական գրանցման կամ լիցենզիայի վճարները նույնպես կփոխհատուցվեն, եթե այդպիսիք առկա են:</p> <p>2) Ձեռնարկատիրական գործունեության (հայտարարագրի բացակայության դեպքում)</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			<p>ա) մշտական ազդեցության դեպքում՝ վերականգնման օժանդակություն նվազագույն ամսական աշխատավարձի չափով՝ 1 տարվա համար:</p> <p>բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ վերականգնման օժանդակության տրամադրում, հիմնված նվազագույն աշխատավարձի չափի վրա՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով մինչև առավելագույնը 1 տարի:</p>
8. Աշխատանքի կորուստ	Աշխատանքի մշտական կորուստ կամ հարկադիր պարապուրդ (ոչ աշխատողի մեղքով)	Ազդակիր կազմակերպությունում կամ ԱԶ-ում աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք	<p>Փոխհատուցման տրամադրում՝</p> <p>ա) մշտական ազդեցության դեպքում՝ վեց ամսվա միջին աշխատավարձի չափով</p> <p>բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ մինչև վեց ամիս միջին աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով:</p>
9. Օժանդակություն խիստ ազդեցությունների դեպքում	Գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորուստ և վերաբնակեցում	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ, ներառյալ՝ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	<p>ա) գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորստի դեպքում փոխհատուցում ազդեցության ենթակա հատվածում առկա 1 տարվա բերքի չափով:</p> <p>բ) վերականգնման օժանդակություն՝ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին՝ վեց ամսվա նվազագույն աշխատավարձի չափով:</p>
10. Վերաբնակեցման օժանդակություն	Օժանդակություն տեղափոխման նպատակով տրանսպորտային ծախսերը և ապրուստի միջոցները հոգալու համար	<p>Վերաբնակեցվող բոլոր ԱԵՏՏ-ները, ներառյալ՝ վարձակալները</p> <p>Ազդեցության ենթակա հողի վրա շարժական գույք/շինություն ունեցող բոլոր ԱԵԱ-ները, որոնք ենթակա են տարաբնակեցման՝ անկախ ազդակիր գույքի նկատմամբ ունեցած իրավունքներից</p>	<p>Դրամական օժանդակության տրամադրում՝ տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտային ծախսերը և մեկ ամսվա կենսապահովման ծախսերը հոգալու համար:</p> <p>Դրամական միջոցների հատկացում՝ տրանսպորտային ծախսերը հոգալու համար:</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
11. Օժանդակություն խոցելի անձանց/ԱԵՏՏ-ներին		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող, կանանց, տարեց կամ հաշմանդամ անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	ա) Դրամական օժանդակության տրամադրում՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ: բ) Դրամական օժանդակության տրամադրում՝ ազդեցության ենթակա բնակարանի փոխհատուցման արժեքի և սվյալ տարածաշրջանում նմանատիպ նվազագույն մակերես ունեցող բնակարանի շուկայական արժեքի միջև տարբերության չափով:
12. Ժամանակավոր ազդեցություն		Ժամանակավոր ազդեցություն կրող բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ-ները	Վնասների փոխհատուցում կտրամադրվի ժամանակավոր ազդեցության ենթակա դեպքերում փոխարինման արժեքով և սույն ՀՕՏՇ-ով սահմանված փոխհատուցման իրավունքներին համապատասխան:
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն		Փոխհատուցման իրավունքներ ունեցող ԱԵԱ/ԱԵՏՏ-ներ	Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՏՏՆ-ն կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը կամ օժանդակության տրամադրումը՝ ըստ ՀՕՏՇ դրույթների:
14. Բարելավումների փոխհատուցում	Այլ բարելավումներ, որոնք ներառված չեն իրավունքների սույն աղյուսակում, սակայն առկա են ազդակիր հողամասի վրա (բացառությամբ շարժական գույքի	Բարելավում կատարած ԱԵԱ-ներ	Փոխհատուցման տրամադրում՝ փոխարինման արժեքի չափով:

VI. Ծրագրի ինստիտուցիոնալ կառուցվածքը

22. Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (ՏԿՏՏՆ) հանդիսանում է Գործադիր մարմին (ԳՄ), իսկ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը (ՏՕԻԿ) Իրականացնող գործակալությունն է և Ծրագրի իրականացման համար կրում է ընդհանուր պատասխանատվություն, ներառյալ՝ ՀՕՏՇ-ի մշակումն ու իրականացումը: ՏՕԻԿ-ն ունի Սոցիալական ազդեցությունների կառավարման ծառայություն՝ բաղկացած երեք մասնագետից, ինչպես նաև իրավաբանական ծառայություն, որոնք միասին կգործեն որպես Տարաբնակեցման համակարգման թիմ (ՏՀԹ): Բացի այդ, ՏՕԻԿ-ի կողմից

մոբիլիզացվել է Սոցիալական երաշխիքների աջակցության խորհրդատուն (ՄԵԱԽ)՝ ՀՕՏ-ի մշակման և իրականացման նպատակով: ՄԵԱԽ-ը ՏՀԹ-ի անմիջական համակարգման ներքո կիրականացնի ՀՕՏ-ն՝ ՀՕՏ-ով և ՀՕՏ-ով սահմանված քաղաքականության և ընթացակարգերի հիման վրա:

23. Մի շարք այլ պետական մարմիններ, ինչպիսիք են՝ ՀՀ կառավարությանն առընթեր (ԿԱ) անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և իր տարածքային գրասենյակները, Տեղական ինքնակառավարման մարմինները և վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանները, ևս կարևոր դերակատարում ունեն ՀՕՏ-ի իրականացման գործընթացում:

VII. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացումը

24. Իրականացնող մարմինը կսկսի ՀՕՏ-ի իրականացումը ԱԶԲ-ի և ՏԿՏՏՆ-ի կողմից՝ վերջինիս հաստատումից անմիջապես հետո: Սահմանված կարգով առաջին հերթին ԱԵԱ-ներին կուղարկվի բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման ծանուցումը, որին կհաջորդի գույքի նկարագրության արձանագրությունների պատրաստումը և ստորագրումը: Պայմանագրերի/համաձայնագրերի նախագծային տարբերակների միջոցով ԱԵԱ-ները կծանուցվեն Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի մեկնարկի մասին: ՀՕՏ-ն կիրականացվի երկու ենթահատվածով, որոնք կներառեն բոլոր երեք լոտերի հողակտորները՝ յուրաքանչյուր լոտի ազդեցության ենթակա հողերի համաչափ բաշխմամբ (ճանապարհահատվածները բաժանված են՝ ըստ Կապալառուների), ինչպես նաև հիմնվելով կադաստրային և օրինականացման խնդիրների ծավալի վրա: Մա թույլ կտա ժամանակին ապահովել ՀՕՏ-ի իրականացումն ավարտված հատվածների տրամադրումը երեք Կապալառուներին գույքահեռաբար: ՏՕԻԿ-ը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կստորագրի գույքի օտարման պայմանագրերը սեփականության իրավունքով տնօրինվող և օգտագործվող անշարժ գույքի համար՝ նոտարական վավերացմամբ: Փոխհատուցման գումարը/օժանդակությունները ստանալու ամսաթվից ԱԵԱ-ները կունենան 30 օր՝ տեղափոխվելու համար, ինչը կսահմանվի օտարման պայմանագրով նախատեսված ժամկետներով: ՀՕՏ-ի իրականացումից հետո յուրաքանչյուր ենթահատվածի համար ՏՕԻԿ-ի կողմից վարձված Արտաքին մոնիտորինգի անհատ խորհրդատուի (ԱՄԱԽ) կողմից կպատրաստվի Ավարտական հաշվետվություն ԱԶԲ-ին ներկայացնելու համար:

25. Ստորև աղյուսակում ներկայացված ժամանակացույցը ցույց է տալիս ՀՕՏ-ի իրականացման հստակ փուլերը.

Աղյուսակ E3. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման ժամանակացույցը

N	Գործողություն	Սկիզբը	Ավարտը
	Հողի օտարման գործընթացի հիմք հանդիսացող ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման ընդունումը և վերջինիս ուժի մեջ մտնելը	15.09.17	25.11.17

N	Գործողություն	Սկիզբը	Ավարտը
1	1. ՀՀ կառավարության՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման մասին ծանուցում		
2	1.1 ՀՀ կառավարության՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման մասին ծանուցում	26.11.17	2.12.17
3	2. Գույքի նկարագրության արձանագրության պատրաստում և ստորագրում		
4	2.1 Գույքի նկարագրության արձանագրության պատրաստում մասնավոր հողերի համար	1.12.17	29.12.17
5	2.2 Գույքի նկարագրության արձանագրության պատրաստում համայնքային հողերի համար	10.01.18	30.01.18
6	2.3 Գույքի նկարագրության արձանագրությունների ստորագրում մասնավոր և համայնքային հողերի համար	1.02.18	16.02.18
7	2.4 Բոլոր տեսակի հողերի համար գույքի նկարագրության արձանագրության մասին ծանուցում	19.02.18	25.02.18
8	3. Օրինականացման և կադաստրային տվյալների ուղղումների պլանի իրականացում		
9	3.1 Օրինականացման և կադաստրային տվյալների ուղղումների պլանի իրականացում	1.12.17	6.07.18
10	4. Օտարումը պայմանագրերի ստորագրման միջոցով		
11	4.1 Օտարման պայմանագրերի նախագծի պատրաստում մասնավոր հողերի համար	16.02.18	25.02.18
12	4.2 Օտարման պայմանագրերի նախագծի պատրաստում համայնքային հողերի համար	25.02.18	5.03.18
13	4.3 Օտարման պայմանագրի նախագծի մասին ծանուցումը. Ենթահատված 1	5.03.18	5.03.18
14	4.4 Օտարման պայմանագրի նախագծի մասին ծանուցումը. Ենթահատված 2	5.04.18	5.04.18
15	4.5 Օտարման պայմանագրերի ստորագրումը. Ենթահատված 1	6.03.18	6.06.18
16	4.6 Օտարման պայմանագրերի ստորագրումը. Ենթահատված 2	6.04.18	6.07.18
17	4.7 Օտարման պայմանագրերի ստորագրման վերջնաժամկետը. Ենթահատված 1	6.06.18	
18	4.8 Օտարման պայմանագրերի ստորագրման վերջնաժամկետը. Ենթահատված 2	6.07.18	
19	4.9 Օտարման ստորագրված պայմանագրերի պետական գրանցումը	10.03.18	15.07.18
20	5. Օտարում՝ փոխհատուցման գումարը դեպոզիտային հաշվին փոխանցելու միջոցով		
21	5.1 Փոխհատուցման գումարի փոխանցումը դատարանի դեպոզիտային հաշվին. Ենթահատված 1	6.06.18	10.06.18
22	5.2 Փոխհատուցման գումարի փոխանցումը դատարանի դեպոզիտային հաշվին. Ենթահատված 2	6.07.18	10.07.18

N		Գործողություն	Սկիզբը	Ավարտը
23	5.3	Փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ 7-րդ օրը. Ենթահատված 1	10.06.18	17.06.18
24	5.4	Փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ 7-րդ օրը. Ենթահատված 2	10.07.18	17.07.18
25		6. Դատական կարգով օտարում		
26	6.1	Հայցերի նախապատրաստում. Ենթահատված 1	10.06.18	15.06.18
27	6.2	Հայցերի նախապատրաստում. Ենթահատված 2	6.07.18	15.07.18
28	6.3	Հայցերը դատարան ներկայացնելը. Ենթահատված 1*	10.06.18	20.06.18
29	6.4	Հայցերը դատարան ներկայացնելը. Ենթահատված 2*	10.07.18	20.07.18
30		7. Մոնիտորինգ և հաշվետվություն		
31	7.1	ԱՄԱՀ-ի կողմից Ավարտական հաշվետվության պատրաստում և ներկայացում. Ենթահատված 1	10.06.18	10.07.18
32	7.2	ԱՄԱՀ-ի կողմից Ավարտական հաշվետվության պատրաստում և ներկայացում. Ենթահատված 2	10.07.18	10.08.18
*Դատական գործընթացների տևողությունը օրենքով սահմանված է 2 ամիս՝ հայցն ընդունելուց հետո, մինչդեռ այն կարող է ավելի երկար շարունակվել՝ դեպքի բարդությունից կախված				

VIII. Հանրային լուսմներ և տեղեկատվության հրապարակում

26. Մ6 ճանապարհի (ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող հատված) տարածքում բնակվող ազդեցության ենթակա անձանց համար 2017 թ. հուլիսի 5-7-ը կազմակերպվեց յոթ հանրային լուսմ: Հանրային լուսմների ընթացքում ներկայացվեց Իրավունքների սխեման, գնահատման մեթոդաբանությունը, ՄՉՀ-ն և մարդահամարը/ՄՏՀ-ն: Մանրամասնորեն ներկայացվեց Բողոքների լուծման մեխանիզմը՝ առանձնահատուկ անդրադառնալով Բողոքի առանցքային անձի դերին և գործառույթներին՝ որպես միջոց Ծրագրի բոլոր փուլերում ԱԵԱ-ի բողոքը բարձրացնելու, ձևակերպելու և ԻԳ-ին ուղղելու համար: Ընդհանուր առմամբ՝ հանրային լուսմներին մասնակցեց 69 ԱԵԱ (23 կին և 46 տղամարդ) (մասնակիցների ցուցակը՝ համապատասխան ստորագրություններով, կցված է հանրային լուսմների հանդիպման արձանագրությանը):

27. Հանրային լուսմների ընթացքում բոլոր ԱԵԱ-ներին բաժանվեցին Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ, որտեղ նկարագրված էին հողի օտարման և տարաբնակեցման հիմնական փուլերը, Իրավունքների սխեման, բողոքների լուծման մեխանիզմը՝ կոնտակտային տվյալներով, իրավունքները և փոխհատուցումները, ինչպես նաև հաճախ տրվող հարցերի պատասխանները: Սեփականատերերին տրամադրվեցին մասնավոր գույքի անհատական քարտեզներ, որտեղ հստակորեն նշված էին ազդեցության ենթարկվող/չենթարկվող մակերեսները և հիմնական ազդեցությունը (շինություններ, ցանկապատ և բարելավումներ), որպեսզի գույքի նկարագրության արձանագրությունների ստորագրման ընթացքում սեփականատերերը կարողանան օգտագործել գույքի ազդեցության չենթարկվող մասը օտարելու պահանջ ներկայացնելու հնարավորությունը՝ ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումն⁶ ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:

28. ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության/ՏԿՏՏՆ-ի կողմից հաստատվելուց հետո իրականացման համար պատրաստ ՀՕՏՕ-ն կտեղադրվի ԱԶԲ-ի, ՏԿՏՏՆ-ի և Ծրագրի (ՏՕԻԿ) կայքէջերում: Ի լրումն՝ Ծրագրի տեղեկատվական ձեռնարկը՝ վերջնական ՀՕՏՕ-ի վրա հիմնված համապատասխան տեղեկություններով, կհրապարակվի (կներկայացվի որպես ծանուցում) ԱԵԱ-ների համար ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում:

IX. Բողոքների լուծման մեխանիզմ

29. Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) կհաստատվի յուրաքանչյուր համայնքում ՀՕՏՕ-ի իրականացումից առաջ, մասնավորապես՝ Բողոքի առանցքային անձը (ԲԱԱ) և համայնքի կողմից առաջադրված ներկայացուցիչը կապահովեն ԲԼՄ-ի հասանելիությունը ԱԵԱ-ների համար, որպեսզի ԱԵԱ-ն կարողանա բողոքարկել ցանկացած որոշում, գործունեության կամ գործողության, որն առաջացել է հողի կամ այլ գույքի փոխհատուցման արդյունքում: ԱԵԱ-ներն իրազեկված են իրենց բողոքները ԲԼՄ-ի միջոցով լուծելու կամ այլ պետական մարմիններին ուղղելու իրավունքների և ընթացակարգերի վերաբերյալ: Կազմակերպված հանրային լուսմների ընթացքում ազդեցության ենթակա համայնքները տեղեկացվել են ԲԼՄ-ի մասին:

X. Բյուջեի ամփոփում

⁶«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, կետ 2.2:

30. ՀՕՏԾ-ի իրականացումը կտևի մոտ 9 ամիս (ներառյալ դատական կարգով օտարման փուլը, եթե կա այդպիսին): Ծրագրի ՀՕՏ ծախսերը ներառում են փոխհատուցումը, վերականգնման օժանդակությունը, ինչպես նաև ՀՕՏԾ-ի իրականացման վարչական ծախսերը և չնախատեսված ծախսերը: Այս Ծրագրի համար գնահատված ՀՕՏ ծախսերը կազմում են **814.646.450,15 ՀՀ դրամ**, որը համարժեք է **1.684.337,03 ԱՄՆ դոլարին**:

XI. Մոնիտորինգ և գնահատում

31. ՀՕՏԾ-ի իրականացումը պարբերաբար կենթարկվի ներքին մոնիտորինգի ՏԾԻԿ-ի կողմից՝ արդյունքների մասին զեկուցելով ԱԶԲ-ին Սոցիալական մոնիտորինգի կիսամյակային հաշվետվությունների (ՄՄԿՀ) միջոցով՝ ՄԵԱԽ-ի կողմից պատրաստված ՀՕՏԾ-ի իրականացման ավարտական հաշվետվության հիման վրա (ԱՀ): Բացի այդ, կներգրավվի Արտաքին մոնիտորինգի անհատ խորհրդատու (ԱՄԱԽ), որի առաջադրանքը կներառի ՀՕՏԾ-ի իրականացման գործընթացի մոնիտորինգի իրականացումը, խնդիրների բացահայտումը, ՏԾԻԿ-ի իրականացրած մոնիտորինգի տվյալների ստուգումը և համապատասխան լուծումների/շտկոդ միջոցառումների (եթե կան այդպիսիք) առաջարկումը:

A. ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ

32. Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) համաձայնել է Եվրոպական ներդրումային բանկի հետ համատեղ (ԵՆԲ) ֆինանսավորել Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի հիմնանորոգման և բարելավման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): ԵՆԲ-ն ներգրավել է միջազգային խորհրդատուի՝ տեխնիկատնտեսական ուսումնասիրություն իրականացնելու, սոցիալական և բնապահպանական ազդեցությունները գնահատելու և մանրամասն նախագիծը պատրաստելու համար: Ծրագրային ճանապարհը մոտ 90 կմ է. հատված 1-ը (կմ 0+000–կմ 38+450) ֆինանսավորվում է ԵՆԲ-ի կողմից (ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող ճանապարհահատված), իսկ հատված 2-ը (կմ 38+450-կմ 91+190)՝ ԱԶԲ-ի կողմից (ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ճանապարհահատված): Հողի օտարման և շինությունների ապամոնտաժման առումով Ծրագիրը զգալի ազդեցություն չի ունենա: Սույն Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը (ՀՕՏՕ) մշակվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (ՏԿՏՏՆ), Ծրագրի իրականացնող գործակալության (ԻԳ) կողմից՝ Ծրագրի ՀՕՏ-ը պլանավորելու և իրականացնելու համար: Սույն ՀՕՏՕ-ն հիմնված է ՀՀ համապատասխան օրենքների ու կարգավորումների, ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի (ԱՄՔՀ 2009), ինչպես նաև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» (Հյուսիս-հարավ ծրագիր) համար ՀՀ կառավարության կողմից ընդունված Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏԾ) պահանջների վրա⁷: ՀՕՏԾ-ի կիրառումը պայմանավորված է այն փաստով, որ ՀՕՏԾ-ն հիմնված է ԱԶԲ ԱՄՔՀ 2009-ի անվտանգության մեխանիզմների հիմնական սկզբունքների վրա, համատեղում է լավագույն միջազգային անվտանգության մեխանիզմներն ու ազգային օրենսդրության պահանջները, ինչպես նաև ապահովում է ՀՕՏ սկզբունքների, իրավասությունների և ընթացակարգերի կայուն և շարունակական կիրառությունը ՏԿՏՏՆ-ի կողմից Հայաստանում իրականացվող նմանատիպ գյուղական ծրագրերում: Սույն ՀՕՏԾ-ի մշակման և իրականացման պատասխանատվությունը կրում է ՏԿՏՏՆ-ն: «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը (ՏՕԻԿ) գործում է որպես Ծրագրի Իրականացնող գործակալություն:

33. Սույն վերջնական ՀՕՏՕ-ն հաջորդել է ՀՕՏՕ-ի նախագծային տարբերակին՝ նախնական նախագծի հիման վրա Ծրագրի հնարավոր ազդեցությունները գնահատելու նպատակով:

34. Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել գոյություն ունեցող ճանապարհի ստանդարտները և անվտանգության միջոցները: Այն հիմնականում իրագործվել է հնարավոր հատվածներում ճանապարհի լայնացման և պատվածքի ամրացման, ինչպես նաև քարաթափումների և սողանքների ուղղված պաշտպանական միջոցառումների միջոցով: Հատուկ ուշադրություն է դարձվել անվտանգության սարքավորումների բարելավմանը: Ընդհանուր ազդեցությունները նվազեցնելու նպատակով Ծրագրային ճանապարհի ծրագիծն

⁷ Սկզբնական ՀՕՏԾ-ն ընդունվել է 2010 թ., վերանայվել է 2015 թ. և 2017 թ-ին:

⁸ Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակն (ՀՕՏԾ) ու փոխհատուցման սկզբունքները մշակվել են ՀՀ կառավարության կողմից «Հյուսիս-հարավ» ծրագրի համար՝ ԱԶԲ ԱՄՔՀ 2009-ի հիման վրա և կիրառելի են Ծրագրի բոլոր ենթաօրագրերի համար, որոնք ֆինանսավորվում են ԱԶԲ-ի Բազմափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) միջոցով: Այն արդեն կիրառվել է Տրանշ 2-ի և Տրանշ 3-ի ՀՕՏՕ-ների իրականացման համար և կկիրառվի հետագա տրանշների և հատվածների համար, այդ թվում՝ Եվրասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող հատվածների համար:

անցնում է գոյություն ունեցող ճանապարհով, սակայն ներառում է նաև ճանապարհի լայնացում, ինչի հետևանքով գյուղատնտեսական հողերը զգալի ազդեցություն չեն կրում, մինչդեռ համեմատաբար ավելի մեծ ազդեցության են ենթարկվում ոչ գյուղատնտեսական հողերը:

35. Սույն ՀՕՏՕ-ն գնահատում է Ծրագրի ազդեցությունները և մանրամասնում է պահանջվող փոխհատուցման և վերականգնման միջոցառումները՝ հիմք ընդունելով վերջնական մանրամասն նախագիծը, ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) վերջնական մարդահամարը և ազդեցության ենթակա յուրաքանչյուր հողամասի համար իրականացված Մանրամասն չափագրման հետազոտությունը (ՄՉՀ)՝ ՀՀ կառավարության բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշման⁹ հիման վրա ազդեցության ենթակա սեփականությունների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու համար: Ազդեցության ենթակա հողակտորների և շինությունների գնահատումը հիմնված է փոխարինման արժեքի դրույքաչափերի վրա: Ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) թիվը ստացվել է տուն առ տուն իրականացված մարդահամարի միջոցով և ԱԵԱ-ների սոցիալ-տնտեսական նկարագրի միջոցով, որը ստացվել է 2017 թ. հոկտեմբեր – նոյեմբեր ժամանակահատվածում իրականացված 100% հասանելի տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական հետազոտության (ՄՏՀ) միջոցով: Ըստ ՀՕՏ ազդեցության մակարդակի՝ Ծրագրի դասակարգվել է որպես կատեգորիա «B»՝ ոչ կամավոր տարաբնակեցման պատճառով¹⁰:

36. Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի հիմնանորոգման և բարելավման ծրագրի նախագիծը հաստատվել է 2015 թ., և մի շարք նախագծային լուծումներ են առաջարկվել 2017 թ.՝ ՄՉՀ արդյունքների վերլուծությունից հետո ՀՕՏ ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար:

37. Շինարարական աշխատանքների առումով Ծրագիրը բաժանված է երեք ճանապարհահատվածի (լոտերի), որոնց համար կլինեն առանձին կապալառուներ: Հետևաբար ազդեցության և բյուջեի վերաբերյալ տվյալները սույն ՀՕՏՕ-ում ներկայացված են ոչ միայն համայնքներով, այլև՝ ըստ լոտերի՝ ՀՕՏ ազդեցության մակարդակը և յուրաքանչյուր ճանապարհահատվածին (լոտ) առնչվող խնդիրները ցույց տալու համար: Ծրագրային ճանապարհը՝ ըստ լոտերի և համայնքների, ներկայացված է ստորև բերված Աղյուսակ A-ում:

Աղյուսակ A. Ծրագրային ճանապարհը՝ ըստ լոտերի և համայնքների

Լոտ (ճանապարհահատված)	Սկզբնաձև/ վերջնաձև	Երկարություն մ	Համայնք*	Ընդամենը**
Լոտ 1	կմ 38+450-կմ 48+140	9690	Այգեհատ	4
			ք. Ալավերդի	
			Օձուն	
			Թումանյան	

⁹ ՀՀ կառավարության բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին N 1412-Ն որոշումն ընդունվել է 2017 թ. նոյեմբերի 9-ին և ակնկալվում է, որ ուժի մեջ կմտնի 2017 թ. նոյեմբերի 25-ին:

¹⁰ Համաձայն ԱԶԲ-ի Գործառնական ձեռնարկի (ԳՄ) բաժին F1/OP (2013)-ի՝ ծրագիրը դասակարգվում է որպես «A» կատեգորիայի ծրագիր, եթե ավելի քան 200 անձինք ենթարկվում են զգալի ազդեցության (կորցնում են իրենց եկամուտ ստեղծող գույքի ավելի քան 10%-ը կամ ֆիզիկապես տեղահանվում են իրենց տներից): Ծրագիրը դասակարգվում է որպես «B» կատեգորիա, եթե զգալի ազդեցության ենթակա անձանց քանակը չի գերազանցում 200-ը, իսկ «C» կատեգորիայի դեպքում ծրագիրը ՀՕՏ ազդեցություններ չի ենթադրում:

Լոտ 2	կմ 48+140-կմ 62+300	14.160	Հաղպատ	3
			ք. Ալավերդի Աքորի	
Լոտ 3	կմ 62+300-կմ 90+191	27.891	Հաղպատ	8
			Ախթալա	
			Շնող	
			Արձիս	
			Նեղոց	
			Այրում	
			Հաղթանակ	
Պտղավան				
Ընդամենը		51.741		15
<p><i>* Այրում, Հաղթանակ և Պտղավան համայնքներում ՀՕՏ ազդեցություններ չեն արձանագրվել, հետևաբար դրանք չեն ընդգրկվել սույն ՀՕՏ-ում՝ որպես ազդեցության ենթակա համայնքներ:</i></p> <p><i>** Ալավերդի քաղաքը և Հաղպատ համայնքը ընդգրկվել են և՛ Լոտ 2-ում, և՛ Լոտ 3-ում: Հետևաբար համայնքների ընդհանուր քանակը ներկայացվել է կրկնահաշվարկով:</i></p>				

2. Հողի օտարում և տարաբնակեցում. Ծրագրի իրականացմանն առնչվող պայմանները

38. Համաձայն ԱՄՔՀ 2009-ի դրույթների և ԱԶԲ-ի կողմից սահմանված գործելակերպի՝ Ծրագրի հաստատումը/իրականացումը կհիմնվի հետևյալ պայմանների վրա.

- (i) **Ծրագրի իրականացման ձևաչափը.** պայմանավորված է հետևյալով՝ ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության համար ընդունելի ՀՕՏ-ի՝ որպես իրականացման համար պատրաստ և փաստաթղթի վերջնականացումը և հրապարակումը:
- (i) **Շինարարական աշխատանքների մեկնարկը.** իրականացման համար պատրաստ ՀՕՏ-ի լիարժեք իրականացում (լիարժեք փոխհատուցման/վերականգնման օժանդակության տրամադրում), ինչը պատշաճորեն կարձանագրվի ԳՄ-ի¹¹ կողմից ԱԶԲ-ին ներկայացվող հաշվետվություններում:

3. Ծրագրի պատմությունը


39. Ծրագիրը տեղակայված է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս: Վերջինիս նպատակն է մեծացնել տրանսպորտային արդյունավետությունն ու անվտանգությունը Մ6 մայրուղու երկայնքով՝ Վանաձորից մինչև Վրաստանի սահման՝ արդիականացնելով Վանաձոր-Բագրատաշեն 51.5 կմ երկարությամբ ճանապարհահատվածը՝ այն վերածելով նոր ասֆալտային պատվածքով 3-րդ կարգի ճանապարհի: Ստորև բերված Քարտեզ 1-ում ցույց է տրված ծրագրային ճանապարհի ընդհանուր տեղադիրքը:

¹¹ ՀՕՏ-ի իրականացման Ավարտական հաշվետվությունը կպատրաստվի ՏՕԻԿ-ի կողմից վարձված Արտաքին մոնիտորինգի անհատ խորհրդատուի կողմից (ԱՄԱԽ):

40. Գոյություն ունեցող Մ6 ճանապարհն ունի մոտ 90 կմ ընդհանուր երկարություն: Այն Վանաձոր քաղաքը միացնում է Վրաստանի սահմանին՝ Բագրատաշեն քաղաքի մոտ: Ճանապարհի ծրագիծն անցնում է Դեբեդ գետի նեղ հովտի երկայնքով՝ հատելով մի շարք բնակավայրեր (Փամբակ, Վահագնաձոր, Վահագնի, Ձորագյուղ, Դսեղ, Թումանյան, Օձուն, Ալավերդի, Նեղոց, Շնող, Քարկոփ, Այրում, Հաղթանակ, Պտղավան և Բագրատաշեն):

41. Երթնեկելի մասի լայնությունը կլինի ստանդարտ 7.2 մ (6.6 մ՝ խիստ լեռնային հատվածներում), կողակների լայնությունը՝ 0.5-1.5 մ: Հաշվարկային արագությունը լեռնային հատվածներում կլինի 60 կմ/ժ, իսկ հարթավայրերում՝ 90 կմ/ժ: Որոշ հատվածներում անհրաժեշտ կլինի վերանայել ծարագիծը՝ բարելավելով երկրաչափական պարամետրերը և տեսանելիության հեռավորությունը: Շինարարության ժամանակահատվածը 30 ամիս է: ԵՆԲ-ն կֆինանսավորի Մ6 մայրուղու Վանաձոր-Ալավերդի 38 կմ երկարությամբ հատվածի (կմ 0+000-կմ 38+450) հիմնանորոգումը:

Քարտեզ A1. ցույց է տալիս առաջարկվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի հիմնանորոգման և բարելավման ծրագրի տեղադիրքը



4. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի ընդհանուր նպատակը

42. Սույն ՀՕՏԾ-ի նպատակն է բացահայտել Ծրագրի իրականացման հետևանքով ազդեցության ենթակա բոլոր անձանց և իրավաբանական անձանց, գնահատել ազդեցության չափը (օրինակ՝ ինչպիսի կորուստներ նրանք կկրեն և դրանց արժեքը) և սահմանել ինչպես կփոխհատուցվեն նրանք կամ կվերականգնվի նրանց եկամուտը՝ ապահովելով ոչ պակաս, քան «առանց ծրագրի» իրավիճակում նրանց ունեցած կենսամակարդակը: Բոլոր դեպքերում հիմնական նպատակն է առնվազն վերականգնել ԱԵԱ-ների կենսամակարդակը և կյանքի որակը: ՀՕՏԾ-ի առաջնային նպատակն է ապահովել անհրաժեշտ մանրամասներ փոխհատուցման, վերաբնակեցման և վերականգնման համար, այդ թվում՝ i) կորուստների չափի և ծրագրի ազդեցության բացահայտումը, ii) տեղեկատվության հրապարակումը, հանրային լսումները և մասնակցությունը, iii) վերականգնման և փոխհատուցումների վճարման քաղաքականությունը և շրջանակը, (iv) խիստ ազդեցության ենթակա և խոցելի տնային տնտեսությունների վերականգնման ծրագիրը, v) բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմը, vi)

տարաբնակեցման բյուջեն և ֆինանսավորման պլանը, ներառյալ՝ կորցրած գույքի, վերաբնակեցման և վերականգնման փոխհատուցման արժեքի գնահատումը, vii) ինստիտուցիոնալ շրջանակը և ՀՕՏ-ի իրականացման ժամանակացույցը և viii) ՀՕՏ-ի իրականացման մոնիտորինգը:

43. Միջազգային փորձի համաձայն՝ ՀՕՏ-ի մշակման ընթացքում հաշվի է առնվել ՀՕՏ ազդեցությունները նվազագույնի հասցնելու հանգամանքը: Մասնավորապես, հնարավոր եղավ համապատասխանեցնել սկզբնապես սահմանված օտարման գոտին նախագծողների կողմից առաջարկվող նախագծային լուծումների հետ՝ դաշտային ՄՉՀ հիման վրա: Արդյունքում վերանայվեց օտարման գոտին և համապատասխանաբար գնահատվեցին ազդեցությունները:

5. Փաստաթղթի հրապարակումը

44. ՀՕՏ-ի իրականացման ժամանակ ԱԵԱ-ներին կտրամադրվի իրականացման համար պատրաստ ՀՕՏ-ի տեղեկատվական ձեռնարկը հայերեն լեզվով: Վերջնական ՀՕՏ-ի հայերեն տարբերակը հասանելի կլինի բոլոր մարզերում (մարզպետարաններում) և ՏՕԻԿ-ի գրասենյակում: Վերջնական ՀՕՏ-ի անգլերեն տարբերակը կտեղադրվի ԱԶԲ-ի կայքէջում: Վերջնական ՀՕՏ-ի հայերեն և անգլերեն տարբերակները կհրապարակվեն ՏԿՏՏԼ-ի և ՏՕԻԿ-ի կայքէջերում:

6. Կասեցման օրը

45. Փոխհատուցման իրավունքը սահմանափակվում է կասեցման օրով, որը հանդիսանում է ԱԵԱ-ի և ձեռք բերողի միջև ազդեցության ենթակա գույքի նկարագրության արձանագրության ստորագրման առաջին օրը՝ ՀՀ կառավարության բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշման¹² հիման վրա, որտեղ արձանագրվել են իրականացված մարդահամարի, ՄՉՀ-ի և ազդեցության գնահատման տվյալները: Կասեցման օրից հետո կատարված լրացուցիչ բարելավումները ենթակա չեն փոխհատուցման, բացառությամբ Օրենքով և ՀՕՏ-ով սահմանված դեպքերի: Հաշվի առնելով այն փաստը, որ սույն ՀՕՏ-ի մշակման պահի դրությամբ ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշումն ընդունվել է, սակայն ուժի մեջ չի մտել, գույքի նկարագրության արձանագրությունների ստորագրման գործընթացը դեռևս չի սկսվել¹³:

¹² Քանի որ գույքի նկարագրության արձանագրությունների ստորագրման ամսաթիվը յուրաքանչյուր գույքի համար տարբեր է, նշված օրը ԱԵԱ-ների և ձեռք բերողի միջև առաջին արձանագրության ստորագրման օրն է:

¹³ ՀՀ կառավարության բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշումը ուժի մեջ կմտնի 2017 թ. նոյեմբերի 25-ին:

Բ. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

1. Ընդհանուր նկարագիր

46. Այս գլուխը ներկայացնում է ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի երկայնքով տեղակայված ազդեցության ենթակա տասնչորս համայնքի վրա ազդեցությունների գնահատման մանրամասն քանակական հաշվարկը: Դրանք գտնվում են Լոռու և Տավուշի մարզերում: Վերջնական մանրամասն նախագծի հիման վրա 10 համայնք ազդեցության է ենթարկվում ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող հատվածի (կմ 38.450-կմ 90.190) ծրագծի արդյունքում: Այդ համայնքներն են՝ Ախթալա, Այգեհատ, Թումանյան, Աքորի, Հաղպատ, Նեղոց, Շնող, Ալավերդի, Օձուն և Արճիս:

47. Լոտ 3-ի վերջնամասում գտնվող Այրում, Հաղթանակ, Պտղավան և Բագրատաշեն համայնքներում ՀՕՏ ազդեցություններ չեն արձանագրվել, քանի որ, ըստ նախագծի, այդ հատվածում նախատեսվում են միայն պատվածքի աշխատանքներ՝ առանց հատվածի լայնացման և վերակառուցման:

48. Թումանյան համայնքում (Ծրագրային ճանապարհահատվածի սկզբնակետը) կա ազդեցության ենթակա երկու հողակտոր, որոնք ներառվել են ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող հատվածի ՀՕՏ-ում՝ հաշվի առնելով, որ հողակտորը սկսվում է ճանապարհի՝ ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող հատվածից և ավարտվում է ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող հատվածում, սակայն մեծ մասը գտնվում է ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող հատվածում:

49. **Ազդեցությունների նվազեցումը.** Միջազգային փորձի համաձայն՝ ՀՕՏ-ի մշակման ընթացքում հաշվի է առնվել ՀՕՏ ազդեցությունները նվազագույնի հասցնելու հանգամանքը: Մասնավորապես, հնարավոր եղավ համապատասխանեցնել սկզբնապես սահմանված օտարման գոտին նախագծողների կողմից առաջարկվող լուծումների հետ դաշտային ՄՉՀ-ի հիման վրա: Նախագծային լուծումների և համապատասխանեցված օտարման գոտու արդյունքում ազդեցությունները նվազեցին՝ ՀՕՏ-ի նախագծային տարբերակում նախնականորեն գնահատված 542 հողակտորից նվազեցվելով մինչև 444 հողակտոր: Ազդեցությունների նվազեցման արդյունքում երեք շինություն (այդ թվում՝ մեկ խաչքար, մեկ անավարտ շինություն և ձեռնարկատիրական գործունեության իրականացման նպատակով օգտագործվող շինություն (լիմոնադի գործարան)), 51 մասնավոր և 21 համայնքային սեփականություն հանդիսացող գույք, ինչպես նաև մեկ գերեզման կարող են հեռացվել օտարման գոտուց և ազդեցության ենթակա գույքի ցուցակից: Միննույն ժամանակ, 26 հողակտոր հեռացվել է ազդեցության ենթակա հողակտորների նախնական ցուցակից կադաստրային քարտեզում/տվյալներում ուղղումներ կատարելու հետևանքով¹⁴:

¹⁴ ՀՕՏ-ի նախագծային տարբերակում նշվել է կադաստրային քարտեզի/տվյալների անհամապատասխանության մասին: Անհամապատասխանության դեպքերի ցանկը ուղղումների նպատակով տրամադրվել է ԱԳԿՊԿ-ի կողմից, ինչի արդյունքում խնդիրների մի մասը լուծվել է, մինչդեռ չլուծված խնդիրները նշված են այս վերջնական ՀՕՏ-ի «Օրինականացման և կադաստրային ուղղումների պլանում» (մանրամասների համար տե՛ս Գլուխ J և Հավելված 8):

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

50. Հաշվի առնելով սույն ՀՕՏՕ-ի մշակման նպատակը և շրջանակը՝ Ծրագրի հետ կապված բոլոր փոխհատուցումները և կենսապահովման միջոցների վերականգնման օժանդակությունները պետք է հիմնվեն ազդեցության ենթակա անձանց վրա Ծրագրի ունեցած ազդեցության վերաբերյալ մանրամասն պատկերացումների վրա: Սույն ՀՕՏՕ-ի համար տվյալները հավաքագրվել են 2017 թ. սեպտեմբերից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում: Ծրագրի ազդեցությունների չափը ճշգրիտ գնահատելու համար իրականացվել են հետևյալ հետազոտությունները.

- (i) **Մանրամասն չափագրման հետազոտություն (ՄՀ)**՝ ազդեցության ենթակա հողակտորների, շենքերի/շինությունների տարածքի և գույքի այլ տեսակների և քանակի ճշգրիտ նկարագրություն ու չափագրում:
- (ii) **Կորուստների գույքագրում՝ դաշտային այցելությունների և «Google Earth» տվյալների վերլուծության հիման վրա**՝ ազդեցության ենթակա և արդեն վնասված շենքերի/շինությունների, հողի, գույքի հատկանիշների բացահայտում և գնահատում:
- (iii) **Ազդեցության ենթակա գույքի արժեքի գնահատում**՝ ՀՕՏՕ բյուջեն մշակելու համար կորցրած գույքի փոխհատուցման արժեքի, եկամտի և կենսապահովման այլ աղբյուրների բացահայտում և օժանդակությունների/նպաստների սահմանում:
- (iv) **Մարդահամար՝ ԱԵՏՏ-ների և դրանց անդամների ճշգրիտ քանակի բացահայտում**, ներառյալ՝ որոշ տարրական սոցիալական հատկանիշներ, ինչպիսիք են՝ սեռը և էթնիկ պատկանելությունը:
- (v) **Սոցիալ-տնտեսական հետազոտություն (ՍՀ)**՝ ազդեցության ենթակա անձանց, ընտանիքների և ձեռնարկատիրական գործունեությունների սեփականատերերի ներկա սոցիալ-տնտեսական կարգավիճակի, ինչպես նաև հանրային ծառայությունների մատչելիության, փոխհատուցման վերաբերյալ պատկերացումների և նրանց կենսամակարդակի վրա Ծրագրի ազդեցության բացահայտում:

51. Խորհրդատուի՝ հավատարմագրված չափագրող և գնահատող կազմակերպության կողմից իրականացվող գործողությունները ենթադրում են նախորդ բոլոր հետազոտությունների արդյունքներից անկախ՝ օտարման ենթակա յուրաքանչյուր գույքի չափագրումն ու գնահատումը: Սա իրականացվեց անկախ այն տվյալներից, որոնք կարելի էր ձեռք բերել կադաստրային քարտեզներից, «Google Earth»-ից, ՀՕՏՕ-ների նախագծերի մշակման ընթացքում ձեռք բերված տվյալներից, ինչպես նաև Ծրագրի արդյունքում ազդեցության ենթակա գույքի իրավական կարգավիճակից:

52. ՄՀ շրջանակը և ակտիվների գույքագրումը ներառում էին ներքոնշյալ գույքի կամ հատկանիշների բացահայտումը, դասակարգումը, չափագրումը և գնահատումը.

- (i) Հող (գյուղատնտեսական, բնակելի, արդյունաբերական և հասարակական նշանակության հողակտորներ), ներառյալ՝ այդ հողակտորների վրա բարելավումները,

- (ii) Շենքեր/շինություններ (ներառյալ՝ դասակարգումը՝ ըստ շենքի կատեգորիայի և շինության տեսակի),
- (iii) ԱԵԱ-ի կողմից հողի և շինությունների զբաղեցման իրավական կարգավիճակը,
- (iv) Մշակաբույսերի տեսակն ու զբաղեցրած տարածքը,
- (v) Ծառերի տեսակն ու քանակը,
- (vi) Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունները (ազդեցության տեսակը և իրավական կարգավիճակը),
- (vii) Զբաղվածության կորուստ,
- (viii) Ազդեցության ենթակա համայնքների/հանրային գույքի քանակը, տեսակը և տարածքը:

53. ՄՉՀ-ն ներառում էր գոյություն ունեցող անշարժ գույքի՝ հողերի և նրանց վրա կառուցված շենքերի/շինությունների չափագրումը, դրանց նպատակային նշանակության, սեփականության, օգտագործման ձևի, դրանց որակի և քանակի, տեսքի և տեսակի որոշումը: Չափագրումներն իրականացվեցին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (ԱԳԿՊԿ) նախագահի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 283-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի՝ անշարժ գույքի չափագրման (գրանցման) վերաբերյալ հրահանգի համաձայն: Չափագրումները կատարվեցին արբանյակային տեղորոշման կայանների, տախետմետրի և լազերային որոնիչների միջոցով: Բոլոր դաշտային հետազոտությունները կատարվել են ազդեցության ենթակա համայնքներում հանրային լուսմների իրականացումից հետո, որտեղ ԱԵԱ-ները նախապես տեղեկացվել են առաջիկա հետազոտությունների մասին: ԱԵԱ-ներին դաշտային այցելությունից առաջ հեռախոսով տեղեկացվել է չափագրման օրն ու ժամը: Այս ընթացակարգն ապահովում էր ԱԵԱ-ի կողմից չափագրման գործընթացի մոնիտորինգը:

2.2 Ազդեցությունների գնահատման սահմանափակումները և կիրառված մոտեցումները

54. ՄՉՀ-ի և գույքագրման ընթացքում մասնագետները մի շարք խոչընդոտների հանդիպեցին սեփականատերերի/օգտագործողների նույնականացման և որոշ վայրերում ակտիվների գույքագրման առումով: Նշված սահմանափակումների նկարագրությունը, կիրառված մոտեցումները, ինչպես նաև իրականացման ժամանակահատվածում առաջարկվող շտկող միջոցառումները ներկայացված են ստորև:

2.2.1 Ոչ մատչելի վայրերում ակտիվների գույքագրման անհնարինությունը

55. Ազդեցության նախնական գնահատման ժամանակ ռելիեֆի (լեռներ և կիրճեր) պատճառով ազդեցությունները տեսանելի չէին: Դաշտում պարզ դարձավ, որ մի շարք վայրերում ռելիեֆի պատճառով սահմանափակվում է տարածքի հետազոտման հնարավորությունը: Ընդհանուր առմամբ՝ ճանապարհի 6115 մետրում հնարավոր չեղավ ուղղակիորեն գույքագրում կատարել (ճանապարհի երկու կողմում): Այս 6115 մետրը ներառում է 49 լոտ-կոդ/և հողակտոր՝ 53 վայրում, որոնք գտնվում են 8 համայնքում (բացի Աքորի և Արճիս համայնքներից): Այդ հողերից 33-ը համայնքային են, 9-ը՝ պետական, իսկ 7-ը՝ մասնավոր: Այդ վայրերում հնարավոր ազդեցությունը գնահատելու նպատակով գույքագրումը կատարվել է թոշոդ տեսասարքերի միջոցով, սակայն սովյալների վերլուծության արդյունքները նախնական են: Նշված վայրերի նախնական պատկերները մանրամասնորեն ներկայացված են ստորև, իսկ այն վայրերի (հողակտորների)

ցուցակը, որոնք չեն գույքագրվել, իրենց համապատասխան նկարագրություններով ներկայացված են Հավելված 9-ում:

- 7 մասնավոր հողակտորից, որոնք հնարավոր չէր ամբողջությամբ գույքագրել, մեկը բնակելի տարածք է Ալավերդիում, մյուսը՝ Թումանյանում, իսկ 5-ը՝ չնույնականացված բնակելի կոլեկտիվ հողեր են («Մետալուրգ այգեգործական») Օձունում: Այս բոլոր դեպքերում սեփականատերերին հնարավոր չէրավ նույնականացնել ո՛չ կադաստրի միջոցով, ո՛չ էլ համայնքների: Թռչող տեսասարքերի միջոցով չի հայտնաբերվել որևէ շինություն, որ հնարավոր կլիներ ուղղակիորեն գրանցել դրանց միջոցով: Միննույն ժամանակ, թռչող տեսասարքերի գրանցած տվյալներից կարելի է ենթադրել, որ 7 հողակտորից 5-ը չի օգտագործվում (ծառեր և մշակաբույսեր տեսանելի չեն):
- Համայնքային և պետական հողերի դեպքում պարզ էր, որ դրանց վրա առկա են որոշ ծառեր/մրգատու ծառեր, կամ նույնիսկ շինություններ: Մակայն քանի որ այդ հողակտորներն այս պահին չեն օգտագործվում, հնարավոր չէրավ նույնականացնել չձևակերպված օգտագործողներին: Տեղեկություններ ստանալու նպատակով խորհրդակցություն անցկացվեց տեղական իշխանությունների և բողոքի առանցքային անձանց (հարևաններ, ճանապարհի մոտ գտնվող ձեռնարկատիրական գործունեությունների սեփականատերեր և այլն) հետ՝ այդ հողերի հնարավոր օգտագործողներին նույնականացնելու համար, սակայն համայնքի ներկայացուցիչները և բողոքի առանցքային անձինք օգտագործման և սեփականատերերի վերաբերյալ որևէ տեղեկատվության չէին տիրապետում: Բացի այդ, կա զգալի միգրացիա տարածաշրջանից, ինչը նույնպես դժվարացնում է սեփականատերերին և հողօգտագործողներին գտնելու գործընթացը՝ նույնիսկ համայնքի ներկայացուցիչների և բողոքի առանցքային անձանց օգնությամբ: Ազդեցության գնահատման գործողությունների շրջանակներում համայնքների ներկայացուցիչների և բողոքի առանցքային անձանց հարցումների արձանագրությունները և առնչվող տեղեկատվության հրապարակման միջոցները՝ համապատասխան նկարագրությամբ և լուսանկարներով, ներկայացված են Հավելված 12-ում:

56. Այնուամենայնիվ, ենթադրվում է, որ ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում այդ հողերի սեփականատերերը կամ օգտագործողները կարող են նույնականացվել/self-identified և պահանջներ ներկայացնել չտեղազննված հողի վրա ազդեցության ենթակա գույքի օգտագործման վերաբերյալ: Այն դեպքերում, երբ սեփականատերերը կամ օգտագործողները կնույնականացվեն/self-identified և ԱԵԱ-ների օգնությամբ հնարավոր կլինի կատարել գույքագրում, գույքագրված բարելավումները կփոխհատուցվեն ՀՕՏՕ-ի ներքո՝ համաձայն ՀՕՏՕ և ՀՕՏՇ դրույթների:

57. Այս կապակցությամբ, սույն ՀՕՏՕ-ում նախատեսվել/գնահատվել է պայմանական բյուջե: Գնահատման մեթոդաբանությունը ներկայացված է Հավելված 2-ում:

58. Բացի այդ, սույն ՀՕՏՕ-ի շրջանակում մշակվել է շտկող միջոցառումների ընթացակարգ, որը պետք է կիրառվի ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում, եթե կան բողոքներ վերը նշված չտեղազննված հողակտորների վրա առկա ազդեցության ենթակա գույքի օգտագործման վերաբերյալ: Ընթացակարգը ներկայացված է սույն ՀՕՏՕ-ի Գլուխ J-ի բաժին 8-ում:

2.2.2 Խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ների որոշումը¹⁵

59. Դեպքերի մեծամասնությունում հնարավոր է եղել հետազոտել չձևակերպված հիմունքներով օգտագործվող հողերի միայն ազդեցության ենթարկվող մասերը, քանի որ հողի ոչ բոլոր մասերն են մատչելի եղել՝ փաստացի չափագրում և գույքագրում կատարելու համար: Այն դեպքում, երբ առկա է ռիսկը, որ ՀՕՏԾ-ի իրականացման ժամանակ հողակտորը կարող է ամբողջությամբ օտարվել, հնարավոր բոլոր ջանքերը գործադրվեցին՝ հողն ամբողջությամբ գույքագրելու համար: Այնուամենայնիվ, սահմանափակ պայմաններում ազդեցության մակարդակը հաշվարկելու և Ծրագրի ներքո խիստ ազդեցության ենթարկվող ԱԵՏՏ-ներին (որոնք կորցնում են իրենց արտադրական գույքի ավելի քան 10%-ը) բացահայտելու համար, կիրառվել է հետևյալ մոտեցումը.

- USZ արդյունքների վերլուծության հիման վրա բացահայտվել են այն ԱԵՏՏ-ները, որոնք բացի ազդեցության ենթակա հողերից, ունեն այլ արտադրական հողեր (վարելահող, այգի, խոտհարք, խաղողի այգի), որոնք օգտագործվում են և՛ սեփական/վարձակալված, և՛ չձևակերպված հիմունքներով,
- հաշվարկվել է, թե քանի տոկոս են կազմում արտադրական հողի փաստացի օգտագործվող մասերը, որի հիման վրա որոշվել է օգտագործվող արտադրական գույքի ընդհանուր մակերեսը,
- գյուղատնտեսական հողերի ազդեցության ենթակա տարածքները համեմատվել են ամբողջությամբ տիրապետվող և օգտագործվող արտադրական հողերի մակերեսների հետ, որի արդյունքում հաշվարկվել է ազդեցության մակարդակը (տոկոսը),
- կատարված հաշվարկների հիման վրա Ծրագրի ներքո խիստ ազդեցության ենթարկվող ՏՏ-ները իրավասու են ճանաչվել վերականգնման նպաստ ստանալու համար (կորցնում են իրենց գյուղատնտեսական արտադրական գույքի ավելի քան 10%-ը):

60. Այն ԱԵՏՏ-ների համար, որոնց հնարավոր չի եղել USZ-ում ներգրավել և տվյալներ չկան նրանց կողմից ամբողջությամբ տիրապետվող գյուղատնտեսական արտադրական հողերի վերաբերյալ, կիրառվել է հետևյալ մոտեցումը.

- այն դեպքերում (և՛ սեփական/վարձակալված, և՛ չձևակերպված հիմունքներով օգտագործվող), երբ ազդեցության ենթակա հողակտորի ընդհանուր մակերեսը հայտնի է տեղագրական հետազոտության կամ կադաստրային քարտեզի միջոցով (սահմանագատված հողեր), ընդհանուր մակերեսն ընդունվել է որպես հիմք և համեմատվել է ազդեցության ենթակա մակերեսի հետ՝ խիստ ազդեցության ենթարկվող ՏՏ-ներին բացահայտելու համար,
- Այն դեպքերում (և՛ սեփական/վարձակալված, և՛ չձևակերպված հիմունքներով օգտագործվող), երբ ազդեցության ենթակա հողակտորի ընդհանուր մակերեսը հայտնի չէ, արտադրական հողերը կորցնող բոլոր ԱԵՏՏ-ները պայմանականորեն համարվել են որպես խիստ ազդեցության ենթարկվող: Այս դեպքերը ենթակա են ստուգման ՀՕՏԾ-ի իրականացման ընթացքում՝ ըստ համապատասխան հիմքերի:

2.2.3 Գույքի նկարագրության արձանագրության ստորագրում

¹⁵ Ներկայացված մեթոդաբանությունը նախապես քննարկվել և համաձայնեցվել է ԱԶԲ-ի հետ 2017 թ. նոյեմբերի 14-ին՝ ԱԶԲ-ի այցի առաքելության ընթացքում:

61. Փոխհատուցման իրավունքը սահմանափակվում է կասեցման օրով, որը հանդիսանում է ԱԵԱ-ի և ձեռք բերողի միջև ազդեցության ենթակա գույքի նկարագրության արձանագրության ստորագրման առաջին օրը՝ ՀՀ կառավարության բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշման¹⁶ հիման վրա, որտեղ արձանագրվել են իրականացված մարդահամարի, ՄՉՀ-ի և ազդեցության գնահատման տվյալները: Կասեցման օրից հետո կատարված լրացուցիչ բարելավումները ենթակա չեն փոխհատուցման, բացառությամբ՝ Օրենքով և ՀՕՏՇ-ով սահմանված դեպքերի: Սովորաբար գույքի նկարագրության արձանագրությունը թույլ է տալիս՝ սեփականատիրոջ/օգտագործողի հետ միասին լրացուցիչ ստուգել գույքագրման արդյունքները՝ դրանց ճշգրտությունն ապահովելու համար: Հաշվի առնելով այն փաստը, որ սույն ՀՕՏՇ-ի մշակման պահի դրությամբ ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշումն ընդունվել է, սակայն ուժի մեջ չի մտել, գույքի նկարագրության արձանագրությունների ստորագրման գործընթացը ԱԵԱ-ների հետ չի կարող իրականացվել: Այնուամենայնիվ, գույքագրված ազդեցությունների ստուգումն ապահովելու համար, սեփականատերերի/օգտագործողների հետ դաշտում ստորագրվել են գույքագրող մասնագետի կողմից օգտագործվող աշխատանքային արձանագրությունները՝ հնարավոր անճշտությունները և հետագա բողոքները նվազագույնի հասցնելու համար:

2.2.4 Ազդեցության գնահատումը և ազդեցության ենթակա բազմաբնակարան շենքի բնակարանների գնահատման մեթոդաբանությունը

62. Բազմաբնակարան շենքի բնակարանները գնահատելու համար կիրառվել է համեմատական մեթոդը՝ համաձայն ՀՀ անշարժ գույքի գնահատման ստանդարտի: Հաշվի առնելով, որ բազմաբնակարան շենքում կան օտարման ենթակա ազդեցություն կրող բնակարաններ, որոնք բաղկացած են միայն մեկ կամ մի քանի բնակելի սենյակներից՝ առանց սանհանգույցի և խոհանոցի, որոնց մակերեսը փոքր է անշարժ գույքի շուկայում (բնակելի) նմանատիպ բնակարանների (վաճառված կամ առաջարկվող) նվազագույն մակերեսից՝ ազդեցության ենթակա այս բնակարանների գնահատման համար կիրառվել է հատուկ մեթոդաբանություն՝ փոխհատուցման արժեքը որոշելու համար, ինչը կապահովի ԱԵԱ-ների վերականգնումը: Այս նպատակով սույն ՀՕՏՇ-ի ներքո սահմանվել է խոցելիության նոր կատեգորիա՝ «բնակավայրից վերաբնակեցվող խոցելի ԱԵՏՏ-ներ», այն դեպքերի համար, երբ ԱԵՏՏ-ների ազդեցության ենթակա բնակարանների համար հաշվարկված փոխհատուցման գումարը բավարար չէ նմանատիպ նվազագույն մակերեսով բնակարան վերականգնելու (ձեռք բերելու) համար՝ տվյալ տարածաշրջանի շուկայի պայմանների հիման վրա: Կիրառված մեթոդաբանության մանրամասները ներկայացված են Հավելված 2-ի բաժին 6.2.2-ում:

2.2.5 Determination of affected households for unidentified land plnuns:

63. Այն դեպքերում, երբ հողակտորների սեփականատերերը չեն հայտնաբերվել կադաստրի և/կամ համայնքի միջոցով, կիրառվել է հետևյալ սկզբունքը.

- Այն հողակտորների դեպքում, որոնք կադաստրի կողմից սահմանվել են որպես “մասնավոր սեփականություն” առանց սեփականատիրոջ հստակ նույնականացման. ՀՕՏՇ-ում 1 ԱԵՏՏ

¹⁶ Քանի որ գույքի նկարագրության արձանագրությունների ստորագրման ամսաթիվը յուրաքանչյուր գույքի համար տարբեր է, նշված օրը ԱԵԱ-ների և ձեռք բերողի միջև առաջին արձանագրության ստորագրման օրն է:

համարվում է այդպիսին (բացի չձևակերպված օգտագործող ԱԵՏՏ-ից),

- Այն հողակտորների դեպքում, որոնց սեփականության կարգավիճակը կադաստրում նշված է “պարզ չէ”, ՀՕՏՕ-ում ոչ մի ԱԵՏՏ չի հաշվառվել հողակտորների այդ կատեգորիայում (բացի չձևակերպված օգտագործող ԱԵՏՏ-ից):

2.2.6. Կադաստրային անհամապատասխանություններ ունեցող հողակտորների գնահատումը

64. Սեփականության վկայականի և կադաստրային վկայականի միջև անհամապատասխանությունների դեպքում (մակերեսը, նպատակային նշանակությունը կամ փաստացի օգտագործման նպատակը և այլն) հողակտորների գնահատումը կատարվել է հետևյալ սկզբունքով. եթե առկա է սեփականության վկայական, գնահատումը կատարվել է վկայականի տվյալների հիման վրա, հակառակ դեպքում՝ գնահատման հիմք են հանդիսացել կադաստրային քարտեզի տվյալները (մանրամասները ներկայացված են Գլուխ J-ում և Հավելված 8-ում):

3. Ազդեցության գնահատում

3.1 Ազդեցությունը հողի վրա

66. Ընդհանուր առմամբ՝ Ծրագրի նպատակով 168 ԱԵՏՏ-ից կօտարվի 444 հողակտոր՝ ընդհանուր 526.018,54 մ² մակերեսով, որոնք տեղակայված են 12 համայնքում: Ազդեցության են ենթարկվում 15.739.3 մ² մասնավոր սեփականություն, 177.197,8 մ² համայնքային սեփականություն և 332.946,34 մ² պետական (ՀՀ սեփականություն) սեփականություն հանդիսացող հողեր: 135,1 մ² մակերեսով 3 հողակտորի սեփականության կարգավիճակը չի պարզվել: Ընդհանուր առմամբ՝ Ծրագրային տարածքում ազդեցության են ենթարկվում հողերի ընդհանուր մակերեսի (բոլոր տեսակի հողեր) 3%-ը կազմող մասնավոր, 33.7% համայնքային և 63.3% ՀՀ պետական սեփականություն հանդիսացող հողեր:

67. Ազդեցության ենթակա հողերը՝ ըստ լոտերի, համայնքների և սեփականության կարգավիճակի ներկայացված են Աղյուսակ B-ում: Ազդեցության ենթակա ընդհանուր 444 հողակտորից 216-ը (48.7%) գտնվում են Լոտ 1-ում, 114-ը (26.1%)՝ Լոտ 2-ում, իսկ 112-ը (25.2%)՝ Լոտ 3-ում:

Աղյուսակ B. Ազդեցությունը հողի վրա՝ ըստ լոտերի և համայնքների

Լոտ/ կմ	Լոտ 1				Լոտ 2				Լոտ 3			Ընդամենը
	կմ 38+450-կմ 48+140				կմ 48+140-կմ 62+300				կմ 62+300-կմ 90+191			
Համայնք/Սեփականության կարգավիճակ	Մասնավոր	Համայնքային	Պետական	Չնույնակա նացված	Մասնավոր	Համայնքային	Պետական	Չնույնակա նացված	Մասնավոր	Համայնքային	Պետական	
	No				No				No			
Ախթալա	-	-	-	-	-	-	-	-	-	7	2	9
Այգեհատ	2	10	4	-	-	-	-	-	-	-	-	16
Արձիս	-	-	-	-	-	-	-	-	1	2	1	4

Աքորի	-	-	-	-	-	2	-	-	-	-	-	2
Թումանյան	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
Հաղպատ	-	-	-	-	10	33	8	-	-	13	4	68
Նեղոց	-	-	-	-	-	-	-	-	4	26	5	35
Շնող	-	-	-	-	-	-	-	-	8	36	3	47
ք. Ալավերդի	20	45	4	1	5	45	11	2	-	-	-	133
Օձուն	28	94	7	-	-	-	-	-	-	-	-	129
Այրում*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հաղթանակ*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Պտղավան*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բագրատաշե ն*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	51	149	15	1	15	80	19	2	13	84	15	444

*Համայնքը գտնվում է Լոս 3-ի հատվածում, սակայն այդ համայնքի վրա ազդեցություններ չեն արձանագրվել:

3.2 Ազդեցության ենթակա հողերի զբաղեցման իրավական կարգավիճակը

68. Ըստ սեփականության՝ մշտական ազդեցության են ենթարկվել հետևյալ ձևակերպված (օրինական) հողերը.

- (i) **Մասնավոր սեփականություն.** 79 հողակտոր (23 գյուղատնտեսական, 18 ոչ գյուղատնտեսական)՝ 15.739,3 մ² մակերեսով: Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողերի մեծամասնությունը այգիներ են (22 հողակտոր՝ 5.777,4 մ² մակերեսով), մինչդեռ ոչ գյուղատնտեսական հողերը հիմնականում բնակելի հողեր են (18 հողակտոր՝ 2.432,9 մ² մակերեսով): Մասնավոր բնակելի հողի վրա վարձակալներ կամ օգտագործողներ չեն արձանագրվել:
- (ii) **Համայնքային հողեր.** 313 հողակտոր (14 գյուղատնտեսական և 299 ոչ գյուղատնտեսական հող)՝ ընդհանուր 177.197,8 մ² մակերեսով: Ազդեցության ենթակա ոչ գյուղատնտեսական համայնքային հողերից 26-ը բնակելի նպատակներով օգտագործվում է չձևակերպված օգտագործողների կողմից, իսկ 60-ը՝ այլ նպատակներով: Ազդեցության ենթակա բոլոր համայնքային հողերից 212-ը՝ 91.663,4 մ² մակերեսով, գտնվում է անմիջապես Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) վարչարարության ներքո և սովորաբար համայնքի անդամների կողմից օգտագործվում է արոտավայրերի, գյուղական ճանապարհների և այլ նպատակներով: 1 հողակտոր վարձակալված է, իսկ 91 հողակտոր՝ 54.097,4 մ² մակերեսով, օգտագործվում է չձևակերպված օգտագործող հանդիսացող 84 ԱԵՏՏ-ի կողմից:
- (iii) **Պետական հողեր.** 49 հողակտոր՝ 332.946,34 մ² մակերեսով: Դրանց մեծամասնությունը (34 հողակտոր՝ 185.816,2 մ² մակերեսով) հատուկ նշանակության հողեր են՝ 20-ը՝ տրանսպորտի, 7-ը՝ գետերի, 5-ը՝ անտառային, 1-ը՝ արդյունաբերական: 49 հողակտորից 9-ը՝ 139.204,84 մ² մակերեսով, օգտագործվում է չձևակերպված օգտագործող հանդիսացող 11 ԱԵՏՏ-ի կողմից՝ որպես այգի և այլ նպատակներով:
- (iv) **Չնույնականացված հողեր.** 135,1 մ² ընդհանուր մակերեսով 3 ոչ գյուղատնտեսական հողակտորների սեփականության կարգավիճակը, նպատակային և գործառնական նշանակությունը հնարավոր չեղավ պարզել ո՛չ կադաստրի, և ո՛չ էլ համայնքների միջոցով: Հողակտորները չեն օգտագործվում:

3.3 Հողերի կորուստը՝ ըստ տեսակի

69. Հողերի տեսակները դասակարգվել են՝ ըստ հողի փաստացի գործառնական նշանակության: Ընդհանուր առմամբ՝ Օրագրի ազդեցությանն է ենթարկվում 38 գյուղատնտեսական նշանակության հողակտոր՝ 46.080,50 մ² ընդհանուր մակերեսով, 372 ոչ գյուղատնտեսական նշանակության հողակտոր՝ 294.121,84 մ² մակերեսով, 34 (զբաղեցնում են 185.816,20 մ² մակերես) հատուկ նշանակության հողեր:

70. Ընդհանուր առմամբ՝ ազդեցության ենթակա հողակտորների մեծամասնությունն այգիներ (23 հողակտոր՝ 9.982,40 մ² մակերեսով) և արոտավայրեր (10 հողակտոր՝ 34.244,30 մ² մակերեսով) են, իսկ ազդեցության ենթակա ոչ գյուղատնտեսական հողակտորները հիմնականում օգտագործվում են այլ (278 հողակտոր՝ 287.711,24 մ² մակերեսով), բնակելի (44 հողակտոր՝ 2.951,20 մ² մակերեսով) և ճանապարհների (33 հողակտոր՝ 2.066,60 մ² մակերեսով) նպատակներով: 34 հատուկ նշանակության հողերը՝ 185.816,20 մ² մակերեսով օգտագործվում են որպես տրանսպորտային, գետերի, անտառային հողեր: Ազդեցության ենթակա հողակտորները՝ ըստ տեսակի և իրենց իրավական (զբաղեցման) կարգավիճակի, ներկայացված են Աղյուսակ B1-ում: Ազդեցության ենթակա հողակտորների մանրամասն նկարագրությունը՝ ըստ համայնքների և լոտերի, ըստ տեսակի և իրենց իրավական կարգավիճակի, ներկայացված են Հավելված 10-ում:

71. Բնակելի երկու հողակտորների համար որոշում կայացվեց դրանք ամբողջությամբ օտարել հետևյալ պատճառներով.

- 1) **1-ին հողակտոր (Այգեհատ, ծածկագիրը՝ 06-014-0102-0002).** բնակելի հողակտորի ընդհանուր մակերեսը 230 քառակուսի մետր է, մինչդեռ ազդեցության ենթակա մասը կազմում է 209.40 քառակուսի մետր, ներառյալ՝ բնակելի տունը: Հաշվի առնելով, որ հողակտորի ազդեցության ենթակա մասը 20.6 քառակուսի մետր է՝ հողակտորը չի կարող օգտագործվել իր նպատակային նշանակությամբ (բնակելի), հետևաբար ազդեցության չենթարկվող մասը նույնպես ներառվել է օտարման ենթակա ընդհանուր մակերեսում՝ փոխհատուցվելով համապատասխանաբար:
- 2) **2-րդ հողակտոր (Ալավերդի, ծածկագիր՝ 06-002-0191-0011).** բնակելի հողակտորի ընդհանուր մակերեսը 400 քառակուսի մետր է, մինչդեռ ազդեցության ենթակա մասը կազմում է 57.20 քառակուսի մետր: Օտարման հետևանքով բնակելի հողատարածքը կորցնում է դեպի հողակտորի վրա գտնվող տունը տանող բոլոր մուտքերը: Հաշվի առնելով այն փաստը, որ նախագիծը չի կարող տրամադրել դեպի հողակտոր և տուն տանող որևէ մուտք՝ բնակելի հողակտորներն ամբողջությամբ կօտարվեն (տան ամբողջական քանդումն արդեն ներառվել է այն կառուցվածքների ցուցակում, որոնք պետք է քանդվեն Կապալառուի կողմից):

Աղյուսակ B1. Հողի կրած ազդեցությունը՝ ըստ հողի տեսակի և սեփականության/հողի զբաղեցման կարգավիճակի

Հողի կատեգորիան		Մասնավոր			Համայնքային							Պետական			Չնույնականացված*		Ընդամենը					
		Սեփական			Վարձակալված			Չձևակերպված օգտագործողներ				ՀՀ սեփականություն		Չձևակերպված օգտագործողներ								
		Հողակտորները	ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տարածքը
		No	No	մ ²	No	No	մ ²	No	No	մ ²	No	մ ²	No	մ ²	No	No	մ ²	No	մ ²	No	No	մ ²
A. Գյուղատնտեսական	Այգի	22	22	5.777,4	-	-	-	-	-	-	-	-	-	1	1	4.205	-	-	23	23	9.982,40	
	Արոտավայր	-	-	-	-	-	2	2	3.379,2	8	30.865,1	-	-	-	-	-	-	-	10	2	34.244,3	
	Գյուղատնտեսական/Արդյունաբերական	1	4	212,7	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	4	212,70	
	Խոտհարք	-	-	-	-	-	-	-	-	1	566,9	-	-	-	-	-	-	-	1	-	566,90	
	Վարելի	-	-	-	-	-	3	3	1.074,2	-	-	-	-	-	-	-	-	-	3	3	1.074,20	
Միջանկյալ ընդհանուր Ա.		23	26	5.990,1	-	-	5	5	4.453,4	9	31.432,0	-	-	1	1	4.205	-	-	38	32	46.080,5	
B. Ոչ գյուղատնտեսական	Բնակելի	18	28	2.432,9	-	-	26	19	518,30	-	-	-	-	-	-	-	-	-	44	41	2.951,20	
	Հասարակական	10	10	631,8	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	19	11	10	650,60	
	Արդյունաբերական	6	8	742,2	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	6	8	742,20	
	Ճանապարհային	-	-	-	-	-	-	-	-	33	2.066,6	-	-	-	-	-	-	-	33	-	2.066,60	
	Այլ	22	21	5.942,3	1	1	5	60	67	49.125,7	179	89.596,8	6	7925,3	8	10	134.999,84	2	116,3	278	94	287.711,2
Միջանկյալ ընդհանուր B.		56	67	9.749,2	1	1	5	86	84	49.644,0	212	91.663,4	6	7.925,3	8	10	134.999,84	3	135,1	372	142	294.121,2
C. Հաստուկ	Անտառային	-	-	-	-	-	-	-	-	-	-	5	12361,1	-	-	-	-	-	5	-	12.361,10	
	Արդյունաբերական	-	-	-	-	-	-	-	-	-	-	2	207,9	-	-	-	-	-	2	-	207,90	
	Ջրային (գետ)	-	-	-	-	-	-	-	-	-	-	7	863,7	-	-	-	-	-	7	-	863,70	
	Տրանսպորտային	-	-	-	-	-	-	-	-	-	-	20	172383,5	-	-	-	-	-	20	-	172.383,50	
Միջանկյալ ընդհանուր C.		-	-	-	-	-	-	-	-	-	-	34	185816,2	-	-	-	-	-	34	-	185.816,20	
Ընդամենը		79	91	15.739,3	1	1	5	91	86	54.097,4	221	123.095,4	40	193.741,5	9	11	139.204,84	3	135,1	444	168	526.018,5

* Չնույնականացված հողեր չեն օգտագործվում որևէ տնային տնտեսության կողմից

** ԱԵՏՏ-ների քանակը ընդհանուրում ներկայացված է առանց կրկնահաշվարկի

3.4 Ազդեցությունը շենքերի և շինությունների վրա

72. Ծրագրային ճանապարհի ծրագիծն ուղղակիորեն ազդեցության է ենթարկել 77 շինություն՝ 1032,07 մ² մակերեսով, որոնք տեղակայված են 55 հողակտորի վրա: Դրանցից 45-ը բնակելի, իսկ 32-ը ոչ բնակելի շինություններ են: Ըստ ազդեցության ենթարկվող մակերեսի՝ բնակելի շինությունները (715,67 մ²) ոչ բնակելի շինությունների (316,40 մ²) համեմատ կրում են առավել զգալի ազդեցություն: Ընդհանուր առմամբ՝ 15 ԱԵՏՏ ազդեցության է ենթարկվում՝ կորցնելով շենքերն և շինությունները: Ազդեցության ենթակա բոլոր բնակելի շինությունները գտնվում են Լոտ 1 հատվածի համայնքներում:

Աղյուսակ B2. Ազդեցության ենթակա ընդհանուր շենքերը և շինությունները

Տեսակը	Շինությունը	Ընդամենը	Հողակտորները
	No	մ ²	N
Բնակելի	45	715,67	30
Ոչ բնակելի	32	316,40	25
Ընդամենը	77	1032,07	55

73. Ծրագրի հետևանքով ազդեցության են ենթարկվում 12 բնակելի տներ՝ իրենց օժանդակ շինություններով (22 շինություն՝ 177.3 մ² մակերեսով) Ալավերդի, Այգեհատ և Օձուն համայնքներում: Այս 12 բնակելի տներից ֆիզիկապես կվերաբնակեցվեն միայն 6-ը (բազմաբնակարան շենք), քանի որ մնացածը փաստացի բնակեցված չեն: Մնացած 5 շինությունը՝ 715,67 մ² մակերեսով, ազդեցության են ենթարկվել առանց հիմնական շենքերի (տուն) կորստի: Յուրաքանչյուր շինության մանրամասն նկարագրությունը, ներառյալ՝ նյութի տեսակը և հողակտորների քանակը, որոնց վրա գտնվում են շինությունները, ներկայացված են Աղյուսակ B3-ում:

Աղյուսակ B3. Ազդեցությունը բնակելի շենքերի և շինությունների վրա

Անունը	Նյութը	No	Ընդամենը	Հողա- կտորները	Համայնքը
			մ ²	No	
Ա. Տուն					
Բնակելի տուն	Քարե	2	100,99	2	Այգեհատ (52.19մ ²), Ալավերդի (48.8մ ²)
Բնակարան	Քարե	9	342,6	1	Ալավերդի
Այգետնակ	Քարե	1	11,5	1	Օձուն
Միջանկյալ ընդհանուր Ա	-	12	455,09	4	-
Բ. Օժանդակ կառույցներ					
Բ1. Օժանդակ կառույցներ՝ ազդեցության ենթակա բնակելի տնով					
Գոմ	Քարե	1	15,37	18	Այգեհատ
Խոհանոց	Քարե	2	25,6		Ալավերդի

Անունը	Կյուրը	No	Ընդամենը	Հողա- կտորները	Համայնքը
			մ ²	No	
Խորդանոց	Քարե	4	36,09		Ալավերդի
Հոր (կարտոֆիլի)	Միաձույլ ե/բ	3	2,6		Ալավերդի
Հավաքուն	Քարե	1	8,4		Ալավերդի
Մարագ	Քարե, փայտե	3	18,95		Ալավերդի
Սանհանգույց	Քարե, փայտե	5	39,23		Ալավերդի (1.5մ ² , 9.2մ ² , 8.11մ ² , 18.92 մ ²) Օձուն (1.5մ ²)
Սանհանգույց և խորդանոց	Քարե	1	6,8		Ալավերդի
Օժանդակ կառույց	Քարե	2	24,3		Ալավերդի
Միջանկյալ ընդհանուր F1	-	22	177,3		-
F2. ՏՏ-ների օժանդակ կառույցները՝ առանց բնակելի տարածքների կորստի					
Խորդանոց	Աղյուսե	1	19	12	Ալավերդի
Կիսակառույց մարագ	Փայտե	1	2		Ալավերդի
115. Սոցիալ-տնտեսական հետազոտության (USՀ) հիմնական նպատակն է ապահովել ազդեցության ենթակա բնակչության և համայնքների սոցիալ-տնտեսական գլխավոր հատկանիշների՝ կրթական մակարդակ, կենսապահովման միջոցներ, եկամտի աղբյուրներ, աղքատության/եկամտի մակարդակներ, գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, ինչպես նաև ծառայությունների հասանելիությունը/մատչելիությունը, որոնց վերաբերյալ տվյալները կարող են օգտագործվել որպես ՀՕՏՕ-ի իրականացման գնահատման ելակետային տվյալներ (եթե անհրաժեշտ է), ինչպես նաև ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի պահանջների իրականացման գնահատման նպատակով: Սա կօգնի ավելի լավ հասկանալ ազդեցության ենթակա տնային տնտեսությունների վրա հողի կորստի հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունները և բացահայտել վերականգնման տարբերակները:

116. Ազդեցության ենթակա անձանց սոցիալ-տնտեսական նկարագիրը հիմնված է 2017 թ. հոկտեմբերին՝ վերջնական ՀՕՏՕ-ի մշակման փուլում իրականացված տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական հետազոտության վրա: Ընդհանուր առմամբ՝ Ծրագրի՝ ԱԶԲ-ի ֆինանսավորմամբ իրականացվող հատվածում ազդեցության կենթարկվի 172 տնային տնտեսություն, որոնցից միայն 107 (62.2%) տնային տնտեսություն է մասնակցել մարդահամարի հետազոտությանը, քանի որ մնացած 65-ը չեն ընդգրկվել USՀ/մարդահամարի հետազոտությունում հետևյալ պատճառներով. 6-ը՝ անհասանելի էին, 19-ը չունեին կոնտակտային տվյալներ, 28-ը չեն բացահայտվել, 4-ը մերժել են, 7-ը բնակվում են արտերկրում, իսկ 1 տնային տնտեսություն չէր մասնակցել հետազոտությանը, քանի որ սեփականատերը մահացած է, և ժառանգները չեն հայտնաբերվել: Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ոչ մեծ քանակով պայմանավորված՝ USՀ-ն իրականացվեց բոլոր ԱԵՏՏ-ների համար՝ առանց ընտրանքի կիրառման: Հաշվետվության այս բաժնում ներկայացված մարդահամարի և USՀ տվյալները վերաբերում են հետազոտված 107 տնային տնտեսության և 426 ԱԵԱ-ի: USՀ-ին մասնակցած տնային տնտեսությունները ներկայացված են Աղյուսակ D1-ում՝ ըստ համայնքների: USՀ-ի համար օգտագործված հարցաթերթիկը կցված է՝ որպես Հավելված 3:

Աղյուսակ D1. USՀ-ում ընդգրկված ԱԵՏՏ-ների և ՏՏ-ների ընդհանուր քանակը՝ ըստ համայնքների

Համայնքը	ԱԵՏՏ-ների ընդհանուր քանակը	USՀ-ում և մարդահամարում ընդգրկված ԱԵՏՏ-ների քանակը	USՀ-ում և մարդահամարում ընդգրկված ԱԵԱ-ների քանակը
Այգեհաս	9	5	27
Արճիս	4	3	15
Հաղպատ	21	9	43
Նեղոց	9	6	28
Շնող	22	17	71
Սլավերդի	63	46	169
Օձուն	43	21	73
Թումանյան	1	0	0

Ընդամենը	172	107	426
* 1 ԱԵՏՏ ունի հողակտորներ և՛ Աավերդիում, և՛ Օձունում: Այս ԱԵՏՏ-ն ընդգրկվել է այն համայնքում, որն ԱԵՏՏ-ի բնակության հիմնական վայրն է, այս դեպքում՝ Ալավերդիում:			

2. ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ

117. Մարդահամարի արդյունքում բացահայտվել է 107 տնային տնտեսություն՝ ազդեցության ենթակա 426 անձով: Այն ընդգրում է 215 (50.47%) արական և 211 (49.53%) իգական սեռի ներկայացուցիչ (Աղյուսակ D3): Տնային տնտեսության ղեկավարների նկարագիրը ցույց է տալիս, որ միայն 32-ն (29.91%) են կանայք, իսկ 75-ը (70.09%) տղամարդիկ են, մինչդեռ տնային տնտեսության անդամներից 179-ը (56.11%)՝ կանայք, իսկ 140-ը (43.89%) տղամարդիկ են (Աղյուսակ D3): Միջին հաշվով 3.98 անձ կա յուրաքանչյուր տնային տնտեսությունում: 2011թ. մարդահամարի տվյալներով Հայաստանում տնային տնտեսությունը միջինում կազմված է 3.85 անձից: Հետազոտված ԱԵՏՏ-ների չափը գրեթե համապատասխանում է Հայաստանում միջին գյուղական տնային տնտեսության չափին:

Աղյուսակ D2. Ազդեցության ենթակա անձանց նկարագիրը՝ ըստ սեռի

Սեռը	No	Ընդհանուրի % -ը
Արական	215	50,47%
Իգական	211	49,53%
Ընդամենը	426	100,00%

Աղյուսակ D3. ԱԵՏՏ ղեկավարների և անդամների նկարագիրը՝ ըստ սեռի

ԱԵՏՏ-ներ						ԱԵՏՏ անդամներ					
Արական սեռի ԱԵՏՏ ղեկավար	%	Արական սեռի ԱԵՏՏ ղեկավար	%	Արական սեռի ԱԵՏՏ ղեկավար	%	Արական սեռի ԱԵՏՏ ղեկավար	%	Արական սեռի ԱԵՏՏ ղեկավար	%	Արական սեռի ԱԵՏՏ ղեկավար	%
75	70,09%	32	29,91%	107	100,00%	140	43,89%	179	56,11%	319	100,00%

3. Ազդեցության ենթակա անձանց էթնիկ պատկանելությունը

118. ԱԶԲ ԱՄՔՀ (2009)-ի Տեղաբնիկների (ՏԲ) վերաբերյալ քաղաքականության շրջանակներում կիրառվող «Տեղաբնիկ մարդիկ» սահմանմանը համապատասխանող տեղաբնիկներ չկան Ծրագրի տարածքում: Այնուամենայնիվ, ԱՄՔՀ-ն սահմանում է ՏԲ-ն որպես ընդհանրական հասկացություն, որն ընդգրկում է ազգային/էթնիկ խմբերը: ԱԵԱ-ների 98.84%-ը հայեր են (տե՛ս Աղյուսակ D4), և միայն մեկ ԱԵԱ (1.16%) ռուս է:

Աղյուսակ D4. ԱԵՏՏ-ների նկարագիրը՝ ըստ էթնիկ կազմի

Ազգային պատկանելությունը	ԱԵԱ-ներ	Տոկոսը %
	No	%
Հայեր	425	98,84%
Եզդիներ	1	1,16%
Ընդամենը	426	100,00%

4. ԱԵՏՏ ղեկավարների սեռը, տարիքը և ամուսնական կարգավիճակը

119. Հետազոտված բնակչության տնային տնտեսությունների ղեկավարների կեսից ավելին՝ 75-ը (70.09%) տղամարդիկ են և 32-ը (29.91%)՝ կանայք: Տնային տնտեսությունների ղեկավարների նմանօրինակ գենդերային բաշխումն արտացոլում է արական սեռի կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների գերակշռությունն ազդեցության ենթակա համայնքներում: Հետազոտված բնակչության տարիքային բաշխումը ցույց է տալիս, որ 56-65 և 66 և ավելի բարձր տարիքային խմբերը ամենաներկայացված խմբերն են տղամարդկանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների շրջանում (21.50% և 23.36%): Կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններն առավել ներկայացված են 56-65 և 66 (12.15% և 15.89%) և ավելի բարձր տարիքային խմբում:

Աղյուսակ D5: ԱԵՏՏ ղեկավարների տարիքային բաշխումը՝ ըստ սեռի

Տարիքային խումբը	Արական սեռի ԱԵՏՏ ղեկավար		Իգական սեռի ԱԵՏՏ ղեկավար		Ընդամենը	
	No.	%	No.	%	No.	%
26-35	2	1,87%	0	0,00%	2	1,87%
36-45	4	3,74%	0	0,00%	4	3,74%
46-55	21	19,63%	2	1,87%	23	21,50%
56-65	23	21,50%	13	12,15%	36	33,64%
66 և ավելի	25	23,36%	17	15,89%	42	39,25%
Ընդամենը	75	70,09%	32	29,91%	107	100,00%

120. Այնուամենայնիվ, տնային տնտեսությունների կին ղեկավարները 66 և ավելի տարիքային խմբում տոկոսային առումով ավելի շատ են, քան այլ տարիքային խմբում: Սա պայմանավորված է արական սեռի կողակցի մահով (26 ԱԵՏՏ), որից հետո տնային տնտեսությունը ղեկավարվում է կնոջ կողմից, ինչը հանվել է ԱԵՏՏ ղեկավարների ամուսնական կարգավիճակից (Աղյուսակ D6): Իրավաբանորեն ամուսնու մահից հետո կինը դառնում է գույքի սեփականատերը: Սակայն այս դեպքում սեփականության իրավունքը հիմնականում կապված է արական սեռի կողակցի մահվան հետ:

Աղյուսակ D6. ԱԵՏՏ ղեկավարների ամուսնական կարգավիճակը

Ամուսնական կարգավիճակը	Արական սեռի ԱԵՏՏ ղեկավար		Իգական սեռի ԱԵՏՏ ղեկավար		Ընդամենը	
	No.	No.	No.	%	No.	%
Ամուսնացած	65	60,75%	2	1,87%	67	62,62%
Ամուրի	1	0,93%	1	0,93%	2	1,87%
Այրի	7	6,54%	26	24,30%	33	30,84%
Ամուսնալուծված	2	1,87%	3	2,80%	5	4,67%
Ընդհանուր	75	70,09%	32	29,91%	107	100,00%

Աղյուսակ D7. ԱԵՏՏ անդամների ամուսնական կարգավիճակը

Ամուսնական կարգավիճակը	Արական սեռի ԱԵՏՏ անդամ		Իգական սեռի ԱԵՏՏ անդամ		Ընդամենը	
	No.	No.	No.	%	No.	%
Ամուսնացած	45	14,11%	109	34,17%	154	48,28%
Ամուրի	49	15,36%	25	7,84%	74	23,20%

Այրի	2	0,63%	5	1,57%	7	2,19%
Ամուսնալուծված	3	0,94%	2	0,63%	5	1,57%
Կիրառելի չէ	41	12,85%	38	11,91%	79	24,76%
Ընդամենը	140	43,89%	179	56,11%	319	100,00%

121. Ստորև բերված Աղյուսակ D8-ում ներկայացված է ազդեցության ենթակա տնային տնտեսությունների անդամների (ԱԵՍ-ներ) ընդհանուր քանակը՝ ըստ տարիքային խմբի և սեռի: Սեռերի միջև բաշխվածությունը տարբեր է արական և իգական սեռի ԱԵՍՍ անդամների շրջանում: Արական սեռի ԱԵՍՍ անդամները կազմում են 50% 0-25 տարիքային խմբում, իսկ 26-46 տարիքային խմբում՝ 41.4%: Ավելին, 46-65 տարիքային խմբում նրանք կազմում են 7.8%: Թվերը արտացոլում են համեմատաբար ցածր մշտական արտագաղթը հետազոտության պահի դրությամբ, ինչը բնորոշ է գյուղական բնակչության արական սեռի ԱԵՍՍ անդամներին: Ինչպես երևում է ստորև բերված աղյուսակից, ԱԵՍՍ կին անդամները քիչ թե շատ համամասնորեն են ներկայացված տարիքային բոլոր խմբերում՝ առավելագույնը կազմելով 10.03%՝ 26-35 տարիքային խմբում: Այնուամենայնիվ, համեմատաբար ցածր թվերը կարող են պայմանավորված լինել սեզոնային կամ կարճաժամկետ աշխատանքային միգրացիայով՝ հատկապես 26-46 տարիքային խմբում, և երկարաժամկետ կամ մշտական արտագաղթով՝ 46-55 տարիքային խմբում:

Աղյուսակ D8. ԱԵՍՍ անդամների տարիքն՝ ըստ սեռի

Տարիքային խումբը	Արական		Իգական		Ընդամենը	
	No.	%	No.	%	No.	%
0-5	17	5,33%	17	5,33%	34	10,66%
6-15	25	7,84%	19	5,96%	44	13,79%
16-25	28	8,78%	20	6,27%	48	15,05%
26-35	40	12,54%	32	10,03%	72	22,57%
36-45	18	5,64%	24	7,52%	42	13,17%
46-55	7	2,19%	25	7,84%	32	10,03%
56-65	4	1,25%	27	8,46%	31	9,72%
66 և ավելի	1	0,31%	15	4,70%	16	5,02%
Ընդամենը	140	43,89%	179	56,11%	319	100,00%

5. Կրթական մակարդակը

122. Ընդհանուր կրթական մակարդակը բավական բարձր է ազդեցության ենթակա տնային տնտեսությունները ղեկավարող անձանց շրջանում: Բոլոր կանայք և տղամարդիկ կրթված և գրագետ են: ԱԵՍՍ ղեկավարների մեծամասնությունն ունի միջնակարգ կրթություն (35.51%) և միջնակարգ մասնագիտացված կրթություն (29.91%), որոնց հետևում են 23.36% կազմող բարձրագույն կրթություն ունեցող ՍՏ ղեկավարները: ՍՏ ղեկավարների շրջանում միջնակարգ մասնագիտական կրթության (22 տղամարդ՝ 10 կնոջ հարաբերությամբ) և բարձրագույն կրթության (18 տղամարդ՝ 7 կնոջ հարաբերությամբ) կատեգորիաներում տղամարդկանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները զգալիորեն գերակշռում են կանաց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների նկատմամբ: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն կանայք ունեն թերի միջնակարգ կրթություն (1,87%-ը՝ ընդհանուր ԱԵՍՍ կին ղեկավարներից): Մանրամասների համար տե՛ս Աղյուսակ D9-ը:

Աղյուսակ D9. ԱԵՏՏ ղեկավարների կրթությունն՝ ըստ սեռի

Կրթական մակարդակը	ԱԵՏՏ տղամարդ ղեկավարներ		ԱԵՏՏ կին ղեկավարներ		Ընդհանուր ԱԵՏՏ ղեկավարները	
	No.	%	No.	%	No.	%
Անուսում	0	0,00%	0	0,00%	0	0,00%
Տարրական	0	0,00%	0	0,00%	0	0,00%
Թերի միջնակարգ	7	6,54%	3	2,80%	10	9,35%
Միջնակարգ	28	26,17%	10	9,35%	38	35,51%
Միջին դպրոց	0	0,00%	0	0,00%	0	0,00%
Ավագ դպրոց	0	0,00%	0	0,00%	0	0,00%
Միջնակարգ մասնագիտական	22	20,56%	10	9,35%	32	29,91%
Թերի բարձրագույն կրթություն, ուսանող	0	0,00%	2	1,87%	2	1,87%
Բարձրագույն (բակալավր կամ մագիստրոս)	18	16,82%	7	6,54%	25	23,36%
Հետբուհական	0	0,00%	0	0,00%	0	0,00%
Կիրառելի չէ (մինչև 6 տարեկան)	0	0,00%	0	0,00%	0	0,00%
Ընդամենը	75	70,09%	32	29,91%	107	100,00%

123. ԱԵՏՏ 319 անդամից (ԱԵԱ) 19 (5.96%)-ն ունի տարրական, 98 (30.72%)-ը՝ միջնակարգ, 40 (12.54%)-ը՝ միջնակարգ մասնագիտական և 62 (19.44%)-ը՝ բարձրագույն կրթություն: Միջին և բարձր դպրոցների կրթական մակարդակներում ԱԵԱ-ները համապատասխանաբար կազմում են 6.90% և 2.19%: Տվյալները ցույց են տալիս, որ միջնակարգ մասնագիտական կրթության և ավելի բարձր որակավորման աստիճաններ ունեցող կատեգորիայում կանայք տոկոսային առումով գերազանցում են տղամարդկանց՝ համապատասխանաբար 28 կին և 14 տղամարդ, 42 կին և 20 տղամարդ: Դրանով արտացոլվում է կանանց անկախ մտածելակերպը աշխատանքային զբաղվածության և տնտեսական գործունեության վերաբերյալ:

Աղյուսակ D10. ԱԵՏՏ անդամների կրթությունը՝ ըստ սեռի

Կրթական մակարդակը	Արական		Իգական		Ընդհանուր	
	No.	%	No.	%	No.	%
Անուսում	1	0,31%		0,00%	1	0,31%
Տարրական	11	3,45%	8	2,51%	19	5,96%
Թերի միջնակարգ	8	2,51%	5	1,57%	13	4,08%
Միջնակարգ	42	13,17%	56	17,55%	98	30,72%
Միջին դպրոց	12	3,76%	10	3,13%	22	6,90%
Ավագ դպրոց	4	1,25%	3	0,94%	7	2,19%
Միջնակարգ մասնագիտական	12	3,76%	28	8,78%	40	12,54%
Թերի բարձրագույն կրթություն, ուսանող	13	4,08%	10	3,13%	23	7,21%
Բարձրագույն (բակալավր կամ մագիստրոս)	20	6,27%	42	13,17%	62	19,44%
Հետբուհական	1	0,31%	1	0,31%	2	0,63%
Կիրառելի չէ (մինչև 6 տարեկան)	16	5,02%	16	5,02%	32	10,03%
Ընդամենը	140	43,89%	179	56,11%	319	100,00%

6. Զբաղվածության կարգավիճակը

124. Ընդհանուր առմամբ՝ 107 ԱԵՏՏ-ից 36-ում (33.64%) տղամարդ ղեկավարների աշխատանքային զբաղվածությունն ավելի մեծ թիվ է կազմում (28.97%), քան կին ղեկավարների շրջանում (4.67%): Գրեթե հավասար թվով տղամարդ և կին (18 տղամարդ՝ 16.82%, 17 կին՝ 15.89%) ՏՏ ղեկավար կենսաթոշակատուներ են: Մինչդեռ 12 (11.21%) ՏՏ ղեկավար աշխատող կենսաթոշակատուներ են, ովքեր զբաղված են մասնավոր գյուղատնտեսական գործունեությամբ՝ առանց վաճառքի (7 տղամարդ և 5 կին): Ընդհանուր առմամբ՝ 24 (22.4%) տնային տնտեսության ղեկավարներ գործազուրկ են կամ չեն աշխատում: Նրանցից գրեթե հավասար թվով ՏՏ ղեկավարներ ակտիվորեն փնտրում են կամ չեն փնտրում աշխատանք՝ համապատասխանաբար 9.35% և 13.08% (տե՛ս Աղյուսակ D11):

Աղյուսակ D11. ԱԵՏՏ ղեկավարների զբաղվածության կարգավիճակը՝ ըստ սեռի

Զբաղվածության կարգավիճակը	ԱԵՏՏ տղամարդ ղեկավար		ԱԵՏՏ կին ղեկավար		Ընդհանուր	
	No.	%	No.	%	No.	%
Զբաղված	31	28,97%	5	4,67%	36	33,64%
Կենսաթոշակատու	18	16,82%	17	15,89%	35	32,71%
Աշխատող թոշակատու	7	6,54%	5	4,67%	12	11,21%
Գործազուրկ և աշխատանք չփնտրող	8	7,48%	2	1,87%	10	9,35%
Գործազուրկ և աշխատանք փնտրող	11	10,28%	3	2,80%	14	13,08%
Ընդամենը	75	70,09%	32	29,91%	107	100,00%

125. Ընտանիքի այլ անդամների շրջանում աշխատանքի են ընդգրկված 44 (13.79%) տղամարդ և 42 կին (13.17%), ինչը ցույց է տալիս, որ տղամարդկանց և կանանց աշխատանքային զբաղվածությունը գրեթե հավասար է: Կին և տղամարդ կենսաթոշակատուների քանակը խիստ տարբեր է՝ 14 տղամարդ և 1 տղամարդ: Բացի այդ, 64 ԱԵՏՏ անդամ (20.06%) աշակերտներ և ուսանողներ են: Ընդհանուր առմամբ՝ 105 (32.9%) տղամարդ և կին հետազոտության ժամանակ գրանցվել են որպես գործազուրկ: Նրանցից աշխատանք են փնտրում 28 տղամարդ և 35 կին:

Աղյուսակ D12. ԱԵՏՏ անդամների զբաղվածության կարգավիճակը՝ ըստ սեռի

Զբաղվածության կարգավիճակը	Տղամարդ		Կին		Ընդամենը	
	No.	%	No.	%	No.	%
Զբաղված	44	13,79%	42	13,17%	86	26,96%
Կենսաթոշակատու	1	0,31%	14	4,39%	15	4,70%
Աշխատող կենսաթոշակատու*	0	0,00%	1	0,31%	1	0,31%
Աշակերտ	27	8,46%	21	6,58%	48	15,05%
Ուսանող	7	2,19%	9	2,82%	16	5,02%
Հեռակայող ուսանող	3	0,94%	2	0,63%	5	1,57%
Գործազուրկ և աշխատանք չփնտրող	5	1,57%	37	11,60%	42	13,17%
Գործազուրկ և աշխատանք փնտրող	28	8,78%	35	10,97%	63	19,75%
Զինձառայող	5	1,57%	0	0,00%	5	1,57%
Հաշմանդամ	2	0,63%	100%	0,31%	3	0,94%
Այլ	1	0,31%		0,00%	1	0,31%
Կիրառելի չէ (մինչև 6 տարեկան)	17	5,33%	17	5,33%	34	10,66%
Ընդամենը	140	43,89%	179	56,11%	319	100,00%
* Կենսաթոշակատուները զբաղվում են մասնավոր գյուղատնտեսական գործունեությամբ՝ առանց վաճառքի նպատակ հետապնդելու						

7. Ծառայությունների հասանելիությունը

126. Ազդեցության ենթակա համայնքների USՀ-ն ցույց տվեց հանրային ծառայությունների առկայությունը և դրանց հեռավորությունը յուրաքանչյուր համայնքից: Ծառայություններն ընդգրկում են կրթական հաստատությունները, հիվանդանոցները, դեղատները, փոստատունը, հասարակական տրանսպորտը, զբոսայգիները, խանութները, մշակույթի կենտրոնները և եկեղեցին: Բացի Արճիսից, ազդեցության ենթակա բոլոր համայնքներում բոլոր ծառայությունները հասանելի են գյուղի տարածքում: Արճիսում հասանելի չեն մի շարք ծառայություններ՝ մանկապարտեզ, դեղատուն, մշակութային կենտրոն և եկեղեցի: Հետևաբար այս բնակավայրերը, որոնցից Ալավերդին Հայաստանի ամենամեծ արդյունաբերական քաղաքն է, ապահովված են տարբեր ծառայություններով (տե՛ս Աղյուսակ D13):

Աղյուսակ D13: Ծառայությունների հասանելիությունը՝ ըստ հեռավորության

Ծառայություններ	Այգեհատ				Արճիս			Հաղպատ				Ներոց				Շնոր			Այսվերդի				Օձուն					
	Մինչև 2 կմ	2 կմ	2-5 կմ	5 կմ-ից ավել	Մինչև 2 կմ	2-5 կմ	5 կմ-ից ավել	Մինչև 2 կմ	2 կմ	2-5 կմ	5 կմ-ից ավել	Մինչև 2 կմ	2 կմ	2-5 կմ	5 կմ-ից ավել	Մինչև 2 կմ	2 կմ	2-5 կմ	5 կմ-ից ավել	Մինչև 2 կմ	2 կմ	2-5 կմ	5 կմ-ից ավել	Մինչև 2 կմ	2 կմ	2-5 կմ	5 կմ-ից ավել	
Միջնակարգ դպրոց	✓				✓			✓	✓	✓		✓	✓			✓		✓		✓	✓	✓	✓	✓			✓	
Ավագ դպրոց	✓	✓	✓	✓	✓	✓		✓	✓	✓	✓	✓	✓	✓		✓		✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
Մանկապարտեզ	✓		✓	✓		✓		✓	✓	✓		✓	✓			✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	
Այլ կրթական հաստատություն	✓		✓	✓		✓		✓		✓		✓		✓		✓		✓	✓	✓		✓	✓	✓	✓	✓	✓	✓
Հիվանդանոց	✓				✓	✓		✓	✓	✓	✓	✓	✓	✓		✓		✓	✓	✓	✓	✓	✓	✓		✓	✓	✓
Դեղատուն	✓			✓		✓		✓	✓			✓	✓	✓		✓	✓	✓		✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
Փոստատուն	✓				✓			✓	✓			✓		✓		✓		✓		✓	✓	✓	✓	✓		✓	✓	
Հասարակական տրանսպորտ	✓				✓	✓		✓				✓	✓			✓	✓	✓		✓	✓	✓		✓	✓			
Զբոսայգի	✓					✓	✓	✓		✓	✓	✓			✓		✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓		✓	✓	✓
Խանութ, առևտրի կենտրոն	✓				✓			✓				✓		✓		✓		✓		✓		✓	✓	✓		✓	✓	
Մշակութային կենտրոն	✓		✓	✓		✓	✓	✓	✓	✓		✓		✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓		✓	✓	✓
Եկեղեցի	✓			✓		✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓

127. Ինչ վերաբերում է տնային տնտեսությունների խմելու ջրի աղբյուրին, ապա բոլոր գյուղերում՝ բացի Նեղոցից, Շնողից և Ալավերդուց, այն հիմնականում ապահովվում է ջրագծերով: Այդպիսի ջրամատակարարում ստացող տնային տնտեսություններն ունեն հետևյալ համամասնությունները՝ Նեղոց՝ 83.33%, Շնող՝ 76.47%, և Ալավերդի՝ 80.43%: Շնողում (11.76%) և Ալավերդիում (15.22%) տնային տնտեսությունները խմելու ջուրը ստանում են աղբյուրից, որը ջուր ստանալու երկրորդ հիմնական միջոցն է (տե՛ս Աղյուսակ D14):

Աղյուսակ D14. ԱԵՏՏ-ների խմելու ջրի աղբյուրը

Խմելու ջրի աղբյուրը	Այգեհատ	Արճիս	Հաղպատ	Նեղոց	Շնող	Ալավերդի	Օձուն	Ընդամենը
Ջրագծային ջրամատակարարում	100,00%	100,00%	100,00%	83,33%	76,47%	80,43%	100,00%	86,92%
Աղբյուր	0,00%	0,00%	0,00%	0,00%	11,76%	15,22%	0,00%	8,41%
Ջրհոր	0,00%	0,00%	0,00%	16,67%	11,76%	2,17%	0,00%	3,74%
Առու	0,00%	0,00%	0,00%	0,00%	0,00%	2,17%	0,00%	0,93%
Ընդամենը	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%

128. Ինչ վերաբերում է տնային տնտեսությունների սանիտարական հարմարություններին, ապա զուգարանակոնքը և դրսի զուգարանը հասանելի են սոցիալ-տնտեսական հետազոտության մասնակից տնային տնտեսությունների 99.07%-ին: Ջուգարանակոնքի և դրսի զուգարանի համամասնությունը կազմում է համապատասխանաբար 58.88% և 28.04%, իսկ 12.15%-ն ունի երկու հարմարություններն էլ: Հետազոտված տնային տնտեսությունների միայն 0.93%-ը չունի զուգարան: Սանիտարական հարմարություն չունեցող տնային տնտեսություններ արձանագրվել են Ալավերդիում, որտեղ դրանք կազմում են տնային տնտեսությունների 2.17%-ը (տե՛ս Աղյուսակ D15):

Աղյուսակ D15. ԱԵՏՏ-ների սանիտարական հարմարությունները

Ջուգարանի տեսակը	Այգեհատ	Արճիս	Հաղպատ	Նեղոց	Շնող	Ալավերդի	Օձուն	Ընդամենը
Ջուգարանակոնք	80,00%	100,00%	77,78%	50,00%	35,29%	58,70%	61,90%	58,88%
Դրսի զուգարան	0,00%	0,00%	0,00%	16,67%	47,06%	32,61%	28,57%	28,04%
Ջուգարանակոնք և դրսի զուգարան	20,00%	0,00%	22,22%	33,33%	17,65%	6,52%	9,52%	12,15%
Ջուգարան չկա	0,00%	0,00%	0,00%	0,00%	0,00%	2,17%	0,00%	0,93%
Ընդամենը	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%

129. Հայաստանում վառելիքը հիմնականում անհրաժեշտ է սննդի պատրաստման և ջեռուցման նպատակով: Ունենալով ցուրտ ձմեռ՝ վառելիքի անհրաժեշտությունը ջեռուցման նպատակով տնային տնտեսության հիմնական ծախսերից մեկն է: Հասկանալու համար տնային տնտեսությունների կախվածությունը ջեռուցման համար անհրաժեշտ վառելիքի տեսակից՝ ՄՏՀ-ն դիտարկել է նաև այս հարցը: Աղյուսակ D15-ից կարելի է տեսնել, որ փայտը, գազը և էլեկտրականությունը ջեռուցման համար անհրաժեշտ վառելիքների հիմնական տեսակներն են, որոնք կազմում են համապատասխանաբար 58.49%, 21.70% և 8.49% (ջեռուցման նպատակով փայտի օգտագործումը 50%-ից ավելի է), մինչդեռ ԱԵՏՏ-ների 0.94%-ը օգտագործում է և՛ էլեկտրականություն, և՛ փայտ, իսկ 4.72%-ը՝ էլեկտրականություն և գազ: Այսպիսով ստացվում է, որ բոլոր վայրերում, բացի Հաղպատից, որպես ջեռուցման համար անհրաժեշտ վառելիք, փայտը, գազը և էլեկտրականությունը դասավորված են նախընտրելիության հաջորդականությամբ: Նման նախընտրության հիմնական պատճառը կարող է լինել այն փաստը, որ բոլոր համայնքները տեղակայված են անտառի մոտ և փայտի

ձեռքբերումը ավելի մատչելի է և ոչ ծախսատար, քան վառելիքի այլ աղբյուրները, որոնց համար ԱԵՏՏ-ները պետք է ավելի շատ վճարեն: Ինչ վերաբերում է համայնքներին, ազդեցության ենթակա 2 տնային տնտեսությունն էլ էլեկտրականություն չի օգտագործում ջեռուցման նպատակով Նեղոցում, Արձիսում և Այգեհատում: Տնային տնտեսությունների կեսը (55.56%), որոնք ջեռուցման նպատակով գազ են օգտագործում, Հաղպատում են, որին հավասարապես (22.22%) հետևում են էլեկտրականության և փայտի օգտագործումը:

Աղյուսակ D16. ԱԵՏՏ-ների կախվածությունը ջեռուցման համար օգտագործվող վառելիքի տեսակից՝ ըստ տոկոսների

Վառելիքի տեսակը	Այգեհատ	Արձիս	Հաղպատ	Նեղոց	Շնող	Ալավերդի	Օձուն	Total
Էլեկտրականություն	0,00%	0,00%	22,22%	0,00%	11,76%	6,67%	9,52%	8,49%
Էլեկտրականություն և փայտ	0,00%	0,00%	0,00%	0,00%	0,00%	2,22%	0,00%	0,94%
Էլեկտրականություն և գազ	0,00%	0,00%	0,00%	16,67%	0,00%	4,44%	9,52%	4,72%
Փայտ	100,00%	100,00%	22,22%	33,33%	82,35%	60,00%	42,86%	58,49%
Փայտ և գազ	0,00%	0,00%	0,00%	33,33%	5,88%	4,44%	4,76%	5,66%
Գազ	0,00%	0,00%	55,56%	16,67%	0,00%	22,22%	33,33%	21,70%
Ընդամենը	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%

8. Կենսապահովման և եկամտի աղբյուրները

130. Ինչպես երևում է Աղյուսակ D17-ից, գյուղատնտեսական գործունեությունը ազդեցության ենթակա տնային տնտեսությունների եկամտի հիմնական աղբյուրը չէ: Հաշվի առնելով տարածքի լանդշաֆտի առանձնահատկությունները (մի կողմից՝ շրջապատված կիրճերով և գետով, մյուս կողմից՝ երկաթուղին և անտառը)՝ ազդեցության ենթակա համայնքները հարուստ չեն վարելահողերով, պտղատու այգիներով և արոտավայրերով: Հետևաբար գյուղատնտեսական գործունեությունը սահմանափակվում է տնամերձ հողամասերում բանջարեղենի աճեցմամբ և անտառներից հատապտուղներ հավաքելով: Համայնքները, որոնք ունեն գյուղատնտեսական եկամտի ավելի բարձր համամասնություն, ավելի բարեկեցիկ են (ՏՏ միջին ամսական եկամուտը Արձիսում և Օձունում կազմում է համապատասխանաբար 116.666,67 ՀՀ դրամ (61.73%), և 66.529,41 ՀՀ դրամ (53.55%)՝ համեմատած գյուղատնտեսական եկամտից համեմատաբար պակաս ոչ գյուղատնտեսական եկամտի համամասնություն ունեցող համայնքների հետ: Հետևաբար, առկա է ուղիղ կապ ազդեցության ենթակա համայնքի բարեկեցության և գյուղատնտեսական եկամտի միջև:

Աղյուսակ D17. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական տարեկան եկամուտների համամասնությունը՝ ըստ ԱԵՏՏ-ների

Համայնքը	Ոչ գյուղատնտեսական միջին եկամուտները՝ ըստ ԱԵՏՏ-ի (ՀՀ դրամ)	Գյուղատնտեսական միջին եկամուտները՝ ըստ ԱԵՏՏ-ի (ՀՀ դրամ)	Ընդհանուր միջին եկամուտները՝ ըստ ԱԵՏՏ-ի (ՀՀ դրամ)	Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական տարեկան եկամուտների միջև հարաբերակցության տոկոսը
Այգեհատ	140.400,00	46.000,00	218.600,00	32,76%
Արձիս	189.000,00	116.666,67	305.666,67	61,73%
Հաղպատ	160.666,67	35.166,67	191.333,33	21,89%
Նեղոց	253.500,00	58.400,00	278.750,00	23,04%
Շնող	195.235,29	52.066,67	249.187,50	26,67%

Ալավերդի	135.812,21	25.018,52	144.787,22	18,42%
Օձուն	124.236,84	66.529,41	181.416,67	53,55%

131. Եկամտի աղբյուրի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր եկամտի 46.74%-ն առաջանում է վարձու աշխատողների աշխատավարձից: Իրենց բնույթով ազդեցության ենթակա համայնքներն ավելի շատ քաղաքային, քան գյուղական են: Կարի գործարան, աղյուսի գործարան, բեռնավոխադրումների կայան և բազմաթիվ թեթև արդյունաբերական գործարաններ են աշխատել նախքան Խորհրդային Միության փլուզումը, և տեղի բնակիչները ապահովված են եղել աշխատանքով: Ներկայումս կայուն աշխատատեղերի բացակայության պատճառով (բացի Ախթալայի և Ալվերդու «Պղնձամոլիբդենային կոմբինատից» և Հաղպատում մի շարք հյուրանոցներից) բնակիչներն աշխատանք են փնտրում հարևան համայնքներում և Ալավերդիում՝ չնայած այն փաստին, որ ազդեցության ենթակա համայնքները գտնվում են Վանաձոր մարզկենտրոնից 16-38 կմ հեռավորության վրա: Ի լրումն՝ Մ6 ճանապարհի ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող հատվածի կառուցումն ազդեցության ենթակա համայնքների համար աշխատանքային հնարավորություններ է ստեղծել՝ ներգրավելով տեղական աշխատուժին, ինչի արդյունքում ԱԵՏՏ անդամների որոշ մասն ընդգրկվել է շինարարական աշխատանքներում: Բոլոր համայնքներում աշխատավարձը զգալիորեն բարձր տոկոս է կազմում (աշխատավարձը Այգեհատում, Արճիսում, Հաղպատում, Նեղոցում, Շնողում, Ալավերդիում և Օձունում համապատասխանաբար կազմում է 70.49%, 55.07%, 58.84%, 35.91%, 59.68%, 40.83% և 33.14%): ՏՏ-ների համար հաջորդ եկամտի աղբյուրներն են (որոնք համեմատաբար բարձր տոկոս են կազմում)՝ կենսաթոշակը, աղքատության ընտանեկան նպաստը, հաշմանդամության թոշակը, գործազրկության նպաստը և ուսանողական կրթաթոշակը: Այս տոկոսները տարբեր են: Այգեհատում այն կազմում է 0.54%, իսկ Ալավերդիում հասնում է 34.61%-ի: Եկամուտների վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ կարևոր է ապահովել լրացուցիչ օժանդակություն և աջակցություն՝ Ծրագրի ազդեցությանը ենթարկված ԱԵՏՏ-ների եկամուտները վերականգնելու համար, հատկապես՝ խոցելի ԱԵՏՏ-ներին: ԱԵՏՏ-ների եկամտի միայն 19.14%-ն է առաջանում գյուղատնտեսական գործունեությունից, ներառյալ անասնապահությունը:

Աղյուսակ D18. ԱԵՏՏ-ների եկամտի աղբյուրները

Եկամտի աղբյուրը	% -ով							Total
	Այգեհատ	Արճիս	Հաղպատ	Նեղոց	Շնող	Ալավերդի	Օձուն	
Գյուղատնտեսություն	19,31%	38,17%	9,05%	11,86%	16,46%	8,72%	28,21%	16,13%
Անասնապահություն և վաճառք	5,36%	0,00%	3,68%	6,86%	2,59%	1,65%	4,18%	3,01%
Աշխատավարձ (վարձու աշխատող)	70,49%	55,07%	58,84%	35,91%	59,68%	40,83%	33,14%	46,74%
Ձեռնարկատիրական գործունեություն	0,00%	0,00%	6,04%	0,00%	0,00%	8,29%	5,16%	4,28%
Ինքնազբաղված	0,00%	0,00%	0,00%	0,00%	0,00%	2,41%	0,00%	0,82%
Աշխատանք արտերկրում	4,29%	0,00%	0,00%	0,00%	11,22%	3,50%	0,00%	3,80%
Վարձակալության տալուց ստացվող եկամուտ	0,00%	0,00%	0,00%	32,06%	0,00%	0,00%	4,30%	3,39%

Կրթաթոշակ, կենսաթոշակ, ընտանիքի աղքատության, հաշմանդամության, գործազրկության նպաստներ, դրամական փոխանցումներ արտերկրից	0,54%	6,76%	22,39%	13,31%	10,05%	34,61%	25,02%	21,83%
Ընդամենը	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%

9. ԱԵՏՏ-ների կողմից գույքի տիրապետումը

132. Գույքի տիրապետումը տնտեսական պայմանների լավ ցուցանիշ է ցանկացած տարածքում: ԱԵՏՏ-ների շրջանում գույքի տիրապետումը ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝ ցույց տալու համար համընդհանուր պատկերը: Հետազոտված ՏՏ-ների 100%-ն ունի բջջային հեռախոս, որին հաջորդում են ՏՏ-ները (97%), որոնք ունեն հեռուստացույց: ՏՏ-ների 93%-ն ունի սառնարան և 81%-ը՝ լվացքի մեքենա: ՏՏ-ների 46%-ն ունի ավտոմեքենա, մինչդեռ 5%-ն ունի ավտոբուս/բեռնատար/գյուղատնտեսական տեխնիկա: ՏՏ-ների մոտ 21%-ն ունի նաև քաղաքային հեռախոս և դրանցից շատերն ունեն նաև բջջային հեռախոս: ՏՏ-ների 9%-ն ունի օդորակիչ: ՏՏ-ների մոտ 59%-ն իրենց տանն ունի համակարգիչ:

Աղյուսակ D19. ԱԵՏՏ-ներին պատկանող գույքը

No.	Գույքերի ցանկը	Տոկոսով	
		Այո	Ոչ
1	Հեռուստացույց	97%	3%
2	Լվացքի մեքենա	81%	19%
3	Սառնարան	93%	7%
4	Բջջային հեռախոս	100%	0%
5	Հեռախոսակապ	21%	79%
6	Փոխադրամիջոց (ավտոմեքենա)	46%	54%
7	Ավտոբուս / բեռնատար/ գյուղ. տեխնիկա	5%	95%
8	Օդորակիչ	9%	91%
9	Համակարգիչ	59%	41%

133. Ընտանի կենդանիների տնտեսական արժեքը ներառում է միսը և կաթնամթերքը: Ընդհանուր առմամբ՝ անասնապահությունից ստացվող եկամուտը մեծ արժեք չունի ԱԵՏՏ-ների վարած տնտեսության մեջ, քանի որ հետազոտված ՏՏ-ներն ընտանի կենդանիներից ունեն միայն թռչուններ, խոզեր, մեղուներ և կովեր, որոնք համապատասխանաբար պատկանում են 15%, 12%, 5% և 5% տնային տնտեսությունների (մանրամասների համար տե՛ս Աղյուսակ D20-ը):

Աղյուսակ D20. ԱԵՏՏ-ներին պատկանող անասունները

No.	Անասունների ցանկը	Տոկոսով	
		Այո	Ոչ
1	Կով	5%	95%

2	Գումեշ	0%	100%
3	Ոչխար	0%	100%
4	Այծ	0%	100%
5	Թռչուններ	15%	85%
6	Խոզ	12%	88%
7	Էշ	0%	100%
8	Զի	0%	100%
9	Մեղու	5%	95%
10	Ճագար	4%	99%

10. Տնային տնտեսությունների ծախսերը, պարտքերը և պետական աջակցությունը

134. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների USՀ-ն փորձել է պարզել SS միջին ծախսերը՝ SS տարբեր թվով անդամների դեպքում և ըստ ընդհանուր ծախսերի տոկոսի: Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս որ բոլոր համայնքներում SS ծախսերի հիմնական մասը կազմում են սննդի վրա կատարված ծախսերը: Օձունում այն կազմում է 31.56%, իսկ Ալավերդիում՝ 43.23%: Վերջինիս հաջորդում է հագուստի և կոմունալ վճարումների վրա կատարված ծախսերը, որը տատանվում է 6.45%-ից (Արճիսում) մինչև 11.89% (Հաղպատում): Առողջության պահպանման համար ամենաբարձր ծախսերը դիտարկվել են Արճիսում՝ 18.54%: Կրթության վրա կատարված ամենաբարձր ծախսերը դիտարկվել են Հաղպատում՝ 6.44%, իսկ կենցաղային ծախսերը՝ Արճիսում՝ 6.45% (տե՛ս Աղյուսակ D21):

Աղյուսակ D21. Ընտանիքի միջին ծախսը

Ծախսերի տեսակները	SS-ների ամսական միջին ծախսերը %-ով						
	Այգեհատ	Արճիս	Հաղպատ	Նեղոց	Շնող	Ալավերդի	Օձուն
Սննդամթերքի վրա կատարված ծախսերը	38,89%	38,69%	32,21%	35,64%	37,74%	43,23%	31,56%
Հագուստի վրա կատարված ծախսերը	9,29%	6,45%	11,89%	10,83%	8,26%	6,99%	11,64%
Կոմունալ ծախսերը	12,22%	10,96%	14,62%	8,79%	7,63%	9,41%	11,82%
Բջջային հեռախոսներ	4,04%	3,06%	2,65%	3,91%	2,71%	2,98%	2,74%
Առողջության պահպանման հետ կապված ծախսերը	11,11%	18,54%	10,16%	8,16%	9,80%	18,43%	10,41%
Ուսման վարձը և կրթական այլ ծախսերը	1,52%	0,32%	6,44%	5,53%	5,15%	5,10%	2,80%
Կենցաղային ապրանքներ	4,04%	6,45%	4,06%	3,96%	4,62%	3,48%	3,63%
Սոցիալական պարտավորություններ	4,04%	3,22%	6,19%	9,42%	7,02%	2,60%	4,41%
Տրանսպորտային ծախսերը (ավտոբուս և այլն, ոչ գյուղատնտեսական նպատակներով)	6,77%	12,09%	10,16%	8,29%	14,86%	5,26%	10,97%
Գյուղատնտեսության և անասնապահության ոլորտի ծախսերը, այդ	7,07%	0,16%	0,64%	4,87%	1,31%	1,42%	2,99%

թվում՝ ոռոգման ջրի, գյուղատնտեսական մեխանիզմների վարձավճարը							
Վարձավճարներ (հողի, բնակարանի համար)	0,00%	0,00%	0,05%	0,04%	0,47%	0,59%	5,11%
Հարկեր /հողի հարկեր, գույքահարկ և այլն /	1,00%	0,05%	0,92%	0,55%	0,43%	0,24%	0,46%
Այլ ծախսեր	0,00%	0,00%	0,00%	0,00%	0,01%	0,26%	1,46%
Ընդամենը	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%	100,00%

135. ՀՀ կառավարությունն իրականացնում է սոցիալական ապահովության ոլորտի տարբեր ծրագրեր՝ զանազան սխեմաների միջոցով քաղաքացիներին աջակցելու համար: Այդ սոցիալական նպաստները տարածվում են ընտանիքների վրա՝ ըստ յուրաքանչյուր սխեմայի համար մշակված չափանիշների: Պետական նպաստները ներառում են տարիքային կենսաթոշակը, հաշմանդամության թոշակը, կերակրողին կորցնելու դեպքում նպաստը, երեխաների խնԱՄՔՀի, երեխայի ծննդյան նպաստները, աղքատության նպաստը և այլն: ԱՄՀ տվյալների մի մասը ձեռք է բերվել տարբեր տեսակի պետական նպաստներից ԱԵՏՏ-ների կախվածությունը գնահատելու համար, ինչպես նաև տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակը հասկանալու համար: Տվյալները ցույց են տալիս, որ ՏՏ-ների բավականին մեծ տոկոսը ստանում է տարիքային կենսաթոշակ և հաշմանդամության թոշակ: Արձիսում ԱԵՏՏ-ների 33.33%-ը ստանում է աղքատության ընտանեկան նպաստ, իսկ ԱԵՏՏ-ների 11.11% Հաղպատում ստանում է երեխայի ծննդյան նպաստ:

Աղյուսակ D22. Պետական նպաստներ ստացող տնային տնտեսությունները

Պետական նպաստի տեսակը	Հետազոտված ԱԵՏՏ-ների % -ը						
	Այգեհատ	Արձիս	Հաղպատ	Նեղոց	Շնող	Ալավերդի	Օձուն
Տարիքային կենսաթոշակ	0,00%	33,33%	55,56%	33,33%	35,29%	60,87%	33,33%
Հաշմանդամության թոշակ	0,00%	0,00%	33,33%	16,67%	11,76%	28,26%	19,05%
Ծառայողական թոշակ	0,00%	0,00%	0,00%	0,00%	5,88%	4,35%	9,52%
Կերակրողին կորցնելու դեպքում նպաստ	0,00%	0,00%	0,00%	0,00%	0,00%	0,00%	0,00%
Մինչև երկու տարեկան երեխաների խնամքի նպաստ	0,00%	0,00%	11,11%	0,00%	0,00%	0,00%	0,00%
Երեխայի ծննդյան նպաստ	0,00%	0,00%	11,11%	0,00%	5,88%	4,35%	0,00%
Աղքատության ընտանեկան նպաստ	0,00%	33,33%	0,00%	16,67%	0,00%	10,87%	4,76%
Միանվագ նպաստ, օգնություն	0,00%	0,00%	0,00%	0,00%	0,00%	0,00%	0,00%

11. Կանանց մասնակցությունը և ազդեցությունը

136. Կանայք ունեն կարևոր տնտեսական դերակատարում ծրագրային տարածքում: ԱՄՀ-ի միջոցով ձեռք են բերվել ընտանիքի ֆինանսական, կրթական, առողջության պահպանման, գույքի սեփականության, գույքի վաճառքի և առօրյա գործունեության մեջ կանանց մասնակցության

վերաբերյալ տվյալները: ԱԵԱ-ների ընկալումով՝ կանանց մասնակցությունն առավել ընդգծված է ընտանիքի առօրյա կյանքում, ֆինանսական, երեխայի դաստիարակության և առողջության պահպանման հարցերում, քան անշարժ գույքի առք ու վաճառքի վերաբերյալ որոշումների կայացման հարցերում (տե՛ս Աղյուսակ D23): Ծրագիրն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում, որ կանանց կողմից ղեկավարվող այն ՏՏ-ները, որոնք չունեն չափահաս աշխատունակ տղամարդ, համարվեն խոցելի և ՀՕՏ-ի իրավունքների սխեմայով հատուկ աջակցություն նախատեսվի նրանց համար:

Աղյուսակ D23. Տնային տնտեսություններին վերաբերող հարցերի շուրջ որոշումների կայացման գործընթացին կանանց մասնակցությունը

Հարցերի շրջանակը	Այո	Ոչ	Երբեմն	Պատասխան
				չկա
Ֆինանսական հարցեր, որոնք առնչվում են ներդրումներին/պարտավորություններին (վարկեր, փոխառություններ)	77,57%	9,35%	1,87%	11,21%
Երեխաների կրթությունը	86,92%	1,87%	0,00%	11,21%
Երեխաների առողջության պահպանումը	86,92%	1,87%	0,00%	11,21%
Գույքի գնում (կահույք, կենցաղային իրեր, փոխադրամիջոց, ոսկյա զարդեր)	76,64%	11,21%	0,93%	11,21%
Գույքի վաճառք (կահույք, կենցաղային իրեր, փոխադրամիջոց, ոսկյա զարդեր)	76,64%	11,21%	0,93%	11,21%
ՏՏ կենցաղային առօրյա գործունեություն /առևտուր, ամենօրյա սնունդ, հագուստ/	86,92%	1,87%	11,21%	0,00%

12. Աղքատ և ծայրահեղ աղքատ ԱԵՏՏ-ներ

137. Հետազոտված ԱԵՏՏ-ների²⁴ մոտ 45.79%-ն աղքատ է: Աղքատության գնահատումը կատարվել է՝ ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀԱՎՕ) մեթոդաբանության: Մեթոդաբանությունը կիրառում է ամսական միջին սպառողական ցուցանիշները ՏՏ յուրաքանչյուր անդամի համար՝ հաշվարկված ըստ սննդամթերքի և ապրանքների զամբյուղի արժեքի: ՏՏ-ն համարվում է ծայրահեղ աղքատ, եթե ամսական միջին սպառումը մեկ չափահաս անդամի կտրվածքով չի գերազանցում ծայրահեղ աղքատության շեմը (սննդամթերքի զամբյուղի արժեքը) և աղքատ, եթե ընդհանուր միջին ծախսերը բարձր են ծայրահեղ աղքատության շեմից, սակայն ցածր են աղքատության ընդհանուր շեմից (ապրանքների զամբյուղի արժեքը): ՀՀ ԱՎՕ-ն ծայրահեղ աղքատության (սննդամթերք) մակարդակը հաշվում է 27,370.40 ՀՀ դրամ, իսկ աղքատության մակարդակը՝ 48,445.60 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր տնային տնտեսության համար (մանրամասները տե՛ս Աղյուսակ D24-ում):

Աղյուսակ D24. Խոցելի աղքատ ԱԵՏՏ-ներ*

Կատեգորիա	Քանակը	Տոկոսը
Աղքատ	49	45,79%

²⁴ ՄՏՀ միջոցով բացահայտված աղքատ ԱԵՏՏ-ների քանակը գերազանցում է Գլուխ B-ում՝ ազդեցությունների գնահատման բաժնում ներկայացված համանուն տվյալներին, քանի որ մի շարք աղքատ ԱԵՏՏ-ներ հաշվառված չեն «Ընտանիքների խոցելիության գնահատման համակարգում» (ԸԽԳՀ): Սույն ՀՕՏ-ում ներկայացված են և՛ ազդեցության գնահատման, և՛ ՄՏՀ տվյալները, և համաձայն սույն ԲՖԳ-ի համար մշակված ՀՕՏ-ի Հավելված Բ-ի պարբերություն 18-ի՝ ընտանեկան անապահովության համակարգում չհաշվառված աղքատ ԱԵՏՏ-ները կբացահայտվեն և կներկայացվեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ ընտանիքների անապահովության մակարդակի գնահատման համար: Եթե այս ԱԵՏՏ-ները ընդգրկված են ԸԽԳՀ-ում, ապա նրանք նաև խոցելիության նպաստ ստանալու իրավունք կունենան:

o Ծայրահեղ աղքատ	16	
o Աղքատ	33	
Աղքատ չեն	58	54,21%
Ընդամենը	107	100,00%

138. USZ տվյալները ցույց են տալիս, որ առկա է անհամապատասխանություն տնային տնտեսության եկամտի և ծախսերի միջև, մասնավորապես 54 ԱԵՏՏ դեպքում եկամուտը բարձր է եղել ծախսերից, սակայն սա միայն ազդեցություն ունի 22 ԱԵՏՏ-ի աղքատության կարգավիճակի փոփոխության վրա: Այսպիսի տարբերության նվազագույն արժեքը 16,880.00 ՀՀ դրամ է, առավելագույնը՝ 116,400.00 ՀՀ դրամ, միջինը՝ 62,827.27 ՀՀ դրամ: Տարբերության պատճառներից մեկն այն է, որ նշված 22 ԱԵՏՏ-ից 10-ը վարկ են վերցրել բանկից, կամ մասնավոր անձից, կամ էլ ոսկի են գրավադրել, և բանկային տոկոսների վճարումը առանձին չի նշվել ծախսերում: 15 ԱԵՏՏ, որոնք ծախսերի հիման վրա համարվել են աղքատ, դարձել են ոչ աղքատ ԱԵՏՏ-ներ՝ ըստ իրենց եկամտի. 1 ծայրահեղ աղքատ ԱԵՏՏ դարձել է ոչ աղքատ և 6 ծայրահեղ աղքատ ԱԵՏՏ դարձել է աղքատ:

139. Աղյուսակ D25-ը ներկայացնում է խոցելի տնային տնտեսությունների վերլուծությունը՝ ըստ յուրաքանչյուր համայնքի: Ըստ USZ տվյալների՝ Ծրագրի ներքո 49 ԱԵՏՏ աղքատ է, որից 16-ը՝ ծայրահեղ աղքատ: Ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններից 11-ը Ալավերդիում են, իսկ երեքը՝ Օձունում, իսկ մյուս ԱԵՏՏ-ները՝ Այգեհատում և Հաղպատում: Ազդեցության ենթակա աղքատ ՏՏ-ների մեծամասնությունը՝ 16 ԱԵՏՏ, Ալավերդիում է, մնացած 6 աղքատ ԱԵՏՏ-ն՝ Օձունում, որին հետևում են Շնողը (5 ԱԵՏՏ), Այգեհատը և Հաղպատը (յուրաքանչյուրում՝ 2 ԱԵՏՏ) և մեկական ԱԵՏՏ՝ Արճիսում և Նեղոցում:

Աղյուսակ D25. Խոցելի աղքատ ԱԵՏՏ-ներն՝ ըստ համայնքների

Համայնքը	Աղքատ		Ծայրահեղ աղքատ		Ընդամենը	
	Քանակը	Տոկոսը	Քանակը	Percent	Քանակը	Տոկոսը
Այգեհատ	2	6,06%	1	6,25%	3	8%
Արճիս	1	3,03%	0	0,00%	1	2%
Հաղպատ	2	6,06%	1	6,25%	3	6%
Նեղոց	1	3,03%	0	0,00%	1	2%
Շնող	5	15,15%	0	0,00%	5	10%
Ալավերդի	16	48,48%	11	68,75%	27	54%
Օձուն	6	18,18%	3	18,75%	9	18%
Ընդամենը	33	100,00%	16	100,00%	49	100%

E. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը

140. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 8-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սահմանադրության 31-րդ հոդվածը սահմանում է, որ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Հողի օտարման և փոխհատուցման գործընթացը և դրա հետ կապված ընդհանուր բնույթի մի շարք իրավահարաբերություններ կարգավորված են նաև ՀՀ իրավական այլ ակտերով՝

- (i) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք»
- (ii) «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը
- (iii) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք»
- (iv) «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
- (v) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
- (vi) «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգիրք»
- (vii) «Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգիրք»:

141. ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ, 104-րդ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածները ևս ամրագրում են հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարումը՝ միայն բացառիկ գերակա հանրային շահի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Ելնելով ՀՀ Սահմանադրության և վերոհիշյալ իրավական ակտերի պահանջներից՝ Հայաստանի Հանրապետության կողմից ընդունվել և օտարման ու փոխհատուցման գործընթացը կարգավորող հիմնական օրենք է հանդիսանում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք), որը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացությունը և դրա որոշման կարգը:

142. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է, որի իրականացման սահմանադրական պայմաններն են՝ ա) օտարման իրականացումը օրենքով սահմանված կարգով, և բ) օտարվող սեփականության դիմաց նախնական համարժեք փոխհատուցման տրամադրումը:

143. Վերոհիշյալ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշման սկզբունքները, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը՝ գերակա հանրային շահով հետապնդվող հնարավոր նպատակները: Օրենքն ամրագրում է այն հիմնարար մոտեցումը, համաձայն որի՝ ա) հանրային շահը պետք է գերակա լինի օտարվող գույքի սեփականատիրոջ շահերից, բ) հանրային շահի արդյունավետ իրականացումը հնարավոր չի լինի ապահովել առանց այդ սեփականության օտարման, գ) սեփականության օտարումը չպետք է չհիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը, դ) հանրային շահը գերակա պետք է ճանաչվի Կառավարության որոշմամբ, ե) բացառիկ հանրային շահի առկայության փաստը կարող է վիճարկվել դատական կարգով:

144. Օրենքը նաև կարգավորում է օտարվող սեփականության օտարման, փոխհատուցման պայմանները և այն որոշելու կարգը: Մասնավորապես, Օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ հողամասի օտարման դեպքում դրա հետ օտարման են ենթակա նաև հողամասի վրա գտնվող անշարժ գույքը (շենքեր, շինություններ, այլ ամրացված գույք և այլն), ինչպես նաև հողամասի վրա գտնվող այլ բարելավումները: Իսկ շենքի կամ շինության օտարման դեպքում, դրա հետ միասին օտարման են ենթակա նաև այդ շենքի կամ շինության սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը:

145. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը տարածվում է միայն ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքների (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (այսուհետ՝ օտարվող սեփականություն) և կարգավորում է օտարման և փոխհատուցման հիմնական հարաբերությունները: Մասնավորապես՝

- (i) Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Կառավարության սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմինը կազմում է օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը, որին իրավունք ունեն մասնակցելու ձեռք բերողը, սեփականատերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները, եթե սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ արձանագրությունը չի կազմվել: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը, այն կազմելուց հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց, որոնք իրավունք ունեն արձանագրությունն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, այն բողոքարկել լիազոր մարմին կամ դատարան,
- (ii) Օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» (Հոկտեմբեր 4, 2005թ.) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,
- (iii) Սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռք բերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն (տես՝ հավելված 10): Այս դեպքում կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը,
- (iv) Եթե օտարման պայմանագիրը, այն ուղարկելուց հետո երեք ամսվա ընթացքում չի կնքվում, ապա ձեռք բերողը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում սեփականության օտարման դիմաց փոխհատուցման ենթակա գումարը հանձնել դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշիվ՝ այդ մասին պատշաճ ձևով տեղեկացնելով օտարվող սեփականության սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ ձեռք բերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողներին: Փոխհատուցման գումարի չափի հաշվարկը պետք է կատարված լինի այն դեպոզիտ հանձնելուց ոչ շուտ, քան մեկ շաբաթ առաջվա դրությամբ,
- (v) Եթե փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում օտարման պայմանագիրը այնուամենայնիվ չի կնքվում՝ ապա ձեռք բերողը պարտավոր է մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայցով դիմել դատարան: Այս դեպքում դատարանի քննարկման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի հարցը:

146. Օրենքը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար օտարվող

սեփականության սեփականատիրոջ իրավունքները և երաշխիքները՝ ամրագրելով օտարվող սեփականության սեփականատիրոջ իրավունքը՝ մինչև դրա օտարումը կամ օտարումից ծագող իրավունքների պետական գրանցումը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև կատարելու միայն այնպիսի բարելավումներ, որոնք ապահովում են տվյալ սեփականության օգտագործումն իր նշանակությանը:

147. Օրենքը որոշակի սահմանափակումներ է նախատեսում օտարվող սեփականության նկատմամբ, որը Կառավարության որոշմամբ սահմանած կարգով կազմված օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը կազմելու օրն է: Նշված օրվանից հետո օտարվող սեփականության վրա նշվածից ավելի կատարված բարելավումները (հաշվի առնելով օրենքով սահմանված եռաշիփները), ինչպես նաև օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում չի տրվում:

2. Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի շրջանակներում ոչ կամավոր տարաբնակեցման վերաբերյալ ԱԶԲ դրույթները

148. ԱՄՔՀ ներքո ոչ կամավոր տարաբնակեցման ԱԶԲ քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- i. խուսափել կամ առնվազն նվազագույնի հասցնել ոչ կամավոր տարաբնակեցման դեպքերը,
- ii. Փոխհատուցման/վերականգնման վերաբերյալ դրույթները կապահովեն ԱԵԱ-ների կենսամակարդակի բարելավումը կամ առնվազն նախքան Ծրագրի իրականացումն ունեցած կենսամակարդակի վերականգնումը
- iii. ԱԵԱ-ները պետք է լիարժեք տեղեկացված լինեն, և նրանց պետք է խորհրդատվություն տրամադրվի ՀՕՏ փոխհատուցման տարբերակների վերաբերյալ.
- iv. Հարկ է հնարավորինս օժանդակել/աջակցել ԱԵԱ-ների սոցիալ-մշակութային հաստատություններին (օրինակ՝ համայնքային կենտրոններ, մշակութային կենտրոններ): Նրանք պետք է առավելագույնս ընդգրկված լինեն:
- v. Փոխհատուցումը կկատարվի կանանց և տղամարդկանց հավասարության դիտարկմամբ,
- vi. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման/վերականգնման համար,
- vii. Տեղահանված աղքատ և այլ խոցելի խմբերի, այդ թվում՝ կանանց կենսամակարդակը պետք է բարելավվի՝ նրանց համար առնվազն ապահովելով երկրի նվազագույն ստանդարտներով սահմանված կենսամակարդակը:
- viii. ՀՕՏ-ը պետք է հանդիսանա և իրականացվի որպես Ծրագրի մի մաս, իսկ փոխհատուցման ողջ արժեքը պետք է ներառվի Ծրագրի բյուջեում, ծախսերի և օգուտների հաշվարկներում,
- ix. Փոխհատուցումն ու տարաբնակեցման նպաստները պետք է ամբողջությամբ տրամադրվեն նախքան ճանապարհի օտարման գոտու մաքրումը, հողի հարթեցումն ու շինարարությունը:

3. ՀՕՏ-ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համեմատությունը ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի պահանջների հետ

149. Հայաստանի Հանրապետության օրենքների ու կանոնակարգերի և ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի պահանջների (ԱԶԲ ԱՄՔՀ 2009) միջև տարբերությունները ներկայացված են ստորև բերված Աղյուսակ E1-ում:

**Աղյուսակ E1. ՀՕՏ-ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համեմատությունը
ԵՆԲ-ի Անվտանգության մեխանիզմների հայտարարագրի պահանջների հետ**

ՀՀ իրավական ակտերը	ԱԶԲ ԱՄՔՀ 2009
<p>1. Օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (օտարվող սեփականություն):</p>	<p>1. Հողի սեփականության վերաբերյալ իրավական կարգավիճակի բացակայությունը չպետք է խոչընդոտի փոխհատուցման և վերականգնման գործընթացի իրականացմանը: Իրավական կարգավիճակ չունեցող հողօգտագործողները պետք է ստանան փոխհատուցում հողի վրա կատարած բարելավումների համար:</p> <p>Ծրագրային տարածքում կարող են լինել երեք տեսակի տեղահանված անձինք՝ (i) ամբողջությամբ կամ մասամբ կորցրած հողի նկատմամբ օրինական/ձևակերպված իրավունքներ ունեցող անձինք, (ii) իրենց զբաղեցրած հողն ամբողջությամբ կամ մասամբ կորցրած անձինք, ովքեր չունեն հողի նկատմամբ օրինական/ձևակերպված իրավունքներ, բայց ունեն այդ հողի հանդեպ ներպետական օրենսդրությամբ ճանաչված կամ ճանաչելի հավակնություններ, (iii) իրենց զբաղեցրած հողն ամբողջությամբ կամ մասամբ կորցրած անձինք, ովքեր չունեն հողի օրինական/ձևակերպված իրավունքներ կամ ներպետական օրենսդրությամբ ճանաչված կամ ճանաչելի հավակնություններ: Պարտադրված վերաբնակեցման պահանջները կիրառելի են տեղահանված անձանց բոլոր երեք տեսակների համար:</p>
<p>2. Փոխհատուցում է նախատեսվում միայն իրավունքների պետական գրանցում ստացած անշարժ գույքի՝ շենքերի, շինությունների համար: Ինքնակամ կառույցների համար փոխհատուցում չի տրամադրվում:</p>	<p>2. Համաձայն ԱԶԲ ԱՄՔՀ-ի՝ գրանցում չունեցող առևտրային շինություններին տրամադրվում է փոխհատուցում՝ հիմնվելով փոխարինման արժեքի վրա:</p>
<p>3. Բերքի կորստի դիմաց առանձին փոխհատուցում չի հաշվարկվում:</p>	<p>3. Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է բոլոր ԱԵԱ-ներին փոխարինման արժեքով:</p>
<p>4. Օտարվող հողի համար տրվում է համարժեք փոխհատուցում, որը օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարն է: Շուկայական արժեքը անշարժ գույքի վաճառքի առավել</p>	<p>4. Հողի գնահատումը հիմնվում է փոխարինման արժեքի վրա:</p>

ՀՀ իրավական ակտերը	ԱԶԲ ԱՄՔՀ 2009
<p>հավանական գինն է, որը անշարժ գույքի գնահատման օբյեկտների համար կարող է որոշվել անկախ որակավորված գնահատողի կողմից՝ անշարժ գույքի գնահատմամբ:</p> <p>Եթե օտարվող սեփականության համար առկա չէ համապատասխան բաց և մրցակցային շուկա, ապա սեփականության շուկայական արժեքը որոշվում է այնպիսի հաշվարկման մեթոդով, որն արդարացի կհամարի դատարանը:</p>	
<p>5. Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումը, օտարվող սեփականության նկարագրության արձանագրության օրինակը, սեփականության օտարման պայմանագրի նախագիծը ուղարկվում է հողի սեփականատերերին և գույքային իրավունքներ ունեցողներին: Ձեռք բերողը տեղեկություն է տրամադրում նաև փոխհատուցման գումարը դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին հանձնելու վերաբերյալ: Իսկ ձեռք բերողի կողմից օտարման ենթակա գույքի նախնական ուսումնասիրություն իրականացնելու դեպքում՝ գույքի սեփականատիրոջը, տիրապետողին, օգտագործողին լիարժեք տեղեկություններ պետք է տրամադրվեն կատարվող գործողությունների իմաստի և նշանակության, այդ գործողությունների իրավական հետևանքների մասին՝ այն սկսելուց առաջ:</p>	<p>5. Բովանդակալից խորհրդատվություն ծրագրի սկզբում և իրականացման ընթացքում: Ազդեցության գնահատման, փոխհատուցման իրավունքների և ԱԵԱ/ԱԵՏՏ-ներին ֆինանսական օժանդակության գումարների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում:</p>
<p>6. Խիստ ազդեցության ենթարկված անձանց և խոցելի խմբերի համար եկամտի կամ ապրուստի միջոցների վերականգնման միջոցառումներ, փոխհատուցման կամ տարաբնակեցման ծախսեր նախատեսված չեն:</p>	<p>6. Ըստ ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների հայտարարագրի՝ պահանջվում է եկամտի/ապրուստի միջոցների կորստի վերականգնում, տեղափոխման աջակցություն տարաբնակեցման գործընթացում, ինչպես նաև տեղահանված աղքատ բնակչության և այլ խոցելի խմբերի, ներառյալ՝ կանանց, կենսամակարդակի բարելավում:</p>

ՀՀ իրավական ակտերը	ԱԶԲ ԱՄՔՀ 2009
<p>7. Օտարման գործընթացի բոլոր փուլերում դիմումների, բողոքների, առարկությունների և առաջարկությունների ներկայացում ձեռք բերողին և լիազոր մարմինն, ինչպես նաև բողոքարկում դատարան:</p> <p>ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 18-ի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:</p>	<p>7. Հաստատել բողոքների լուծման մեխանիզմ՝ ազդեցության ենթակա անձանց մտահոգություններն արձանագրելու և դրանց լուծման գործընթացը դյուրին դարձնելու համար:</p>
<p>8. Օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին փոխհատուցումը տրամադրվում է օտարվող սեփականության դիմաց տրվող փոխհատուցման գումարից:</p>	<p>8. Օտարվող բնակտարածքի, հողի և այլ ակտիվների դիմաց փոխհատուցման չափը հաշվարկվում է փոխարինման լրիվ արժեքով: Գնահատման այս մեթոդը կիրառելու ընթացքում, կառույցների և ակտիվների արժեզրկումը հաշվի չի առնվում:</p>
<p>9. Օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը կազմելու օրվանից հետո օտարվող սեփականության վրա (բացի տվյալ գույքի իր նշանակությանը համապատասխան օգտագործումն ապահովող բարելավումներից) նշվածից ավելի կատարված բարելավումները, ինչպես նաև օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում չի տրվում:</p>	<p>9. Այն ԱԵԱ-ներն, ում կարգավիճակը կարելի է օրինականացնել կամ իրավունքները վերականգնել, պետք է օրինական կարգավիճակ ստանան, և նրանց կորուստները պետք է ամբողջությամբ փոխհատուցվեն:</p>
<p>10. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների օտարման գոտում և (կամ) անվտանգության գոտում գտնվող հաղորդողիները և այլ շինություններն ու հարմարանքները ճանապարհի վերակառուցման կամ նորոգման դեպքում պետք է տեղափոխվեն կամ վերակառուցվեն դրանց սեփականատիրոջ հաշվին:</p>	<p>10. Բոլոր այն միջոցառումները, որոնք նախատեսված են մեղմելու համար ԱԵԱ/ԱԵՏՏ-ների սեփականության և կենսամակարդակի վրա Ծրագրի ունեցած բացասական որևէ ազդեցություն, որը ներառում է փոխհատուցումը, օժանդակությունը, վերաբնակեցումը և վնասված, քանդված ենթակառուցվածքների, շենք, շինությունների վերականգնումը, համարվում է տարաբնակեցում:</p>

150. ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների հայտարարագրի ՀՕՏ-ին վերաբերող պահանջների միջև կան որոշ սկզբունքային տարբերություններ: ՀՀ իրավական ակտերը հստակ չեն սահմանում, թե ինչպես պետք է իրականացվի ԱԵԱ-ի վերականգնումը: Մեկ այլ խնդիր է, որ համաձայն ԱԶԲ հայտարարագրի, փոխհատուցման կամ առնվազն վերականգնման իրավունք ունեն գրանցված իրավունքներ ունեցող և չունեցող անձինք, ինչպես նաև հաշվառված և չհաշվառված բնակիչները: ՀՀ օրենսդրության և ԱԶԲ հայտարարագրի միջև այս տարբերությունները վերացնելու նպատակով սույն ՀՕՏ-ն հիմնված է ՀՀ համապատասխան օրենսդրության և կանոնակարգերի, ԱԶԲ ԱՄՔՀ-ի և ոչ կամավոր տարաբնակեցման ուղեցույցի, ինչպես նաև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի»^{25 26} համար մշակված Կառավարության կողմից հաստատված Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի վրա: ՀՕՏ-ն հիմնված է ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (2009) տարաբնակեցման անվտանգության մեխանիզմների պահանջների վրա՝ ապահովելով իրավական կարգավիճակ ունեցող բոլոր ԱԵԱ-ների ազդեցության ենթակա բոլոր անշարժ գույքի օբյեկտների համար փոխարինման արժեքի համարժեք փոխհատուցում, իսկ իրավական կարգավիճակ չունեցող ԱԵԱ-ներին, չգրանցված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների և ազդակիր անձանց համար իրավունքների վերականգնման միջոցառումների ապահովում:

151. ՀՕՏ-ի կիրառումը՝ որպես Մ6 ծրագրի իրավական հիմք, պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՕՏ-ն համատեղում է լավագույն միջազգային անվտանգության մեխանիզմները, ինչպես նաև ՏԿՏՏՆ-ի կողմից Հայաստանում իրականացվող նմանատիպ գյուղական ծրագրերում ՀՕՏ սկզբունքների, իրավասությունների և ընթացակարգերի կայուն և շարունակական կիրառությունն ապահովելու հանգամանքով: ՀՕՏ-ն սահմանում է ընդհանուր Ծրագրի Հողի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ) բաղադրիչի համար կիրառելի հիմնական սկզբունքները և ընթացակարգերը, մասնավորապես՝ ՀՕՏ վերաբերյալ ՀՀ օրենսդրության և կանոնակարգերի և ԱԶԲ ԱՄՔՀ 2009-ի համեմատությունը, ՀՕՏ սկզբունքները և իրավունքները, ծրագրի ներքո փոխհատուցման իրավունքները (ներառյալ՝ ազդեցության ենթակա գույքի գնահատման մեթոդները և վերականգնման միջոցառումները), հանրային լուսման և տեղակատվության հրապարակման/իրազեկման գործընթացները, ԲԼՍ մեխանիզմը, ինստիտուցիոնալ կազմակերպումը, ՀՕՏ իրականացման գործընթացը, մոնիտորինգի և գնահատման ցուցանիշները և Ծրագրի ՀՕՏ-ին առնչվող այլ սկզբունքներն ու գործընթացները: ՀՕՏ-ն նախատեսում է նաև հատուկ վերականգնման օժանդակություններ այն ԱԵԱ-ների համար, ովքեր վերաբնակեցվելու են, ինչպես նաև խոցելի և խիստ ազդեցություն կրող ԱԵԱ-ների համար:

152. Գույքը կարող է օտարվել պետության և հասարակության կարիքների համար՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հիմունքներով: Այս նպատակով 2017 թ. նոյեմբերի 9-ին ՀՀ կառավարությունը ազդեցության ենթակա հողերը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշում է ընդունել՝ համաձայն որի ազդեցության ենթակա գույքը պետք է օտարվի հասարակության և պետության կարիքների համար: Ակնկալվում է, որ ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ կմտնի 2017 թ. նոյեմբերի 25-ից: Առաջին հերթին պետք է փորձել օտարել քաղաքացիներին (մասնավոր անձինք) պատկանող հողը առանձին բանակցությունների հիման վրա: Բանակցությունների ձախողման դեպքում կնախաձեռնվի

25 Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը (ՀՕՏ) մշակվել է ՀՀ կառավարության կողմից «Հյուսիս-հարավ» ծրագրի համար՝ ԱԶԲ ԱՄՔՀ 2009-ի հիման վրա և կիրառելի են Ծրագրի բոլոր ենթածրագրերի համար, որոնք ֆինանսավորվում են ԱԶԲ-ի Բազմափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) միջոցով: Այն արդեն կիրառվել է Տրանշ 2-ի և Տրանշ 3-ի ՀՕՏ-ների իրականացման համար և կկիրառվի նաև հետագա տրանշների և հատվածների համար, այդ թվում՝ Եվրասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող հատվածների համար:

26 ՀՕՏ-ն հաստատվել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը և փոխհատուցման սկզբունքները հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1274-Ն առ 16.09.2010 թ. որոշմամբ (թարմացվել է 2015 թ. և 2017 թ.):

դատական կարգով օտարման վարույթ՝ օրենքով սահմանված կարգով:

4. Ծրագրի համար ընդունված Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի սկզբունքները և իրավունքները

153. Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ԱԶԲ ԱՄՔՀ 2009-ի հիման վրա սույն Ծրագրի համար մշակվել են ոչ կամավոր տարաբնակեցման հետևյալ հիմնական սկզբունքները՝

- (i) հողի օտարման և այլ՝ ոչ կամավոր տարաբնակեցման ազդեցություններից պետք է խուսափել կամ հասցնել նվազագույնի՝ ուսումնասիրելով ծրագրի բոլոր կենսունակ այլընտրանքային նախագծերը,
- (ii) անխուսափելի լինելու դեպքում կմշակվի սեղմ ժամկետներով նոր ՀՕՏԾ, և ԱԵԱ-ին պետք է աջակցություն ցուցաբերվի՝ բարելավելու կամ առնվազն վերականգնելու ծրագրից առաջ ունեցած իրենց կենսամակարդակը,
- (iii) պետք է ԱԵԱ-ների համար ապահովել փոխհատուցման իրավունքների վերաբերյալ խորհրդատվություն և տրամադրել տարաբնակեցման վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև ապահովել ենթածրագրերի պլանավորմանն ու իրականացմանը նրանց մասնակցությունը,
- (iv) խոցելի և խիստ ազդեցության ենթարկված անձանց պետք է ցուցաբերել հատուկ աջակցություն,
- (v) օտարվող հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունք չունեցող ԱԵԱ-ները (օրինակ՝ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները, ազդեցության ենթակա գույքն ինքնակամ կամ առանց իրավաբանական ձևակերպման փաստացի օգտագործող անձինք կամ էլ այն ԱԵԱ-ները, որոնց հաշվառման վերաբերյալ տվյալներ առկա չեն) հողի դիմաց փոխհատուցման փոխարեն կստանան կենսաապահովման օժանդակություն և հողից բացի այլ կորուստների դիմաց լիարժեք փոխհատուցում, ինչպես սահմանված է ՀՕՏԾ Իրավունքների սխեմայով,
- (vi) օրինականացման ենթակա ԱԵԱ-ները կգրանցեն իրենց իրավունքները և կստանան լիարժեք փոխհատուցում հողի կորստի դիմաց,
- (vii) եկամտի վերականգնման միջոցների ապահովում,
- (viii) ՀՕՏԾ-ն կտրամադրվի կամ հասանելի կլինի ԱԵԱ-ներին հայերեն լեզվով,
- (ix) փոխհատուցման, վերաբնակեցման օժանդակությունը և վերականգնման միջոցառումներն ամբողջությամբ կտրամադրվեն նախքան ցանկացած շինարարական աշխատանքների որոշակի փաթեթի իրականացումը,
- (x) կհիմնվի ԱԵԱ-ների բողոքների լուծման համապատասխան մեխանիզմ:

F. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Ընդհանուր

154. Ծրագրի ներքո ՀՕՏ առաջադրանքները կիրականացվեն՝ ըստ փոխհատուցման իրավունքների և իրավասությունների շրջանակի՝ ՀՀ օրենսդրությանն ու կանոնակարգերին և ԱԶԲ ԱՄՔՀ 2009-ին համապատասխան: Իրավունքների սխեման մշակվել է ՀՕՏ շրջանակներում, որը պատրաստվել է ՏԿՏՏԼ-ի կողմից «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» համար: Մինևույն ժամանակ, սույն ՀՕՏ-ի ներքո սահմանվել է խոցելիության նոր կատեգորիա՝ «բնակավայրից վերաբնակեցվող խոցելի ԱԵԱ-ներ», որի համար սահմանվել են կիրառման պայմանները: Ծրագրի ազդեցություններին համապատասխան մշակված Իրավունքների սխեման ներկայացված է ստորև Աղյուսակ F1-ում:

Աղյուսակ F1. Իրավունքների սխեմա

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
<p>1. Հողի կորուստ</p>	<p>ԱԵԱ-ներ, որոնք կորցնում են իրենց սեփականությունը հանդիսացող հողամասը կամ դրա մի մասը՝ անկախ ազդեցության չափից</p>	<p>Սեփականատեր</p>	<p>Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով՝ գնահատված շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15%՝ կամ փոխանակում ԱԵԱ-ի համար ընդունելի մեկ այլ համարժեք հողով:</p>
		<p>Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ</p>	<p>Օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ ԱԵԱ-ները կարող են ձեռք բերել սեփականության իրավունք կամ իրականացնել առկա իրավունքների պետական գրանցումը և փոխհատուցվել որպես սեփականատեր:</p>
		<p>Վարձակալ (համայնքից, պետությունից)</p>	<p>Օրենսդրությամբ սահմանված դեպքերում վարձակալը կարող է ձեռք բերել սեփականության իրավունք և փոխհատուցվել որպես սեփականատեր կամ նրան, հողի սեփականատիրոջ (վարձատուի) համաձայնությամբ, կարող է տրվել նոր վարձակալություն:</p> <p>Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա վարձակալված հողի «շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%»-ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ի չափով, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14% -ի չափով, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ի չափով, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%-ի չափով:</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		<p>Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող գույքի վարձակալ</p> <p>Այլ գույքային իրավունք (սերվիտուտի, կառուցապատման, գրավի, հիփոթեքի, օգտագործման) ունեցողներ, բացառությամբ վարձակալների</p> <p>Իրավական գրանցման կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ</p>	<p>Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի կանխիկ փոխհատուցում</p> <p>Հողամասի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին, բացառությամբ վարձակալների, փոխհատուցումը տրվում է ազդակիր հողամասի դիմաց տրվող փոխհատուցման գումարից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p> <p>Այս ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում միայն հողի վրա կատարված բարելավումների դիմաց, սույն ՀՕՏ-ով սահմանված կարգով:</p>
2. Բնակելի շենքեր, շինությունների կորուստ		<p>Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ կառույցի նկատմամբ իրավունքների առկայությունից (ներառյալ՝ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա և ոչ ենթակա ԱԵԱ)</p> <p>Վերաբնակեցվող վարձակալ</p>	<p>Բնակելի շենքի, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման արժեքին գումարած 15%-ի չափով, առանց ամորտիզացիոն մասհանումների և գործարքային ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար այն դեպքում, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:</p> <p>Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:</p>
3. Ոչ բնակելի շենքերի, շինությունների կորուստ	ԱԵԱ-երին սեփականության իրավունքով պատկանող և պետական գրանցում ստացած շենք, շինություններ	Սեփականատեր	<p>Շենք, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման տրամադրում փոխարինման արժեք գումարած 15%-ի չափով: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասհանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը, շահագործումը և օտարումը օրենսդրորեն հնարավոր է: Նշված դեպքում</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
	<p>Չձևակերպված շինություն քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողի վրա:</p> <p>Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա առկա ինքնակամ կառույց</p>	<p>Ինքնակամ շինություն կառուցած ԱԵԱ-ները հողի սեփականատերերն են</p> <p>Ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ</p>	<p>փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:</p> <p>Ինքնակամ շինության կորստի դեպքում կտրամադրվի փոխհատուցում ինքնակամ շինության փոխարինման արժեքի չափով՝ առանց 15% հավելավճարի:</p> <p>Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ-ին կտրամադրվի վերականգնման օժանդակություն՝ ինքնակամ կառույցի փոխարինման արժեքի չափով՝ հանած օրինականացման ծախսերը:</p> <p>Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դրամական փոխհատուցում:</p>
4. Հանրային գույքի կորուստ	Համայնքային կամ պետական գույք	Համայնք/պետություն	Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի, անշարժ գույքի փոխհատուցում կամ պետական, համայնքային ազդակիր կառույցների կամ այլ գույքի վերակառուցում և նրանց գործառույթների վերականգնում՝ համայնքի, պետության իրավասու մարմնի համաձայնությամբ:
5. Մշակաբույսի կորուստ	Ազդեցության ենթակա մշակաբույսեր	Բարելավումներ կատարած բոլոր ԱԵՏՏ-ները անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	Մշակաբույսի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:
6. Ծառերի և ստացվող բերքի կորուստ	Ազդեցության ենթակա ծառեր և ստացվող բերք	Բոլոր ԱԵՏՏ-ները անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից	Դրամական փոխհատուցում՝ հաշվարկված ծառի արժեքի շուկայական գներով՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:
7. Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում	Ձեռնարկատիրական գործունեություն ազդակիր հողում	Բոլոր ԱԵԱ-ները՝ անկախ հարկային հայտարարագրի ներկայացումից	<p>1. Ձեռնարկատիրական գործունեության (հարկային հայտարարագրերով)</p> <p>ա) մշտական ազդեցության դեպքում՝ միանվագ փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով,</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			<p>բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ գուտեկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Պետական գրանցման կամ լիցենզիայի վճարները նույնպես կփոխհատուցվեն, եթե այդպիսիք առկա են:</p> <p>2) Ձեռնարկատիրական գործունեության (հայտարարագրի բացակայության դեպքում)՝</p> <p>ա) մշտական ազդեցության դեպքում՝ վերականգնման օժանդակություն նվազագույն ամսական աշխատավարձի չափով՝ 1 տարվա համար:</p> <p>բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ վերականգնման օժանդակության տրամադրում, հիմնված նվազագույն աշխատավարձի չափի վրա՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամսիների հաշվարկով մինչև առավելագույնը 1 տարի:</p>
8. Աշխատանքի կորուստ	Աշխատանքի մշտական կորուստ կամ հարկադիր պարապուրդ (ոչ աշխատողի մեղքով)	Ազդակիր կազմակերպությունում կամ ԱԶ-ում աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք	<p>Փոխհատուցման տրամադրում՝</p> <p>ա) մշտական ազդեցության դեպքում՝ վեց ամսվա միջին աշխատավարձի չափով</p> <p>բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ մինչև վեց ամիս միջին աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամսիների հաշվարկով:</p>
9. Օժանդակություն խիստ ազդեցությունների դեպքում	Գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորուստ և վերաբնակեցում	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ, ներառյալ՝ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	<p>ա) գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորուստի դեպքում փոխհատուցում ազդեցության ենթակա հատվածում առկա 1 տարվա բերքի չափով:</p> <p>բ) վերականգնման օժանդակություն՝ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին՝ վեց ամսվա նվազագույն աշխատավարձի չափով:</p>
10. Վերաբնակեցման օժանդակություն	Օժանդակություն տեղափոխման նպատակով տրանսպորտային ծախսերը և ապրուստի միջոցները հոգալու համար	<p>Վերաբնակեցվող բոլոր ԱԵՏՏ-ները, ներառյալ՝ վարձակալները</p> <p>Ազդեցության ենթակա հողի վրա շարժական գույք/շինություն ունեցող բոլոր ԱԵԱ-ները, որոնք</p>	<p>Դրամական օժանդակության տրամադրում՝ տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտային ծախսերը և մեկ ամսվա կենսապահովման ծախսերը հոգալու համար:</p> <p>Դրամական միջոցների հատկացում՝ տրանսպորտային ծախսերը հոգալու համար:</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		ենթակա են տարաբնակեցման՝ անկախ ազդակիր գույքի նկատմամբ ունեցած իրավունքներից	
11. Ծանոթակություն խոցելի անձանց/ԱԵՏՏ-ներին		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող, կանանց, տարեց կամ հաշմանդամ անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	ա) Դրամական օժանդակության տրամադրում՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ: բ) Դրամական օժանդակության տրամադրում՝ ազդեցության ենթակա բնակարանի փոխհատուցման արժեքի և տվյալ տարածաշրջանում նմանատիպ նվազագույն մակերեսով բնակարանի շուկայական արժեքի միջև տարբերության չափով:
12. Ժամանակավոր ազդեցություն		Ժամանակավոր ազդեցություն կրող բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ-ները	Վնասների փոխհատուցում կտրամադրվի ժամանակավոր ազդեցության ենթակա դեպքերում փոխարինման արժեքով և սույն ՀՕՏՇ-ով սահմանված փոխհատուցման իրավունքներին համապատասխան:
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք չեն		Փոխհատուցման իրավունքներ ունեցող ԱԵԱ/ԱԵՏՏ-ներ	Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՏՆ-ն կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը կամ օժանդակության տրամադրումը՝ ըստ ՀՕՏՇ դրույթների:
14. Բարելավումների փոխհատուցում	Այլ բարելավումներ, որոնք ներառված չեն իրավունքների սույն աղյուսակում, սակայն առկա են ազդակիր հողամասի վրա (բացառությամբ՝ շարժական գույքի	Բարելավում կատարած ԱԵԱ-ներ	Փոխհատուցման տրամադրում՝ փոխարինման արժեքի չափով:

2. Իրավունքներ

155. Սույն ծրագրի շրջանակներում փոխհատուցում ստանալու և/կամ վերականգնման օժանդակություն ստանալու իրավունք ունեցող ԱԵԱ-ներն են.

- (i) Հողամասի սեփականատերերը, այլ գույքային իրավունքներ ունեցողները, ներառյալ հողամասի վարձակալները, հողամասի օգտագործման իրավունքը կամ օգտագործման հնարավորությունը կորցնող կամ հողամասը փաստացի տիրապետող և օգտագործող բոլոր ԱԵԱ-ները՝ անկախ հողի նկատմամբ գրանցված իրավունքներից,
- (ii) Շենք, շինությունների սեփականատերերը, այլ գույքային իրավունքներ ունեցողները, ներառյալ վարձակալները, շենքը և շինությունը կառուցած, փաստացի տիրապետողները և օգտագործողները, ինքնակամ կառույց իրականացրած անձինք,
- (iii) Ծառերի, բերքի/մշակաբույսերի կամ հողին ամրակցված այլ գույքի և բարելավումների սեփականատերերը, գույքային իրավունքներ ունեցողները, ներառյալ՝ վարձակալները, փաստացի տիրապետողները և օգտագործողները,
- (iv) Ձեռնարկատիրական գործունեության, եկամտի և աշխատավարձի կորուստ կրող բոլոր ԱԵԱ-ները:

156. Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրվանից հետո կատարված բարելավումների համար փոխհատուցում չի տրվում՝ բացառությամբ օրենքով և ՀՕՏՀ-ով սահմանված դեպքերի:

157. Օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում տրվում է միայն Իրավունքների սխեմայով սահմանված դեպքերում, կապված իրավական գրանցման կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ի իրավունքների ձևակերպման և պետական գրանցման (օրինականացման) հետ: Մյուս բոլոր դեպքերում նշված իրավունքները դադարեցվում են՝ առանց փոխհատուցման իրավունքի:

158. Սեփականության օտարման դիմաց տրվող փոխհատուցումից բացի՝ ՀՕՏՀ-ով սահմանված Ծրագրի այլ ազդեցությունների համար փոխհատուցում կամ լրացուցիչ օժանդակություն ստանալու իրավունքները ևս սահմանափակվում են վերջնաժամկետով, որը յուրաքանչյուր ենթածրագրի շրջանակներում օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրն է, որտեղ արձանագրվում են նաև իրականացված մարդահամարի և Մանրամասն չափագրման հետազոտության տվյալները (այսուհետ՝ Կասեցման օր): Այն ԱԵԱ-ները, ովքեր բնակություն են հաստատում կամ նոր բարելավումներ են կատարում ազդեցության տարածքներում Կասեցման օրվանից հետո, փոխհատուցման կամ լրացուցիչ օժանդակության համար իրավունքներ չեն ստանում: Այնուամենայնիվ, նրանց պետք է նախօրոք ծանուցում ուղարկել՝ խնդրելով նախքան ծրագրի իրականացումն ազատել տարածքները և քանդել կառույցները: Քանդված կառույցների շինանյութը չի բռնագրավվում, նրանք որևէ տուգանք չեն վճարում և նրանց նկատմամբ պատասխանատվության որևէ միջոց չի կիրառվում:

3. Փոխհատուցում և վերականգնման օժանդակություն ստանալու իրավունքները

159. Հողի, շենք, շինությունների և եկամտի կորուստ կրող ԱԵԱ-ների փոխհատուցման իրավունքները և վերականգնման օժանդակությունները պետք է ներառեն հողի, շենք/շինությունների, բերքի/մշակաբույսերի, ծառերի և բարելավումների մշտական և ժամանակավոր կորստի վերաբերյալ դրույթներ և վերաբնակեցման լրահատկացումներ, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության դադարեցման համար փոխհատուցում՝ հարկերի մասին հայտարարագրերի հիման վրա կամ միանվագ դրամական օժանդակություն վճարելու միջոցով: Այս իրավունքները հետևյալն են.

3.1. Հողի կորուստ

160. Հողի նկատմամբ ազդեցությունը կփոխհատուցվի՝ 1) փոխարինման արժեքով, որը գնահատվում է շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է) գումարած 15%, կամ 2) ԱԵԱ կողմից ընդունելի՝ ազդեցության ենթակա հողամասին համարժեք (եկամտաբերությամբ, տեղադրությամբ) հողով փոխարինելու միջոցով՝ համարժեք հողամասի առկայության և ՏԿՏՏՆ

համաձայնության դեպքում:

161. Հողի անուղղակի ազդեցություն կրող հատվածները, որոնք Ծրագրի ազդեցությունից հետո դարձել են դժվարամատչելի կամ մշակման համար անպիտան, ևս կներառվեն հողի ազդեցության ենթակա հատվածի մեջ, եթե դրա օտարման պահանջն ԱԵԱ-ի կողմից ներկայացվել և ձեռք բերողի կողմից ընդունվել է օրենքով սահմանված կարգով: Եթե ազդեցության է ենթարկվել գյուղատնտեսական նշանակության հողի ավելի քան 10%-ը, ԱԵԱ-ները (սեփականատերերը, վարձակալները, հողօգտագործողները) պետք է *խիստ ազդեցության* համար լրացուցիչ օժանդակություն ստանան, որը համարժեք է կորցրած հողից ստացված տարեկան համախառն եկամտի շուկայական արժեքին:

162. Այն ԱԵԱ-ները, որոնց իրավունքները ազդեցություն կրող հողամասի նկատմամբ ենթակա են ձևակերպման և պետական գրանցման (այսուհետ՝ օրինականացման), կարող են ձևակերպել իրենց իրավունքները, որից հետո նրանց կորուստներն ամբողջությամբ պետք է փոխհատուցվեն այնպես, ինչպես սեփականատերերինը: Այն ԱԵԱ-ները, որոնց իրավունքները չեն կարող օրինականացվել կամ այն ԱԵԱ-ները, որոնք ազդեցության ենթակա հողն օգտագործում են առանց դրա նկատմամբ գրանցված իրավունքների (չձևակերպված օգտագործող) կստանան փոխհատուցում միայն հողի վրա առկա բարելավումների համար:

163. Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալները, օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, կարող են ձեռք բերել հողամասի նկատմամբ սեփականության իրավունք և փոխհատուցվել որպես լիարժեք սեփականատեր կամ նրանց կարող է տրվել նոր վարձակալություն՝ համարժեք հողամասի առկայության և հողամասի սեփականատիրոջ (վարձատուի) համաձայնության դեպքում: Եթե դա հնարավոր չէ, ապա վարձակալները կստանան շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) գումարած 15%-ին համարժեք փոխհատուցում՝ կախված վարձակալության մնացած տարիների թվից՝ հետևյալ կարգով. ա) մինչև 1 տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 5%-ի չափով, բ) մինչև 15 տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 14%-ի չափով, գ) մինչև 25 տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդեցության ենթակա հողի փոխհատուցման արժեքի 20%-ի չափով, դ) 25 և ավելի տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդեցության ենթակա հողի փոխհատուցման արժեքի 25%-ի չափով:

164. Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող հողի վարձակալներին կտրամադրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի համար:

3.2. Բնակելի շենք, շինությունների կորուստ

165. Բնակելի շենք, շինությունների համար փոխհատուցում պետք է տրամադրվի փոխարինման արժեքին գումարած 15%-ի չափով՝ անկախ շենք, շինության նկատմամբ ԱԵԱ-երի գրանցված իրավունքներից կամ գույքի իրավական կարգավիճակից: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց մաշվածության (ամորտիզացիոն) մասհանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների՝ անկախ ազդեցության ենթակա գույքի գրանցման կամ հաշվառման հանգամանքից: Մասնակի ազդեցություն կրելու դեպքում կամ եթե սեփականատերը չի ցանկանում օտարել շինությունն ամբողջությամբ, ազդեցությունները կընդգրկեն միայն շինության ազդեցության ենթակա մասը և այդ մասի՝ շահագործման համար պիտանի նախկին վիճակին բերելու լիարժեք վերականգնումը, եթե դա տեխնիկապես հնարավոր է:

166. Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի համար: Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի նաև վերաբնակեցման և խիստ ազդեցություն կրելու օժանդակություն՝ ՀՕՏԾ-ով սահմանված կարգով (տե՛ս ստորև):

3.3. Ոչ բնակելի շենք, շինությունների կորուստ

- a) ԱԵԱ-ները, ովքեր ոչ բնակելի շենք, շինությունների նկատմամբ ունեն ձևակերպված իրավունքներ, կստանան փոխհատուցում փոխարինման արժեքին գումարած 15%-ի չափով: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց մաշվածության (ամորտիզացիոն) մասհանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների:
- b) Ոչ բնակելի ինքնակամ շինությունների (բացառությամբ փաստացի բնակեցված շենք/շինությունների) համար, որոնք գտվում են քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողի վրա, կտրվի փոխհատուցում ինքնակամ շինության փոխարինման արժեքի չափով՝ առանց մաշվածության (ամորտիզացիոն) մասհանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների և առանց 15% հավելավճարի:
- c) Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողի վրա կառուցված ինքնակամ ոչ բնակելի շենքերի և շինությունների դիմաց ԱԵԱ-ներին կտրվի վերականգնման օժանդակություն ինքնակամ շինության փոխարինման արժեքի չափով՝ (առանց մաշվածության (ամորտիզացիոն) մասհանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների) հանած օրինականացման ծախսերը:

167. Վերը նշված a) և b) դրույթները չեն զրկում ԱԵԱ-ներին սույն ՀՕՇԾ դրույթների համաձայն ցանկացած այլ կորստի կամ ազդեցության դիմաց փոխհատուցում կամ օժանդակություն ստանալու իրավունքից: Ինքնակամ կառույցներն օրինականացնելու համար առաջացող բոլոր ծախսերը, այդ թվում՝ բոլոր պետական և տեղական տուրքերն ու վճարները, կրում է ԱԵԱ-ն:

168. Ոչ բնակելի շինությունների վրա մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթարկվող հատվածի համար՝ գումարած վերանորոգման ծախսերը, եթե շինության ազդեցության չենթարկվող մասի հետագա օգտագործումը, շահագործումը և օտարումը օրենսդրորեն հնարավոր է:

169. Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի համար:

3.4. Հանրային գույքի կորուստ

170. Համայնքային և պետական շենքերն ու շինությունները, հաղորդուղիներն ամբողջությամբ պետք է փոխարինվեն կամ վերականգնվեն այնպես, որ կարողանան իրականացնել ծրագրից առաջ ունեցած գործառնությունները:

3.5. Բերքի/մշակաբույսի կորուստ

171. Բերքի/մշակաբույսի կորստի համար կտրամադրվի մեկ տարվա բերքի, մշակաբույսի շուկայական համախառն արժեքին համապատասխան փոխհատուցում այն ԱԵԱ-ներին (սեփականատեր, վարձակալ, փաստացի հողօգտագործող), ում փաստացի գործողությունների՝ հողի օգտագործման կամ մշակման արդյունքում ստացվել է փոխհատուցվող բերքը/մշակաբույսը: Ծառերից ստացված բերքը ներառված է ծառերի և դրանցից ստացվող բերքի փոխհատուցումներում և սույն բաժնի դրույթները չեն կիրառվում նշված ազդեցության նկատմամբ:

3.6. Ծառերի և ստացվող բերքի կորուստ

172. Ծառերի և ստացվող բերքի համար հողի սեփականատերերին, վարձակալներին և փաստացի օգտագործողներին պետք է տրվի փոխհատուցում շուկայական արժեքին համապատասխան՝ հիմնվելով ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության ցուցանիշների վրա հետևյալ կարգով.

- a) համայնքային կամ պետական հողերի սեփականատերերը կստանան ծառերի համար ամբողջական փոխհատուցում, եթե ծառի համար փոխհատուցման իրավունքը չի փոխանցվում վարձակալին՝ համաձայն սույն կետի բ) ենթակետի, կամ ծառատնկումը չի իրականացվել հողամասը փաստացի օգտագործողի կողմից, ինչպես սահմանված է սույն կետի գ) ենթակետով,
- b) եթե հողամասը ծանրաբեռնված է վարձակալությամբ, ապա ծառերի համար ամբողջական փոխհատուցումը կտրվի վարձակալին, եթե ծառերը տնկվել են վարձակալի կողմից՝ հողամասի սեփականատիրոջ համաձայնությամբ,
- c) եթե համայնքային կամ պետական հողերը փաստացի, առանց իրավաբանական ձևակերպման, օգտագործվում են սեփականություն կամ գույքային իրավունք չունեցող անձի կողմից, ապա ծառերի համար ամբողջական փոխհատուցումը կտրամադրվի հողամասը փաստացի օգտագործողին՝ հողամասի սեփականատիրոջ համաձայնությամբ,
- d) քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողերի փաստացի օգտագործողները կփոխհատուցվեն միայն ծառերից ստացվող մեկ տարվա բերքի արժեքի չափով:

3.7. Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում

- a) Ձեռնարկատիրական գործունեության մշտական և ժամանակավոր դադարեցման դեպքում տրամադրվում է փոխհատուցում՝ *հարկերի մասին հայտարարագրերի* հիման վրա հետևյալ կարգով՝
 - ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցման դեպքում կտրամադրվի փոխհատուցում մեկ տարվա եկամտի չափով՝ հարկերի մասին հայտարարագրի հիման վրա,
 - ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման դեպքում՝ կտրամադրվի փոխհատուցում ամսական եկամտի չափով, հարկերի մասին հայտարարագրի հիման վրա՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով,
 - պետական գրանցման և լիցենզիայի վճարները նույնպես պետք է փոխհատուցվեն, եթե առկա են:
- b) *Հարկերի մասին հայտարարագրի բացակայության դեպքում*, ձեռնարկատիրական գործունեության մշտական և ժամանակավոր դադարեցման համար փոխհատուցումը կիրականացվի վերոնշյալ սկզբունքով՝ ամսական նվազագույն աշխատավարձի չափով:
- Պետական գրանցման և լիցենզիայի վճարները նույնպես պետք է փոխհատուցվեն, եթե առկա են:

3.8. Աշխատանքի կորուստ

- a) Ազդեցության ենթակա կազմակերպությունում կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ աշխատող ԱԵԱ-ների աշխատանքի մշտական կորստի դեպքում տրամադրվում է դրամական փոխհատուցում՝ 6 ամսվա միջին ամսական աշխատավարձի չափով, եթե աշխատանքային պայմանագիրը դադարում է ազդակիր հողում ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցման հետևանքով:
- b) Աշխատանքի ժամանակավոր կորստի դեպքում (հարկադիր պարապուրդ) դրամական փոխհատուցում կտրվի նույն հիմունքներով՝ աշխատանքի հարկադրված դադարեցման (պարապուրդի) ամիսների համար:

3.9. Ծանոթակություն խիստ ազդեցության դեպքում

- a) Տնտեսական տեղահանման պատճառ հանդիսացող Ծրագրի խիստ ազդեցության համար դրամական օժանդակություն տրամադրվում է ազդեցության ենթակա այն ԱԵՏՏ-ներին (ներառյալ՝ վարձակալներին և հողի փաստացի օգտագործողներ հանդիսացող ԱԵՏՏ-ներին), որոնց պատկանող կամ որոնց կողմից մշակվող գյուղատնտեսական նշանակության հողի ավելի քան 10%-ն ազդեցության է ենթարկվում և տվյալ հողամասի օգտագործման արդյունքում տվյալ ԱԵՏՏ-ները ստանում են օգուտներ՝ պտուղների, բերքի, մշակաբույսերի տեսքով:

173. Վերոհիշյալ օժանդակության հաշվարկման համար հիմք է հանդիսանում հողերի փաստացի գործառնական նշանակությունը՝ անկախ անշարժ գույքի կադաստրային տվյալներում, իրավունքի գրանցման վկայականներում և իրավունքը հաստատող այլ փաստաթղթերում հողակտորի համար սահմանված նշանակությունից:

174. Այն դեպքում, երբ 10 և ավելի տոկոսով ազդեցության ենթակա հողակտորը չունի գյուղատնտեսական նշանակություն, սակայն փաստացի օգտագործվում (մշակվում) է որպես գյուղատնտեսական հողամաս, և որի վրա փաստացի առկա է բերք/մշակաբույս, ապա վերջինս ենթակա է փոխհատուցման՝ վերոհիշյալ սկզբունքների համաձայն՝ առանց օրինականացման պահանջի ապահովման:

- b) Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ները (ներառյալ՝ վերաբնակեցվող վարձակալները) կստանան վերականգնման օժանդակություն խիստ ազդեցության համար ամսական նվազագույն աշխատավարձի 6-ապատիկի չափով:

3.10. Վերաբնակեցման օժանդակություն

- a) *Տեղափոխման և ապրուստի միջոցը հոգալու ծախսեր.* այն ԱԵՏՏ-ները, որոնք ենթակա են վերաբնակեցման ազդեցության ենթակա բնակության վայրից (ներառյալ՝ վարձակալները), պետք է ստանան մեկ ամսվա ապրուստի ծախսերի համար վերաբնակեցման օժանդակություն՝ ամսական նվազագույն աշխատավարձին համարժեք չափով, ինչպես նաև դրամական օժանդակություն՝ տեղափոխման հետ կապված տրանսպորտային ծախսերը հոգալու համար:

175. Այն ԱԵՏՏ-ները, որոնք Կասեցման օրվանից առնվազն երեք ամիս առաջ փաստացի չեն բնակվել ազդեցության ենթակա տանը կամ բնակելի շինությունում, վերաբնակեցման օժանդակություն չեն ստանա:

- b) Շարժական գույքի տեղափոխման ծախսեր. ազդեցության ենթակա հողի և շինության վրա շարժական գույք ունեցող բոլոր ԱԵՏՏ-ներին, անկախ տվյալ հողի կամ շինության նկատմամբ առկա իրավունքներից, կտրամադրվի դրամական օժանդակություն՝ տեղափոխման ենթակա շարժական գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը հոգալու համար:

3.11. Ծանոթակություն խոցելի անձանց/ԱԵՏՏ-ներին

176. Խոցելի անձանց (աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող ԱԵՏՏ, կանանց, տարեցների կամ հաշմանդամների կողմից ղեկավարվող տնտեսություններ) կտրվի վերականգնման օժանդակություն ամսական նվազագույն աշխատավարձի 6-ապատիկի չափով, ինչպես նաև Ծրագրի շրջանակներում նախատեսվող աշխատատեղերում աշխատելու առաջնահերթություն:

177. *Սոցիալապես խոցելի անձինք/ԱԵՏՏ-ներն են՝*

- 1) այն տնային տնտեսությունները, որոնցում ընդգրկված ընտանիք(ներ)ը հաշվառված է(են)

ընտանեկան նպաստի համակարգում (անապահովության գնահատման համակարգ) և ստանում են ընտանեկան նպաստ,

- 2) միայնակ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ տարիքային կենսաթոշակառու հանդիսացող կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա,
- 3) տարիքային կենսաթոշակառու հանդիսացող անձանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ կենսաթոշակառու կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա,
- 4) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ կենսաթոշակառու կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա:
- 5) «Բնակավայրից վերաբնակեցվող խոցելի ԱԵՏՏ-ներին» կտրվի վերականգնման նպաստ, որը համարժեք կլինի նրանց ազդեցության ենթակա բնակարանների համար հաշվարկված փոխհատուցման արժեքի և տարածաշրջանում նմանատիպ նվազագույն մակերեսով բնակարանի շուկայական արժեքի միջև տարբերությանը (այն դեպքում, եթե նրանց ազդեցության ենթակա բնակարանների համար հաշվարկված փոխհատուցման գումարը բավարար չէ նմանատիպ նվազագույն մակերեսով բնակարան ձեռք բերելու (վերականգնելու) համար՝ տվյալ տարածաշրջանի շուկայի պայմանների հիման վրա): Սա սահմանվել է գնահատողների կողմից՝ շուկայի վերլուծությունների և հաշվարկների հիման վրա: Սա պետք է սահմանվի գնահատողների կողմից՝ շուկայի վերլուծությունների և հաշվարկների հիման վրա:

3.12.Ժամանակավոր ազդեցություններ

178. Ժամանակավոր ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ներին և ԱԵԱ-ներին կտրվի փոխհատուցում վնասների համար ՀՀ օրենսդրությամբ և Ծրագրի Իրավունքների սխեմայով սահմանված դեպքերի համար: Ժամանակավոր ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ներին և ԱԵԱ-ներին տրամադրվող փոխհատուցումը չի ներառի վերականգնման օժանդակությունները: Մինևույն ժամանակ շինարարական աշխատանքների հետևանքով մարդկանց պատճառված վնասները, ովքեր ՀՕՏՕ շրջանակում ԱԵԱ-ներ չեն հանդիսանում, կդիտարկվեն Բնապահպանական կառավարման պլանի շրջանակներում:

3.13.ՀՕՏ չնախատեսված ազդեցությունները, եթե այդպիսիք լինեն

179. Ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը կանդրադառնա Ծրագրի իրականացման ընթացքում չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցման կամ օժանդակության տրամադրումը Իրավունքների սխեմայի դրույթների հիման վրա՝ Շտկող

միջոցառումների պլանը (ՇՄՊ) մշակելուց (եթե նահրաժեշտ է) և ԱԶԲ-ի հետ համաձայնեցնելուց հետո:

3.14. Բարելավումների փոխհատուցում

180. Այն բարելավումները, որոնք ներառված չեն Իրավունքների սխեմայում, սակայն առկա են ազդեցության ենթակա հողամասի վրա (բացառությամբ շարժական գույքի), կփոխհատուցվեն փոխարինման արժեքի չափով:

4. Փոխհատուցման միավորի արժեքի գնահատում

181. Անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման Հայաստանի ազգային ստանդարտով, ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (2009) և սույն ՀՕՏ-ի պահանջների համաձայն, որից ելնելով տարբեր ազդեցությունների միավորի դիմաց փոխհատուցման արժեքի գնահատման ԱԶԲ և ՀՀ կառավարության համար փոխհամաձայնեցված մեթոդաբանությունը հետևյալն է՝

- (i) **Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերը** պետք է գնահատվեն փոխարինման արժեքով, այսինքն՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) գումարած 15 տոկոս:
- (ii) **Շենքերը և շինությունները** պետք է գնահատվեն փոխարինման արժեքով՝ շինության տեսակի, շինանյութերի արժեքի, շինարարության տեսակի, աշխատուժի, տրանսպորտի և այլ շինարարական ծախսերի հիման վրա: Մաշվածության (ամորտիզացիոն) մասհանումներ կամ գործարքային ծախսերը չեն կիրառվում և չեն նվազեցվում:
- (iii) **Մեկ տարվա մշակաբույսից ստացվող բերքի** փոխհատուցման արժեքը պետք է գնահատվի գյուղատնտեսական ապրանքների նախորդ 3 տարիների միջին գների և միջին բերքատվության ցուցանիշների վրա: Այն դեպքում, երբ ԱԵԱ-ին վճարման ենթակա է ավելի քան մեկ տարվա փոխհատուցում, առաջին տարուց հետո բերքի դիմաց փոխհատուցում պետք է տրամադրվի շուկայական համախառն արժեքին համապատասխան:
- (iv) **Ծառերը (թփերը)** պետք է գնահատվեն տարբեր մեթոդաբանությամբ՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք կորցրած ծառը (թուփը) ոչ պտղատու ծառ (թուփ) է, թե՛ պտղատու:
- (v) ա) Ոչ պտղատու փայտանյութ տվող և դեկորատիվ ծառերը (թփերը), պետք է գնահատվեն՝ ըստ հետևյալ խմբերի ա) փոքր ծառեր, բ) միջին ծառեր և գ) խոշոր ծառեր՝ հիմք ընդունելով ծառատեսակը (թփատեսակը) և գնահատման հետևյալ չափման միավորները՝ փայտանյութի (վառելավայտի կամ շինարարական փայտի) ծավալը, ծառի (թփի) բարձրությունը, ինչպես նաև տվյալ ծառատեսակի (թփատեսակի) համար կիրառելի այլ չափման միավորներ, որոնք կսահմանվեն ՀՕՏ-ով:
բ) Պտղատու ծառերը (թփերը, խաղողը) պետք է գնահատվեն այգետնկման տարիքի հիման վրա: Պտղատու ծառերի (թփերի) դիմաց փոխհատուցում պետք է տրամադրվի ներդրված արժեքի հիման վրա, և այնքան, որքան կազմում է տվյալ ծառատեսակի (թփատեսակի) մեկ տարվա բերքի փոխհատուցման շուկայական արժեքը՝ բազմապատկած տվյալ ծառի (թփի) այգետնկման օրվանից հաշված տարիների քանակով, սակայն ոչ ավելի, քան այն տարիների քանակն է, որն անհրաժեշտ է տվյալ ծառատեսակին (թփատեսակին) արդյունաբերական բերքատվության տարիքի հասնելու համար:

5. Դատական կարգով օտարման պայմանները

182. Սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված որոշակի

ընթացակարգերի համաձայն: Մասնավորապես, հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը կարող է օտարվել՝ ա) պայմանագրի համաձայն, բ) փոխհատուցման ենթակա գումարը դեպոզիտ հանձնելով և գ) դատական կարգով:

183. Սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռք բերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն: Այս դեպքում կողմերի համաձայնությամբ է որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը, որոնք սակայն չպետք է հակասեն սույն ՀՕՏ համար ընդունված տարաբնակեցման սկզբունքներին կամ ԱԵԱ-ների նկատմամբ լինեն պակաս բարենպաստ, քան նրանց տրված իրավունքները: Օտարման պայմանագրի կողմ պետք է հանդիսանան նաև օտարվող սեփականության նկատմամբ ձեռք բերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողները:

184. Ծրագրի ներքո առավելությունը պետք է տրվի օտարման նշված եղանակին և ՏԿՏՏԼ-ն պետք է հնարավոր ջանքերը գործադրի՝ հաջող բանակցություններ իրականացնելու միջոցով սեփականությունը օտարելու համար: Բանակցությունների ձախողման և ԱԵԱ-ների անհամաձայնություն դեպքում, եթե լրացել է պայմանագրի կնքման համար նախատեսված 3-ամսյա ժամկետը, ձեռք բերողը, օրենքով սահմանված ժամկետներում, սեփականության օտարման դիմաց տրամադրվող փոխհատուցման գումարը հանձնում է դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին: ԱԵԱ-ներն իրավունք ունեն ստանալ փոխհատուցումը 7-օրյա ժամկետում: Տվյալ դեպքում, (ինչպես նաև մինչև դատարանի կողմից վճռի կայացումը փոխհատուցման գումարը դեպոզիտից ստանալու դեպքում) սեփականության օտարման պայմանագիրը համարվում է կնքված: Եթե ԱԵԱ-ները օրենքով սահմանված ժամկետում դեպոզիտից չեն ստանում փոխհատուցման գումարը, ապա ձեռք բերողը մեկամսյա ժամկետում դիմում է դատարան՝ սեփականության օտարման պահանջով:

185. Հողի ձեռքբերումը սեփականության օտարման վարույթով կապված է երկար ընթացակարգերի հետ և հաճախ կարող է դիմադրության հանդիպել: Ծրագրի շրջանակներում նման մոտեցմամբ պետք է գործել միայն ծայրահեղ դեպքերում, երբ ԱԵԱ-ի և ձեռք բերողի և ՏԿՏՏԼ-ի միջև բանակցությունները ձախողվում են և ենթածրագրի իրագործման համար չկա մատչելի այլընտրանքային հող: Ձեռք բերողը չպետք է զբաղեցնի օտարվող հողամասերը մինչև՝ ա) օտարվող սեփականության նկատմամբ օրենքով սահմանված կարգով չգրանցվի ձեռք բերողի սեփականության իրավունքը կամ բ) օրենքով սահմանված կարգով համապատասխան դատական ակտը չստանի օրինական ուժի մեջ և օտարվող սեփականությունը չհանձնվի ձեռք բերողին:

5.1. Օտարման ծախսերը

186. Սեփականության օտարման գործընթացում առաջացած ծախսերը կատարվում են հողը և այլ անշարժ գույքը ձեռք բերողի հաշվին: Օտարման գործընթացին առնչվող հնարավոր ծախսերը սահմանված են սույն ՀՕՏ-ում: Սեփականության օտարման հետ կապված օտարվող սեփականության սեփականատիրոջ համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ կապակցությամբ առաջացող ֆինանսական պարտավորությունները (հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ) հատուցում է ազդեցության ենթակա հողի և այլ անշարժ գույքի ձեռք բերողը:

6. Օրինականացման պայմանները

187. Օտարվող սեփականության իրավատեր հանդիսացող բոլոր ԱԵԱ-ները (անձ, ով ունի օտարվող սեփականության նկատմամբ իր իրավունքը հավաստող փաստաթղթեր, սակայն դեռևս չի գրանցել իր սեփականության իրավունքը) պետք է իրենց միջոցներով²⁷ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

²⁷ Օրինականացման ծախսերը կարող են ներառվել ՀՕՏ բյուջեում, եթե ազդեցությունների և մարդահամարի վերջնական տվյալների հիման վրա վերջնական ՀՕՏ-ում սահմանվի այդպիսի մեխանիզմ:

գրանցեն իրենց սեփականության և այլ գույքային իրավունքները:

188. Այն ԱԵԱ-ները, որոնք օտարվող սեփականության նկատմամբ ունեն օրենքով ճանաչվող իրավունքներ, սակայն չեն ապահովել դրանց պատշաճ ձևակերպումը և պետական գրանցումը, օրենքով սահմանված կարգով, իրավունք ունեն մինչև օտարման պայամանագրի կնքումը կամ դատական ակտի կայացումը, օրինականացման գործընթացի արդյունքում ձեռք բերել ազդեցության ենթակա գույքի նկատմամբ իրավունքներ և ստանալ փոխհատուցում՝ ձեռք բերված իրավունքներին (նոր ձևակերպված և պետական գրանցում ստացած) համապատասխան:

189. Օրինականացման գործընթացի պայմանները և ժամկետները՝ ըստ օտարվող սեփականության նկատմամբ ԱԵԱ-ների իրավունքների (սեփականության օրինական տիրապետողները, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության փաստացի տիրապետողները, օգտագործողները, սեփական հողամասում ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ-ները և այլն), ՏԿՏՏՆ օժանդակության ձևերն ու կարգը կսահմանվեն վերջնական ՀՕՏԾ-ում՝ այն իրականացնելու ընթացքում մշակվող և իրականացվող օրինականացման պլանի միջոցով: Օտարվող սեփականության նկատմամբ սեփականության կամ այլ իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք չունեցող կամ օտարվող սեփականության նկատմամբ օրենքով ճանաչվող իրավունքներն իրենց հայեցողությամբ չձևակերպած և չգրանցած ԱԵԱ-ները՝ համապատասխան ազդեցությունների համար փոխհատուցումը ստանում են և ՀՕՏԾ-ով նախատեսված փոխհատուցման իրավունքներից օգտվում են որպես իրավական կարգավիճակ չունեցող ԱԵԱ-ներ:

G. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

190. Սույն գլուխը նկարագրում է ԱԵԱ-ների հետ հանրային լուսմների (այսուհետ՝ ՀԼ) և տեղեկատվության հրապարակման գործընթացները ազդեցության ենթակա համայնքներում Ծրագրի մշակման տարբեր փուլերում: Համայնքներում ԱԵԱ-ների հետ հանրային լուսմները կազմակերպվեցին մի քանի փուլով.

- հանրային լուսմների 1-ին փուլը (մեկ հանդիպում Լոռու մարզպետարանում) կազմակերպվեց 2016 թ. փետրվարին՝ ՀՕՏԾ-ի նախագծային տարբերակի մշակման ընթացքում,
- հանրային լուսմների 2-րդ փուլը (հանդիպում ազդեցության ենթակա համայնքների հետ) կազմակերպվեց 2017 թ. հուլիսին՝ ՀՕՏԾ-ի վերջնական տարբերակի մշակման ընթացքում, նախքան ՄՉՀ և մարդահամարի հետազոտությունն սկսելը,
- հանրային լուսմների 3-րդ փուլն իրականացվեց անհատական հիմունքներով՝ ԱԵԱ-ների հետ երես առ երես հանդիպումների միջոցով: Հանդիպումները կազմակերպվեցին 2017 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ ՄՉՀ և մարդահամարի հետազոտության իրականացման ընթացքում:

1. Հանրային լուսմներ

Մ6 ծրագրի ՀՕՏԾ-ի նախագծային տարբերակի մշակման ընթացքում՝ 2016 թ. փետրվարի 12-ին, Լոռու մարզպետարանում կազմակերպվեց հանրային լուսմ տարածքային և տեղական համայնքների ղեկավարների հետ, որին մասնակցում էին ՏԾԻԿ-ի ներկայացուցիչները և ԱԶԲ-ի սոցիալական երաշխիքների և տարաբնակեցման խորհրդատուն: Հանրային լուսման ընթացքում մասնակիցները տեղեկացվեցին Ծրագրի նպատակների, ՀՕՏ գործընթացի փուլերի, փոխհատուցման իրավունքների և իրավասությունների մասին: Հանրային լուսմների բոլոր մասնակիցներին տրամադրվեց ՀՕՏ սկզբունքների և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվական ձեռնարկը:

191. Հետագայում՝ 2017 թ. հուլիսին վերջնական ՀՕՏԾ-ի մշակման ընթացքում Հաղպատ, Նեղոց, Ալավերդի, Ախթալա, Շնող, Օձուն և Այգեհատ համայնքներում ԱԵԱ-ների հետ կազմակերպվեց յոթ հանրային լուսմ (ՀԼ): Բացի վերը նշված համայնքներից՝ հանրային լուսմներին մասնակցում էին Աքորի և Քարկոփ համայնքների ղեկավարները, քանի որ համայնքային հողերը ազդեցության են ենթարկվում միայն այդ համայնքներում: Իրականացված հանրային լուսմների ժամանակացույցը ներկայացված է ստորև.

Աղյուսակ G1. ՀՕՏԾ վերջնականացման ՀԼ-ների ժամանակացույցը

No	Համայնքը	ՀԼ ամսաթիվը	ՀԼ վայրը
1	Հաղպատ	05.07.2017	Հաղպատ
2	Նեղոց	05.07.2017	Նեղոց
3	Աքորի	06.07.2017	Ալավերդի
4	Ալավերդի	06.07.2017	
5	Ախթալա	06.07.2017	Ախթալա
6	Շնող	06.07.2017	Շնող
7	Քարկոփ	06.07.2017	

8	Օձուն	07.07.2017	Օձուն
9	Այգեհատ	07.07.2017	Այգեհատ

192. Հանրային լուսմների մասին հայտարարությունը պաշտոնապես ուղարկվել է ազդեցության ենթակա համայնքների ղեկավարներին, այնուհետև նրանց այդ մասին տեղեկացվել է հեռախոսազանգերի միջոցով: Բացի այդ, հայտարարությունը տեղադրվել է «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան էջում: ԱԵԱ-ների անվանացանկը հանրային լուսմներից առաջ ուղարկվել է համայնքների ղեկավարներին՝ ԱԵԱ-ների կամ նրանց ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունն ապահովելու համար: Ազդեցության ենթակա լուս-կողերի ցուցակի հիման վրա համայնքապետարանները հանրային լուսմների ամսաթվի, ժամի և վայրի վերաբերյալ տեղեկացրել են բոլոր սեփականատերերին, վարձակալներին և չձևակերպված օգտագործողներին, այդ թվում նաև համայնքի ազդեցության չենթարկվող բնակիչներին: Հատուկ ուշադրություն է դարձվել կանանց և խոցելի ԱԵԱ-ներին՝ ապահովելու համար նրանց մասնակցությունը: Կանանց և խոցելիների մասնակցությունը խթանելու համար համայնքների ղեկավարներից հատուկ պահանջվել է լուսմներին ապահովել նրանց ներկայությունն ու մասնակցությունը: Հանրային լուսմների թիմում եղել են կանայք՝ լուսմների գենդերային հավասարությունը պահպանելու նպատակով, և թիմը խրախուսել է կանանց և խոցելի կողմերի մասնակցությունը՝ ՀԼ ընթացքում հարցնելով նրանց կարծիքները և առաջարկությունները:

193. Հանրային լուսմներին մասնակցել է 69 ԱԵԱ, որոնցից 23-ը՝ կանայք, իսկ 46-ը տղամարդիկ են (մասնակիցների անվանացանկը՝ հանդիպման արձանագրության հետ միասին, ներկայացված են Հավելված 5-ում), ինչպես երևում է Աղյուսակ G2-ից:

Աղյուսակ G2. Մասնակիցների բաշխումը՝ ըստ սեռի

Մեռ	Հաղպատ	Նեղոց	Ալավերդի	Ախթալա	Շնող	Օձուն	Այգեհատ	Ընդամենը
Արական	7	7	10	1	15	3	3	46
Իգական	2	1	8	6	4	0	2	23
Ընդամենը	9	8	18	7	19	3	5	69

194. Ներկայացվել են ընդհանուր ծրագիրն ու ՀՕՏ փուլերը, մասնավորապես՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելը, ՄՉՀ իրականացումը, մարդահամարը և ՄՏՀ-ն, ազդեցության ենթակա գույքի և առկա վնասների նկարագրության արձանագրությունների պատրաստումն ու ստորագրումը՝ հողակտորների վրա ժամանակավոր ազդեցության դեպքում, ՀՕՏՄ մշակումն ու ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի կողմից վերջինիս հաստատումը, ՀՕՏՄ-ի իրականացումը և փոխհատուցման պայմանագրերի և համաձայնագրերի ստորագրումը: Բացի այդ, ԱԵԱ-ները տեղեկացվեցին փոխհատուցման իրավունքների և իրավասությունների մասին, ծանոթացան գնահատման մեթոդաբանությանը՝ ըստ կորստի տեսակների, բողոքների լուծման մեխանիզմի՝ մասնավորապես բողոքի քննման համար պատասխանատու մարմինների գործառնությունների և իրավասությունների վերաբերյալ, բողոքների ներկայացման ձևի և եղանակների, բողոքների քննման և դրանց արձագանքելու ժամկետների մասին: Բոլոր համայնքներում քննարկված հիմնական խնդիրները ներկայացված են Աղյուսակ G3-ում:

195. Հանրային լուսմների բոլոր մասնակիցներին տրամադրվեց Ծրագրի տեղեկատվական ձեռնարկը, որը պարունակում էր ՀՕՏ փուլերի վերաբերյալ տեղեկատվությունը, Իրավունքների սխեման, Բողոքների լուծման մեխանիզմը և Ծրագրի գործադիր մարմինների

ներկայացուցիչների կոնտակտային տվյալները:

196. ՀԼ-ների կազմակերպումից հետո սկսվեց ՄՉՀ, գույքագրման և ՄՏՀ/մարդահամարի հետազոտությունների իրականացումը: Հաշվի առնելով այն փաստը, որ համայնքներում ՀԼ-ների կազմակերպման ժամանակ սեփականատերերի և օգտագործողների մի մասը դեռևս հայտնի չէին և չէին տեղեկացվել համայնքապետարանի կողմից՝ ԱԵԱ-ների հետ կազմակերպվել են երես առ երես հանդիպումներ ՄՉՀ, գույքագրման և մարդահամարի հետազոտության ընթացքում:

Աղյուսակ G3. Հարցերը և պատասխանները՝ ըստ համայնքների

Հարցեր ²⁸		Պատասխաններ
N	Ախթալա	
1	Իգ.-Ի՞նչ սկզբունքով են հրավիրվել քննարկման մասնակիցները:	Այսօրվա ցանկերը, որոնց հիման վրա հրավիրվել են քննարկման մասնակիցները, կազմվել են կադաստրային տվյալների հիման վրա, այսինքն՝ ճանապարհի նախագիծը դրվել է կադաստրի քարտեզի վրա, դիտարկվել է, թե ում գույքերն են օտարման ենթարկվում ու տնօրինողները հրավիրվել են: Եվ քանի որ կադաստրային քարտեզն ունի շեղումներ տեղանքում և շատ հնարավոր է, որ այդ ցանկը սխալ լինի և որոշ մարդիկ հրավիրված լինեն, ում գույքն ազդեցության գոտում չէ, ձեռք չի տրվելու և հակառակը: Հետևաբար՝ ցանկերի ճշգրտումը նախատեսվում է իրականացնել փաստացի ուսումնասիրությունների արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա:
2	Իգ.-Հնարավո՞ր է, որ արձանագրության ստորագրման ժամանակ չի լինում համաձայնություն:	Հնարավոր է: Օրինակ, ծառատեսակների հետ կապված կարող են լինել անհամաձայնություններ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը լրացուցիչ ստուգման է ենթարկվում: Արձանագրությունը կարող է չստորագրվել տարբեր հարցերի շուրջ անհամաձայնության պատճառով. հնարավոր է, որ չստորագրվի, քանի որ այն ներառում է սխալ տեղեկատվություն կամ օրինակ, գլոբալ իմաստով մարդը կարող է նշել, որ համաձայն չէ ճանապարհի նախագծի հետ առհասարակ: Եթե մարդու բողոքն արձանագրությունում ներկայացված փաստացի տեղեկատվությանը չի վերաբերվում, այլ ընդհանուր է, ապա լրացուցիչ տեղեկանք է կազմվում, որտեղ տվյալ մարդը նշում է, թե ինչու է հրաժարվում ստորագրել արձանագրությունը:

²⁸ Իգ.-իգական, Ար.- Արական

3	<p>Իգ.- Ենթադրենք, ես չեմ ուզում, որ իմ պատը հանվի, ինչքանով է հաշվի առնվելու իմ ցանկությունը:</p>	<p>Նախ, ճգրտվում են ազդեցության գոտում գտնվող հողերը օգտագործողների մասին տեղեկատվությունը, որի հիման վրա ՀՀ կառավարությունը բացառիկ գերակա հանրային շահի որոշում է ընդունում: Այս որոշման հիման վրա պետությունը բացառիկ գերակա հանրային շահ է ճանաչում ծրագրի համար անհրաժեշտ բոլոր հողատարածքները: Այդ որոշումը մարդուն հնարավորություն տալիս է դատական կարգով բողոքարկելու և հայտնելու անհամաձայնությունը, որի համար անհրաժեշտ են նաև համապատասխան հիմնավորումներ, իսկ ձեռքբերողն էլ իր հերթին է հիմնավորում հողատարածքի օգտագործման անհրաժեշտությունը:</p>
4	<p>Իգ.-Դե դատարանը կարող է որոշել, որ անհրաժեշտ է գույքն օտարել, բայց ես համաձայն չեմ:</p>	<p>Ձեր անհամաձայնությունը պետք է ունենա համապատասխան հիմնավորում: Ճանապարհի կառուցումն ունի հանրային նշանակություն, հետևաբար՝ որևէ մեկի շահն ստորադասվում է հանրային շահին, որի համար էլ գույքի օտարման հիմքում ընկած է բացառիկ գերակա հանրային շահի գաղափարը:</p>
5	<p>Ար.- Իսկ եթե հողատարածքն անհրաժեշտ է ճանապարհ կառուցելու համար, իսկ մարդն օրինակ՝ ավտոտնակ ունի կամ մեքենայով բակ մտնելու ճանապարհը վերցնում էք, ինչպե՞ս էք վերականգնելու այդ նույն տարածքը:</p>	<p>Բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումը հիմք է հանդիսանում գույքի օտարման համար: Ընդ որում, եթե որևէ մեկի հողատարածքը ճանաչվում է բացառիկ գերակա հանրային շահ, ապա այդ մարդուն անմիջապես ծանուցում է ուղարկվում փոստով, որին կցված է լինում համապատասխան տեղեկատվական թերթիկ:</p>
6	<p>Իգ.-Իսկ եթե թոշակառու է և արձանագրության մեջ առկա</p>	<p>Մասնագետները կարդում են, ներկայացնում ու բացատրում են, որից հետո միայն ստորագրվում է: Այնուամենայնիվ, բնակիչների ուշադրությունը շատ կարևոր է:</p>

	տեղեկատվությունը կամ սխալները չի կարող նկատել, ինչ է արվում:	
7	Ար.-Եթե ստորագրում եմ արձանագրությունը, արդյո՞ք դա նշանակում է, որ ես արդեն համաձայն եմ, որ իրականացվեն այդ աշխատանքները:	Ընդհանուր առմամբ՝ այո: Բայց արձանագրության ստորագրման կարևորությունը կայանաում է նրանում, որ դրանում նկարագրված ամեն ինչ հիմք է հանդիսանում փոխհատուցման արժեքի հաշվարկման համար:
8	Իգ.- Իսկ գրանցվածները ինչ-որ կապ ունե՞ն օտարման հետ:	Ոչ: Օտարման արդյունքում փոխհատուցում տրվում է միայն այն մարդկանց, ովքեր այդ գույքի օրինական սեփականատերերն են հանդիսանում և ունեն սեփականության վկայականներ: Բայց Ասիական բանկի քաղաքականության համաձայն՝ հողօգտագործողը նույնպես փոխհատուցում է ստանում՝ ներառյալ վարձակալի կողմից կատարված բարելավումների համար:
9	Իգ. - Ծառերը կկտրեն ու կգնան, իսկ գյուղացին ինչ պետք է անի:	Ծառերի ու մշակաբույսերի գնահատման մեխանիզմները տարբերվում են: Օրինակ, 4 տարեկան խնձորենու պարագայում փոխհատուցվում է 4 տարվա բերքատվության արժեքի չափով, այսինքն՝ այն տարիների համար, ինչքան հարկավոր է, որ մարդը նոր խնձորենի տնկի և բերք ստանա:
10	Ար.-Ենթադրենք ճանապարհի լայնացման համար անհրաժեշտ է կտրել ու վերցնել մեկ մետր, որի հետևանքով շինությունը կարող է վնասվել: Ո՞վ է կատարում վերականգնման աշխատանքները:	Մասնակի ազդեցության պարագայում վերցվում է ամբողջ շինությունը, բայց եթե տնօրինողը ցանկություն է հայտնում տրամադրել մի մասը, իսկ մնացածը՝ վերականգնել և օգտագործել, ապա ինժեներները գնահատում են վերջինիս օգտագործման հնարավորությունը անվտանգության տեսանկյունից և փոխհատուցվում է վերանորոգման համար անհրաժեշտ ծախսերը:

11	<p>Ար. – Իսկ մարդու մշտական ճանապարհը փակելու դեպքում ինչպիսի՞ լուծումներ եք առաջարկում: Օրինակ, ըստ նախագծի իմ մեքենայի ճանապարհը դուրս է գալիս, ինչպես ենք մուտք գործելու բակ:</p>	<p>Ձեր դեպքը մասնագետների կողմից անհապաղ կուսումնասիրվի: Եթե կան շինություններ, որոնք ներկայում ունեն օրինական մուտք, ապա ծրագիրը պարտավոր է այդ օրինական մուտքը նույնությամբ վերականգնել: Հնարավոր է, որ նախագծով այլ մուտք է նախատեսվել, որը կվերանորոգվի և կհանձնվի սեփականատիրոջը:</p>
12	<p>Իգ.-Արդյո՞ք ապահովվելու է ճանապարհի 9 մետր լայնությունը: Ուզում եմ հասկանալ, թե ինչքանով է հավանական, որ մեր տարածքն ազդեցության կենթարկվի:</p>	<p>Կարծես թե ոչ բոլոր տեղերում է հնարավոր դա ապահովել: Բոլոր դեպքերն առանձին կուսումնասիրվեն:</p>
13	<p>Ար.-Եթե ճանապարհը սարքվում է, ասֆալտապատվում է, բայց դրա տակով ջրի խողովակ է անցնում: Ինչպես է կարգավորվում այդ խնդիրը:</p>	<p>Ծրագիրը բացի բուն շինարարությունից նախատեսում է նաև բոլոր կոմունիկացիաների տեղափոխում, այսինքն՝ ճանապարհաշինությանը խոչընդոտող բոլոր ենթակառուցվածքները տեղափոխվում են:</p>
14	<p>Իգ.-Որքա՞ն ժամանակահատվածում է պլանավորվում իրականացնել այդ աշխատանքները:</p>	<p>Մոտ 15 օրից նախատեսվում է սկսել չափագրումները, ուսումնասիրությունները: Անրաժեշտ է աշխատել հնարավորինս օպերատիվ, որպեսզի շինարարական աշխատանքները շուտ մեկնարկեն: Սակայն երբեմն լինում են որոշ խոչընդոտներ, որոնք ազդում են գործընթացի արագության վրա, օրինակ՝ մարդկանց բացակայությունը: Եթե որևէ մեկը մտադրություն ունի ինչ-որ տեղ մեկնելու, ապա գործարքները կարող են իրականացվել լիազորագրով, որի ձևը կտրամադրվի:</p>
15		

	Իգ.-Բնձ հետաքրքիր է աշխատանքների կազմակերպման և իրականացման տևողությունը:	Առաջիկա մեկ ամսում կպարզվեն օտարման ենթակա հոդերը: Այդ մասին փոստով ծանուցումներ կուղարկվեն գույքի սեփականատերերին/տնօրինողներին:
16	Իգ.-Մեր փաստաթղթերն արդեն հավաքվել են:	Աշխատանքները նախատեսվում են սկսել բնակիչներին իրազեկումից հետո, որպեսզի հասկանալի լինի, թե ովքեր և ինչ նպատակով են տեղեկատվությունը ստանում, ամրագրում:
17	Ար.- Դո՞ւք եք քանդելու շինությունները:	Շինությունների քանդումը տեղի է ունենալու օտարման և փոխհատուցման գործընթացից հետո, որի հաջորդ փուլն արդեն շինարարության իրականացումն է:
18	Ար.-Փաստորեն, մինչև իմ կողմից արձանագրության ստորագրումը ոչ ոք իրավունք չունի իմ շինությունը քանդել, այնպես չէ:	Շինարարությունը չի կարող սկսվել, քանի դեռ օտարման և փոխհատուցման աշխատանքները չեն ավարտվել, որոնք իրականացվում են ստորագրված արձանագրությունների և դատարանի վճիռների հիման վրա:
19	Իգ. – Իսկ հատակագիծը մեզ տրամադրվելու է, թե՛ ոչ:	Հատակագիծը, բնականաբար, տրամադրվելու է: Յուրաքանչյուր հողի համար մշակվելու է առանձին հատակագիծ, որտեղ տեսանելի են մարդու հողն իր շինություններով և օտարման ենթակա հատվածը: Դրա վրա գրվում է նաև ազդեցության ենթակա հատվածի մասին: Հողը բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու պարագայում սեփականատիրոջը/օգտագործողին ուղարկվում է ծանուցում, որին կցվում է հատակագիծը: Օրենքը թույլ է տալիս, որ մարդն ամբողջությամբ պահանջի հողի ամբողջական օտարում, սակայն դա հնարավոր է 2 դեպքում. 1. Մնացող հատվածն շատ ավելի փոքր է օտարվող հատվածի համեմատությամբ, 2. Մնացող հատվածը հնարավոր չէ օգտագործել իր գործառնական կամ տնտեսական նշանակությամբ: Նման պահանջ ներկայացնելու դեպքում անհրաժեշտ են համապատասխան հիմնավորումներ: Նման

		<p>դիմումները քննության են ենթարկվում 15 օրվա ընթացքում և ներկայացվում են որոշումները: Այդ պահանջը մարդն իրավունք ունի ներկայացնել գերակա հանրային շահ ճանաչելու որոշումն ստանալուց հետո երկամսյա ժամկետում, իսկ ուշացնելու դեպքում նման դիմումները քննության ենթակա չեն՝ ըստ օրենքի: Ծանուցման տեղեկատվական թերթիկում ամեն ինչ մանրամասն ներկայացված է:</p>
Ալավերդի, Աքորի		
20	<p>Ար.-Մեր պատը պե՞տք է քանդվի մի 3-4 մետր:</p>	<p>Ուսումնասիրություն է իրականացվելու, որի նպատակն է պարզել, թե ինչ պետք է քանդվի, ինչքան պետք է քանդվի և այլն: Որոշ առանձնահատուկ դեպքեր կարող է այսօր ինժեները նայել, սակայն անհրաժեշտ է ուսումնասիրել ու տեղեկատվությունը փաստացի արձանագրել: Նախագծի հիման վրա է որոշվում, թե որ հատվածը պետք է ազդեցության ենթարկվի:</p>
21	<p>Իգ.-Ինչո՞ւ հիմա չեք կարող ասել, թե ինչն է օտարվելու:</p>	<p>Հիմա հնարավոր չէ ստույգ ասել: Հնարավոր է քարտեզով նայել և որոշել, որ տվյալ հողատարածքն անհրաժեշտ է օգտագործել ճանապարհի կառուցման համար: Բայց տեղում մասնագետների դիտարկման ու չափագրման արդյունքում կարող է այդպես չլինել ու որոշակի շեղումնր ստացվեն: Հետևաբար՝ հնարավոր կլինի ստույգ տեղեկատվություն տրամադրել հողատարածքի սեփականատիրոջը կամ օգտագործողին ուսումնասիրությունից և տվյալների արձանագրումից հետո:</p>
22	<p>Ար.-Որքա՞ն ժամանակից կլիմանանք հստակ ամեն ինչ:</p>	<p>Առաջիկա 10 օրում նախատեսվում է սկսել չափագրման աշխատանքները, որը հնարավոր է ավարտել մեկ ամսվա ընթացքում: Դրանից հետո յուրաքանչյուրի դեպքին առանձին անդրադարձ կկատարվի:</p>
23		

	<p>Ար.-Ես աշխատանքներ ունեմ անելու, բայց մեկ ամիս ստիպված պետք է դադարեցնեմ դրանք ու սպասեմ: Հնարավոր է, որ անիմաստ աշխատանք եմ անում:</p>	<p>Ծրագրի շրջանակներում գոյություն ունի կասեցման ժամանակահատված, ինչը նշանակում է, որ որոշակի պահից սկսած ցանկացած բարելավում փոխհատուցման ենթակա չի լինելու: Այդ պահն արձանագրության ստորագրման պահն է, այսինքն՝ եթե այդ պահին արված է վերանորոգման աշխատանքներ, ապա փոխհատուցում տրվելու է նաև վերանորոգման աշխատանքների համար, իսկ դրանից հետո ներառված ծախսը փոխհատուցման ենթակա չէ:</p> <p>Ինչ վերաբերում է հողատարածքում իրականացվող աշխատանքներին, ապա մասնագետներն կփորձեն առաջինը հենց տվյալ հատվածն ուսումնասիրեն և պարզեն տվյալ տարածքի ազդեցության հնարավորությունը: Արդյունքում արդեն կորոշեք, թե ինչքանով է նպատակահարմար շարունակել կամ դադարեցնել տվյալ տարածքում Ձեր կողմից իրականացվող աշխատանքները:</p>
24	<p>Ար.-Երբ խոսվում է վերականգնման կամ վերակառուցման մասին, ապա ես հասկանում եմ, որ շինությունը մի ուրիշ տեղ կառուցվելու է: Ո՞վ է տրամադրելու այդ մի ուրիշ տեղը: Եթե շենքի արժեքը տրամադրվում է, ապա որտե՞ղ է այդ մարդը շինությունը կառուցելու: Մենք հնարավոր է տուն ենք ուզում Ալավերդու կենտրոնում:</p>	<p>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կանխիկ փոխհատուցում գույքի համար: Ստացված գումարով կարելի է ձեռք բերել Ալավերդու կենտրոնում վաճառվող որևէ շինություն:</p>
25	<p>Ար.-Ենթադրենք մարդը կենտրոնում ունի շինություն, որը բիզնես նպատակներով օգտագործելու է: Ու հնարավոր է ճանապարհը սարքվել է այդ շինությունից մեկ մետր հեռավորության վրա ու մուտքը</p>	<p>Նման տարբերակ չի կարող լինել, որովհետև բոլոր բիզնես շինությունները, որոնք օրինական մուտք են ունեցել մինչև ճանապարհի կառուցումը, ապա ճանապարհի կառուցման արդյունքում որևէ խոչընդոտի առկայություն բացառվում է, այսինքն՝ շինությունը նորից պետք է ունենա օրինական մուտք: Դա ապահովվում է ծրագրի շրջանակներում:</p>

	խոչընդոտում է, ինչպե՞ս է կարգավորվելու այդ խնդիրը:	
26	Ար.-Ենթադրենք շենքի բակում բիզնես գործունեություն է ծավալվում ու եթե առանց շենքի բակն օտարվում է ճանապարհի կառուցման նպատակով, ապա շենքն իր նշանակությունը կորցնում է: Ի՞նչ ենք անելու:	Հողամասի, շենքի և այլն գույքի նպատակային նշանակության կորստի դեպքում որոշակի նորմեր կան և դրանք դիտարկվում են ծրագրի շրջանակներում:
27	Ար.-Արդյո՞ք գույքի գործառնական նշանակության որոշման հետ կապված քաջքշուկներ չեն առաջանալու ու մեզ չեն փորձելու համոզել:	15-օրյա ժամկետում հողատարածք ձեռքբերողը քննարկում է սեփականատիրոջ դիմումը:
28	Իգ.-Մենք ունենք ավտոտնակ ու այգի: Չգիտեմ, թե ճանապարհին ինչպես է անցնելու, բայց ես իմ հողամասը ջրում եմ ճանապարհի ջրով: Նման հողամասերը շատ են ու եթե մեկ կամ երկու տարի տևեց շինարարությունը, ապա բոլոր հողամասերը կչորանան:	Բացի բուն շինարարությունից ծրագիրը ենթադրում է ճանապարհին մոտ գտնվող բոլոր ենթակառուցվածքների վերականգնում:
29	Ար.-Երկու տարի անց ենթակառուցվածքների վերականգնումն այլևս պետք չի լինի:	Շինարարության իրականացման ժամանակ հնարավորինս ամեն ինչ արվում է, որ մարդկանց համար անհրաժեշտ ենթակառուցվածքներին, թեկուզ ժամանակավորապես,

		ինչ-որ այլընտրանքային տարբերակ առաջարկվի: Շինարարները նմանատիպ բոլոր խնդիրները դիտարկում և լուծումներ են առաջարկում:
30	Իգ.-Սա առաջին դեպքը չէ: Մի անգամ էլ ճանապարհները մաքրեցին ու մեր ոռոգման ջուրը չապահովեցին: Տարածքի տղամարդիկ սեփական միջոցներով, ուժերով նորից սարքեցին: Մեզ ոչ ոք չօգնեց, նույնն այս դեպքում է լինելու:	Ծրագրի շրջանակներում ամեն ինչ արվելու է, որպեսզի խնդրին լուծում տրվի:
N	Այգեհատ	
1	Ար. – Հողի և շինության սեփականատերը ես չեմ, հայրիկիս անունով է:	Առաջիկայում նախատեսվում է իրականացնել գնահատում՝ պարզելու, թե հողատարածքի որ հատվածն է ազդեցության ենթարկվում կամ արդյոք շինությունն օտարման ենթակա է:
2	Ար. – Իսկ եթե անհայտ են սեփականատերերը, ի՞նչ ենք անում:	Եթե ոչ մի կերպ հնարավոր չէ գտնել սեփականատերերին, ապա ստիպված սկսում է դատական գործընթաց, որը մի փոքր երկար է տևում:
3	Ար. – Ինչքա՞ն է նախատեսվում ճանապարհի կողքերից լայնացումը:	Տարբեր հատվածներում լայնացումը տարբեր կարող է լինել, ֆիքսված չէ: Առկա է նվազագույն չափը՝ 8.20 մետր, բայց լայնությունն առհասարակ կախված է տարածքի առանձնահատկություններից:
N	Հաղպատ	
1	Ար. – Որքա՞ն է ճանապարհի լայնությունը:	

		Մովորաբար ֆիքսվում է ճանապարհի կառուցման ինչ-որ լայնություն, բայց քանի որ սա գոյություն ունեցող ճանապարհի վերակառուցում է, ապա կախված է տեղանքից: Օրինակ, գետի առկայությունը խոչընդոտ է նախատեսված լայնությամբ ճանապարհը կառուցելու համար: Կա նվազագույն լայնություն, բայց տարբեր տեղերում տարբեր է լայնությունը:
2	Ար. – Իսկ ե՞րբ են սկսվելու աշխատանքները:	Անհրաժեշտ է կատարել բոլոր ուսումնասիրությունները, չափագրումները, տրամադրել փոխհատուցումներ ու դրանից հետո միայն կմեկնարկի շինարարությունը:
3	Ար. – Իսկ որքա՞ն է ծրագրի տևողությունը:	Ծրագիրը ժամկետ ունի, բայց ծրագրի ընթացքի վրա կարող են ազդել տարբեր գործոններ՝ դանդաղեցնելով կամ արագացնելով աշխատանքները: Օրինակ, որևէ սեփականատիրոջ բացակայության դեպքում հնարավոր չէ պայմանագիր կնքել, ինչի հետևանքով տարբեր ընթացակարգեր են առաջ գալիս, որոնք ժամանակատար են և կարող են խոչընդոտել շինարարական աշխատանքները սկսելուն: Այնուամենայնիվ, ծրագիրը նախատեսվում է իրականացնել հնարավորինս սեղմ ժամկետներում:
4	Ար. – Իսկ շինարարական աշխատանքների պատճառով հնարավո՞ր է, որ ճանապարհը փակվի:	Երթևեկության պայմանների փոփոխություն է նախատեսվում, հետևաբար՝ երթևեկության ամբողջական դադարեցում չի լինի: Ճանապարհը փակվում է վատագույն դեպքում, միշտ երթևեկելու հնարավորություն է տրվում:
5	Ար. – Շինարարության հետևանքով կարող են տուժել հյուրանոցները, զբոսաշրջիկներն սկսում են ավելի քիչ այցելել: Երբ ճանապարհը քանդեն, ապա տուրիստական ավտոբուսներն այլևս չեն կարող երթևեկել:	Շինարարական աշխատանքներն այնպես պետք է կազմակերպվեն, որ հնարավորինս նվազեցվի այդ ազդեցությունների աստիճանը: Անուղղակի ազդեցությունների դեպքում նախատեսվում են իրականացնել որոշակի միջոցառումներ: Բուն շինարարական աշխատանքները կազմակերպելիս հաշվի է առնվում սեզոնային գործոնը:

6	<p>Ար. - Հաղպատ համայնքում ունեն 25 տարով վարձակալված հողամաս մոտ 1 հա, որը սեփականացնելը կարժենա մոտ 2 միլիոն դրամ, իսկ 5 տարվա համար արդեն վճարել են: Հիմա թողնեմ վարձակալությամբ, թե՞ փորձեմ սեփականաշնորհել:</p>	<p>Շատ կարևոր է, թե որքան հատվածն է օտարվում: Անհրաժեշտ է հաշվի առնել սեփականաշնորհման նպատակահարմարությունը, այսինքն՝ եթե փոքր հատված է ենթարկվում օտարման, ապա այդ դեպքում այդքան էլ նպատակահարմար չէ սեփականաշնորհել: Մասնագետները կարող են հաշվարկել և խորհրդատվություն տրամադրել այդ հարցի վերաբերյալ:</p>
7	<p>Ար. – Այս տարածքում ես ունեմ հողատարածքներ, որոնք ինչպես սեփականաշնորհված են, այնպես էլ վարձակալված են: Կ'ա արդյոք նախագիծ, որի հիման վրա ես կարող եմ հասկանալ, թե իմ գույքի որ հատվածն է ազդեցության ենթարկվում:</p>	<p>Կատարվելու են գույքերի գնահատման աշխատանքներ, որոնց հիման վրա հստակեցվելու են օտարման ենթակա հողատարածքները, կազմվելու են արձանագրություններ: Նախագիծը հաստատվելու է ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի կողմից: Դրանից հետո սեփականատերերին ծանուցումներ կուղարկվեն, որոնց կցված կլինեն հատակածերը, այսինքն՝ ազդեցության ենթակա հատվածները և կսկսվի փոխհատուցումների տրամադրումը:</p> <p>Այսինքն, ճշգրտումներից հետո կարող եք հստակ ինֆորմացիա ստանալ ինչպես ազդեցության հատվածների, այնպես էլ փոխհատուցման չափի մասին:</p>
8	<p>Ար. – Փոխհատուցման չափն ինչպե՞ս է հաշվարկվում:</p>	<p>Քանի որ ծրագիրը նախատեսում է շուկայական արժեք կամ կադաստրային արժեք, ապա վերցվում է ավելի բարձր արժեքը: Ճամփեզրի հողամասերի շուկայական արժեքն ավելի բարձր է և դրան գումարվում է 15 տոկոսը: Հաշվի է առնվում նաև հողամասերի գործառնական նշանակությունը: Հետազոտությունների ավարտից հետո առավել հստակ կլինի և մանրամասն տեղեկատվություն կտրամադրվի հաշվարկների ընթացքում կիրառվող ցուցանիշների մասին:</p>
9		

	Ար. – Իսկ եթե հողը վարձակալված է համայնքից, ապա ինչպե՞ս է տրվում փոխհատուցումը:	Հողի փոխհատուցումն ստանում է համայնքը, իսկ վարձակալը ստանում է շուկայական արժեք+ինչ-որ տոկոս 25 և ավել տարով վարձակալության դեպքում:
10	Ար. – Իսկ շինությունների տեղափոխման համար փոխհատուցում տրվո՞ւմ է:	Փոխհատուցումը տրվում է գումարի տեսքով և սեփականատերը կարող է ինքնուրույն դա անել: Բացի դրանից, շինարարության ընթացքում գույքին որոշակի վնասներ պատճառելու դեպքում վերականգնվում է գույքի նախկին վիճակը:
11	Ար. – Խորհրդատվության կարիք զգալու դեպքում մարդիկ ո՞ւմ կարող են դիմել. Ձե՞զ, թե փաստաբանների կամ այլ, որպեսզի ավելի շահավետ լինի փոխհատուցումը սեփականատիրոջ համար:	Օրինակ, եթե մարդիկ ունեն փաստաթղթերի ձևակերպումների հետ կապված խնդիրներ, իրավունքները պաշտպանելու հարցեր, ապա ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրվում: Իսկ փոխհատուցումները տրամադրվում են օրենսդրության հիման վրա:
12	Ար. – Առաջարկում եմ հաջորդ հանրային լսումը գործողությունների մեկնարկից ավելի շուտ կազմակերպել և ավելի շատ մարդկանց հրավիրել, որպեսզի աշխատանքներն ավելի արագ կատարվեն:	Առաջիկայում նախատեսվում են յուրաքանչյուր սեփականատիրոջ հետ անհատական հանդիպումներ՝ տվյալները հավաքագրելու, քննարկելու վրա:
13	Ար. – Իսկ ե՞րբ կսկսվեն աշխատանքները:	Ուսումնասիրություններից հետո կմշակվի ծրագիր, որտեղ ազդեցության հատվածների մասին ամբողջական և մանրամասն ինֆորմացիան ներկայացված կլինի: Աշխատանքի ժամկետները կախված են նաև ՀՀ կառավարության կողմից որոշումների ընդունման ժամանակահատվածից:

N	Նկոց	
1	<p>Ար.-Տարածքին ծանոթ լինելով կարող եմ ասել, որ հնարավոր է այնպես անել, որ քիչ գույք օտարվի, քիչ ազդեցություն լինի: Օրինակ, իմ հողատարածքից անհաժեշտ է օտարել 2 մետր, բայց ես տեսնում եմ, որ այլ տեղից հնարավոր է վերցնել 4 մետր և իմ հատվածը թողնել ինձ:</p>	<p>Բացի ճանապարհային նախագծումից նախագծողների հիմնական նպատակներից է ազդեցությունից հնարավորինս խուսափելը, բայց հավանական է, որ որոշ տեխնիկական պատճառներով երբեմն չի հաջողվել լիովին նվազեցնել: Հանդիպման վերջում յուրաքանչյուր դեպքին առանձին անդրադարձ կկատարվի՝ հասկանալու, թե որ դեպքերում էր հնարավոր նվազեցնել ազդեցությունը: Կա փոփոխություն, որը հնարավոր չէ այլևս կատարել, քանի որ ընդհանուր նախագծի փոփոխություն է անհրաժեշտ, բայց հնարավոր է լինեն դեպքեր, որոնք ուսումնասիրելուց ու չափագրելուց հետո փոխվեն:</p>
2	<p>Ար.-Հիմնական հողատարածքները գտնվում են գետի ու ճանապարհի մեջտեղում, իսկ գյուղատնտեսական աշխատանքները կատարվում են հիմնականում ճանապարհին մոտիկ հատվածում:</p>	<p>Հողի օգտագործումը կպարզվի տեղագնություն արդյունքում:</p>
3	<p>Ար.-Վերջնական կողերը որտեղի՞ց կարող ենք ստանալ:</p>	<p>Կողերը դեռևս հստակեցված չեն և հենց այդ նպատակով էլ իրականացվում են չափագրման աշխատանքները, ինչն էլ հնարավորություն կտա հասկանալ, թե որ հողերն են ենթակա օտարման: Դրանք համեմատվելու են կադաստրային ցանկերի հետ, բացահայտվելու են անհամապատասխանությունները, ճշգրտումներ են կատարվելու, որոնց արդյունքում կձևավորվի վերջնական ցանկը: Դրան հաջորդելու են մյուս աշխատանքները, օրինակ՝ մարդահամարը և այլն:</p>
4		

	<p>Ար.-Օտարման ենթակա գույքի վկայականում հինգ հոգու անուն կա, հինգից երեքը գտնվում են ՌԴ-ում, իսկ օտարման համար նրանց ստորագրությունը հարկավոր է: Ինչպե՞ս է կարգավորվում այս հացը:</p>	<p>Շատ հաճախ ձեռք է բերվում փաստացի պայմանավորվածություն, բայց հանկարծ փաստաթղթային փուլում առաջ են գալիս խնդիրներ: Բացակա սեփականատերերից պահանջվում է լիազորագիր՝ գործարքն իրականացնելու համար: Լիազորագրի բացակայության դեպքում գործընթացը հայտվում է փակուղում: Ընթացակարգը ենթադրում է օտարման պայմանագրի ներկայացում բոլոր սեփականատերերին</p>
5	<p>Ար.-Իսկ ինչպե՞ս ենք իմանալու, թե սեփականատերերն ու՞րքե՞ր են:</p>	<p>Օտարման պայմանագրի առկայության դեպքում դրանք ուղարկվում են սեփականատերերին: Երեք ամսվա ընթացքում անհրաժեշտ է պայմանագիրը կնքել, իսկ ժամկետը խախտելու հետևանքով օտարման գործընթացը չսկսելու դեպքում հարցը ներկայացվում է դատական կարգով լուծման:</p>
6	<p>Ար. – Իսկ եթե սեփականտերը համաձայն չէ, ի՞նչ է լինում:</p>	<p>Այդ դեպքում նույնպես դատական կարգով օտարման գործընթաց է սկսվում: Օտարման գործընթացում դատարանի հիմնական ֆունկցիան անհամաձայնության հարցի վերաբերյալ որոշում կայացնելն է: Եթե դատարանը որոշում է, որ փոխհատուցման չափը սխալ է հաշվարկվել, ապա այդ որոշման հիման վրա փոխհատուցման չափն ավելացվում է:</p>
7	<p>Ար. – Իսկ համասեփականատիրության ժամանակ առանձի՞ն է փոխհատուցվում գումարը:</p>	<p>Գումարը հաշվարկվում է ընդհանուր, բայց փոխհատուցումն իրականացվում է՝ ըստ համասեփականատերերի նախընտրության: Բոլորի համաձայնության դեպքում կարող է փոխանցվել որևէ մեկի հաշվեհամարին, կամ էլ առանձին-առանձին: Փոխհատուցման համար անհրաժեշտ հաշվեհամարները բացվում են ծրագրի շրջանակներում, եթե իհարկե սեփականատերերը չունեն հաշվեհամար:</p>
8		

	Ար.-Եթե համասեփականատերեից մեկը նպաստառու է, ապա ինչպե՞ս է հաշվարկվում:	Խոցելի է համարվում տնային տնտեսությունը և հաշվարկներն իրականացվում են տնային տնտեսության համար:
9	Ար.-Երբ են սկսվելու շինարարական աշխատանքները:	Օտարման գործընթացն արդյունավետ իրականացնելուց հետո:
10	Ար.-Իսկ ճանապարհը փակվելո՞ւ է աշխատանքների կատարման ժամանակ:	Շինարարության ընթացքում արվում է ամեն ինչ՝ հնարավորինս քիչ անհանգստություն պատճառելու համար: Եթե փակվում է ճանապարհը շինարարության ընթացքում, ապա երկու տարբերակ կա. 1. պետք է ոնենալ այլընտրանքային ճանապարհ, 2. ճանապարհի փակում պետք է չափազանց կարճ ժամանակով տեղի ունենա: Շատ բացառիկ դեպքերում է ամբողջությամբ ճանապարհը փակվում: Օրինակ, թունելների դեպքում: Այստեղ նման խնդիր չկա և հնարավոր է, օրինակ, ճանապարհի աջ կողմում աշխատանքներ կատարել, իսկ ձախում՝ ապահովել երթևեկության ընթացքը, հատկապես այլընտրանքային ճանապարհի բացակայության պայմաններում:
11	Ար. – Արդյո՞ք մինչև 2019թ. կավարտեն մյուս հատվածը:	Մյուս հատվածն ավելի արագ կավարտեն, քանի որ արդեն սկսել են ասֆալտապատման աշխատանքները:
12	Ար. – Սա էլ 2018թ. է նախատեսվում սկսել:	Նախատեսվում է մինչև 2017թ. վերջ հողօտարման գործընթացները ավարտել, բայց քանի որ ավարտելուց հետո ձմեռ է, ապա մի քիչ դժվարություններ են ի հայտ գալիս:
13		Ծրագրի իրականացումն իր մեջ ներառում է նաև ճանապարհին հարակից բոլոր ենթակառուցվածքների տեղափոխում, իսկ հետո՝ վարականգնում: Ճանապարհը ոչ միայն

	Ար. – Ընդհանուր ջրագիծն այս պահին փողոցի կողմում է: Այդ խնդիրն ինչպե՞ս է լուծվելու:	աջ և ձախ կողմերից լայնանում է, այլ նաև որոշակի հատվածներում բարձրանում և իջնում է, որպեսզի թեքության աստիճանն էլ որոշակի նորմերին համապատասխան լինի: Վանաձորից Թումանյան ընկած հատվածում իջեցնելու և բարձրացնելու հատվածում նորից փորել են, որ խողովակը դուրս չմնա:
14	Ար.-Այստեղ ճանապարհի լայնությունը նո՞ւյնն է մնացել:	Մոտավորապես 7 մետրն է պահվել, բայց տեղեր կան, որ անհնար է ապահովել, քանի որ մի կողմից գետն է, իսկ մյուս կողմից՝ սարը:
15	Ար.-Այս պահին ինչքա՞ն է:	Տեղեր կան, որ շատ է լայնանում: Լայնացման արդյունքում կարող է մայթ ավելանալ:
16	Ար.-Մայթի լայնությունը որքա՞ն է:	Փամբակում սարքել են, մոտ 1 մետր է: Նախագծի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կտրամադրվի ուսումնասիրություններից ու չափագրման աշխատանքներից հետո:
17	Ար.-Իսկ մասնագետները մեզ հանդիպելո՞ւ են:	Բոլոր մասնագետները, փորձագետներն այցելելուց առաջ նախապես կտեղեկացնեն ու կպայմանավորվեն նախատեսվող այցի համար: Շատ կարևոր է, որ բոլոր սեփականատերերը ներկա լինեն, քանի որ նկարագրության արձանագրության մեջ ֆիքսված տեղեկատվությունը պետք է հավաքագրված լինի սեփականատիրոջ հետ համատեղ՝ անճշտություններից և անհամաձայնություններից խուսափելու համար:
18	Ար. – Վանաձորի հատվածում շատ են փոսերը, որոնց հետևանքով վնասվում են մեքենաները, վթարներ են տեղի ունենում: Հնարավոր չե՞ փոսալցման աշխատանքներ	Չնայած այս հարցն անմիջական չի առնչվում մեր լիազորությունների հետ, այնուամենայնիվ՝ հանրային իրազեկման շրջանակներում մասնակիցների կողմից բարձրաձայնված բոլոր խնդիրներն արձանագրվում են;

	կատարել, թեկուզ ժամանակավոր, քանի որ անձանոթ վարորդների համար լուրջ խնդիր է, հատկապես անձրևից հետո, քանի որ փոսերը տեսանելի չեն:	
19	Ար.-Շինարարության պատճառով այս ճանապարհի շարժը դադարել է, որի հետևանքով այս ամիս փակել եմ իմ ավտովագման կետը: Ինձ հետաքրքիր է, թե ե՞րբ են կատարվելու հաշվարկները, որպեսզի փոխհատուցում տրվի:	Մոտավորապես 10 օրից չափագրողները կսկսեն աշխատանքները, քանի որ հատվածները բաժանված են ու այս հատվածի համար նախատեսված է տվյալ ժամանակացույցը: Կատարված չափագրումների հիման վրա կադաստրային քարտեզի ճշգրտումները կկատարվեն, որից հետո հստակ կլինեն ազդեցության ենթակա հողատարածքները, շինությունները, գույքը և այլն, ինչպես նաև սեփականատերերն ու օգտագործողները: Ցանկը պատրաստելուց հետո նախատեսվում է սեփականատերերի հետ անցկացնել հարցումներ՝ սոցիալ-տնտեսական բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով, ինչպես նաև կաշխատեն գյուղատնտեսները: Ուսումնասիրությունների ավարտից հետո կսկսվի շինարարությունը:
20	Ար.-Իմ 5 տարվա աշխատողն անցած ամիս հեռացել է աշխատանքից, դա հաշվի առնվելու է փոխհատուցման ժամանակ:	Փոխհատուցումները տրվում են ստորագրված արձանագրության հիման վրա, որը պարունակում է տվյալ պահին իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ստացված տեղեկատվությունը, իսկ նախկինում առկա տեղեկատվությունը չի ֆիքսվում:
21	Ար.-Աշխատողը հեռացել է հենց ճանապարհի պատճառով:	Խնդիրը կայանում է նրանում, որ դժվար է պարզել, թե կոնկրետ այդ մարդը երբ է հեռացել՝ մեկ, թե երկու ամիս առաջ:
22		

	<p>Ար.- Ֆիքսված է, գրանցված է, թե երբ է դուրս եկել:</p>	<p>Բայց աշխատանքից հեռանալու պատճառի օբյեկտիվ ներկայացման հարց կարող է առաջանալ: Բացի այդ, Ձեր բարձրացրած հարցը հողատարածքի վրա ուղղակի ազդեցություն չունի: Անուղղակի ազդեցությունների դեպքում ծրագիրը փոխհատուցում չի նախատեսում, սակայն որոշակի միջոցառումներ կարող են իրականացվել այդ ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար:</p>
<p>23</p>	<p>Ար.-Հնարավոր է, որ գյուղապետի թույլտվությամբ ճամփեզրին ծառ ենք տնկել: Դա ենթակա է փոխհատուցման:</p>	<p>Ծրագրի շրջանակներում իրականացվում է փոխհատուցում 3 խմբի մարդկանց համար. 1. սեփականատերեր, 2. վարձակալներ և 3. օրինականության ենթակա կամ ոչ ենթակա անձինք, ովքեր առանց օրինական հիմքի օգտագործում են որևէ մի հող: Վերջին խմբի մարդկանց համար նախատեսվում է տրամադրել փոխհատուցում իրենց կողմից կատարված բարելավումների համար, սակայն անհրաժեշտ է համայնքի կողմից տեղեկանք, որտեղ փաստն է արձանագրված:</p>
<p>24</p>	<p>Ար. – Իսկ եթե սեփականատերը համայնքն է, ապա ո՞վ է ստանում փոխհատուցումը հողի համար: Օրինակ, բնական անտառը, որը համայնքին է պատկանում:</p>	<p>Հողի համար փոխհատուցումը համայնքն է ստանում: Ծրագրի շրջանակներում ներառված է նաև շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատումը: Համայնքային նշանակության բնապահպանական միջավայրի համար նախատեսվում են համապատասխան միջոցառումներ: Օրինակ, ծառը կտրելու դեպքում ոչ թե փոխհատուցվում է, այլ նորից տնկվում է 1/10 հարաբերակցությամբ:</p>
<p>25</p>	<p>Ար. – Իսկ ծառի փոխհատուցման արժեքն ինչպե՞ս է հաշվարկվում:</p>	<p>Ծառը գնահատվում է իր տեսակով և բերքատվության աստիճանով: Օրինակ, 6 տարեկան խնձորենի, 10 տարեկան ծիրանենի և այլն, որոնք գնահատելու է գյուղատնտեսը սեփականատիրոջ անմիջական մասնակցությամբ: Ծառը գնահատվում է նաև ըստ սաղարթի, այսինքն՝ որոշակի օբյեկտիվ գործոններով պայմանավորված հնարավոր է, որ 10 տարեկան ծառը չի համապատասխանում չափանիշներին և գյուղատնտեսը պետք է ֆիքսի՝ որպես 6 տարեկան: Դա արվում է բերքատվության չափը գնահատելու համար:</p>

		Այնուհետև հաշվարկվում է, թե ծառը քանի տարիների ընթացքում է սկսում բերք տալ և այդ տարիների թիվը բազմապատկվում է բերքատվության ծավալով և բերքի շուկայական միջին արժեքով: Բերքի միջին արժեքի վերաբերյալ տվյալները տրամադրվում են ՀՀ պետական վիճակագրական ծառայության կողմից: Հաշվարկվում է նաև դեկորատիվ, փայտանյութ տվող ծառերի համար, որոնց համար հատուկ մեթոդաբանություն կա:
26	Ար.-Իմ հողատարածքում հնարավոր է մի քանի ծառ կա, բայց ես ծախսեր եմ կատարել հենապատ կառուցելու համար: Արդյո՞ք փոխհատուցում տրվելու է:	Հողամասում կատարված բարելավումների համար տրվում է փոխհատուցում, այդ թվում՝ հենապատի կառուցման համար: Նույնիսկ համայնքի հողի վրա կատարված բարելավման դեպքում համայնքից համապատասխան տեղեկանք է տրամադրվում և փոխհատուցումը կատարվում է բարելավում իրականացնողին:
27	Ար.-Իսկ ի՞նչ ժամանակահատվածում կարող ենք իմանալ մանրամասները:	Բոլոր գործընթացների սահուն իրականացման արդյունքում հնարավոր է տեղեկատվություն տրամադրել սեփականատերերին մոտ մեկ ամսվա ընթացքում:
N	Օձուն	
1	Ար. - Մեր բնակելի տարածքում արտադրություն է: Դա օտարման ենթակա՞ է:	Փաստացի ուսումնասիրության արդյունքում կպարզվի ազդեցության ենթարկվող հատվածն ու օտարման ենթակա գույքը: Հնարավոր է միայն հողատարածքի ինչ-որ հատվածին ձեռք տալ, սակայն շինությունը մնա:
2	Ար. – Ծառերը կտրել ենք ու հողատարածքը սարքել ենք հրապարակ: Արդյո՞ք փոխհատուցման ենթակա է:	Դա բարելավում է, որի համար փոխհատուցվում է այնքան գումար, որպեսզի հնարավոր լինի նույն բարելավումը մեկ այլ տեղ կատարել:
3		

	Ար. – Եթե բիզնես գործունեությունը հարկային դաշտում գրանցված չի գործում, ապա ինչպե՞ս է հաշվարկվում փոխհատուցումը:	Եթե բիզնեսը գործում է ապօրինի, այսինքն՝ չկա հարկային հայտարարագիր, ապա փոխհատուցումը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով նվազագույն աշխատավարձը: Եթե ձեռնարկատիրական գործունեությունը մշտապես է դադարեցվում, ապա փոխհատուցումը տրվում է 1 տարվա համար, իսկ ժամանակավորի դեպքում՝ տվյալ ժամանակահատվածի համար:
4	Ար. – Արդյո՞ք տնային տնտեսություն համարվում են նույն տանիքի տակ ապրող մարդիկ:	Տնային տնտեսության տակ հասկացվում է համատեղ բյուջեով ապրող մարդիկ:
5	Ար. – Մեր անհամաձայնությունները կամ բողոքները կլինեն հիմնականում չափումներից հետո, հա՞: Մինչև այդ ի՞նչ կարող է լինել:	Բոլոր սեփականատերերին նախապես իրազեկվում է իրենց իրավունքների մասին, որպեսզի հետագայում անհամաձայնության առկայության դեպքում կարողանան համապատասխան քայլեր ձեռնարկել: Հնարավոր է գումարային անհամաձայնություն լինի կամ համաձայնություն կա, բայց փաստաթղթերի հետ կապված խնդիրներ են ի հայտ եկել:
N	Շնորհ	
1	Ար.- Եթե մարդը համաձայնվել է, որ տարածքն օտարվի, ապա ինչո՞ւ է գերակա հանրային շահ ճանաչվում:	Պետությունը ցանկացած նպատակով չի կարող հող գնել, այսինքն՝ որոշակի դրույթներ կան, որոնց դեպքում միայն պետությունը կարող է հող ձեռք բերել: Պետության կողմից տարածք ձեռք բերելու հիմքն է գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումն է:
2	Ար. – Փոխհատուցման արժեքի հաշվարկման ժամանակ շուկայական	Նախագծում կա անշարժ գույքի մասին օրենք, որով սահմանվում է գնահատման չափորոշիչները: Բացի այդ, գոյություն ունի անշարժ գույքի գնահատման ստանդարտ, որտեղ առավել մանրամասն ներկայացվում է, թե ինչպես պետք է կատարվեն

	<p>արժեքն ո՞ւմ կողմից է որոշվելու և ի՞նչ սկզբունքներով:</p>	<p>գնահատման աշխատանքները: Գնահատման համար օգտագործվում է նաև այն տեղեկատվությունը, թե տվյալ պահին ինչ գնով են վաճառվում նմանատիպ տարածքները, գույքը և այլն: Վերցվում են նաև կադաստրային տվյալները, որոնցից առանձնացվում են կրկնվող տարբերակները, որը կոչվում է մոդա արժեք: Դրանց հիման վրա մասնագետները գնահատում և հաշվարկում են փոխհատուցման արժեքը:</p>
3	<p>Ար. – Իսկ հնարավոր չէ՞, որ կադաստրային արժեքներից դուրս մնացած տարբերակներն էլ իրական լինեն:</p>	<p>Հնարավոր է, բայց դրա հավանականությունը քչանում է: Հնարավոր է նաև, որ փողոցի եզրի հողամասի տվյալ չգտնվի, այլ մի փոքր ներսի հատվածում լինի: Բնականաբար, փողոցի եզրինն ավելի թանկ արժեք ունի և այդ ժամանակ գնահատողն օգտագործում է ճշգրտող գործակիցներ:</p>
4	<p>Ար. – Ճանապարհի լայնությունն ինչքա՞ն է նախատեսվում:</p>	<p>Տեղանքն այնպիսին է, որ լայնության չափը ստանդարտ չէ:</p>
5	<p>Ար. Բոլոր ճանապարհները տրանսպորտի նախարարության հսկողության տա՞կ են: Հարցը նրանում է, որ 2002 թ. կադաստրային չափագրումներ են կատարվել, որոնցում կան անճշտություններ և ես հիմա փաստի առաջ եմ կանգնած. իմ մուտքը փակել են, որի մասին նոր եմ տեղեկացել:</p>	<p>Միջպետական ճանապարհներն են ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վերահսկողության ներքո: Հնարավոր է, որ կադաստրային տվյալների և առկա իրավիճակի անհամապատասխանություն լինի և հենց դրա համար էլ նախատեսվում է իրականացնել ուսումնասիրություններ, չափագրումներ, որից հետո կկատարվի օտարում և փոխհատուցում: Անհրաժեշտ է նաև սեփականատերերի ներկայությունն այդ աշխատանքների ժամանակ, որպեսզի ամեն ինչ պարզ և հասկանալի լինի:</p>

2. ՀՕՏ փաստաթղթերի հրապարակումը

197. Վերջնական ՀՕՏ-ն հաստատվելուց հետո կիրառարկվի ԱԶԲ-ի կայքում: Այն կթարգմանվի հայերեն և կտեղադրվի ՏԿՏՏՆ-ի և ՏՕԻԿ-ի կայքերում: Վերջնական ՀՕՏ-ի մեկ օրինակը հասանելի կլինի նաև մարզպետարանում և ազդեցության ենթակա բոլոր համայնքների համայնքապետարաններում:

198. Ծրագրի վերջնական ՀՕՏ-ի տեղեկատվական ձեռնարկը, որը կամփոփի ազդեցությունները, իրականացման միջոցառումները, ՀՕՏ-ի փոխհատուցման քաղաքականությունը և բողոքների լուծման մեխանիզմը, կտրամադրվի բոլոր ԱԵԱ-ներին վերջնական ՀՕՏ-ի հաստատումից հետո վերջինիս իրականացման ընթացքում:

199. ՀՀ կառավարության կողմից ՀՕՏ-ի հաստատումից, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ՏՕԻԿ-ը կնախաձեռնի ծանուցման հետևյալ ընթացակարգը՝ օրենսդրության համաձայն.

- i. ԱԵԱ-ներին կուղարկվեն ծանուցագրեր ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշման ընդունման մասին՝ կից ներկայացնելով հողի հատակագիծը՝ ազդեցության ենթարկվող մասի նշումով,
- ii. ԱԵԱ-ներին կուղարկվի գույքի նկարագրության ստորագրված (կամ չստորագրված) արձանագրության մեկ օրինակը:
- iii. ԱԵԱ-ներին կուղարկվի փոխհատուցման գումարների մասին պայմանագրի նախագծերը/ծանուցումները: ԱԵԱ-ները պայմանագրի նախագծում պետք է լրացնեն իրենց բանկային վավերապայմանները, ստուգեն նրանում առկա տվյալները, ինչպես նաև ներկայացնեն առաջարկություններ կամ առարկություններ պայմանագրի վերաբերյալ՝ պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 2 շաբաթվա ընթացքում²⁹: Հիմք ընդունելով պայմանագրի նախագծում ԱԵԱ-ների կողմից թարմացված լրացուցիչ տվյալները՝ ՏՕԻԿ-ը կթարմացնի և կվերջնականացնի վերջնական օտարման պայմանագրերը:

200. Ծանուցագրերի հետ միասին հատուկ տեղեկատվական թերթիկներ կուղարկվեն ԱԵԱ-ներին՝ վերջիններիս իրավունքների, պարտականությունների և իրականացման փուլի ընթացակարգերի նկարագրությամբ:

201. ՏՕԻԿ-ը ԱԵԱ-ներին կներկայացնի վերջնական պայմանագրերը և կստանա ԱԵԱ-ների ստորագրությունը՝ նոտարի միջոցով փոխհատուցումը փոխանցելու համար: ՏՕԻԿ-ը ԱԵԱ-ի հետ պետք է ստորագրի վերջնական պայմանագիրը պայմանագրի նախագծի ծանուցումից հետո՝ 3 ամսվա ընթացքում, հակառակ դեպքում ՏՕԻԿ-ը կնախաձեռնի դատական կարգով օտարման գործընթաց՝ օրենքով սահմանված կարգով:

²⁹ Տե՛ս՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը

Ի. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

202. Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (ՏԿՏՏՆ) Ծրագրի գործադիր մարմինն է (ԳՄ), իսկ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը (ՏԾԻԿ) հանդիսանում է Իրականացնող գործակալություն (ԻԳ): ՏԾԻԿ-ն ունի Սոցիալական ազդեցությունների կառավարման ծառայություն՝ բաղկացած 3 մասնագետից, ինչպես նաև իրավաբանական ծառայություն (այսուհետ՝ Տարաբնակեցման համակարգման թիմ (ՏՀԹ)).

- (i) Սոցիալական ազդեցությունների կառավարման ծառայության ղեկավար,
- (ii) Սոցիալական զարգացման և տարաբնակեցման մասնագետ,
- (iii) Գլխավոր իրավախորհրդատու, բողոքների և վեճերի կառավարման մասնագետ,
- (iv) Բնապահպանության և սոցիալական հարցերի մասնագետ:

203. ՏԾԻԿ-ի կազմում ՏՀԹ-ն ունի համապատասխան մասնագետներ՝ ՀՕՏՕ-ն իրականացնելու համար: Բացի այդ, ՏԾԻԿ-ի կողմից մոբիլիզացվել է Սոցիալական երաշխիքների աջակցության խորհրդատուն (ՄԵԱԽ)՝ ՀՕՏՕ-ի մշակման և իրականացման նպատակով: ՄԵԱԽ-ը ՏՀԹ-ի անմիջական ղեկավարությամբ կպատրաստի ՀՕՏՕ-ն՝ ՀՕՏՕ-ով և ՀՕՏՇ-ով սահմանված քաղաքականության և ընթացակարգերի հիման վրա: ՀՕՏՇ-ում նկարագրված փոխհատուցման/վերականգնման առաջադրանքները ներառում են հստակ գործընթացներ և գործողություններ, որոնց իրականացումը ենթադրում է տարբեր կառույցների ներգրավումը:

204. Մի քանի այլ պետական գործակալություններ իրենց կարևոր դերակատարումը կունենան ՀՕՏՕ-ի իրականացման գործում: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և իր տարածքային գրասենյակները պատասխանատու կլինեն անշարժ գույքի սեփականության կարգավիճակի և սեփականության գրանցման համար: ՀՕՏՕ-ի սահուն իրականացման համար սերտորեն կներգրավվեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Վերոնշյալ որոշ հիմնական կառույցների դերը նկարագրվում է ստորև:

1. ՏԿՏՏՆ/ՏԾԻԿ

205. ՏԿՏՏՆ-ն կրում է ամբողջական պատասխանատվություն Ծրագրի համար: Դա ներառում է ՀՕՏ-ի բոլոր առաջադրանքների նախապատրաստումը, իրականացումը, ֆինանսավորումը, ինչպես նաև գործակալությունների փոխհամագործակցության և փոխկապվածության համակարգումը: ՏԿՏՏՆ-ն կիրականացնի իր պարտավորությունները ՏԾԻԿ-ի միջոցով: ՏԾԻԿ-ը պատասխանատու կլինի ՀՕՏ-ի բոլոր առաջադրանքների պլանավորման և իրականացման համար (մանրամասն գործողությունների համար տե՛ս աղյուսակ H1-ը):

206. ՄԵԱԽ-ը կազմավորվել է ՏԾԻԿ-ի կողմից և բաղկացած է հետևյալ մասնագետներից՝ թիմի ղեկավար, իրավաբաններ, սոցիոլոգ/սոցիալական զարգացման մասնագետներ, դաշտային աշխատանքները համակարգող և տվյալների բազայի մասնագետ՝ ՀՕՏՕ իրականացման համար: ՄԵԱԽ-ը կսկսի ՀՕՏՕ-ի իրականացումը ԱԶԲ-ի և ՏԿՏՏՆ-ի կողմից վերջինս հաստատելուց հետո: ՄԵԱԽ-ի հիմնական առաջադրանքները մանրամասն ներկայացված են Աղյուսակ H1-ում:

2. Տեղական ինքնակառավարման մարմինները

207. Համայնքային իշխանությունները տրամադրել են տվյալներ ԱԵԱ-ների վերաբերյալ, և Ծրագիրը կշարունակի հայցել նրանց աջակցությունը ՀՕՏՕ իրականացման ընթացքում: Համայնքային իշխանություններն աջակցում էին սոցիալական հետազոտությունների իրականացմանը, հողի չափագրումներին, հողի տեսակի որոշմանը ինչպես նաև համայնքների և ԱԵԱ-ների հետ խորհրդակցությունների կազմակերպմանը: Անհրաժեշտության դեպքում նրանք կաջակցեն նաև բողոքների և այլ խնդիրների լուծման գործում: Չնայած փոխհատուցման գումարն անմիջապես կվճարվի ԱԵԱ-ների բանկային հաշվին՝ ԱԵԱ-ներին փոխհատուցումների մասին տեղեկացնելու համար կպահանջվի տեղական իշխանությունների աջակցությունը:

3. Ասիական զարգացման բանկ

208. ԱԶԲ-ն պարբերաբար կդիտարկի Ծրագիրը և ՀՕՏՕ-ի իրականացման գործընթացը՝ ԱՄԳ-ի կողմից պատրաստված ՀՕՏՕ-ի իրականացման համապատասխանության վերաբերյալ հաշվետվությունների միջոցով, ինչպես նաև կտեղեկացնի պայմանագրերի շնորհման և շինարարական աշխատանքների նախաձեռնման մասին:

4. Այլ նախարարություններ, կազմակերպություններ և գերատեսչություններ

209. Մի քանի գերատեսչություններ արդեն մասնակցել են և կմասնակցեն ՀՕՏ առաջադրանքների պատրաստմանը և իրականացմանը: Դրանցից են.

- (i) **Ֆինանսների նախարարություն.** ՀՕՏՕ-ի իրականացման համար բյուջեն Ֆինանսների նախարարության կողմից տրամադրվելու է ՏԿՏՏԼ-ին՝ ՀՕՏՕ-ի բյուջեի հիման վրա³⁰:
- (ii) **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե.** պատասխանատու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի մասին տեղեկությունը տրամադրելու համար, ինչպես նաև սեփականության իրավունքի պետական գրանցման համար:
- (iii) **Տեղական դատարաններ մարզերում.** դատական կարգով օտարման դեպքում ՏԿՏՏԼ-ն ստիպված է հիմնվել մարզերում տեղական դատարանների վրա, որոնք պատշաճ դատական կարգով պետք է ուսումնասիրեն դատական կարգով օտարման հետ կապված դեպքերը, իրականացնեն դատական լուումներ և որոշեն՝ արդյոք հողերը կարող են օտարվել և ինչ գնով:
- (iv) **Արտաքին մոնիտորինգի անհատ խորհրդատու (ԱՄԱԽ).** պատասխանատու է ՀՕՏՕ-ի իրականացման կարճաժամկետ մոնիտորինգի և Համապատասխանության հաշվետվության պատրաստման համար:

5. ՀՕՏՕ իրականացման կարողությունները

210. Տարաբնակեցման համակարգող թիմը պատշաճ կերպով համալրված է փորձառու

³⁰ ՏԿՏՏԼ-ն արդեն պահանջել և ստացել է ՀՕՏՕ-ի իրականացման նախնական գնահատված բյուջեն՝ նախքան վերջնական ՀՕՏՕ-ի մշակումը:

անձնակազմով՝ Մ6 ՀՕՏ-ի իրականացման համար: ՏՕԻԿ-ի ներկայիս աշխատակազմը (ՏՀԹ), ինչպես նաև մոբիլիզացված ՄԵԱԽ-ը, ՀՕՏ իրականացման հարուստ փորձ ունեն՝ իրականացնելով «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ 2-ի և Տրանշ 3-ի, ինչպես նաև երկրում այլ նմանատիպ ծրագրերի ՀՕՏ-ները:

6. ՀՕՏ իրականացման պատասխանատու մարմինների պարտականությունները

211. ՀՕՏ իրականացման գործընթացում ներգրավված տարբեր մարմինների պարտականությունները ներկայացված են Աղյուսակ H1-ում.

Աղյուսակ H1. ՀՕՏ իրականացման գործընթացում ներգրավված մարմինների դերը և պարտականությունները

Պատասխանատու մարմին	Գործունեություն
ՏԿՏՆ	<ul style="list-style-type: none"> Ամբողջական պատասխանատվություն Ծրագրի համար, ՀՕՏ-ի բոլոր առաջադրանքների իրականացում և ֆինանսավորում, Գործակալությունների փոխհամագործակցության և փոխկապվածության համակարգում:
ՀՀ ֆինանսների նախարարություն	<ul style="list-style-type: none"> ՀՕՏ-ի իրականացման համար բյուջեի տրամադրում:
ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	<ul style="list-style-type: none"> Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի, ինչպես նաև ՀՕՏ-ով սահմանված այլ տվյալների մասին տեղեկության տրամադրում, Ուղղել կադաստրային տվյալների անհամապատասխանությունը կադաստրային ուղղումների պլանի շրջանակում:
Տեղական մարզային դատարաններ	<ul style="list-style-type: none"> Դատական կարգով օտարման դեպքերի ուսումնասիրում , Դատական լուծման անցկացում և որոշում՝ արդյոք հողերը կարող են օտարվել և ինչ գնով:
Տեղական ինքնակառավարման մարմիններ	<ul style="list-style-type: none"> Աջակցություն բողոքների լուծմանը և մասնակցություն այլ խնդիրների լուծման գործում, Աջակցություն ՏՕԻԿ-ին՝ ՀՕՏ իրականացման ընթացակարգերի և փոխհատուցումների մասին ԱԵԱ-ներին տեղեկացնելու գործում, ՀՕՏ իրականացման ընթացքում անհրաժեշտ տեղեկատվության/տեղեկանքների տրամադրում ՏՕԻԿ-ին:
ՏՕԻԿ-ՏՀԹ	<ul style="list-style-type: none"> Կադաստրի գրասենյակի և ՏԻՄ-երի հետ աշխատանքի համակարգում, Կադաստրային քարտեզների և հողատարածքների տվյալների ձեռքբերում, Աջակցության խորհրդատուներին՝ քարտեզավորման, հետազոտման և շտկման գործողություններում, Խորհրդատուների և ՏԻՄ-երի աջակցությամբ հանրային լուծման կազմակերպում և իրականացում, ՀՕՏ-ի և տեղեկատվական ձեռնարկի հրապարակում, ՀՕՏ իրականացման տարբեր փուլերում ԱԵԱ-ների ծանուցում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների, ՀՕՏ-ի իրականացման և փոխհատուցումը բաշխելու պլանավորում և կառավարում (ներառյալ՝ Օրինականացման պլանի իրականացումը),

Պատասխանատու մարմին	Գործունեություն
	<ul style="list-style-type: none"> • Դատական կարգով օտարման գործընթացների նախաձեռնում և, ըստ անհրաժեշտության, դատարանների հետ աշխատանքների համակարգում, • ՀՕՏՏ տեղեկատվական բազայի պահպանում, • Անհատական բողոքարկումները ԲԼՄ-ի միջոցով կարգավորելու հարցում աջակցություն, • Պատշաճ ներքին մոնիտորինգի և հաշվետվողականության ապահովում, • ՀՕՏՏ շտկող միջոցառումների իրականացում, եթե այդպիսիք լինեն, • Համապատասխան պետական մարմինների հետ աշխատանքի համակարգում՝ անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրելու նպատակով, • ՀՕՏՏ բյուջեի արագ տրամադրման ապահովում, • ՀՕՏ-ին վերաբերող բոլոր գործողությունների համակարգում, • Ցանկացած այլ խնդիրներ, որոնք կապված են ԱԵԱ-ների տարաբնակեցման և վերականգնման հետ:
Սոցիալական երաշխիքների աջակցության խորհրդատու (ՄԵԱԽ)	<ul style="list-style-type: none"> • Աջակցություն համայնքների ղեկավարներին և ազդեցության ենթակա այլ անձանց ՀՕՏՏ մեկնարկի, իրականացման փուլերի և ընթացակարգերի վերաբերյալ իրազեկման գործընթացում, • Օտարման պայմանագրերի և համաձայնագրերի, ուղեկցող նամակների պատրաստում՝ համաձայն Օրենքի և ՀՀ օրենսդրության պահանջների և ժամկետների, • Օտարվող սեփականության օտարման պայմանագրերի և համաձայնագրերի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի հստակեցում և հավաքագրում՝ յուրաքանչյուր հողամասի և այլ անշարժ գույքի համար, ինչպես նաև ԱԵԱ-ների կողմից դրանց ձեռքբերման և տրամադրման գործընթացի վերաբերյալ խորհրդատվություն և աջակցություն, • Աջակցություն ԱԵԱ-ներին՝ թերի կամ սխալ փաստաթղթերի ուղղման, վերականգնման կամ փոփոխման հարցում, • Թարմացված տեղեկատվության հիման վրա յուրաքանչյուր ԱԵԱ-ի համար առանձին փաթեթի նախապատրաստում՝ օտարմանն ուղղված կադաստրային և նոտարական համապատասխան գործողություններն իրականացնելու համար, • ՀՕՏՏ առկա բազայի թարմացում և ծրագրային զարգացում՝ ՀՕՏՏ իրականացման փուլում անհաժեշտ տեղեկատվության համար, • Դատական գործերի, դրանց ընթացքի, կասեցման, առկա խնդիրների և ավարտի վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում և թարմացում ՀՕՏՏ տվյալների բազայում, ինչպես նաև առաջընթացի հաշվետվությունների պատրաստում և ներկայացում ՏՕԻԿ-ին: • Մասնավոր սեփականություն հանդիսացող ընդհանուր անշարժ գույքի կազմից օտարվող մասի սահմանված կարգով բաժանման, առանձնացման և ԱԳԿ ՊԿ կողմից դրանց պետական գրանցման գործընթացի կազմակերպում, • Օժանդակություն մասնատման գործընթացից հետո կադաստրի տարածքային ստորաբաժանման գրասենյակների կողմից գրանցված

Պատասխանատու մարմին	Գործունեություն
	<p>գույքի չօտարվող հատվածների սեփականության վկայականները սեփականատերերին հաճնելու գործընթացում,</p> <ul style="list-style-type: none"> • Օժանդակություն համայնքային սեփականության օտարված հողի պետական գրանցմանը՝ ապահովելով համայնքների ղեկավարների կողմից հատակագծերի հաստատումը և պետական գրանցման համար անհրաժեշտ դիմումների և այլ հիմքերի տրամադրումը, • Օտարվող սեփականության մասով տեղական և պետական բյուջեի նկատմամբ առկա ապառքների, կոմունալ և պարտադիր վճարների մասով առկա պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ՏՕԻԿ-ին, • ԱԵԱ-ների համար բանկային հաշվեհամարների բացման գործընթացի կազմակերպում՝ ապահովելով ԱԵԱ-ներից անհրաժեշտ տվյալների ստացումը կամ փոխանցումը, • Օտարման պայմանագրերի/համաձայնագրերի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի հանձնում համապատասխան նոտարական գրասենյակներին՝ պայմանագրերի/համաձայնագրերի վավերացման կապակցությամբ նոտարական գործողություններ իրականացնելու համար, • Նոտարական գրասենյակներում ԱԵԱ-ների հետ օտարման պայմանագրի/համաձայնագրի կնքման գործընթացի կազմակերպում, • Վճարման հայտերի ներկայացում ՏՕԻԿ-ին փոխհատուցման վճարումների իրականացման նպատակով, • ՀՀ անունով իրավունքի պետական գրանցման վկայականների (կից հատակագծերով) ստացում և հանձնում ՏՕԻԿ-ին՝ պատշաճ փաստաթղթավորմամբ, • Ձեռք բերված ՀՀ պետական հողերի նպատակային նշանակության փոփոխությունների ապահովում, • Ժառանգության իրավունքի կարգավորման խնդիրներ պարունակող հողակտորների դեպքում աջակցություն ժառանգներին՝ ժառանգության բացման, ժառանգության իրավունքի վկայագրերի ստացման և դրանց պետական գրանցման հարցերի իրականացման գործում, • Կապի հաստատում արտերկրում գտնվող սեփականատերերի հետ և անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում՝ կապված լիազորագրերի ստացման հետ, • Աջակցություն ԱԵԱ-ներին անձնագրերի վավերականության ժամկետների երկարացման կամ նոր անձնագրերի ստացման հարցերում, • Օտարման պայմանագրի կնքման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների, տառասխալների ուղղման և շտկման գործընթացի կազմակերպում, • Օտարման պայմանագրի կնքման իրավական խոչընդոտների վերացմանն ուղղված ցանկացած օրինական գործողությունների իրականացում՝ համաձայն ՀՕՏԵ-ի և ՀՕՏԾ-ի,

Պատասխանատու մարմին	Գործունեություն
	<ul style="list-style-type: none"> • Տվյալ համայնքի համապատասխան ներկայացուցչի հետ միասին ԱԵԱ-ների կողմից բողոքների գրանցման ապահովում դիմումների և բողոքների գրանցամատյանում, • Բողոքների թղթային և էլեկտրոնային տարբերակների պատշաճ փաստաթղթավորում և փոխանցում ՏԾԻԿ-ին՝ աջակցելով ՏԾԻԿ-ին դրանց քննարկման և լուծման ողջ գործընթացում, • Աջակցություն ՏԾԻԿ-ին՝ Բողոքների քննման խմբի (ԲՔԽ) նիստերի կազմակերպման ու իրականացման գործընթացում, • Ներգրավվածությունը (ըստ անհրաժեշտության) ԲՔԽ նիստերին՝ որպես անդամ կամ մասնագետ, • Աջակցություն ԱԵԱ-ներին՝ իրենց բողոքները ՀՕՏՕ-ով սահմանված բողոքների լուծման մեխանիզմի միջոցով լուծելու գործընթացում, • ՀՕՏ բոլոր Շտկող միջոցառումների պլան(ներ)ի իրականացումը, որոնք կրացահայտվեն իրականացման ընթացքում, • ԱԵԱ-ների հաշվեհամարներին փոխհատուցման գումարների փոխանցման ապահովում, • ԱԵԱ-ների տեղեկացում՝ իրենց հաշվեհամարներին փոխհատուցման գումարների փոխանցման վերաբերյալ, • Փոխհատուցման գումարը ԱԵԱ-ի կողմից չստանալու կամ բողոքարկելու դեպքում յուրաքանչյուր սեփականության օտարման վերաբերյալ հայցի ներկայացում դատարան, • Որպես ՏԾԻԿ-ի ներկայացուցիչ՝ մասնակցությունը դատական գործերին դատական բոլոր ատյաններում, • Դատական ակտերի ստացում և դրանց հանձնումը ՏԾԻԿ-ին, • Սեփականության հետ կապված սեփականատիրոջ հարկային պարտավորությունների մասին տեղեկացում ԱԵԱ-ներին, հարկերի հաշվարկի կազմակերպում և տրամադրում ՏԾԻԿ-ին, • Դատական գործընթացների ընթացքի, կասեցման, խնդիրների և ավարտի մասին տեղեկատվության թարմացում ՀՕՏՕ բազայում, ինչպես նաև առաջընթացի մասին հաշվետվությունների պատրաստում և հանձնում ՏԾԻԿ-ին, • Աջակցություն ՏԾԻԿ-ին՝ պատրաստելու անհրաժեշտ փաստաթղթերը, իրականացնելու չափագրումը, կորուստների գնահատումը՝ նախագծի փոփոխության և ՀՕՏՕ լրացման ու օտարման փոփոխության դեպքերում, • ՀՕՏՕ իրականացման Ավարտական հաշվետվությունների պատրաստում, որոնք կհանդիսանան Ներքին մոնիտորինգի հաշվետվություններ:

7. Կազմակերպչական կառուցվածքը

212. Արդյունավետ կազմակերպումը կարևոր է ոչ կամավոր տարաբնակեցումը կառավարելու համար: Անհրաժեշտ է վերոնշյալ ինստիտուցիոնալ մարմինների հատուկ մասնակցությունը: ՀՕՏՕ իրականացման

I. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

213. Բողոքների լուծման մեխանիզմը պետք է հասանելի լինի ծրագրային մակարդակում, որպեսզի ԱԵԱ-ն հնարավորություն ունենա բողոքարկելու ցանկացած անախորժ որոշում, գործելակերպ կամ գործունեություն, որն առաջանում է հողի կամ այլ ակտիվների փոխհատուցման արդյունքում, կամ ծրագրին առնչվող որևէ խնդիր: Հիմնական նպատակն է տուժող կողմի հետ խորհրդակցելով տեղում լուծել տարաբնակեցման վերաբերյալ ցանկացած դժգոհություն՝ ՀՕՏՕ-ի սահուն իրականացմանը նպաստելու համար: Մյուս կարևոր խնդիրն է ժողովրդավարացնել զարգացման գործընթացը տեղական մակարդակում և ապահովել հաշվետվողականությունը ազդեցության ենթակա անձանց հանդեպ:

214. Պայմանականորեն բողոքների լուծումը իրականացվում է ԱԵԱ-ների կողմից՝ իրենց բողոքները գրավոր ներկայացնելով ՏՕԻԿ-ին ՀՕՏՕ-ի մշակման և իրականացման ընթացքում:

215. Բացի բողոքների լուծման այս սովորական ընթացակարգից, ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում և դրանից հետո ՏՕԻԿ-ը պաշտոնապես կհիմնի բողոքների լուծման մեխանիզմ: Բողոքների լուծման պաշտոնական մեխանիզմում ներգրավված կլինեն մի շարք շահագրգիռ կողմեր՝ ՏԿՏՏՆ-ն, ՏՕԻԿ-ը և ՏԻՄ-երը: Ջանքեր կգործադրվեն բողոքները համայնքային մակարդակում Բողոքի առանցքային անձի (ԲԱԱ) կամ առնվազն ՏՕԻԿ-ի մակարդակով՝ Բողոքների քննման խմբի (ԲՔԽ) օգնությամբ լուծելու համար՝ հետքերը կառնելով բոլոր կողմերի ներգրավմամբ:

216. ԲԼՄ-ի առկայության մասին ԱԵԱ-ները տեղեկացվել են ՀՕՏՕ-ի մշակման փուլում՝ հանրային լսումների ընթացքում: ՀՕՏՕ-ի հաստատումից հետո ԲԼՄ-ն ԱԵԱ-ներին կներկայացվի ՀՕՏՕ-ի տեղեկատվական ձեռնարկի միջոցով:

217. ԲԼՄ-ն կապահովի, որ տուժող կողմերի համար ողջամտության սահմանում մատչելի լինեն տեղեկատվության աղբյուրները, խորհրդատվությունն ու փորձագետները, որոնք անհրաժեշտ են բողոքների լուծման գործընթացին արդար և անաչառ պայմաններով ներգրավվելու համար: Երկու մուտքային կետերի միջոցով ազդեցության ենթակա համայնքների ձայնը լսելի կդառնա, ինչպես նաև դրանք կապահովեն ԲԼՄ-ի հասանելիությունը ԱԵԱ-ների համար: Դրանք են՝

- Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) գրասենյակները,
- Բողոքի առանցքային անձը (ԲԱԱ):

218. ԲԱԱ-ն կլինի ՏՕԻԿ/ԻԽ-ի ներկայացուցիչը: ԲԱԱ-ի հետ հանդիպումների ժամանակացույցը կհայտարարվի ՀՕՏՕ իրականացման խմբի մոբիլիզացիայի ժամանակ: Առնվազն ամսական երկու հանդիպում կկազմակերպվի ազդեցության ենթակա յուրաքանչյուր համայնքում: Համայնքներում, որտեղ բազմաթիվ խնդիրներ են առաջանում, լրացուցիչ հանդիպումների անհրաժեշտություն կառաջանա: ԲԱԱ-ն կկազմի բողոքներն ընդունելու նպատակով համայնքներում իր ներկայության ժամանակացույցը, որի մասին ԱԵԱ-ները և ԱԵՏՏ-ները կիրազեկվեն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ինչպես նաև տեղեկատվությունը կտեղադրվի հասարակական վայրերում: Մինչև ՀՕՏՕ-ի իրականացման ավարտը յուրաքանչյուր համայնքում ԲԱԱ-ի հետ հանդիպումների ժամանակացույցը կվերանայվի համապատասխանաբար:

Յուրաքանչյուր ՏԻՄ գրասենյակ պետք է նշանակի իր ներկայացուցիչը, ով պատասխանատու կլինի բողոքների/ պահանջների/ հայցերի հավաքագրման և դրանք ԲԱԱ -ին կամ անմիջապես ՏԾԻԿ-ին տրամադրելու համար:

219. Ե՛վ ՏԻՄ գրասենյակները, և՛ ԲԱԱ-ն պատասխանատու կլինեն բողոքները/ պահանջները/ հայցերը հավաքագրելու/հաշվառելու և պահանջվող համապատասխան փաստաթղթերի հետ միասին ԾԻԿ-ին հասցեագրելու համար՝ դրանք ստանալուց հետո առավելագույնը 5 օրվա ընթացքում: Այնուամենայնիվ, վերոնշյալ մուտքային կետերը չեն սահմանափակում քաղաքացու իրավունքը՝ իրենց բողոքները/ պահանջները/ հայցերը անմիջապես ՏԾԻԿ-ին և/կամ ՏԿՆ-ին ուղղելու համար: Բացի այդ, ցանկացած տուժած անձ ԲԼՄ ցանկացած փուլում իրավունք ունի գործը ներկայացնել ընդհանուր իրավասության դատարան՝ իր բողոքի լուծման նպատակով:

ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

220. ԲԼՄ-ն սահմանում է այն հաստատությունները (կողմերին), որոնք կգրադվեն ԱԵԱ-ների բողոքներով ու մտահոգություններով: ԲԼՄ-ի ինստիտուցիոնալ կառուցվածքն ունի տարբեր մակարդակներ, այնպես որ բողոքարկուն կարող է հայցը տեղափոխել ավելի բարձր մակարդակներ, եթե նա բավարարված չէ ավելի ցածր մակարդակում տրված լուծումով:

1. ԲԼՄ 1-ին ՄԱԿԱԸՐԴԱԿ –իրականացնող մարմին (ՏԾԻԿ)

221. ԲԼՄ-ի առաջին մակարդակը ՏԾԻԿ-ն է: ՏԾԻԿ-ը ստանում և լուծում/արձագանքում է ԱԵԱ-ների բողոքներին: ԾԻԿ-ի կողմից բողոքների լուծման քայլերը հետևյալն են.

1)Բողոքների/ պահանջների/ հայցերի գրանցում. չլուծված բողոքները/ պահանջները/ հայցերը կարող են ստացվել ԲԱԱ-ից կամ անմիջապես ԱԵԱ-ից: Բողոքը/ պահանջը/ հայցը ՏԾԻԿ-ի ընդհանուր համակարգում գրանցվելուց բացի, գրանցվում է նաև ՀՕՏԾ-ի ընդհանուր տվյալների բազայում՝ հետագա մոնիտորինգի և հաշվետվողականության նպատակով:

2)Իրավասության ստուգում. ստանալով բողոքը, հարցը, մտահոգությունը՝ ՏԾԻԿ-ի առանցքային կետը որոշում է դրանց իրավասությունը: Որոշումը նշում է, թե արդյոք բողոքը կարող է արդյունավետորեն քննվել ՏԾԻԿ-ի կողմից, թե անհրաժեշտ է այն տեղափոխել ավելի բարձր մակարդակ: ՏԾԻԿ-ն իրավասու չէ գրադվել բողոքներով, եթե

ա.բողոքը/հարցը ներկայացվել է դրանց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալուց հետո, եթե խնդրի/հարցի բնույթը դուրս է ԲԼՄ-ի պաշտոնական մանդատի շրջանակներից (օրինակ՝ վեճի առարկա հողի սեփականության հարցը),

բ.բողոքարկուն չունի բողոք ներկայացնելու իրավասություն,

գ.բողոքը/հարցը ներկայացվել է օտարվող հողի նախկին սեփականատիրոջ կողմից և առնչվում է արդեն ստորագրված և փոխհատուցված օտարման պայմանագրին, որի հիման վրա գրանցվել են ձեռք բերողի (պետության) սեփականության իրավունքները հողի նկատմամբ:

Եթե բողոքը/հարցը վերաբերում է վերոնշյալ դեպքերին, ՏՕԻԿ-ը ձևակերպում է պատասխանը և նամակով ուղարկում բողոքարկուին՝ բացատրելով մերժման պատճառները, հետագա հնարավոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են ԱԵԱ-ին տեղեկացնելու համար, որ նրա բողոքը փոխանցվել է ԲԼՄ-ի հաջորդ մակարդակ:

3) Բողոքը դիտարկելու նախնական ժամանակացույցի կազմում. բողոքը կկարգավորվի ԲԱԱ-ի կողմից բողոքը և առնչվող փաստաթղթերը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում (եթե ՀՀ օրենսդրությամբ այլ ժամանակացույց սահմանված չէ): Եթե դեպքը բարդ է և պահանջում է հետազոտություն (օրինակ՝ ստուգում տեխնիկական փորձագետների կողմից կամ պետության իրավական եզրակացությունը կամ արտոնագրված մասնավոր անձանց եզրակացությունը), ապա բողոքի քննման ժամանակահատվածը կարող է երկարացվել: Նման դեպքերում բողոքարկուին կուղարկվի գրավոր ծանուցում՝ երկարաձգման պատճառների բացատրությամբ, գործընթացի նկարագրությամբ և դիտարկման արդյունքների ուղարկման նախատեսված ամսաթվի նշումով:

4) Բողոքի քննման նախաձեռնում. հավաքագրած հիմնական տեղեկատվության և պարզաբանումների հիման վրա ՏՕԻԿ-ը կմշակի ժամանակի վրա հիմնված գործողությունների պլան՝ բողոքը լուծելու համար: ՏՕԻԿ-ը (ա) անհրաժեշտության դեպքում կկազմակերպի դաշտային այցելություններ, (բ) խորհրդատուներից կպահանջի լրացուցիչ պարզաբանումներ, ըստ անհրաժեշտության՝ տեխնիկական փորձագետներ և այլ համապատասխան կողմեր, (գ) անհրաժեշտության դեպքում հանդիպումներ ԱԵԱ-ների հետ: ՏՕԻԿ-ը կարող է ըստ անհրաժեշտության արտոնագրված կազմակերպություններից պահանջել անկախ փորձագետներ, ինչպես օրինակ՝ չափագրման, գնահատման և այլ մասնագետներ: Դաշտային բոլոր այցելությունները, փորձագետների և ԱԵԱ-ների հետ հաղորդակցությունները պատշաճ կփաստաթղթավորվեն, այդ թվում՝ հանդիպումների արձանագրությունները, նամակները, լուսանկարները և այլն:

5) Գործողությունների պլանի իրականացման համար միջոցների հատկացում. ՀՕՏՕ-ի իրականացման բյուջեից պահանջվող միջոցները հասանելի կլինեն՝ բողոքի լուծումը ժամանակին ապահովելու համար:

6) Բողոքների փակում. բողոքը դիտարկելուց հետո և/կամ բողոքի լուծման Գործողությունների պլանը իրականացնելուց հետո ՏՕԻԿ-ը ԱԵԱ-ին կուղարկի արդյունքների վերաբերյալ գրավոր պատասխան: ԱԵԱ-ի հետ կարող է կազմակերպվել հանդիպում՝ հավաստիացնելու համար, որ բողոքարկուի պահանջը լուծվել է ամբողջությամբ և հետագա գործողությունների անհրաժեշտություն չկա, կամ, պահանջն ընդունելի չլինելու դեպքում, ԱԵԱ-ին բացատրել մերժման պատճառները:

7) ՏՕԻԿ-ը կգրանցի բոլոր դեպքերը՝ լուծված և լուծում չստացած: Բողոքարկվող դեպքերի բոլոր գրանցումները կներմուծվեն ՀՕՏՕ-ի ընդհանուր տվյալների բազա: Այս ԲԼՄ գրանցումները կդիտարկվեն մոնիտորինգի մասնագետի կողմից:

8) Եթե բողոքն ամբողջական լուծում չի ստացել կամ եթե ԱԵԱ-ն բավարարված չէ պատասխանով, նա կարող է իր բողոքը ներկայացնել Գործադիր մարմնին (ՏԿՆ):

222. Եթե ԱԵԱ-ն բավարարված չէ ՏՕԻԿ-ի պատասխանով, ապա ԲՔԽ-ն ԱԵԱ-ի պահանջով կարող է դիտարկել դեպքը՝ ապահովելով դեպքի համակողմանի, արդար և թափանցիկ քննարկում: ԲՔԽ քննարկում կարող է հրավիրվել նաև ՏՕԻԿ-ի որոշմամբ՝ ԱԵԱ-ների կողմից խմբային բողոքների դեպքում: ԱԵԱ-ի բողոքը բովանդակային առումով դիտարկելու և դատելու

նպատակով ԲՔԽ-ի լեգիտիմությունն ապահովվում է ԲՔԽ-ի կազմում բալանս ստեղծելու միջոցով, որը կընդգրկի անկախ դիտորդի՝ դիտարկման գործընթացի անաչառությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով: Առաջարկվում է ԲՔԽ-ի հետևյալ կազմը.

Անդամներ		Զբաղեցրած պաշտոնը	
ՏՕԻԿ-ի ներկայացուցիչ (ՏՀԽ/ԻԽ)			նախագահ
Համապատասխան ներկայացուցիչը	դեպքում	ՏԻՄ-ի	անդամ
Համապատասխան տեխնիկական փորձագետ			անդամ
Համապատասխան Խորհրդատուի/Կապալառուի ներկայացուցիչը	դեպքում		անդամ
ԱԵԱ-ի ներկայացուցիչը			անդամ
Անկախ կողմ (օրինակ՝ ՀԿ)			դիտորդ

223. ԲՔԽ-ի միջոցով պարզաբանումներ ձեռք բերելու նպատակով կիրականացվեն հետևյալ քայլերը նախքան բողոքի դիտարկման գործընթացն սկսելը.

1)ԲՔԽ նիստերի հրավիրում. նախքան բողոքի դիտարկման գործընթացն սկսելը կհրավիրվի ԲՔԽ նիստ և անհրաժեշտության դեպքում կհավաքագրվի անհրաժեշտ տեղեկատվությունը: Ընդհանուր տեղեկությունները կարող են ներառել լուսանկարներ, տեսանյութ, հավաստագրեր, տեխնիկական փորձագետի եզրակացությունը և այլն, որոնք կօգնեն ԲՔԽ-ին հասկանալ բողոքների պատճառները և ժամանակագրությունը:

2)Հանդիպում բողոքարկուի հետ. ԲՔԽ անդամները կհանդիպեն բողոքարկուի հետ՝ պարզաբանումներ ձեռք բերելու համար: Յուրաքանչյուր հանդիպումից հետո կպատրաստվի արձանագրություն, որի պատճենը կտրամադրվի բողոքարկուին, ԲՔԽ անդամներին և այլ շահառուներին:

3)Այցելություն տեղամաս. անհրաժեշտության դեպքում ԲՔԽ անդամները կայցելեն տեղամաս:

224. Բողոքի քննման գործընթացին կարող են մասնակցել մի շարք մասնագետներ, ինչպես օրինակ՝ գնահատման մասնագետ, գյուղատնտես, չափագրող, նախագծային ինժեներ և այլն՝ ըստ յուրաքանչյուր դեպքի անհրաժեշտության: Անկախ կողմը (օրինակ՝ ՀԿ ներկայացուցիչը) կարող է հրավիրվել ԱԵԱ-ի պահանջով:

1. ԲԼՍ 2-րդ ՄԱԿԱՐԴԱԿԸ -Գործադիր մարմին (ՏԿՏՏ)

225. Եթե ԲՔԽ-ի որոշման հիման վրա ՏՕԻԿ-ի արձագանքը ԱԵԱ-ին չի բավարարում, ապա ԱԵԱ-ն կարող է բողոքը ներկայացնել Գործադիր մարմնին (ՏԿՏՏ): ՏԿՆ-ն հետևում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ դեպքի գրանցման, վերանայման և լուծման համար՝ Ծրագրի փաստաթղթերի պահանջների հիման վրա: Այս մակարդակում բողոքը լուծելիս ՏՕԻԿ-ը կարող է միայն ընդգրկվել գործընթացին աջակցելու նպատակով, սակայն չի պատասխանի բողոքին:

1. Բողոքի քննումը դատարանում

226. Այն դեպքում, եթե բողոքների լուծման համակարգը չի կարողանա բավարարել ԱԵԱ-ին, վերջինս կարող է բողոքը ներկայացնել դատարան: Վերոհիշյալ մեխանիզմը չի ազդում կամ սահմանափակում ԱԵԱ-ների իրավունքը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրենց իրավունքները, ներառյալ դատական կարգով և բողոքների լուծման գործընթացի ցանկացած պահին դիմել դատարան և պետական այլ մարմիններին:

1. ԲԼՄ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ


227. ԲԼՄ-ի իրականացումը մոնիտորինգի կենթարկվի ներքին և արտաքին մոնիտորինգի միջոցով: ԲԼՄ-ի մոնիտորինգի հիմնական ցուցանիշներն են՝ բողոքների քանակը և տեսակը, լուծում ստացած դեպքերը, լուծման ժամկետները և այլն: ԾԻԿ-ի և ԱՄԳ-ի կողմից կմշակվեն լրացուցիչ ցուցանիշներ ներքին/արտաքին մոնիտորինգի համար և մոնիտորինգի արդյունքների հետ միասին կներկայացվեն Սոցիալական մոնիտորինգի կիսամյակային հաշվետվություններում (ՄՄԿՀ), Առաջընթացի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններում (ԱԵՀ) և Համապատասխանության հաշվետվություններում:

5) ԲԼՄ իրականացման բյուջեն

228. ՀՕՏԾ իրականացման բյուջեն կներառի ԲԼՄ իրականացման ծախսերը, մասնավորապես՝ մասնագիտական եզրակացություն հայտնելու համար փորձագետներ վարձելու նպատակով, դաշտային ստուգումների, հանդիպումների կազմակերպման նպատակով և այլն: ՀՕՏԾ-ի իրականացման բյուջեն կներառի նաև ՀՕՏԾ-ի հետիրականացման ժամանակաշրջանում ԲԼՄ-ի իրականացման ծախսերը:

229. ԲԼՄ-ի ինստիտուցիոնալ կառուցվածքը ներկայացված է Նկար H1-ում:

Նկար H1: Բողոքների լուծման մեխանիզմի ինստիտուցիոնալ կառուցվածքը



J. ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

230. ՀՕՏՎ վերջնականացման և իրականացման ժամանակացույցը հիմնվել է ընդհանուր Ծրագրի իրականացման պլանի վրա: Հողի օտարմանը և տարաբնակեցմանը վերաբերող բոլոր միջոցառումները պետք է պլանավորվեն՝ ապահովելով, որ փոխհատուցումները վճարվեն տեղահանումից առաջ՝ համաձայն ՀՕՏՎ-ի դրույթների, և շինարարական աշխատանքներից առաջ: Առաջարկվող ժամանակացույցը նախնական է և ենթակա է փոփոխման՝ կախված Ծրագրի միջոցառումների առաջընթացից և որևէ խիստ անհրաժեշտությունից: Ծրագրի ՀՕՏ գործողությունները և իրականացման ժամանակացույցը ներկայացված են ստորև:

1. ՀՕՏՎ-ի իրականացման նախապատրաստական փուլ

231. ՀՕՏՎ-ի իրականացումը կսկսվի ԱԶԲ-ի և ՏԿՏՏՆ-ի կողմից վերջնական ՀՕՏՎ փաստաթղթի հաստատումից անմիջապես հետո: Այնուամենայնիվ, նախապատրաստական աշխատանքները կարող են սկսվել ավելի վաղ՝ իրականացմանը լիարժեքորեն պատրաստ լինելու համար, մասնավորապես՝

- (i) Վերջնական հաստատված ՀՕՏՎ փաստաթղթի հրապարակումը ՏԿՏՏՆ և Ծրագրի կայքէջերում՝ հայերեն լեզվով, ԱԶԲ-ի կայքէջում՝ անգլերեն լեզվով,
- (ii) ԱԵԱ-ների համար լավագույն պայմաններ ապահովող առևտրային բանկերի ընտրությունը (աշխարհագրական դիրքը և ցածր գործարքային վճարները/կամ այդպիսի վճարների բացակայությունը): ԱԵԱ-ները կարող են նաև գործել իրենց ունեցած բանկային հաշիվների միջոցով:
- (iii) Խորհրդակցություններ տարածքային նոտարական և կադաստրային ծառայությունների, դատարանների հետ օտարման պայմանագրերի և համաձայնագրերի ստորագրումը, կադաստրային գրանցումները և դատական գործընթացները կազմակերպելու վերաբերյալ (եթե կան այդպիսիք),
- (iv) Կադաստրային ուղղումների պլանի և օրինականացման գործողություններն սկսելը,
- (v) Նախնական խորհրդատվություն ազդեցության ենթակա համայնքներին ՀՕՏՎ իրականացման գործընթացի վերաբերյալ (ներառյալ՝ ՀՕՏՎ փաստաթղթի և ձեռնարկների հրապարակումը),
- (vi) Ազդեցության ենթակա համայնքներում Բողոքների լուծման մեխանիզմի (FLU) հիմնում, ինչպես սահմանված է ՀՕՏՎ-ով,
- (vii) Տեղեկատվական թերթիկների պատրաստում ՀՕՏՎ իրականացման բոլոր փուլերի մասին ծանուցման նպատակով (ծանուցում ՀՀ կառավարության՝ բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշման, ստորագրված արձանագրության, նախնական օտարման պայմանագրի և համաձայնագրի, փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելու և դատական գործընթացների վերաբերյալ):

2. ՀՕՏՎ իրականացման ենթահատվածների սահմանումը

232. Նախքան ՀՕՏՎ-ի նախապատրաստական աշխատանքներն սկսելը որոշվեց, որ ՀՕՏՎ-ն կիրականացվի ենթահատված առ ենթահատված սկզբունքով՝ իրականացման գործընթացի օրենքով սահմանված վերջնաժամկետները պարզեցնելու, ինչպես նաև շինարարական աշխատանքների առաջընթացը կառավարելու համար: ՀՕՏՎ-ի ենթահատվածների սահմանման

սկզբունքներն ու հիմքերը ներկայացված են ստորև.

- (i) ազդեցության ենթակա հողակտորների (և՛ մասնավոր, և՛ համայնքային) քանակը, ընդհանուր ԱԵՏՏ-ների քանակը,
- (ii) վերաբնակեցվող ԱԵՏՏ-ների քանակը,
- (iii) օրինականացման ենթակա և կադաստրային ուղղումների դեպքերը,
- (iv) հաղորդողիների տեղափոխման աշխատանքների առաջընթացը,
- (v) շինարարական աշխատանքների առաջնահերթությունները:

233. ՀՕՏ փաստացի ազդեցությունների և վերը նշված բազմագործոն վերլուծությունների հիման վրա որոշվեց իրականացնել ՀՕՏՕ-ն երկու ենթահատվածներով, որոնք կներառեն բոլոր 3 լոտերի (ճանապարհահատվածներ) հողակտորները՝ ազդեցության ենթակա հողակտորների հավասարաչափ բաշխմամբ, ինչը կախված է նաև օրինականացման և կադաստրային խնդիրների ծավալից: Սա թույլ կտա ժամանակին ապահովել ՀՕՏՕ-ի իրականացումն ավարտված հատվածների տրամադրումը երեք Կապալառուներին զուգահեռաբար: Միննույն ժամանակ, որպես ընդհանուր սկզբունք, առաջնահերթությունը կտրվի՝ (1) օրինականացման դեպքերի և կադաստրային ուղղումների արագ իրականացմանը, (2) մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի օտարմանը, ինչպես նաև (3) ֆիզիկական տեղահանման դեպքերին՝ ապահովելով ՀՕՏՕ-ի ժամանակին իրականացումը և արագացնելով դատական կարգով օտարման դեպքերը, եթե կան այդպիսիք:

3. ՀՕՏՕ իրականացման փուլերը և գործողությունները

234. ՀՕՏՕ-ի ընդհանուր իրականացման նպատակն է՝

- (i) ապահովել ԱԵԱ/ԱԵՏՏ-ների լիարժեք իրավունքները ՀՕՏ ներքո (փոխհատուցում, աջակցություն և այլն),
- (ii) ԱԵԱ/ԱԵՏՏ-ներին տրամադրել խորհրդատվություն և գիտելիքներ՝ ՀՕՏՕ ներքո իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,
- (iii) ապահովել ՀՕՏՕ-ում ներառված մանրամասն օրինականացման և ուղղումների պլանների լիարժեք իրականացումը,
- (iv) նախաձեռնել հանրային իրազեկման արշավներ ազդեցության ենթակա համայնքներում՝ Տարաբնակեցման քաղաքականությանը և իրավունքների փաթեթներին ծանոթացնելու նպատակով,
- (v) աջակցել ԱԵԱ-ներին իրենց բողոքները/խնդիրները ՀՕՏՕ ներքո հաստատված Բողոքների լուծման մեխանիզմի (ԲԼՄ) միջոցով կարգավորելու հարցում,
- (vi) ապահովել բոլոր շտկող միջոցառումների պատշաճ իրականացումը (եթե այդպիսիք լինեն):

235. Այս նպատակով, ՀՕՏՕ-ի հաստատվելուն պես, կնախաձեռնվեն բոլոր միջոցառումները փոխհատուցումների վճարումը վերջնականացնելու համար: Սա ներառում է՝

- (i) Օրինականացման և կադաստրային ուղղումների պլանի իրականացումը,
- (ii) պայմանագրի նախագծերի, ինչպես նաև վնասված գույքի փոխհատուցման

համաձայնագրերի ծանուցում ԱԵԱ-ներին,

- (iii) օտարման պայմանագրերի, վնասված գույքի փոխհատուցման պայմանագրերի ստորագրում, ներառյալ տեղահանման վերջնաժամկետների մասին ծանուցումը,
- (iv) վճարումները իրավասու ազդեցության ենթակա անձանց,
- (v) դատական կարգով օտարման գործընթացի նախաձեռնումը (եթե անհրաժեշտ է),
- (vi) համապատասխանության ստուգում և Ավարտական հաշվետվության պատրաստում,
- (vii) դատական կարգով օտարման գործընթացն ավարտելը, եթե անհրաժեշտ է,
- (viii) շինհրապարակի նախապատրաստումը՝ շինարարության նպատակով կապալառուին հանձնելու համար:

236. Փոխհատուցման վճարումը ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում կարևորագույն փուլերից մեկն է: Նախատեսված քայլերն են՝

- (i) անհրաժեշտության դեպքում ԱԵԱ-ների համար բացել բանկային հաշիվներ: ԱԵԱ-ները կարող են նաև օգտագործել իրենց ունեցած բանկային հաշիվները:
- (ii) փոխհատուցման և օժանդակությունների փոխանցումը ԱԵԱ-ների բանկային հաշիվներին՝ օտարման պայմանագրի ստորագրումից հետո,
- (iii) սեփականության տարածքի ազատումը ԱԵԱ-ների կողմից՝ փոխհատուցման վճարման պահից 14 օրվա ընթացքում կամ պայմանագրով նախատեսված այլ ժամկետում,
- (iv) ՏԿՏՏՆ-ի՝ հողի/կառույցի սեփականատեր դառնալը (հանձնման-ընդունման ակտը կստորագրվի ԱԵԱ-ի հետ ազդեցություն չկրած/ֆիզիկապես գոյություն ունեցող կառույցի դեպքում):

237. Հողի օտարման և տարաբնակեցման գործընթացում կիրականացվեն հետևյալ հիմնական քայլերը.

- (i) ԱԵԱ-ներին ազդեցության ենթակա հողակտորի վերաբերյալ արձանագրության ստորագրման մասին ծանուցում,
- (ii) պայմանագրերի նախագծերի, ինչպես նաև վնասի փոխհատուցման վերաբերյալ համաձայնագրերի մասին ծանուցում բոլոր ԱԵԱ-ներին, ինչպես նաև ՀՕՏՕ տեղեկատվական ձեռնարկի տրամադրում,
- (iii) անհատական հանդիպումներ ԱԵԱ-ների հետ (սեփականատերեր/համասեփականատերեր, վարձակալներ, հողի չձևակերպված օգտագործողներ),
- (iv) ԱԵԱ-ների հիմնախնդիրների քննարկում, անհրաժեշտության դեպքում իրավական խորհրդատվության և աջակցության տրամադրում ԱԵԱ-ներին (օրինականացման պլանի հետ զուգահեռ),
- (v) անհրաժեշտության դեպքում օտարման պայմանագրերի ստորագրման համար պահանջվող փաստաթղթերի ստուգում և թարմացում,
- (vi) Օրինականացման պլանի և կադաստրային ուղղումների պլանի իրականացում,
- (vii) վերջնական օտարման պայմանագրերի պատրաստման համար անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստում՝ նոտարին (տարածքային) հանձնելու համար,

- (viii) ԱԵԱ-ների հետ օտարման պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպում՝ նոտարական վավերացմամբ (կախված կազմակերպչական պահանջներից՝ այն կարող է կազմակերպվել նաև համայնքապետարաններում),
- (ix) ստորագրված պայմանագրերի հիման վրա պետական գրանցման դիմումի ներկայացում ԱԳԿՊԿ գրասենյակ,
- (x) ՀՀ անունով գրանցված անշարժ գույքի սեփականության վկայականի ստացում,
- (xi) ֆիզիկապես վերաբնակեցվող ԱԵՏՏ-ների վերաբնակեցման գործընթացի կազմակերպում և աջակցություն,
- (xii) անհրաժեշտության դեպքում դատական կարգով օտարման գործընթացի նախաձեռնում (փոխհատուցման գումարի դեպոզիտ հանձնում, դատական հայցերի նախապատրաստում):

238. Բոլոր հողակատորների օտարումից հետո (և՛ պայմանագրի հիման վրա, և՛ դատական գործընթացի միջոցով) ՏԿՏՏՆ-ն կիրականացնի բոլոր օտարված հողերի նպատակային նշանակության փոփոխման գործընթացը՝ դրանք դարձնելով տրանսպորտային նշանակության հողեր՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների, այդ թվում՝ քարտեզների պատրաստումը (կամ չափագրումը), և ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1918 և 1920 որոշումների հիման վրա կմշակի որոշման նախագիծը:

4. Դատական կարգով օտարման փուլ

239. Սեփականության օտարման պայմանագրի մասին ծանուցելու ամսաթվից հետո՝ եռամսյա ժամկետում ԱԵԱ-ի (սեփականատերեր և այլ գույքային իրավունք ունեցող անձինք) կողմից որոշ պատճառներով օտարման պայմանագիրը չստորագրելու դեպքում (ԱԵԱ-ների անհամաձայնություն, չլուծված օրինականացման խնդիրներ և այլն), ՏՕԻԿ-ը կնախաձեռնի դատական կարգով սեփականությունը օտարելու գործընթաց: Դատական կարգով օտարման գործընթացը կիրականացվի երկու փուլով.

- (i) Գույքի օտարում՝ փոխհատուցման գումարը դատարանի դեպոզիտ հաշվին փոխանցելու միջոցով,
- (ii) Գույքի օտարում՝ դատական կարգով (դատական գործընթաց):

240. Գույքի օտարում՝ փոխհատուցման գումարը դատարանի դեպոզիտ հաշվին փոխանցելու միջոցով. Յուրաքանչյուր ԱԵԱ-ի համար հաշվարկված փոխհատուցման գումարը կհանձնվի դատարանի դեպոզիտ հաշվին՝ եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ 1 ամսվա ընթացքում: Վերջինիս վերաբերյալ ծանուցումը կուղարկվի ԱԵԱ-ներին (սեփականատերեր և այլ գույքային իրավունք ունեցող անձինք) փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Առանձին տեղեկատվական թերթիկը (ուղեցույց)՝ ԱԵԱ-ների իրավունքների և պարտականությունների նկարագրությամբ, կկցվի ծանուցագրին:

241. Գույքի օտարում դատական կարգով (դատական գործ).

- (i) Եթե օտարման պայմանագիրը չի կնքվում փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո 7-օրյա ժամկետում և եթե ԱԵԱ-ն չի ստանում փոխհատուցման գումարը դեպոզիտային հաշվից, ապա մեկ ամսվա ընթացքում Խորհրդատուն կպատրաստի և

դատարան կներկայացնի դատական հայց դեպոզիտ հանձնված գումարի հիման վրա:

- (ii) Դատական կարգով օտարման դեպքում, դատարանի քննման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափը: Սեփականության և այլ ակտիվների դիմաց փոխհատուցման չափի վերաբերյալ դատարանի որոշումը հիմք է հանդիսանում հողի օտարման համար:
- (iii) Եթե բոլոր սեփականատերերն ու համասեփականատերերը, օտարվող գույքի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները ստանան դեպոզիտ հանձնված գումարը նկարագրված կարգով դեպոզիտ հանձնելուց հետո կամ նախքան օտարման մասին դատարանի որոշումը, ապա օտարման պայմանագիրը կհամարվի կնքված՝ օրենքով սահմանված ժամկետներում և պայմաններով:
- (iv) Նախկին սեփականատիրոջ իրավունքները օտարված սեփականության նկատմամբ դադարում են, և ձեռք բերողի սեփականության իրավունքը օտարվող սեփականության նկատմամբ գրանցվում է՝ օրենքով սահմանված կարգով համապատասխան դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն ենթակա է գրանցման ԱԳԿՊԿ-ում:
- (v) Այնուամենայնիվ, կախված դատական հայցի առանձնահատկություններից, երբեմն հնարավոր կլինի ստորագրել օտարման պայմանագրերը նախքան դատարանի կողմից հայցն ընդունելը՝ կամ դատական վարույթն սկսելը: Նման դեպքերում ՏՕԻԿ-ը հետ կվերցնի հայցը՝ դատարանին ներկայացնելով պայմանագրի օրինակը և համապատասխան գրություն, որն էլ հիմք կձառայի ԱԵԱ-ներին փոխհատուցում տրամադրելու համար:

242. **Հայցի վարույթը.** Խորհրդատուն ՏՕԻԿ-ի անունից կմասնակցի բոլոր դատական լսումներին բոլոր դատական ատյաններում: Դատական կարգով օտարման փուլը կհամարվի ավարտված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից (դատական ակտի հիման վրա) և ՏՕԻԿ-ին սեփականության վկայականը ներկայացնելուց հետո: Խորհրդատուն կկազմակերպի նաև գույքի հանձնում-ընդունումը:

5. ԱԵԱ-ների օրինականացման և կադաստրային ուղղումների գործընթացը

243. ՀՕՏՇ սկզբունքների համաձայն՝ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ները կարող են օրինականացվել և ստանալ լիարաժեք փոխհատուցում, ինչպես սահմանված է ՀՕՏՇ Իրավունքների սխեմայով և փոխհատուցման իրավունքներով: ՀՕՏՇ-ով սահմանված «Օրինականացման պայմանների» համաձայն, իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ները նրանք են, ովքեր ազդեցության ենթակա հողակտորի և դրան ամրացված այլ գույքի նկատմամբ թեև չունեն պետական գրանցում ստացած սեփականության կամ այլ գույքային իրավունքներ, սակայն ունեն որոշակի օրինական ակնկալիքներ, որոնք ծագում են օրենքի կամ գույքի փաստացի տիրապետման և օգտագործման ուժով, կամ վերջիններիս գույքային իրավունքների ձեռքբերման հնարավորություններն ուղղակի բխում են կամ սահմանված են ՀՀ իրավական ակտերով:

244. ՀՕՏՇ վերջնականացման ընթացքում, հիմք ընդունելով մարդահամարի տվյալների, ինչպես նաև տարբեր պետական մարմիններից ստացված տվյալների վերլուծությունը, բացահայտվել են

օրինականացման հետ կապված որոշ խնդիրներ և այլ տիպային դեպքեր (հիմնականում կադաստրային անհամապատասխանություններ), որոնց անհրաժեշտ է անդրադառնալ ՀՕՏՕ իրականացման ընթացքում: Այդ դեպքերը հարկ է ներառել վերջնական ՀՕՏՕ-ում, որպեսզի բոլոր շահագրգիռ կողմերը տեղեկացված լինեն այդ խնդիրների վերաբերյալ: Այստեղ քննարկվում են այն մոտեցումները, որոնցով առաջնորդվելու է ԳՄ-ն՝ այդպիսի տիպային դեպքերի համար՝ որպես ՀՕՏՕ իրականացման մի մաս: Նաև կարևոր է նշել, որ այդպիսի դեպքեր են հանդիպել նաև նախորդ նմանատիպ գյուղական ծրագրերում, և դրանք կարգավորվել են ԳՄ-ի կողմից ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում: Այդպիսի դեպքերի կարգավորումը էական նշանակություն ունի ՀՕՏՕ-ի իրականացման առաջընթացի առումով, քանի որ օտարման պայմանագրերի կնքումն անհնար է առանց այս խնդիրների լուծման, հակառակ դեպքում այդ դեպքերը կդիտարկվեն դատական օտարման գործընթացի ներքո, ինչը երկարաձգի իրականացման գործընթացը: Օրինականացման և կադաստրային տիպային խնդիրները և առաջարկվող լուծումների ընթացակարգերը ամփոփ ներկայացված են ստորև, իսկ այդ դեպքերի մանրամասն ցանկը, դրանց նկարագրությունը, ՀՕՏՕ-ում դրանց լուծման կարգավիճակը, ինչպես նաև գործողությունների պլանը ներկայացված են Հավելված 8-ում:

5.1. Օրինականացման հետ կապված խնդիրներ

245. Ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ արձանագրվել են օրինականացման հետ կապված 13 խնդիր՝

- (i) խնդիրներ՝ կապված բացակա ԱԵԱ-ների հետ (3 դեպք),
- (ii) խնդիրներ՝ կապված ժառանգության հետ (11 դեպք),
- (iii) խնդիրներ, կապված անձնագրերի/փաստաթղթերի հետ (2 դեպք):

246. Այս 13 դեպքից 11-ը նաև ներառված են կադաստրային խնդիրներում: Օրինականացման խնդիրների մեծ մասը վերաբերում են Լոտ 1-ին: Ստորև բերված Աղյուսակ J1-ում ներկայացված են օրինականացման բոլոր դեպքերի մանրամասները՝ ըստ համայնքների և լոտերի: Ստորև նկարագրված են ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում վերը նշված խնդիրների լուծման նպատակով՝ ըստ ՀՀ օրենսդրության նախատեսված գործողություններն ու ընթացակարգերը:

Աղյուսակ J1. Օրինականացման խնդիրները՝ ըստ Լոտերի

Լոտ 1		Լոտ 2	Լոտ 3		Ընդամենը
Ալավերդի	Այգեհատ	Օձուն	Նեղոց	Շնող	
7	2	2	1	3	
11		1	4		16

ՀՀ-ից բացակա ԱԵԱ-ներ

247. ԱԵԱ-ի ներկայությունն անհրաժեշտ է նրա սեփականության օտարման համար: Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունը ապահովում է այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան օտարել գույքն այն դեպքում, երբ սեփականատերերին գտնելը հնարավոր չէ, կամ նրանց ներկայությունը հնարավոր չէ ապահովել նշված նպատակի համար: Լուծելու համար այն

բացակայող հողատերերի խնդիրը, որոնք չեն կարող հասանելի լինել օտարման գործընթացում, պետք է նախաձեռնել հետևյալ ընթացակարգը.

- (i) համայնքային իշխանություններից, հարազատներից և ընկերներից կհավաքագրվեն բացակայող սեփականատերերի կոնտակտային տվյալները և այլ հնարավոր տեղեկատվություն,
- (ii) ԱԵԱ-ները կտեղեկացվեն/կծանուցվեն իրենց հողը/գույքը օտարելու և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ՝ պնդելով նրանց մասնակցությունը,
- (iii) Եթե ԱԵԱ-ն շարունակի արտահայտել իր ներկայությունն ապահովելու անկարողությունը, ապա նրան խորհուրդ կտրվի ուղարկել լիազորագիր այն ներկայացուցչի անունով, ով հանդես կգա իր անունից օտարման պայմանագրի ստորագրման ժամանակ,
- (iv) պայմանագիրը չստորագրելու դեպքում ձեռք բերողը կնախաձեռնի դատական կարգով օտարման գործընթաց, և փոխհատուցման գումարը կհանձնվի դատարանի դեպոզիտային հաշվին: Սեփականատերը կարող է պահանջել փոխհատուցման գումարը դատարանից՝ ներկայացնելով համապատասխան իրավական հիմքեր:

Ժառանգության հետ կապված խնդիրներ

248. Ժառանգության հետ կապված հիմնական խնդիրն այն է, երբ մարդիկ պետք է փոխեն սեփականության իրավունքը՝ իրենց ծնողների, հարազատների մահից հետո, կամ դեպքերը, երբ հողամասը բաժանվել է եղբայրների կամ քույրերի միջև փոխադարձ համաձայնությամբ, սակայն նույնը չի գրանցվել կադաստրում՝ իրական սեփականության իրավունքը ցույց տալու համար: Դեպքերի մեծամասնությունում կտակ չկա, հետևաբար ժառանգները դեռևս չեն բացահայտվել: Օրինականացման գործընթացը ներառում է հետևյալ քայլերը.

Քայլ 1- ՀՕՏՕ իրականացման թիմը կդիմի համապատասխան համայնք՝ օտարվող հողամասի հանգուցյալ սեփականատերերի ժառանգների կազմի, բնակության վայրի, ժառանգատուի գույքի փաստացի տիրապետող ժառանգների մասին տեղեկատվություն ստանալու համար:

Քայլ 2- Համայնքից ստացված տեղեկատվության հիման վրա ժառանգության յուրաքանչյուր դեպքի համար ՄԵԱԽ-ը կպատրաստի անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Ստուգման թերթիկի օգնությամբ ՄԵԱԽ-ը կապ կհաստատի բոլոր ժառանգների հետ: Օրինական ժառանգներին կխնդրեն պատրաստել ժառանգության ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Եթե տվյալ հողամասի նկատմամբ իրավունքները չեն գրանցվել 1998թ. մարտի 1-ից հետո, ապա մնացած բոլոր փաստաթղթերի հետ միասին անհրաժեշտ կլինի ներկայացնել նաև հողամասի հատակագիծը:

Քայլ 3- Երբ ժառանգության ընդունումն ավարտված է, ժառանգներին կխնդրեն դիմել ժառանգատուի բնակության վայրի նոտարին՝ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար: Եթե ժառանգներից մեկը չի գտնվում Հայաստանի Հանրապետությունում, անհրաժեշտ է որպեսզի վերջինս ուղարկի նոտարական կարգով վավերացված լիազորագիր (որը պետք է թարգմանվի)՝ ժառանգության իր բաժինն ընդունելու և դրանից ծագող իր իրավունքը գրանցելու համար:

249. ՀՕՏԾ իրականացման թիմը կտրամադրի անհրաժեշտ աջակցություն ԱԵԱ-ների ժառանգության իրավունքի վկայագրից ծագող իրավունքների պետական գրանցում իրականացնելու հարցում:

250. Եթե ժառանգների միջև առկա է վեճ սեփականության իրավունքի վերաբերյալ կամ անցել է ժառանգության ընդունման համար նախատեսված 6-ամսյա ժամկետը և հնարավոր չէ ապահովել բոլոր ժառանգների համաձայնությունը (առկայությունը), ապա ժառանգության ընդունման հետ կապված հարցերը կարգավորվում են դատական կարգով:

251. Եթե ժառանգներն ըստ էության առարկություն չունեն սեփականության օտարման պայմանագրի էական պայմանների վերաբերյալ, սակայն առկա են իրավական խոչընդոտներ նոտարական կարգով ժառանգությունն ընդունելու համար, 3 ամիս ժամանակահատվածը հնարավոր կլինի օգտագործել դրանք լուծելու և օտարման գործընթաց նախաձեռնելու համար:

Անձնագրերի հետ կապված խնդիրներ

252. Քանի որ գույքի օտարման և փոխհատուցման վճարման ողջ գործընթացում անձնագիրը հիմնական փաստաթուղթն է, ԱԵԱ-ներից պահանջվում է թարմացնել իրենց անձնագրերը դիմելով համապատասխան պետական մարմնին: Խնդրի առնչությամբ ՏԽԹ-ն ՄԵԱԽ-ի հետ միասին կնախաձեռնի հետևյալ գործընթացը.

- (i) տեղեկացնել ԱԵԱ-ներին և համայնքային իշխանություններին վավերականության ժամկետը լրացած անձնագրերին առնչվող դեպքերի մասին՝ ընդգծելով դրանց կարևորությունը ստուգման, օտարման և փոխհատուցման վճարման տեսանկյունից,
- (ii) հետևել, որպեսզի ԱԵԱ-ները նախաձեռնեն թարմացման գործընթացը,
- (iii) անհրաժեշտության դեպքում ՄԵԱԽ-ը կաջակցի ԱԵԱ-ներին անձնագրերի թարմացման հետ կապված հարցերում:

5.2. Կադաստրային խնդիրներ

253. Կադաստրային խնդիրների տեսակներն՝ ըստ համայնքների, ամփոփված են Աղյուսակ J2-ում: Խնդիրների մեծ մասը (48.8%) վերաբերում են այն դեպքերին, երբ մասնավոր հողերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում չի կատարվել, մասնավորապես, երբ ըստ կադաստրային տվյալների, հողը ֆիզիկական անձի սեփականությունն է, ում իրավունքները գրանցված չեն հողի նկատմամբ, սակայն կադաստրով հնարավոր չէ որոշել սեփականատիրոջը: Այնուհետև, բացահայտվել են դեպքերը, որոնք վերաբերում են հողակտորների մակերեսների սեփականության վկայականում նշված և կադաստրային քարտեզի/տվյալների միջև առկա անհամապատասխանությանը (29%), կադաստրային այլ խնդիրներին (15.2%) և հողակտորի՝ չպարզված սեփականության/այլ իրավունքի կարգավիճակին (համայնքային/մասնավոր), ինչպես նաև հողակտորի գործառնական նշանակության անորոշությանը կամ բացակայությանը (7%) վերաբերող խնդիրներին: Վերջիններս այն դեպքերն են, երբ կադաստրով հնարավոր չէ նույնիսկ պարզել՝ հողակտորը մասնավոր, թե՞ համայնքային սեփականություն է (կադաստրի կողմից տրամադրված տվյալներում այդ դեպքերի կարգավիճակը նշված է՝ «պարզ չէ»): Ավելին, 11

հողակտորի դեպքում, բացի կադաստրային խնդիրներից, բացահայտվել են նաև օրինականացման խնդիրներ, որոնք վերաբերում են փաստաթղթերի բացակայությանը, ինչը կարող է նաև խոչընդոտել դրանց լուծմանը (ժառանգության 9 խնդիր, 1 բացակա սեփականատեր, 1 անձնագրային խնդիր):

Աղյուսակ J2. Կադաստրային խնդիրների տեսակները՝ ըստ համայնքների

N	Կադաստրային խնդիրների նկարագրությունը	Դեպքերի քանակը	Համայնքները
1	Խնդիրներ, որոնք վերաբերում են հողի նկատմամբ չբացահայտված/չպարզված սեփականության/այլ իրավունքի (համայնքային/մասնավոր) կարգավիճակին, ինչպես նաև հողի նպատակային և գործառնական նշանակության անորոշությանն ու բացակայությանը	6	Ախթալա (1), Ալավերդի (3), Նեղոց (1), Օձուն (1)
2	Հողակտորների մակերեսների՝ սեփականության վկայականում նշված և կադաստրային քարտեզի/տվյալների միջև առկա անհամապատասխանություն	25	Հաղպատ (7), Ալավերդի (12), Նեղոց (3), Շնող (1), Այգեհատ (1), Թումանյան (1)
3	Խնդիրներ, որոնք վերաբերում են մասնավոր հողերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման բացակայությանը	42	Հաղպատ (1), Ալավերդի (13), Նեղոց (2), Շնող (1), Այգեհատ (1), Օձուն (24)
4	Կադաստրային այլ խնդիրներ	13	Հաղպատ (2), Ալավերդի (6), Նեղոց (1), Արճիս (1), Օձուն (3)
	Ընդամենը	86	

254. Ստորև բերված Աղյուսակ J3-ում ներկայացված են բոլոր կադաստրային խնդիրները՝ ըստ համայնքների և լուտերի: Դեպքերի մեծամասնությունն (75.6%) արձանագրվել է Լոտ 1-ի հատվածում, մինչդեռ մնացած 11.6%-ը և 12.8%-ը՝ համապատասխանաբար Լոտ 2-ում և Լոտ 3-ում:

Աղյուսակ J3. Կադաստրային խնդիրները՝ ըստ լուտերի

Լոտ 1				Լոտ 2	Լոտ 3				Ընդամենը
Ալավերդի	Այգեհատ	Օձուն	Թումանյան	Հաղպատ	Նեղոց	Շնող	Ախթալա	Արճիս	
34	2	28	1	10	7	2	1	1	
65				10	11				86

255. Վերոնշյալ դեպքերի լուծման/ուղղման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավական ընթացակարգերը ներկայացված են ստորև.

Խնդիրներ՝ կապված կադաստրային տվյալների անհամապատասխանության հետ. իրավունքների գրանցման փաստաթղթերի, կադաստրային քարտեզների և փաստացի իրավիճակի անհամապատասխանություն

256. Այս դեպքերն առնչվում են օտարվող սեփականության գրանցման ժամանակ թույլ տրված սխալներին, որոնց ուղղման գործընթացը սահմանված է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով:

257. Օրենքով տարանջատվում է սխալների 2 խումբ՝

- (i) Սխալներ, որոնց ուղղումը չի փոփոխում գույքի պատկանելությունը, դրա նկատմամբ իրավունքների բնույթը, ծավալը կամ չի հանգեցնում գույքի մակերեսի չափերի կամ կադաստրային արժեքի փոփոխություն (այսուհետ՝ տեխնիկական բնույթի սխալներ): Նման սխալները կարող են ուղղվել գրանցող մարմնի պաշտոնատար անձի (կադաստր) նախաձեռնությամբ:
- (ii) Սխալներ, որոնց ուղղումը հանգեցնում է գույքի պատկանելության, դրա նկատմամբ իրավունքների բնույթի, ծավալի, գույքի մակերեսի չափերի կամ կադաստրային արժեքի փոփոխության (այսուհետ՝ ոչ տեխնիկական բնույթի սխալներ): Նման սխալները կարող են ուղղվել միայն անշարժ գույքի բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

258. Սխալների ուղղման երկու դեպքում էլ, եթե տվյալ գույքի պետական գրանցումը կատարվել է որևէ իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի հիման վրա, ապա սխալների ուղղումը կարող է կատարվել միայն տվյալ մարմնի կողմից համապատասխան ուղղումը կատարելուց հետո՝ տվյալ փաստաթղթերի հիման վրա

259. Բոլոր դեպքերում, ԱԵԱ-ները պետք է նախաձեռնեն օրինականացման գործընթացն այնպես, ինչպես նկարագրված է վերևում: Անհրաժեշտության դեպքում ՍԵԱԼ-ը կաջակցի ԱԵԱ-ներին՝ ուղղորդելով նրանց համապատասխան փաստաթղթերը կադաստր ներկայացնելու հարցում:

Չսահմանված սեփականատերեր/ իրավունքի սուբյեկտներ

260. Այն դեպքում, երբ հնարավոր չի եղել պարզել ազդեցության ենթակա հողերի սեփականատերերին ո՛չ կադաստրի, ո՛չ էլ համայնքի միջոցով, քանի որ կադաստրում իրավունքների գրանցում չի կատարվել, լրացուցիչ ջանքեր կգործադրվեն՝ իրականացման ընթացքում սեփականատերերին բացահայտելու համար: Այնուամենայնիվ, եթե չհաջողվի բացահայտել սեփականատիրոջը, ապա կնախաձեռնվեն համապատասխան միջոցներ՝ ըստ ՀՀ օրենսդրության, օրինակ՝ հողի օրինականացումն՝ ըստ փաստացի օգտագործողի, եթե օգտագործողների կողմից ապահովվում են իրավական հիմքերը, կամ գույքը ճանաչել որպես սեփականատեր չունեցող և գրանցել համայնքի՝ վերջինիս նկատմամբ ունեցած իրավունքները և օտարել համապատասխանաբար: Երկրորդ տարբերակը կարող է կիրառվել միայն դատական ընթացակարգով:

261. **Օրինականացման և կադաստրային ուղղումների դեպքերի ամփոփում.** Այսպիսով, ընդհանուր առմամբ՝ օրինականացման և կադաստրային խնդիրներին առնչվող 102 դեպքից (հողակտոր) 76-ը (74.5%) արձանագրվել են Լոտ 1-ի, 11 (10.8%)-ը՝ Լոտ 2-ի, իսկ 15-ը (14.7%)՝ Լոտ

3-ի համայնքներում: ՀՕՏԾ-ի իրականացման գործողությունների պլանը մշակելիս (տե՛ս Հավելված 7) հաշվի է առնվել յուրաքանչյուր լոտում օրինականացման և կադաստրային խնդիրների քանակը:

5.3. Ազդեցության ենթակա ոչ բնակելի ինքնակամ շինությունների օրինականացումը

262. Ընդհանուր առմամբ՝ ՄՉՀ միջոցով սույն ՀՕՏԾ շրջանակներում արձանագրվել է 29 չձևակերպված ոչ բնակելի շինություն (մանրամասների համար տես Գլուխ B-ն): ՀՕՏԾ-ի համաձայն՝ ազդեցության ենթակա ոչ բնակելի ինքնակամ շինությունների դիմաց կտրվի փոխհատուցում փոխարինման արժեքի չափով կամ վերականգնման նպաստ այն դեպքում, եթե դրանք օրինականացված չեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Մակայն, եթե ԱԵԱ-ն ցանկանում է օրինականացնել ոչ բնակելի ինքնակամ շինությունները Իրավունքների սխեմայով սահմանված լիարժեք փոխհատուցում ստանալու նպատակով, ապա ԱԵԱ-ների կողմից օրինականացման գործընթաց նախաձեռնելու դեպքում անհրաժեշտ է հետևել ինքնակամ շինությունների օրինականացման հետևյալ ընթացակարգին.

1. *Եթե հողամասը, որի վրա գտնվում է ինքնակամ կառույցը հանդիսանում է համայնքային կամ պետական սեփականություն, ապա ինքնակամ կառույցի օրինականացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝*
 - (i) Դիմել (ՏՕԻԳ-ը կամ ԱԵԱ-ն) ինքնակամ կառույցների գտնվելու վայրի համայնքի ղեկավարներին (կամ ՀՀ արտակարգ իրավիճակների և տարածքային կառավարման նախարարությանը) օտարվող սեփականության վրա առկա ինքնակամ կառույցների օրինականացման գործընթաց նախաձեռնելու միջնորդությամբ,
 - (ii) ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող ինքնակամ կառույցը համայնքի ղեկավարի որոշմամբ ճանաչվում է օրինական: Որոշումից ծագող օրինական շինության նկատմամբ համայնքի կամ պետության սեփականության իրավունքը գրանցվում է:
 - (iii) Օրինական ճանաչված կառույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում կառույցն իրականացրած անձին (ԱԵԱ-ին) առաջարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված արժեքով սեփականության իրավունքով ձեռք բերել օրինականացված շինությունը և դրանով զբաղեցված, ինչպես նաև սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ համապատասխան հողամասը: Ընդ որում, եթե ինքնակամ շինությունների և դրանցով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ համապատասխան հողամասի՝ սեփականության իրավունքով տրամադրումը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին, համապատասխան հողամասը տրամադրվում է վարձակալության իրավունքով:
 - (iv) Ինքնակամ կառույցն իրականացրած անձը 15 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է գնման (կամ վարձակալության) նախապատվության առաջարկը (կնքվում է պայմանագիր) և 30-օրյա ժամկետում վճարում է օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գինը (վարձավճարը):

(v) Ինքնակամ կառույցն իրականացրած անձը (ԱԵԱ-ն) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցում է օրինականացված շինության և դրա համար առանձնացված հողամասի նկատմամբ իր սեփականության (վարձակալության) իրավունքը:

263. Ընդ որում, վերը նշված կարգով օրինականացված կառույցների նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացվում է՝ համայնքի ղեկավարի որոշման, անշարժ գույքի օտարման պայմանագրի (սահմանված վճարների մասին նշմամբ), անշարժ գույքի հատակագծերի և սահմանված վճարների անդորրագրերի հիման վրա:

2. Եթե հողամասը, որի վրա գտնվում է ինքնակամ կառույցը, հանդիսանում է քաղաքացիների կամ իրավաբանական անձի սեփականություն, ապա ինքնակամ կառույցի օրինականացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները.

- (i) Հողամասի սեփականատերն ինքնակամ կառույցի օրինականացման պահանջով ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի հետ միասին դիմում է ինքնակամ կառույցի գտնվելու վայրի համայնքի ղեկավարին:
- (ii) Համայնքի ղեկավարը դիմումը ստանալուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ընդունում է որոշում ինքնակամ կառույցի օրինականացման կամ դրա մերժման մասին:
- (iii) Ինքնակամ կառույցն օրինական ճանաչվելու դեպքում հողամասի սեփականատերը համապատասխան բյուջե է վճարում ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարները և գրանցում է իր սեփականության իրավունքը:

264. Եթե կառույցների օրինականացումը հանգեցնում է դրանցով զբաղեցված հողամասի նպատակային նշանակության փոփոխության անհրաժեշտության, ապա հողամասի սեփականատերը, բացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարներից, պետք է վճարի նաև տվյալ տեսակի հողի կադաստրային արժեքի և ըստ փոփոխված նշանակության արժեքի միջև առկա տարբերությունը, եթե այդպիսին կա:

6. ՀՕՏԾ-ի իրականացման ժամանակացույցը

265. ՀՕՏԾ-ի վերջնականացման և իրականացման մանրամասն ժամանակացույցը ներկայացված է ստորև Աղյուսակ J4-ում:

Աղյուսակ J4. ՀՕՏԾ-ի իրականացման ժամանակացույցը

N	Գործողություն	Սկիզբը	Ավարտը
	Հողի օտարման գործընթացի հիմք հանդիսացող ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման ընդունումը և վերջինիս ուժի մեջ մտնելը	15.09.17	25.11.17

N	Գործողություն	Սկիզբը	Ավարտը
1	1. ՀՀ կառավարության՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման մասին ծանուցում		
2	1.1 ՀՀ կառավարության՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման մասին ծանուցում	26.11.17	2.12.17
3	2. Գույքի նկարագրության արձանագրության պատրաստում և ստորագրում		
4	2.1 Գույքի նկարագրության արձանագրության պատրաստում մասնավոր հողերի համար	1.12.17	29.12.17
5	2.2 Գույքի նկարագրության արձանագրության պատրաստում համայնքային հողերի համար	10.01.18	30.01.18
6	2.3 Գույքի նկարագրության արձանագրությունների ստորագրում մասնավոր և համայնքային հողերի համար	1.02.18	16.02.18
7	2.4 Բոլոր տեսակի հողերի համար գույքի նկարագրության արձանագրության մասին ծանուցում	19.02.18	25.02.18
8	3. Օրինականացման և կադաստրային տվյալների ուղղումների պլանի իրականացում		
9	3.1 Օրինականացման և կադաստրային տվյալների ուղղումների պլանի իրականացում	1.12.17	6.07.18
10	4. Օտարումը պայմանագրերի ստորագրման միջոցով		
11	4.1 Օտարման պայմանագրերի նախագծի պատրաստում մասնավոր հողերի համար	16.02.18	25.02.18
12	4.2 Օտարման պայմանագրերի նախագծի պատրաստում համայնքային հողերի համար	25.02.18	5.03.18
13	4.3 Օտարման պայմանագրի նախագծի մասին ծանուցումը. Ենթահատված 1	5.03.18	5.03.18
14	4.4 Օտարման պայմանագրի նախագծի մասին ծանուցումը. Ենթահատված 2	5.04.18	5.04.18
15	4.5 Օտարման պայմանագրերի ստորագրումը. Ենթահատված 1	6.03.18	6.06.18
16	4.6 Օտարման պայմանագրերի ստորագրումը. Ենթահատված 2	6.04.18	6.07.18
17	4.7 Օտարման պայմանագրերի ստորագրման վերջնաժամկետը. Ենթահատված 1	6.06.18	
18	4.8 Օտարման պայմանագրերի ստորագրման վերջնաժամկետը. Ենթահատված 2	6.07.18	
19	4.9 Օտարման ստորագրված պայմանագրերի պետական գրանցումը	10.03.18	15.07.18
20	5. Օտարում՝ փոխհատուցման գումարը դեպոզիտային հաշվին փոխանցելու միջոցով		
21	5.1 Փոխհատուցման գումարի փոխանցումը դատարանի դեպոզիտային հաշվին. Ենթահատված 1	6.06.18	10.06.18

N		Գործողություն	Սկիզբը	Ավարտը
22	5.2	Փոխհատուցման գումարի փոխանցումը դատարանի դեպոզիտային հաշվին. Ենթահատված 2	6.07.18	10.07.18
23	5.3	<i>Փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ 7-րդ օրը. Ենթահատված 1</i>	10.06.18	17.06.18
24	5.4	<i>Փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ 7-րդ օրը. Ենթահատված 2</i>	10.07.18	17.07.18
25	6. Դատական կարգով օտարում			
26	6.1	Հայցերի նախապատրաստում. Ենթահատված 1	10.06.18	15.06.18
27	6.2	Հայցերի նախապատրաստում. Ենթահատված 2	6.07.18	15.07.18
28	6.3	Հայցերը դատարան ներկայացնելը. Ենթահատված 1*	10.06.18	20.06.18
29	6.4	Հայցերը դատարան ներկայացնելը. Ենթահատված 2*	10.07.18	20.07.18
30	7. Մոնիտորինգ և հաշվետվություն			
31	7.1	ԱՄԱՀ-ի կողմից Ավարտական հաշվետվության պատրաստում և ներկայացում. Ենթահատված 1	10.06.18	10.07.18
32	7.2	ԱՄԱՀ-ի կողմից Ավարտական հաշվետվության պատրաստում և ներկայացում. Ենթահատված 2	10.07.18	10.08.18
* Դատական գործընթացների տևողությունը օրենքով սահմանված է 2 ամիս՝ հայցն ընդունելուց հետո, մինչդեռ այն կարող է ավելի երկար շարունակվել՝ դեպքի բարդությունից կախված				

7. Ազդեցության ենթակա հողերի փաստացի ցանկի և ՀՀ կառավարության՝ բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշմամբ հաստատված ցանկի միջև անհամապատասխանությունները

266. Առկա են անհամապատասխանության մի քանի դեպքեր ՀՀ կառավարության բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին N1214-Ն առ 09.11.2017 թ. որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հողակտորների ծածկագրերի և ՄՉՀ միջոցով ստուգված և նախագծային լուծումների արդյունքում համապատասխանեցված փաստացի ազդեցության ենթարկվող հողակտորների ծածկագրերի միջև: Սույն ՀՕՏՕ-ում ներառված ազդեցության ենթակա հողակտորներն ընդգրկվել են ՄՉՀ-ում և համապատասխանեցված օտարման գոտու սահմաններում, ինչի արդյունքում 69 հողակտոր հանվել է ազդեցության ենթարկվող հողակտորների ցանկից (20՝ համայնքային, 46՝ մասնավոր և 3 չնույնականացված հող), մինչդեռ 9 համայնքային հող կավելացվի ցանկին: Ավելացված 8 հողակտորների վրա գտնվում են բազմաբնակարան շենքի հարակից շինությունները, որոնք ենթակա են օտարման անվտանգության նկատառումներից ելնելով և/կամ դրանց հետագա օտարման անհնարիության պատճառով: Նախքան ՀՕՏՕ-ի իրականացումն սկսելը կնախաձեռնվի ՀՀ կառավարության բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշման փոփոխման գործընթաց՝ ազդեցության ենթակա հողերի ցանկը թարմացնելու նպատակով (հանել ազդեցության չենթարկվող հողերը և ավելացնել նոր բացահայտված հողակտորները): ՀՀ

օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգին վերաբերող պահանջները պետք է պատշաճորեն կատարվեն այդ հոդերի համար: ՀՀ կառավարության որոշմանն ավելացվող հողակտորների ցանկը ներկայացված է ստորև բերված Աղյուսակ J5-ում, իսկ ՀՀ կառավարության որոշման ցուցակից հանվող հողակտորները ներկայացված են Հավելված 13-ում:

Աղյուսակ J5. ՀՀ կառավարության որոշմանն ավելացվող հողակտորների ցանկը

N	Համայնք	Հողի՝ կադաստրային ծածկագիրը	Հողի սեփականության իրավական կարգավիճակը՝ ըստ կադաստրի	Նշում
1	ք. Ալավերդի	06-002-0198-0209	համայնքային	Հողն ավելացվել է բազմաբնակարան շենքի և հարակից կառույցների/շինությունների օտարման պատճառով
2	ք. Ալավերդի	06-002-0198-0215	համայնքային	Հողն ավելացվել է բազմաբնակարան շենքի և հարակից կառույցների/շինությունների օտարման պատճառով
3	ք. Ալավերդի	06-002-0198-0216	համայնքային	Հողն ավելացվել է բազմաբնակարան շենքի և հարակից կառույցների/շինությունների օտարման պատճառով
4	ք. Ալավերդի	06-002-0198-0219	համայնքային	Հողն ավելացվել է բազմաբնակարան շենքի և հարակից կառույցների/շինությունների օտարման պատճառով
5	ք. Ալավերդի	06-002-0198-0211	համայնքային	Հողն ավելացվել է բազմաբնակարան շենքի և հարակից կառույցների/շինությունների օտարման պատճառով
6	ք. Ալավերդի	06-002-0198-0212	համայնքային	Հողն ավելացվել է բազմաբնակարան շենքի և հարակից կառույցների/շինությունների օտարման պատճառով
7	ք. Ալավերդի	06-002-0198-0218	համայնքային	Հողն ավելացվել է բազմաբնակարան շենքի և հարակից կառույցների/շինությունների օտարման պատճառով
8	ք. Ալավերդի	06-002-0198-0217	համայնքային	Հողն ավելացվել է բազմաբնակարան շենքի և հարակից կառույցների/շինությունների օտարման պատճառով
9	Շնող	06-088-0061-0029	համայնքային	Տեխնիկական (տպագրական սխալ) բացառիկ՝ հանրային գերակա շահ ճանաչված գույքի ցուցակում. ցանկում հողակտորի ծածկագիրը նշված է 06-088-0061-0015, ինչը փաստացի ազդեցության չի ենթարկվում:

8. ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում առաջացող խնդիրների (փոփոխությունների) դեպքում նախաձեռնվող ընթացակարգերը

267. Հիմք ընդունելով նմանատիպ գյուղական ծրագրերում ՀՕՏՕ-ի իրականացման նախորդ փորձը՝ մի շարք չնախատեսված փոփոխություններ կարող են առաջանալ ծրագրի իրականացման ընթացքում, ինչպես նաև կարող են ի հայտ գալ ազդեցության/փոխհատուցման և կամ այլ բնորոշ

փոփոխություններ այս ՀՕՏ-ի իրականացման ընթացքում: Չնախատեսված փոփոխությունները կարող են կապված լինեն կադաստրային քարտեզների/տվյալների ստուգման, գույքի օրինականացման, մանրամասն նախագծի վերանայման հետ և այլն: Նման փոփոխությունների արդյունքում կարող են փոխվել ազդեցության ենթակա հողերի բնութագրիչները (ինչպիսիք են՝ նպատակային նշանակությունը, թեքությունը, քարքարոտությունը, մակերեսը), ազդեցության ենթակա հողերի թիվը (որոշ հողեր կարող են դուրս գալ կամ ներառվել օտարվող տարածքում): Այս առումով մշակվել են մի քանի ընթացակարգեր՝ ծրագրի իրականացման ընթացքում անսպասելի փոփոխությունների հետ կապված: ՀՕՏ-ի իրականացման ընթացքում սույն ՀՕՏ-ով սահմանված ազդեցությունների փոփոխման դեպքում ՏՕԻԿ-ի կողմից ձեռնարկվող միջոցառումներն ու քայլերը ներկայացված են Հավելված 8-ում:

a) Եթե փոխվում է օտարվող հողակտորի մակերեսը.

- Փոխհատուցման գումարի վերահաշվարկը կկատարվի տվյալ հողի համար ՀՕՏ-ում սահմանված (Գնահատման հաշվետվություն) 1 քառակուսի մետրի միավորի արժեքը բազմապատկելով նոր՝ ստուգված մակերեսով: Հետևաբար միավորի արժեքը չի փոխվի:
- Եթե ազդեցության ենթակա հողի վրա առկա են հողին ամրացված բարելավումներ (մշակաբույսեր, ծառեր և այլն), ապա դրանք կգույքագրվեն և կհաշվարկվեն ազդեցության ենթակա ստուգված մակերեսի և ՀՕՏ-ում սահմանված միավորի արժեքների հիման վրա:
- Կպատրաստվի նոր քարտեզ (հատակագիծ)՝ հողի ազդեցության ենթակա մասը սահմանելու համար:

b) Եթե փոխվեն ազդեցության ենթակա հողի՝ մակերեսից բացի այլ փաստացի հատկանիշները (օրինակ՝ օգտագործման նպատակը, թեքությունը, քարքարոտությունը), ապա արդյունքում կարող է փոխվել հողի փոխարինման արժեքը:

- Այսպիսի դեպքերում կկատարվի նոր գնահատում՝ կիրառելով ՀՕՏ-ի մշակման ժամանակահատվածի վաճառքի տվյալները: Գնահատման գործընթացը կկատարվի՝ ըստ ՀՀ գնահատման ստանդարտի և Ծրագրի ՀՕՏ/ՀՕՏ-ի սկզբունքների:

c) Այն դեպքում, երբ ՀՕՏ-ի իրականացման ընթացքում սեփականատերը կամ օգտագործողը **կնույնականացվի/self-identified** և պահանջ կներկայացնի չստեղծանված վայրերի/հողակտորների վրա գտնվող ազդեցության ենթակա գույքի վերաբերյալ (տ՝ես Գլուխ B-ի պարբերություն 2.2-ը և Հավելված 9), ապա կձեռնարկվեն հետևյալ քայլերը.

- Նույնականացված սեփականատիրոջ կամ վարձակալի դեպքում սեփականատերը/վարձակալը պետք է ներկայացնի համապատասխան փաստաթղթերը՝ հաստատելով գույքի նկատմամբ գրանցված իրավունքները:
- **self-identified** չձևակերպված օգտագործողի դեպքում ազդեցության ենթակա գույքի օգտագործումը պետք է հաստատվի հետևյալ ցուցանիշների հիման վրա. (i) ԱԳԿՊԿ գյուղատնտեսի փորձագիտական կարծիքն այն մասին, թե արդյո՞ք ազդեցության ենթակա ակտիվները մշակվել են, թե ինքնուրույն աճել, (ii) ցանկապատերի առկայությունն օգտագործվող հողի վրա կամ օգտագործման այլ նշաններ, (ii) օգտագործման վերաբերյալ գրավոր հաստատում համայնքի կամ առնվազն համայնքի երեք անդամների կողմից:

- Հողակտորների՝ չձևակերպված հիմունքներով օգտագործման դեպքում կգույքագրվեն միայն մրգատու ծառերը, և չձևակերպված օգտագործողներն իրավունք ունեն ստանալ փոխհատուցում միայն հաստատվելուց հետո:
- Ազդեցության ենթակա ակտիվների գույքագրումը կկատարվի այն վայրերում/հողակտորներում, որտեղ նախկինում գույքագրում չի կատարվել, և փոխհատուցումը կհաշվարկվի ՀՕՏՕ-ում սահմանված դրույքաչափերի հիման վրա:

d) Իրականացման գործընթացում բացահայտված նոր հողերը

- ՀՀ կառավարության բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշման փոփոխությունները կնախաձեռնվեն նոր հողերի համար, և կիրականացվեն նոր համապատասխան ընթացակարգեր՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում սահմանված կարգով, մասնավորապես՝
 - Նոր ԱԵԱ-ների համար կկազմակերպվեն հանրային լսումներ (այդ թվում՝ բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին որոշման ծանուցումը),
 - Նոր հողերի համար կկազմակերպվեն ՄՉՀ/մարդահամար/ՄՏՀ,
 - Կպատրաստվեն համապատասխան քարտեզներ (հատակագծեր)՝ չափագրումների հիման վրա,
 - Կպատրաստվեն և ԱԵԱ-ների հետ կստորագրվեն գույքի նկարագրության արձանագրություններ,
 - Գույքի գնահատումը կկատարվի՝ համաձայն սույն ՀՕՏՕ-ի համար հաստատված Գնահատման մեթոդաբանության,
 - ԱԵԱ-ներին կողարկվեն օտարման պայմանագրերի նախագծերը և նրանց հետ բանակցություններ կվարվեն՝ պայմանագրերը ստորագրելու վերաբերյալ, հակառակ դեպքում ՏՕԻԿ-ը կնախաձեռնի դատական կարգով օտարման գործընթաց:

e) Եթե ի հայտ գան այլ չնախատեսված խնդիրներ/փոփոխություններ, ապա այդպիսի դեպքերի համար կմշակվի համապատասխան մեխանիզմ և կհամաձայնեցվի ԱԶԲ-ի հետ:

f) Բոլոր տեսակի ազդեցությունների փոփոխությունների (եթե կան այդպիսիք) դեպքում, որոնք առաջանում են ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում կադաստրային ուղղումների, նախագծային փոփոխությունների/լուծումների կամ այլ չնախատեսված պատճառներով և ազդում են փոխհատուցման վրա, կնախաձեռնվեն հետևյալ գործողությունները՝ (a) այդպիսի դեպքերի համար կմշակվեն համապատասխան մեխանիզմներ/ընթացակարգեր, որոնք կարտացոլվեն ՍԱԵԽ-ի կողմից պատրաստված Ավարտական հաշվետվություններում, ՏՕԻԿ-ի կողմից պատրաստված Մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություններում (ՄՄԿՀ), ինչպես նաև յուրաքանչյուր ենթահատվածի համար ԱՄԳ-ի կողմից պատրաստված Համապատասխանության հաշվետվությունում, (b) Շտկող միջոցառումների պլանը (ՇՄՊ) կմշակվի միայն այն դեպքերի համար, երբ լրացուցիչ բյուջեի հատկացման անհրաժեշտություն կլինի:

K. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

1. Ընդհանուր

268. Ծրագրի տարաբնակեցման ծախսերը ներառում են ՀՕՏԾ-ի իրականացմանն ուղղված փոխհատուցման, վերականգնման օժանդակության և հարակից ծախսերը, ինչպես նաև զգայուն գույքի համար նախատեսված պայմանական բյուջեն: Հարակից ծախսերը, որոնք ներառում են վարչական ծախսերը, տարաբնակեցման ընդհանուր բյուջեի մասն են կազմում: Չնախատեսված ծախսերը (ընդհանուր ծախսերի 20%-ը) նույնպես ներառվել են՝ հաշվի առնելով գնահատված հաշվարկների հնարավոր փոփոխությունները: ՀՕՏ ծախսերի հաշվարկման համակարգի որոշ առանձնահատկություններ ներկայացված են ստորև.

- (i) գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխհատուցում՝ իրենց փոխարինման արժեքով,
- (ii) շենքերի և շինությունների փոխհատուցում՝ փոխարինման արժեքով,
- (iii) բերքի և ծառերի փոխհատուցում,
- (iv) օժանդակություն խիստ ազդեցության ենթակա տնային տնտեսություններին,
- (v) վերաբնակեցման և տեղափոխման ծախսերի օժանդակություն,
- (vi) օժանդակություն խոցելի խմբերին՝ կենսապայմանների վերականգնման համար,
- (vii) պայմանական ծախսերի բյուջե՝ զգայուն վայրերի համար, որտեղ պետք է կատարվի թրթռման հետազոտություն,
- (viii) պայմանական ծախսերի բյուջե՝ ոչ հասանելի և չտեղազննված հողակտորների վրա հնարավոր ծառերի և մշակաբույսերի համար,
- (ix) գրանցման ծախսեր (ներառյալ նոտարական և պետական գրանցման ծառայությունների վճարներ և պետական տուրքեր, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի հարկերի հատուցումներ),
- (x) ՀՕՏԾ իրականացման ծախսեր (օրինականացման ծախսեր և կադաստրային ուղղումներին առնչվող ծախսեր, դատական ծախսեր (եթե առկա է), օտարված հողերի նպատակային նշանակության փոփոխմանն առնչվող ծախսեր):

2. Փոխհատուցում

2.1. Հողի փոխհատուցումը

269. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի փոխհատուցումը կատարվում է անկախ որակավորված գնահատողի կողմից կատարված գնահատման հիման վրա: Փոխհատուցումը կատարվում է փոխարինման արժեք գումարած 15%՝ շուկայական արժեքի և գործարքային ծախսերի կամ կադաստրային արժեքի հիման վրա (որն ավելի բարձր է):

270. Հողերի փոխհատուցման արժեքը ներկայացված է Աղյուսակ K1-ում՝ ըստ հողերի տեսակների: Օտարվող հողերի ընդհանուր արժեքը կազմում է **142.514.000,01** ՀՀ դրամ՝ 193.072,2 մ² հողի համար: Մասնավոր սեփականություն հանդիսացող հողամասերի սեփականատերերին տրվող փոխհատուցումը կազմում է **26.000.758,25** ՀՀ դրամ՝ 15.739,3 մ² համար, համայնքային հողերի համար՝ **116.263.587,11** ՀՀ դրամ, իսկ չնույնականացված հողերի համար՝ **249.654,65** ՀՀ դրամ: Պետական (ՀՀ) հողերի համար փոխհատուցում չի տրվում: Աղյուսակ K1-ը մանրամասնում է հողերի արժեքները՝ ըստ կիրառելի միավորի արժեքների, սեփականության իրավական կարգավիճակի, փոխհատուցման արժեքներն՝ ըստ տեսակի, կիրառելի միավորի արժեքի, ազդեցության ենթակա համայնքների և լոտերի (տե՛ս Հավելված 10):

Աղյուսակ K1. Ազդեցության ենթակա հողերի փոխհատուցման արժեքները՝ ըստ հողի սեփականության կարգավիճակի

Հողի կատեգորիան	Հողակտորներ	Ազդեցության ենթակա տարածքը	Միավորի միջին արժեքը	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր փոխհատուցումը (ներառյալ 15%)
	No	մ ²	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Մասնավոր	79	15.739,3	1.436,49	22.609.355,00	26.000.758,25
Համայնքային	313	177.197,8	570,54	101.098.771,40	116.263.587,11
